«ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ» ԳՐՔԻ ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

Բացահայտե՛ք այս մոռացված
առաքինության զորությունը

Ընդգրկում է *«Պատվի վարձքը»*
DVD հավաքածուն

Թանկագի՛ն ընկեր,

Թեև պատիվը գրեթե կորսված առաքինություն է մեր կյանքում, այն դեռևս հուզում և ոգեշնչում է մեզ: Պատիվը ներհյուսված է ժամանակակից հայտնի ֆիլմերի սցենարներում և հիացմունքի ու գովեստի է արժանանում: Այնուամենայնիվ, ի՞նչ տեղ է զբաղեցնում մեր կյանքում Աստծո ծրագիրը լիարժեք կերպով ընդունելու այս կարևորագույն բանալին:

Պատիվը մեծ վարձատրություններ ունի, որոնք Աստված ցանկանում է, որ դուք ստանաք: Թարմ պատկերացումն այս մեծ մասամբ մոռացված սկզբունքի մասին՝ կօգնի ձեզ հայտնվել այնպիսի դիրքում, որ ստանաք այն, ինչ Աստված որոշել և նախատեսել է ձեզ համար:

Պատիվը հասկանալու, ընդունելու և կիրառելու միջոցով կբացահայտեք Աստծո արժեհամակարգը և ավելի կմոտենաք Նրա սրտին, Ով պատվի Հեղինակն է:

Խրախուսում եմ ձեզ, որ ուսումնասիրեք MessengerX.com կայքի մուլտիմեդիոն նյութերն այս թեմայով և կիսվեք մարդկանց հետ:

Գործնականորեն կիրառե՛ք այս սկզբունքը. արթնացրե՛ք ձեր մեջ եղող մեծությունը:

Ձեզ հետ՝



MessengerX.com

Ջոն Բիվեր
JohnBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Ընթերցելով «Պատվի վարձքը» գիրքը՝ լիովին կհամոզվեք, թե որքան բարձր է Աստված գնահատում այս հատկանիշը, որը պետք է բխի քրիստոնյաների սրտերից:

– Ջոյս Մայեր

«Պատվի վարձքը» գիրքն ընթերցելուց հետո դուք չեք կարող չպատվել այս գրքի հեղինակ Ջոն Բիվերին՝ որպես ուշագրավ իմաստություն ունեցող աստվածաշնչյան ուսուցչի և հմուտ հեղինակի: Հաստատելով այն փաստը, որ պատիվը բխում է սրտից, Ջոնը ներկայացնում է ընթերցողին մի ուղերձ, որն անդրադառնում է բազմապիսի մարդկային հարաբերությունների, և ոգեշնչում է յուրաքանչյուրիս ապրել՝ արտացոլելով այս կարևոր հոգևոր սկզբունքը, որն առատ վարձատրություն է բերում:

–Բրայան Հյուսթոն

Երբ առաջին անգամ կարդացի «Պատվի վարձքը» գիրքը, հասկացա, որ հանդիպել եմ դասական գլուխգործոցի, որը կարող է հավասարապես մեծ ազդեցություն թողնել եկեղեցիների, ամուսնությունների, ընտանիքների և ձեռնարկությունների վրա: Պատիվն առաջխաղացման, բարեհաճության և հաջողության բանալին է թե՛ այս կյանքում, թե՛ հավիտենական կյանքում: Սա, անկասկած, Ջոն Բիվերի լավագույն աշխատությունն է:

– Ջենթեզեն Ֆրանկլին

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՊԱՏՎԻ ՎԱՐՔԸ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՊԱՏՎԻ ՎԱՐՔԸ

Բացահայտե՛ք այս մոռացված
առաքինության զորությունը

Honor's Reward, Armenian, by John P. Bevere
© 2021 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as Honor's Reward

Additional resources in Armenian by John and Lisa Bevere are available
for free download and video streaming at
MessengerX.com and on the **MessengerX** App
To contact the Author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is
NOT FOR SALE

«Պատվի վարձքը», հայերենով, Ջոն Պ. Բիվեր
© 2021 Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Honor's Reward» վերնագրով

Հավելյալ նյութեր հայերենով հասանելի են
անվճար ներբեռնման և հոսքային հեռարձակման համար
MessengerX.com կայքում և **MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը նվեր է «Messenger International» ծառայության կողմից և
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

Բովանդակություն

1 Վարձք 9

2 Մասնակի և ոչ մի վարձք 21

3 Ամբողջական վարձք 31

4 Հարցն առաջնորդը չէ 43

5 Իշխանություն 55

6 Խիստ իշխանություն 73

7 Պատվել պետական առաջնորդներին 87

8 Պատվել հասարակական առաջնորդներին 107

9 Պատվել ընտանեկան առաջնորդներին 119

10 Պատվել եկեղեցական առաջնորդներին 137

11 Կրկնակի պատիվ 157

12 Պատվել մեզ հավասար մարդկանց 183

13 Պատվել մեզ վստահված մարդկանց 199

14 Պատիվ ընտանիքում. երեխաներ 217

15 Պատիվ ընտանիքում. կին 233

16 Պատվել բոլորին 249

17 Պատվել Աստծուն 259

Հավելված 277

1

Վարձք

Պատիվ: Թեև այն գրեթե մոռացված առաքինություն է քսանմեկերորդ դարում, այն դեռևս հուզում և ոգեշնչում է մեզ: Կինոնկարների խիզախություն և անձնազոհություն արտահայտող դրվագներում պատվի ցուցադրումից միգուցե արտասվենք: Ուշադրություն դարձրեք մեծ հաջողություն ունեցած կինոնկարներին և կտեսնեք, որ պատիվը ներհյուսված է դրանց սյուժեներում: Մենք ծափահարում ենք պատիվ կոչված առաքինությանը, բայց որտեղ է այն մեր կյանքում: Գաղափարն այն մասին, որ կարող ենք պատիվ ցուցաբերել մեր կյանքում, օտար է դարձել մեր սերնդի համար:

Ես ցանկանում եմ, որ պատիվը վերականգնվի Աստծո որդիների և դուստրերի կյանքում: Այն կարևորագույն բանալին է՝ Աստծուց ստանալու համար, և այդ պատճառով մեր անձերի թշնամին գրեթե անհայտության է մատնել պատվի ճշմարիտ զորությունը: Պատիվը մեծ վարձատրություններ ունի, որոնք Աստված ցանկանում է, որ դուք ստանաք: Պատիվը կարող է մեծապես հարստացնել ձեր կյանքը:

Դուք սկսում եք մի ընթացք, որը կմոտեցնի ձեզ Աստծո սրտին, Ով ամեն պատվավոր բաների Հեղինակն է: Ես աղոթում եմ, որ այս գրքում հայտնված ճշմարտությունները խորը և գործնական ազդեցություն թողնեն ձեր կյանքում: Շատերը չափազանց ուշ են յուրացրել այս դասերը: Այդ պատճառով, Հովհաննես առաքյալը զգուշացնում է.

«Զգո՛յշ կացեք ձեր անձերից, որ չկորցնենք այն, որ վաստակեցինք, այլ՝ որ ամբողջ վարձքն առնենք»:
– Բ Հովհ. 8

Հովհաննեսը տարեց էր, ով ետ էր նայում գրեթե մեկ դար տևող իր կյանքից, երբ գրում էր այս խոսքերը (*«Կլարկի մեկնություն»,* «Abingdon Press», 1977թ., «Accordance» հավելված, տարբերակ 6.6): Նա փոխանցեց իր դժվարությամբ ձեռք բերած իմաստությունը մինչև մեր օրերը՝ մեր օգտի համար: Հովհաննեսն այնպիսի դիրքում էր, որը հատուկ է երկարատև և բարեհաջող ընթացք անցած տղամարդկանց և կանանց: Այդ նպատակավայր են հասնում նրանք, ովքեր հավատարմորեն կատարել են իրենց կյանքի կոչումը. այն հավաստիացում և ուժ ունեցող մարդու դիրք է, որը ես անվանում եմ *պապիկի* կամ *տատիկի օծություն:* Եվ երբ այս մարդիկ խոսում են, իմաստունները լսում են:

Տարիների ընթացքում արտոնված եմ եղել հանդիպելու մի քանի այդպիսի տղամարդկանց և կանանց: Նրանք դեսպաններ են, որոնք բարեհաջող անցել են իրենց ընթացքը և այնպիսի փուլ են մուտք գործել, որում իմացությամբ ետ են նայում կյանքին: Այդպիսի հին ու փորձված մարդկանց մոտ որոշ ընդհանուր հատկանիշներ են ձևավորվում, և մենք կխոսենք դրանցից երեքի մասին: Առաջինը՝ նրանք ներըմբռնողաբար հասկանում են հարցի էությունը: Նրանք չեն պտտվում հարցի շուրջ և ժամանակ չեն վատնում անկարևոր բաների վրա: Երկրորդը՝ նրանք շատ բան են ասում ընդամենը մի քանի բառով: Երրորդը՝ այն բառերը, որոնք նրանք ընտրում են, կշիռ ունեն: Նրանց սակավ թվացող բառերն ավելի մեծ կշիռ ունեն, քան նույն բառերը՝ ասված այնպիսի մարդու կողմից, որն այդքան բարեհաջող և երկարատև ընթացք չի անցել կյանքի շավիղներով: Այդ հին ու փորձված մարդկանց հետ ժամանակ անցկացնելուց հետո ամիսներ շարունակ մտորել եմ նրանցից լսած ընդամենը մեկ կամ երկու նախադասության շուրջ:

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ Հովհաննես առաքյալը շատ կարևոր բան է ասում: Իրականում, տարիներ շարունակ մտորել եմ այս ոգեշնչված խոսքի շուրջ և դրա հայտնությունը շարունակում է ընդլայնվել: Այս խոսքից ստացված ոգեշնչմամբ երկու գիրք եմ գրել՝ այն, որը հիմա ձեր ձեռքում է, և

«Հավիտենությամբ շարժվողները»: Մաս առ մաս ուսումնասիրենք նրա հորդորը:

Մի՛ կորցրեք ձեր ժառանգությունը

Հովհաննեսը սկսում է այսպես. «Զգո՛ւյշ կացեք ձեր անձերից»: Հովհաննեսը հորդորում է յուրաքանչյուրիս ուշադիր լինել մեր հանդեպ և ստուգել ինքներս մեզ: Նրա խոսքերում հրատապություն կա, քանի որ չպետք է անլուրջ ընդունենք այն, ինչ նա պատրաստվում է հաղորդել մեզ, այլ պետք է հանգամանորեն խորհենք դրա շուրջ:

Պետք է շատ ուշադիր լինենք, որպեսզի չկորցնենք այն, ինչի համար ջանք ենք թափել: Սա փոքր ինչ սթափեցնող է... մենք կարող ենք կորցնել այն, ինչ ձեռք ենք բերել մեր ջանքերով: Պատկերացրեք մի հողագործի, որն աշխատում է՝ մաքրելով իր դաշտը: Նա աշխատում է օրվա տապին, որպեսզի մաքրի հողը քարերից և կոճղերից, որոնք կարող են խոչընդոտել հողի բերքատվությանը: Մաքրելուց հետո նա հերկում և փխրեցնում է հողը՝ պատրաստելով ցանքի: Ցանքից հետո քրտնաջան աշխատում է, որպեսզի նպաստավոր պայմաններ ապահովի սերմերի աճի համար. նա պարարտացնում է հողը, մաքրում է մոլախոտերից և ջրում է սերմերը: Բույսերը սկսում են աճել, և նրա աշխատանքը շարունակվում է. նա պաշտպանում է դաշտը վնասատուներից և բույսերի հիվանդություններից: Բայց հունձքից մի քանի շաբաթ առաջ հոգնում է և թողնում ամեն ինչ: Նրա աշխատանքը զուր էր, քանի որ նա կորցնում է իր ամբողջ բերքը՝ վերջին պահին այն անտեսելու պատճառով: Կամ, միգուցե, փոթորիկ է մոտենում: Նա տեսնում է զգուշացումներն այդ մասին, բայց անտեսում է, և այդ սխալը զրկում է նրան բերքից. ժամանակի, փողի, աշխատանքի և միջոցների ինչպիսի՜ վատնում՝ միայն վերջին պահին թուլանալու պատճառով:

Ի՞նչ կասեք այն գործարարի մասին, որը տարիներ շարունակ ջանք է թափում իր ընկերությունը կառուցելու համար, բայց վերջում ամեն ինչ կորցնում է մի քանի սխալ որոշումների պատճառով: Կրկին ողբերգական է... Երկու դեպքում էլ հսկայական աշխատանքի արդյունքները մեկ ակնթարթում կորչում են՝ սխալ ընտրություններ կատարելու արդյունքում:

Ահա թե ինչու է Աստվածաշունչը շարունակ կոչ անում մեզ բարեհաջող ավարտել մեր ընթացքը. «...ով որ *համբերի մինչև վերջ...»* (Մատթ. 10.22, 24.13, Մարկ. 13.13), նաև՝ «Որովհետև մասնակից եղանք Քրիստոսին, եթե այն հաստատության սկիզբը *մինչև վերջ* պինդ բռնենք» (Եբր. 3.14), և կրկին. «Եվ ով որ հաղթում է և Իմ գործերը պահում մինչև վերջ...» (Հայտն. 2.26, բոլոր հատվածներում շեղագիրը հեղինակինն է) և այլն: Քրիստոնեությունը կարճ տարածության մրցավազք չէ, այլ՝ մարաթոն: Այդ իսկ պատճառով, կարևորն այն չէ, թե ինչպես ենք սկսում մեր վազքը, այլ՝ թե ինչպես ենք ավարտում այն: Մեր ավարտը կախված է մեր կայացրած որոշումներից, որոնք, որպես կանոն, մեր կյանքի ընթացքում ձևավորվող սովորությունների արդյունքն են:

Կյանքի վճռորոշ պահեր

Մեր որդիներից մեկի հետ մի դեպք տեղի ունեցավ: Նա ցանկանում էր ինչ-որ բան ձեռնարկել, ինչը դուր չէր գալիս ինձ: Նա գիտեր իմ դիրքորոշումը, սակայն ես կարծում էի, որ նա արդեն բավականին հասուն էր, որպեսզի ինքնուրույն որոշում կայացներ, ուստի վերջին խոսքը նրանն էր:

Որոշ ժամանակ անց իմացա, որ նա որոշել էր վարվել իմ խորհրդին հակառակ: Ավելի ուշ մենք քննարկեցինք նրա որոշումը, և ես ասացի.

- Ընտրությունը քո՛նն է, բայց ուզում եմ օգտագործել այս առիթը, որպեսզի ինչ-որ բան սովորեցնեմ քեզ: Լսի՛ր այս իրական պատմությունը:

Այն Ռոբովամ անունով մի երիտասարդ թագավորի մասին է: Գահի բարձրանալուց կարճ ժամանակ անց նրա հպատակները մի հարցով դիմեցին նրան. «Հայրդ ծանրացրել էր մեր կյանքը՝ մեզ վրա դրված պահանջներով: Խնդրո՛ւմ ենք, թեթևացրո՛ւ մեր բեռը, և մենք ուրախությամբ կծառայենք քեզ»:

Երիտասարդ թագավորը կարգադրեց ժողովրդին մի քանի օրից վերադառնալ՝ իր որոշումը լսելու համար: Նրա հոր խորհրդականներն ասացին նրան. «Եթե ծառա լինես այս ժողովրդին, հաշվի առնես նրանց կարիքները և գթասրտությամբ պատաս-

խանես, նրանց համար նպաստավոր կերպով վարվես, նրանք ամեն ինչ կանեն քեզ համար» (Ա Թագ. 12.7, MSG):

Դա լավ և իմաստուն խորհուրդ էր, բայց երիտասարդ թագավորը մերժեց նրանց խորհուրդը և դիմեց իր հասակակիցներին: Նրանք ասացին. «Այս ժողովրդին, որը դժգոհում է, թե՝ քո հայրը շատ խիստ էր վարվում մեզ հետ. թեթևացրո՛ւ մեր բեռը, այսպես ասա. «Իմ ճկույթը հաստ է իմ հոր մեջքից: Եթե կարծում եք, թե կյանքն իմ հոր իշխանության ժամանակ խիստ էր, դուք դեռ ոչինչ չեք տեսել: Իմ հայրը մտրակներով էր հարվածում ձեզ. ես մինչև արյունը շղթաներով կծեծեմ»» (խոսքեր 10,11, MSG):

Երիտասարդ թագավոր Ռոբովամը հետևեց իր ընկերների խորհրդին, ինչը ողբերգական հետևանքներ ունեցավ: Նրա հայր Սողոմոնի կառուցած թագավորությունը պառակտվեց: Իսրայելի տասներկու ցեղերից տասը մշտապես առանձնացան. թագավորության հինգ վեցերորդը պատռվեց նրա երկաթե բռունցքից: Մեկ սխալ որոշումը թանկ նստեց նրա վրա մինչև կյանքի ավարտը:

Ես շարունակեցի.

- Որդի՛ս, եկ ժամանակով ետ գնանք: Հավանաբար, տարիներ շարունակ Ռոբովամ արքայազնը և նրա ընկերները ծածուկ ծաղրում և նույնիսկ արհամարհում էին Սողոմոն թագավորի և ծերերի խորհուրդները: Միգուցե նրանք, թագավորական սրահներում նստած, ծածուկ քրքջում էին գինու գավաթների շուրջ և տարուբերում էին գլուխները այն խորհուրդների պատճառով, որոնք անմիտ և հնաոճ էին համարում: Հավանաբար, Ռոբովամի ներսում ունայն մտքեր էին խռնվում. *«Ես կհամբերեմ, քանի դեռ արքայազն եմ, բայց երբ թագավոր դառնամ, չեմ լսի այդ անմիտ ծերերին»:* Քանի դեռ նա արքայազն էր, ծերերի իմաստությունն անտեսելու և չգնահատելու մասին նրա որոշումները մեծ վնաս չէին պատճառում իրեն: Նա չէր գիտակցում, որ իր ներսում բնավորություն էր ձևավորվում, և գալու էր այն օրը, երբ անմիտ լինելով՝ ինքն իրեն իմաստուն էր համարելու: Երբ նրա կյանքում *վճռորոշ պահ* եկավ, նա չուներ անհրաժեշտ կարողություն ողջամիտ որոշում կայացնելու համար:

Ես շարունակեցի.

- Բոլորիս կյանքում *վճռորոշ պահեր* են լինում: Դրանք նման են այնպիսի քննությունների, որոնցում թույլատրվում է օգտվել լրացուցիչ նյութերից, բայց մենք չգիտենք, որ քննություն ենք հանձնում, քանի դեռ դրանք չեն ավարտվում: Որդի՛ս, դու որոշեցիր չլսել իմ խորհուրդը, և այս անգամ դա ոչ մի վնաս չպատճառեց քեզ: Բայց գալու է մեկ օր, երբ քո կյանքում *վճռորոշ պահ* է լինելու: Եթե մինչ այդ քեզանում իմաստուն խորհուրդներ լսելու սովորություն ձևավորվի, դու բնականորեն կհետևես դրան և արդյունքում մեծապես կվարձատրվես:

Դիտարկենք մեկ այլ օրինակ: Իսրայելի զավակների մեջ Աստծո Խոսքին ականջ դնելու սովորություն չէր ձևավորվել: Աստված ազատեց նրանց ստրկությունից, սակայն նրանք շարունակ դժգոհում էին և չէին հնազանդվում: Կար ժամանակ, երբ թվում էր՝ այդ վարքն աննշան վնաս էր պատճառում նրանց, կամ էլ բոլորովին չէր ազդում նրանց վրա: Այնուամենայնիվ, այդ ընթացքում նրանցում որոշակի սովորություն էր ձևավորվում: Ի վերջո, եկավ *վճռորոշ պահը:* Նրանք տասներկու լրտեսներ ուղարկեցին Քանան, որպեսզի տեղեկություն ստանային այն երկրի մասին, որը Տերն առանձնացրել էր իրենց համար: Լրտեսները վերադարձան՝ տրտնջալով և վատ լուր բերելով: Ժողովուրդը, հետևելով նրանց, սկսեց տրտնջալ, ինչպես նախկինում, բայց այս անգամ դա թանկ նստեց նրանց վրա: Նրանք այդպես էլ չմտան Խոստման երկիր և դեգերեցին մինչև կյանքի ավարտը: Մեկ ակնթարթում կորցրին այն, ինչին տիրանալու համար ջանք էին թափել: Նրանց կորուստը չվերականգնվեց: Թեև Աստված խոստացել էր նրանց այդ երկիրը, նրանք այդպես էլ չտիրացան դրան, նման այն բանին, որ Ռոբովամը կորցրեց տասը ցեղերը՝ մինչև կյանքի ավարտը և մինչև հաջորդ սերունդները:

Այս պատմության մեջ մի կարևոր դաս կա թե՛ ծերերի, թե՛ երիտասարդների համար. անհրաժեշտ է ոչ միայն հնազանդվել Աստծուն, այլև հասկանալ Նրա սիրտը: Այդ դեպքում մենք կհասկանանք Նրա ցուցումների ետևում գտնվող իմաստությունը և պարզապես չենք դիտարկի դրանք որպես սահմանափակումներ կամ օրենքներ: Երիտասարդ արքայազն Ռոբովամն այդպես էլ չէր հասկացել, թե ինչ կար իր հոր և նրա ծերերի սրտերում:

Նմանապես, իսրայելցիների ավագ սերունդն այդպես էլ չէր հասկացել, թե ինչ էր Աստված անում, նույնպես և չէր հասկացել իրենց հանդեպ ունեցած բարությունը, որը կար Աստծո սրտում, և նրանք կորցրին ամեն ինչ:

Այժմ դիտարկենք դրամի հակառակ կողմը: Ամբողջ Աստվածաշնչում կան օրինակներ այն մասին, թե ինչպես են մարդիկ հասկացել Աստծո սիրտը և իմաստուն որոշումներ կայացնելու սովորություն ձեռք բերել: Հանդիպելով կյանքի ոչ բացահայտ *վճռորոշ պահերի*, նրանք ճիշտ են արձագանքել և մեծ վարձատրություններ են ստացել:

Մեր աշխատանքի արդյունքները չկորցնելու ամենապարզ միջոցն Աստծո խորհուրդը մշտապես պատվելու սովորություն ձեռք բերելն է: Մենք պետք է ամեն օր որոշումներ կայացնենք: Կգա մեկ օր, երբ ետ կնայենք և կհասկանանք, թե դրանցից որոնք էին *վճռորոշ*, բայց եթե մեր մեջ աստվածահաճո վարքագիծ է ձևավորվել, ապա կշարունակենք հետևել դրան և հետագայում կտեսնենք մեր վարձատրությունը:

Վարձատրություններ

Այս պնդումը հասկանալ է տալիս Հովհաննեսի խոսքի երկրորդ մասը, մենք կընթերցենք խոսքն ամբողջությամբ. «Զգո՛ւյշ կացեք ձեր անձերից, որ չկորցնենք այն, որ վաստակեցինք, *այլ՝ որ ամբողջ վարձքն առնենք»:*

Նա *Վարձատրող* է (տե՛ս Եբր. 11.6):

Այս ճշմարտությունը պետք է խորապես հաստատվի մեր սրտերում: Իրականում, Աստված սիրում է վարձատրել: Ինչպե՞ս Նա ներկայացավ Աբրահամին. «Այս բաներից հետո Տիրոջ Խոսքը եկավ Աբրամին տեսիլքում՝ ասելով. «Մի՛ վախեցիր, Աբրա՛մ: Ես քո վահանն եմ, *քո չափազանց մեծ վարձատրությունը»»* (Ծննդ. 15.1, NKJV, շեղագիրը հեղինակինն է):

Նա ասաց. «Ես [եմ] քո... *չափազանց մեծ վարձատրությունը»:* Ներկայանալու ինչպիսի՜ ձև, հատկապես երբ խոսքն Ամենակարող Աստծո մասին է: Սաղմոս 19.9-11-ը կրկնում է այս գաղափարը. «Տիրոջ դատաստանները ճշմարիտ են, բոլորովին արդար.

նրանց պահպանությունում շատ հատուցում կա» (շեղագիրը հեղինակինն է): Սաղմոս 57.2-ում կարդում ենք. «Ես կաղաղակեմ Բարձրյալ Աստծուն, Ով գործում է իմ փոխարեն և վարձատրում է ինձ [Ով իրագործում է ինձ համար ունեցած Իր մտադրությունները և, անկասկած, ավարտին է հասցնում]» (AMPC, շեղագիրը հեղինակինն է):

Աստված վարձատրող է, և Նա սիրում է վարձատրել Իր զավակներին: Քանի որ ես չորս որդիների հայր եմ, մասամբ բացահայտել եմ այս բերկրանքը: Ես սիրում եմ տեսնել, թե ինչպես են նրանց աչքերը երախտագիտությամբ փայլում, երբ նրանք բավականություն են զգում՝ գտնվելով իրենց կատարած ճիշտ ընտրության ետվայելքի մեջ, և պարգևատրվում են դրա համար: Այնուամենայնիվ, ես նույնպես սովորել եմ, որ վատ վարքը վարձատրելն իմաստուն չէ: Վարձատրելով այն մարդկանց, որոնք վարձատրության արժանի չեն կամ չեն վաստակել այդ վարձատրությունը, դուք զրկում եք նրանց շարժառիթից, իսկ շարժառիթը լավ բան է: Իմ որդիները գիտեն, որ ես սիրում եմ իրենց, սակայն տարիների ընթացքում նրանք հասունացել են՝ հասկանալու համար տարբերությունը իմ սիրո և հաճության միջև: Աստված խորապես սիրում է յուրաքանչյուրիս, և Նրա սերը կատարյալ է: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ չեն լինի այնպիսի պահեր, երբ մեր գործողությունները և որոշումները հաճելի չեն լինի Նրան: Աստված վարձատրում է նրանց, ովքեր հաճելի են Իրեն, այսինքն՝ նրանց, ովքեր ականջ են դնում Իր խորհրդին:

Ուշադրություն դարձրեք, որ Հովհաննեսն ասում է. «...որ *ամբողջ* վարձքն առնենք»: Երբ մտորում էի այս խոսքերի շուրջ, *«ամբողջ»* բառն ասես էջից դուրս թռավ: Ես մտածեցի. *«Եթե գոյություն ունի ամբողջական վարձատրություն, նշանակում է՝ գոյություն ունի մասնակի վարձատրություն և, նույնիսկ, ոչ մի վարձատրություն չստանալու հավանականություն»* (հիշեք, որ մենք խոսում ենք ոչ թե փրկության, այլ վարձատրությունների մասին): Շարունակելով մտորել, ես եզրակացրի, որ Հովհաննեսի խոսքերը երկակի կիրառություն ունեն: Առաջինը Քրիստոսի ատյանն է: Պողոսը պնդում է. «Բայց վստահ ենք և ավելի ընտրում ենք այս մարմնից դուրս գալ և Տիրոջ մոտ մտնել» (Բ Կորնթ. 5.8):

Մենք անմիջապես հասկանում ենք, որ Պողոսի խոսքերն ուղղված չեն ամբողջ մարդկությանը, որովհետև երբ անհավատը դուրս է գալիս իր մարմնից, նա Տիրոջ մոտ չի մտնում, այլ դժոխք է գնում: Սա կարող է դաժան թվալ, բայց սա ճշմարտությունն է: Հիսուսը չեկավ այս աշխարհ՝ այն դատապարտելու համար, ընդհակառակը՝ փրկելու համար: Այս աշխարհն արդեն դատապարտված էր Ադամի պատճառով, որը հավիտենական մահվան մատնեց մեզ (տե՛ս Հովհ. 3.17,18): Միայն նրանք, ովքեր ընդունում են Հիսուսին՝ լիովին նվիրելով Նրան իրենց կյանքը, կմտնեն Տիրոջ մոտ, երբ դուրս գան երկրային մարմիններից: Դիմելով հավատացյալներին՝ Պողոսը շարունակում է.

> «Դրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ մնանք, և թե՛ դուրս գանք, հաճո լինենք Նրան: Որովհետև մենք՝ ամենքս, պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար»:
>
> – Բ Կորնթ. 5.9,10

Յուրաքանչյուր հավատացյալ կանգնելու է Քրիստոսի ատյանի առջև: Այդ օրը յուրաքանչյուրը հատուցում է ստանալու ըստ այն գործերի, որոնք կատարել է երկրի վրա անցկացրած կարճ ժամանակվա ընթացքում: Աստվածաշնչի «Բարի լուր» թարգմանության մեջ գրված է. «Յուրաքանչյուրը կստանա այն, ինչին արժանի է»: Մենք չենք դատվի ըստ մեր մեղքերի, քանի որ Հիսուսի արյունը ջնջել է մեղքին վերագրվող հավիտենական պատիժը: Փոխարենը՝ կվարձատրվենք կամ կորուստ կկրենք այն ամենի պատճառով, ինչ արել ենք՝ որպես հավատացյալներ: Մեր գործերը, խոսքերը, մտքերը և նույնիսկ շարժառիթները կստուգվեն՝ Նրա Խոսքի լույսի ներքո: Այն ժամանակավոր իրողությունները, որոնց վրա կառուցել ենք մեր կյանքը, կրակով կայրվեն՝ վերածվելով բաց թողնված հնարավորությունների, իսկ հավիտենական իրողությունները՝ հավերժական վարձատրությունների (տե՛ս Ա Կորնթ. 3.14,15):

Կորուստների և վարձատրությունների չափը տարբեր է լինելու՝ սկսած այն բանից, որ մեր բոլոր գործերը կայրվեն, սակայն մենք կփրկվենք՝ ասես կրակից, մինչև այն պահը, որ հավիտյան

կթագավորենք Հիսուս Քրիստոսի հետ (տե՛ս Ա Կորնթ. 3.15, Հայտն. 3.21): Անկասկած, այս շրջանակը լայն է: Առաջինը ոչ մի վարձատրություն չստանալու հավանականությունն է, վերջինը ամբողջական վարձատրություն ստանալն է, և ցանկացած վիճակ այս երկուսի միջև կարելի է մասնակի վարձատրություն համարել:

Քրիստոսի ատյանի վճիռները կոչվում են «հավիտենական դատաստաններ» (Եբր. 6.1,2), ինչը նշանակում է, որ այդ վճիռները երբեք լրացումների և փոփոխությունների ենթակա չեն լինի: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այն, թե ինչպես ենք վերաբերվում Քրիստոսի խաչին, որոշում է, թե *որտեղ* կանցկացնենք հավիտենությունը: Այնուամենայնիվ, դրանից հետո մեր կյանքը՝ որպես հավատացյալներ, որոշում է, թե *ինչպես* կանցկացնենք հավիտենությունը:

Այսպիսով, մենք իմաստությամբ կվարվենք, եթե ջանասիրաբար ուսումնասիրենք, թե ինչ է Սուրբ գիրքն ասում հավիտենական դատաստանների և վարձատրությունների վերաբերյալ: Այս գիտելիքը Քրիստոսի մասին համարվում է սկզբնական կամ տարրական ուսմունք: Տարրական դպրոցում դրվում է մեր կրթության հիմքը՝ կարդալը, գրելը, թվաբանությունը և այլն: Կարո՞ղ եք պատկերացնել, որ փորձեիք ավագ դպրոցի կամ համալսարանական կրթություն ստանալ՝ չկարողանալով կարդալ, գրել նաև գումարում և հանում կատարել: Դա անհնարին կլիներ: Այնուամենայնիվ, չափազանց շատ հավատացյալներ փորձում են կառուցել իրենց քրիստոնեական կյանքը՝ առանց Քրիստոսի ուսմունքների մասին այս տարրական գիտելիքի: Այս խիստ անհամապատասխանությունը դրդեց ինձ գրել *«Հավիտենությամբ շարժվողները»* գիրքը, որը մանրակրկիտորեն անդրադառնում է այս խնդրին, և ես հանձնարարում եմ ընթերցել այն որպես այս ուղերձի հավելում:

Այս կյանքը

Մենք ցույց տվեցինք, որ աստվածահաճո սովորությունները վարձատրության խոստում ունեն Քրիստոսի ատյանի առջև, սակայն դրանցից բխող օրհնությունը հասնում է մեզ նաև այս կյանքում: Գրված է. «Աստվածապաշտությունն ամեն

բանի համար օգտակար է՝ ունենալով *այժմյան* և *գալու կյանքի* խոստումը» (Ա Տիմոթ. 4.8, շեղագիրը հեղինակինն է):

Մեր Հայրը ցանկանում է վարձատրել մեզ և՛ գալիք կյանքում, և՛ այժմ, երբ հետևում ենք Նրա խորհրդին: Գրված է. «Արդարները կվարձատրվեն այս երկրում» (Առակ. 11.31, NASB): Ոչ միայն Երկնքում, այլև այս կյանքում: Եվ կրկին. «Արդար մարդիկ կվարձատրվեն բարիքներով» (Առակ. 13.21, GNT): Հակոբոսը շեշտում է հետևյալը. «Մի՛ խաբվեք, իմ սիրելի եղբայրներ. ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից» (Հակոբ. 1.16,17):

Բարին Աստծուց է: Մի՛ վերագրեք վնասակար կամ կործանարար բաներն Աստծուն. Նա բարի պարգևներ Շնորհողն է: Աստված ցանկանում է վարձատրել ձեզ Իր օրհնություններով (բարիքներով)՝ այստեղ և հիմա: Նրա վարձատրությունները ոչ մի վնաս չեն պատճառի ձեզ: Գրված է. «Տիրոջ օրհնությունն է հարստացնում, և Նա տրտմություն չի ավելացնում դրան» (Առակ. 10.22, NKJV): Եվ կրկին. «Վստահելի մարդն առատ վարձատրություն կստանա» (Առակ. 28.20, NLT): *Առատ վարձատրությունն ամբողջական վարձատրությունն է:*

Շարունակելով մտորել Հովհաննես առաքյալի խոսքերի շուրջ՝ մտածեցի. *«Քանի որ մեր ապագայում գոյություն ունի ամբողջական կամ մասնակի վարձատրություն ստանալու, նաև բոլորովին վարձատրություն չստանալու հավանականություն, տրամաբանական է, որ դա վերաբերում է նաև այս կյանքին»:* Այս պնդումն ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ենք Հիսուսի կյանքը: Երբ Նա այս երկրի վրա էր և հաղորդակցվում էր մարդկանց հետ, ոմանք մասնակի վարձատրություն էին ստանում, մյուսները ոչինչ չէին ստանում, և ոմանք էլ ամբողջական վարձատրություն էին ստանում: Դիտարկենք օրինակներ յուրաքանչյուր հավանականության վերաբերյալ և փորձենք օրինաչափություններ բացահայտել, որոնք ցույց կտան, թե ինչ է Նա ցանկանում յուրաքանչյուրիս կյանքում:

2

Մասնակի և ոչ մի վարձք

Նազարեթն անհամբերությամբ սպասում էր Մեսիայի խոստացած հայտնությանը. մարդիկ զգոնությամբ հետևում էին իրադարձություններին, քանի որ եկել էր Նրա հայտնվելու ժամանակը: Նրանք նման էին մերօրյա քրիստոնյաներին, որոնց մեծ մասը գիտի, որ ապրում ենք Նրա երկրորդ գալստյանը նախորդող ժամանակաշրջանում: Հիսուսն ասաց, որ մենք կիմանանք ժամանակաշրջանը կամ սերունդը, բայց ոչ՝ օրն ու ժամը: Այնպես որ, չպետք է տարօրինակ համարել, որ իսրայելցիները գիտեին Նրա առաջին գալստյան ժամանակաշրջանը: Դանիելը ժամկետներ էր նշել Նրա առաջին գալստյան վերաբերյալ իր գրվածքներում (տե՛ս Դանիել 9.24-26), իսկ դպիրներն ասացին մոգերին, թե որտեղ գտնել մանուկ Հիսուսին (տե՛ս Մատթ. 2.4): Նազարեթի բնակիչները գիտեին, որ ժամանակը մոտ էր: Այնուամենայնիվ, հենց որ Մեսիան հայտնվեց նրանց միջև, նրանց արձագանքը կարելի էր տարօրինակ համարել:

> «Եվ *չէր կարողանում* այնտեղ *ոչ մի* զորություն անել, բայց միայն մի քանի հիվանդների վրա ձեռք դրեց և բժշկեց»
>
> – Մարկ. 6.5, (շեղագիրը հեղինակինն է)

Ուշադրություն դարձրեք *«չէր կարողանում* այնտեղ *ոչ մի* զորություն անել» խոսքերին: Մի քանի տարի առաջ, երբ կարդում

էի այս խոսքը, այս պնդումը գրավեց իմ ուշադրությունը: Ես մտածեցի. *«Այստեղ գրված չէ. «Նա չէր ցանկանում ոչ մի զորություն անել»»*: Եթե այդպես լիներ, ուշադրություն չէի դարձնի դրան, քանի որ դա կվերաբերեր Հիսուսի կամքին: Այնուամենայնիվ, «չէր կարողանում... անել»-ը նշանակում է, որ Նա ետ չէր պահում Իր զորությունը, սակայն ինչ-որ բան խոչընդոտում էր Նրան: Այս փաստը շեշտվում է և պարզորեն ներկայացվում նաև այլ թարգմանություններում. Աստվածաշնչի «Ընդլայնված թարգմանության Դասական հրատարակության» մեջ գրված է. «Նա չկարողացավ անել»:

Հարց է ծագում. *ինչո՞ւ Հիսուսը չկարողացավ որևէ զորավոր գործ անել Նազարեթում:* Ի՞նչը խոչընդոտեց Նրան: Նա մեծ հրաշքներ գործեց այլ քաղաքներում. կույրերը տեսնում էին, խուլ ականջները բացվում էին, կաղերն անսպասելիորեն քայլում էին, մահացածները հարություն էին առնում: Եվ սա պարզապես օրինակ է այն մասին, թե ինչ էր տեղի ունենում: Ավետարաններում հաճախ է գրված, որ Նա բժշկում էր ամեն տեսակի հիվանդություն և տկարություն: Ո՞րն էր տարբերությունը: Ինչո՞ւ միայն մի քանի հիվանդ բժշկվեց այդ քաղաքում: Պատասխանը Նազարեթի բնակիչների խոսքերում է՝ այս պնդմանը նախորդող հատվածում.

«Սրան որտեղի՞ց է այս բաները, կամ՝ սա ի՞նչ իմաստություն է, որ տրված է սրան, որ այսպիսի զորություններ էլ են լինում սրա ձեռքով: Չէ՞ որ սա է հյուսնը՝ Մարիամի Որդին, Հակոբի և Հովսեսի և Հուդայի և Սիմոնի եղբայրը, և չէ՞ որ դրա քույրերը այստեղ՝ մեզ մոտ են: Եվ Նրա վրա գայթակղվում էին: Հիսուսն էլ նրանց ասաց. «Մի մարգարե անարգ չէ, բայց միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան մեջ»» (Մարկ. 6.2-4, շեղագիրը հեղինակինն է):

Ի՞նչ տեղի ունեցավ. Հիսուսը վերադարձավ այն քաղաքը, որտեղ մեծացել էր, և միացավ Աստծո ժողովրդի հավաքույթին՝ շաբաթ օրը: Ամբողջ համայնքը ժողովարանում էր: Հանկարծ Հիսուսը ոտքի ելավ և կարդաց հետևյալը. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որովհետև Նա օծեց Ինձ...» (Ղուկ. 4.18, NKJV):

Մարդիկ գիտեին այդ հատվածի շարունակությունը. այդ խոսքերը ծանոթ էին նրանց: Նրանք բազմիցս լսել էին այդ հատվածը Եսայու գրքից, որը Մեսիայի գալուստի մասին խոսող հիմնական

մարգարեական գրքերից էր: Դա կարելի է համեմատել այն բանի հետ, որ ինչ-որ մեկն այսօր ամբիոնի մոտ բարձրանար և կարդար Երանելիները կամ Տերունական աղոթքը. մենք կիմանայինք այդ հատվածների շարունակությունը:

Հիսուսը շարունակեց. «Աղքատներին ավետարանելու, սրտով կոտրվածներին բժշկելու, գերիներին թողություն քարոզելու և կույրերին՝ տեսություն, խոցվածներին արձակելու՝ ազատելով, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու» (խոսքեր 18,19):

Այդ պահին մարդկանց մտքում միայն մեկ հարց կար. ինչո՞ւ էր այդ անուսում տեղացի երիտասարդը կարդում այս խոսքերը, այլ ոչ թե իրենց ուսյալ ռաբբունին: Բայց հանկարծ տեղի ունեցավ անսպասելին. փակելով մագաղաթի գալարը՝ Հիսուսը հայտարարեց. «Այսօր այս Գիրքը կատարվեց ձեր ականջներում» (խոսք 21), այլ կերպ ասած՝ «Ես եմ Մեսիան»: Ապա Նա շարունակեց պատմել այն մեծ և զորավոր գործերի մասին, որոնք արել էր այլ քաղաքներում, և ավարտեց Իր խոսքն ազդեցիկ մարգարեական ուղերձով:

Ինչ: Նա իսկապե՞ս դա նկատի ուներ: Նրանք ճիշտ հասկացան իրենց լսածը: Մի՞թե Նա իսկապես ասաց, որ Եսային մարգարեացել է հենց Իր մասին: Ինչպիսի՜ անհեթեթություն: Դա խելագարությո՛ւն է: Չհավատալով իրենց լսածին՝ մարդիկ ասում էին միմյանց.

- Սա Հիսո՛ւսն է: Ի՞նչ է Նա անում: Ի՞նչ է Նա ասում:

Պատկերացնում եմ, որ մի կին ասաց.

- Անհնա՞ր է: Նա իմ որդի Թորայի դասարանից էր:

Եվս մեկն ապշահար ավելացրեց.

- Նրա ընտանիքը մեր հարևանությամբ է ապրում: Նա խաղում էր իմ Բենիամինի հետ:

Մյուսները, հավանաբար, ավելի թարմ հիշողություններ ունեին.

- Նա պատրաստել է այն սեղանը, որի շուրջ ամեն երեկո ընթրում ենք: Նա պատրաստել է մեր աթոռները: Նա հյուսնի որդին է: Ի՞նչ Նա նկատի ունի՝ ասելով. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է»: Նրա կարծիքով՝ ո՞վ է Ինքը:

Այսօր մենք միգուցե կասեինք. «Նա ֆուտբոլ էր խաղում իմ որդու հետ», կամ՝ «Նա իմ դստեր դասարանից էր»:

Նրանք մտավոր պատկերացում էին կազմել այն մասին, թե ինչպես իրենց Մեսիան պետք է գար՝ ըստ Հին կտակարանի Սուրբ գրքերի իրենց ընկալման: Ահա ևս մեկ հայտնի հատված Եսայուց.

> «Որովհետև մեզ համար մի Մանուկ ծնվեց, մեզ մի
> Որդի տրվեց, և իշխանությունը կլինի Նրա ուսի վրա...
> Իշխանությունը շատացնելուն և խաղաղությանը վերջ
> չկա Դավթի աթոռի վրա և Նրա թագավորության վրա...
> հիմիկվանից մինչև հավիտյան»:
>
> – Եսայի 9.6,7

Այս մարդիկ սպասում էին մեծ Թագավորի, ով գերբնականորեն իմաստուն և հզոր նվաճող կլիներ: Նա կարճ ժամանակում կազատեր իրենց Հռոմի հպատակությունից և իրեն հավասարը չունեցող երկիր կդարձներ: Նա կրկին կհաստատեր Դավթի գահը և կիշխեր հավիտյանս հավիտենից: Բայց երբ Հիսուսը եկավ՝ որպես իրենցից մեկը, որը մեծացել է իրենց դպրոցներում, ծիծաղել է իրենց փողոցներում, տնային կահույք է պատրաստել, իսկ այժմ շրջապատված է մաֆիայով (հարկահավաքներով) և մարմնավաճառներով, նրանք ապշեցին: Նրանք չէին կարող ընդունել դա: «Սպասեք, - գոչում էին նրանք թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ, - մենք այսպես չէինք սպասում Մեսիայի գալուստին»: Այդ քաղաքի բնակիչները չէին հասկանում, որ «մեզ Որդի տրվեց» արտահայտության և այս մարգարեության ամբողջական իրականացման և նյութական դրսևորման՝ «Իշխանությունը շատացնելուն և խաղաղությանը վերջ չկա» խոսքերի միջև մի քանի հազար տարի է լինելու:

Այս պատմությունը, ինչպես և շատ այլ նման պատմություններ ամբողջ Սուրբ գրքում, հայտնում է մի ճշմարտություն, որը դժվար է ընդունել. *Աստված հաճախ ուղարկում է մեզ այն, ինչի կարիքը ունենք, այնպիսի փաթեթավորմամբ, որը չենք ցանկանում:* Ինչո՞ւ: որպեսզի հասկացնի, որ Ինքն Աստված է, և մենք չենք կարող կանխատեսել Իր արարքները: Մենք չենք կարող պատասխան-

ներ փնտրել միայն մեր մտքով. մենք պետք է փնտրենք Նրան և Նրա մատակարարումը մեր սրտով: Սուրբ գիրքն անկարելի է մեկնել մեր սահմանափակ մարդկային մտավոր ընկալմամբ: Անհրաժեշտ է Աստծո Հոգու շունչը: Միայն Նա է իմաստուն խորհուրդներ տալիս և սովորեցնում, թե ինչպես ճշտորեն հետևել դրանց:

Բացարձակ հակադրություն

Թույլ տվեք այլ օրինակ բերել սրա վերաբերյալ: Փարիսեցիները նույնպես ակնկալում էին հզոր նվաճող Մեսիայի՝ հերոսի, ով կազատեր Աստծո ժողովրդին հռոմեական հպատակությունից: Որպես ժողովրդի առաջնորդներ, նրանք անհամբեր սպասում էին Նրա գալուստին, քանի որ հավատում էին, որ կառավարական դիրքեր էին ստանալու Երուսաղեմում հաստատվող այդ նոր թագավորության մեջ: Այնպես որ, երբ Հիսուսը հայտնվեց ասպարեզում՝ որպես անուսում գալիլեացի, նրանք ծաղրեցին Նրան: Հիսուսը չէր համապատասխանում նաև Մեսիայի մասին պատկերացմանը:

Հիսուսին հարցաքննության ենթարկելու բազմաթիվ դեպքերից մեկի ժամանակ տեղի ունեցավ հետևյալը. «Երբ որ փարիսեցիներից հարցվեց, թե Աստծո արքայությունը երբ պիտի գա, պատասխանեց նրանց և ասաց. «Աստծո արքայությունը դրսի նշանով չի գա: Ոչ էլ կասեն, թե՝ ահա այստեղ է, կամ՝ ահա այնտեղ է, որովհետև ահա Աստծո արքայությունը հենց ձեր ներսում է»» (Ղուկ. 17.20):

Կրկին, փարիսեցիները նկատի ունեին Եսայու մարգարեությունը Մեսիայի երկրային թագավորության մասին: Նրանք նույնպես սպասում էին Մեսիայի՝ հիմնվելով Սուրբ գրքի մտավոր մեկնության, ոչ թե Աստծո Հոգու առաջնորդության վրա: Նրանք ճանաչում էին Աստծուն ոչ թե իրենց սրտով, այլ իրենց մտքով:

Ի հակադրություն, դիտարկենք մեկ այլ մարդու, որը սպասում էր Մեսիային: Նրա անունը Սիմեոն էր: Ղուկասի Ավետարանում գրված է, որ նա «...արդար և աստվածավախ էր և սպասում էր Իսրայելի մխիթարությանը, և *Սուրբ Հոգի* կար նրա վրա: Եվ նրան պատգամ էր եղած *Սուրբ Հոգուց,* որ մահ չի տեսնի, մինչև որ Տիրոջ Քրիստոսին տեսնի: Եվ *Հոգով* եկավ տաճար, և երբ որ ծնող-

ները Հիսուս երեխային բերեցին, որ օրենքի սովորության պես Նրա վրա անեն, նա էլ առավ Նրան, ընդունեց իր գիրկը, Աստծուն օրհնեց ու ասաց...» (Ղուկ. 2.25-28, շեղագիրը հեղինակինն է):

Ամփոփելով Հիսուսի վերաբերյալ ասված Սիմեոնի խոսքերը՝ նա հայտարարեց, որ այդ երեսուն օրական մանուկը Մեսիան էր: Սա անչափ հետաքրքիր է: Այդ մարդը ճանաչեց Մեսիային, երբ Նա ընդամենը մեկ ամսեկան էր, սակայն ամբողջ Նազարեթը չկարողացավ ճանաչել Նրան, և փարիսեցիները ծաղրեցին Նրան, երբ Նա երեսունն անց էր, և այնպիսի հրաշքներ ու նշաններ էր գործում, որոնք որևէ մեկը երբևէ չէր գործել: Ո՞րն է պատճառը: Կրկին, պատճառն այն է, որ Աստված Հոգի է, և ովքեր ցանկանում են ճանաչել Նրան և Նրա ճանապարհները, պետք է ճանաչեն Նրան Իր Հոգով, Որը հայտնում է ճշմարտությունը: Սա է գլխավոր տարբերությունը Սիմեոնի և մյուսների միջև, և մենք խոսելու ենք այս ճշմարտության մասին: Այս հայտնությունը կօգնի հասկանալ, թե ինչու բազմաթիվ մարդիկ չեն ստանում իրենց ամբողջական ժառանգությունն Աստծուց:

Պատիվ

Որպես սկիզբ, կրկին դիտարկենք Հիսուսի պատասխանը՝ Իր ծառայության հանդեպ Իր համաքաղաքացիների արձագանքին. «Մարգարեն առանց *պատվի* չէ՝ բացառությամբ երբ իր երկրում է, իր ազգականների մեջ է և իր տանն է» (Մարկ. 6.4, NKJV, շեղագիրը հեղինակինն է):

Բանալի բառն այս խոսքում *«պատիվ»* բառն է: Նրանք չպատվեցին Նրան:

«Պատիվ» բառը հունարենում *«տիմի»*-ն է: Ես լրջորեն ուսումնասիրել եմ այս բառը և դրա հետ սերտորեն առնչվող բառերը: Ես ընթերցել եմ հոդվածներ հունարենի բազմաթիվ բառարաններում, մեկնություններում և հին հունարենի վերաբերյալ ուսումնասիրություններ պարունակող այլ գրքերում: Նույնպես համապարփակ քննարկումներ եմ ունեցել երկու հունարեն վարժ խոսող մարդկանց հետ: Նրանցից մեկը բնակվում է Հունաստանում (նա չորրորդ սերնդի ծառայող է), իսկ մյուսը Մեծ Բրիտանիայում բնակվող ծառայող է: Այն սահմանումները, որոնք ներկայացնելու եմ, բոլոր այս աղբյուր-

ներից ստացված տեղեկության համադրությունն է:

«Տիմի» («պատիվ») բառի պարզեցված և բառացի սահմանումը «արժևորում» բառն է: Հույնը, լսելով *«տիմի»* բառը, պատկերացնում է *արժեքավոր, թանկ և կարևոր մի բան, օրինակ՝ ոսկի:* Մտածե՛ք այս մասին. ոսկին չեն դնում անպետք իրերի դարակում. ընդհակառակը, պատվավոր տեղ են հատկացնում: Պատիվը կարելի է սահմանել նաև որպես *«գնահատանք», «բարեհաճ վերաբերմունք»* և *«հարգանք»:*

Երբեմն որևէ բառի իմաստն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել դրա հականիշը: Պատվի հականիշն *անպատվությունն* է կամ *անարգանքը,* հունարենում՝ *«ատիմիա»:* Ահա այս բառի սահմանումներից մի քանիսը. *«հարգանք չցուցաբերել կամ չարժևորել. վերաբերվել սովորականի պես. հասարակ, աննշան»:* Հույնը, լսելով «անպատվություն» բառը, պատկերացնում է *սովորական, թեթև և աննշան մի բան, օրինակ՝ գոլորշի:* Անպատվության ավելի խիստ ձև է ամոթալի և նույնիսկ նվաստացուցիչ վերաբերմունք ստանալը:

Հիմնվելով հունարեն բառարանների և մեկնությունների իմ ուսումնասիրության վրա՝ բացահայտեցի, որ պատիվ կարելի է ցուցաբերել գործով, խոսքով նաև մտքով: Այնուամենայնիվ, ճշմարիտ պատիվը սկիզբ է առնում սրտից: Ահա թե ինչու է Աստված ասում. «Որովհետև այս ժողովուրդը մոտենում է իրենց բերաններով և *պատվում է Ինձ իրենց շուրթերով,* բայց *հեռացրել է իրենց սրտերն Ինձնից,* և նրանց *վախն Իմ հանդեպ* ուսուցանվում է մարդկանց պատվիրաններով» (Եսայի 29.13, NKJV, շեղագիրը հեղինակինն է):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված ասում է. «Նրանց վախն Իմ հանդեպ»: Ճշմարիտ պատիվը սկիզբ է առնում Աստծո հանդեպ ակնածալի երկյուղ ունեցող սրտից: Սա կարևոր է, և մենք կխոսենք այս մասին հաջորդ գլուխներից մեկում:

Հիսուսն ասաց, որ Նազարեթի բնակիչները հրաժարվեցին պատվել Իրեն: Նրա հարազատ քաղաքի մարդիկ արժեքավոր և թանկ չհամարեցին Նրան: Նրանք չճանաչեցին Հիսուսին՝ որպես Երկնքից իրենց ուղարկված Անձի, Ով եկել էր կատարելու Աստծո կամքը: Փոխարենը, նրանք տեսան իրենց առջև կանգնած հա-

սարակ մարդու, սովորական տեղացի երիտասարդի: Այդ պատճառով, ընդամենը մասնակի վարձատրություն ստացան: Հիսուսը բախվեց խոչընդոտի՝ չկարողանալով զորավոր գործեր անել: Ոչ մի ուշագրավ բան տեղի չունեցավ. հավանաբար բժշկվեցին մի քանի գլխացավեր, միգուցե ինչ-որ մեկի հոդացավը, կամ մի քանիսի մեջքի ցավը:

Մտածե՛ք այս մասին. Հիսուսը՝ Աստծո Որդին, մարդու Որդին, Ով անսահմանորեն լցված է Աստծո Հոգով, ուղարկվում է բժշկելու հիվանդներին և սատանայից բոլոր հարստահարվածներին, սակայն չի կարողանում կատարել Իր հանձնարարականը, ոչ թե՝ որովհետև Աստծո կամքը չէր, որ բոլորն այդ քաղաքում բժշկված լինեին, այլ՝ որովհետև մարդիկ սահմանափակեցին Նրան՝ հրաժարվելով պատիվ ցուցաբերել: Նրանք վերաբերվեցին Նրան որպես հասարակ տեղացու: Այդ պատճառով, աննշան մասնակի վարձատրություն ստացան (ընդամենը մի քանի հիվանդ բժշկվեց):

Ոչ մի վարձատրություն չստանալու օրինակ

Ավետարաններում տեսնում ենք մեկ այլ պատմություն, որտեղ Հիսուսը, լինելով մի տան մեջ, սովորեցնում էր բազմաթիվ փարիսեցիների և օրենքի վարդապետների: Այդ ծառայողները եկել էին Գալիլեայի և Հրեաստանի բոլոր քաղաքներից՝ Նրան լսելու համար: Գրված է. «Եվ Տիրոջ զորությունը կար՝ *նրանց* բժշկելու համար» (Ղուկ. 5.17, շեղագիրը հեղինակինն է):

Ուշադրություն դարձրեք *«նրանց»* բառին. այս բառն, անկասկած, վերաբերում էր ներկաներին: Այժմ թույլ տվեք մի ճշմարտություն նշել. Աստված երբեք ոչինչ չի վատնում: Հիշե՛ք պատմությունն այն մասին, որ Հիսուսը կերակրեց չորս հազարի, իսկ մեկ այլ դեպքում՝ հինգ հազարի: Երկու դեպքերում էլ Նա խստորեն հանձնարարեց հավաքել բոլոր մնացորդները, որպեսզի ոչ մի բան չկորչեր: Նա հավաքեց այն, ինչը մեզնից շատերը դեն կնետեին կամ կգցեին սննդի մնացորդները մանրացնող սարքի մեջ: Դուք կարող եք տեսնել նույն վարվելակերպն *Աստծո ճանապարհների մեջ ամբողջ Սուրբ գրքում:* Նա երբեք ոչինչ չի վատնում:

Այսպիսով, եթե Տիրոջ զորությունը ներկա էր՝ փարիսեցինե-

րին և օրենքի վարդապետներին բժշկելու համար, նշանակում է՝ նրանցից առնվազն մեկը, կամ, ամենայն հավանականությամբ, շատերը բժշկության կարիք ունեին: Ես ասում եմ սա ըստ իմ փորձառության: Պատկերացնենք այս իրավիճակը մեր օրերում: Մի քանի հարյուր մարդ հավաքվում է մի սրահում: Նրանց թվում առնվազն մեկ տասնյակից ավելի ինչ-որ տեսակի հիվանդություն ունեցող մարդիկ կան: Աստծո զորությունը ներկա է՝ բոլորին բժշկելու համար, սակայն նրանցից ոչ ոք չի բժշկվում:

Որոշ ժամանակ անց, մի քանի տղամարդ, պատգարակի վրա բերեցին իրենց անդամալույծ ընկերոջը: Չկարողանալով դռնից ներս մտնել, քանի որ ամբողջ տունը լեփ-լեցուն էր, այլ ճանապարհ փորձեցին: Հանձնվելու փոխարեն նրանք բարձրացան տանիք, քանդեցին կղմինդրները և իջեցրին անդամալույծին հավաքվածների մոտ, որտեղ Հիսուսն էր: Գրված է. «Եվ Նա, նրանց հավատքը տեսնելով, ասաց. «Ո՛վ մարդ, քո մեղքերը թողված լինեն քեզ»: Եվ դպիրներն ու փարիսեցիները սկսեցին խորհել և ասել. «Սա ո՞վ է, որ հայհոյանք է խոսում. ո՞վ կարող է մեղք թողնել՝ բացի Աստծուց»» (խոսքեր 20,21):

Ուշադրություն դարձրեք, որ, համաձայն Ղուկասի, փարիսեցիները «սկսեցին խորհել և ասել»: Եկեք ավելի խորը ուսումնասիրենք սա: Արդյո՞ք այդ առաջնորդները շշուկով ասացին այդ մասին իրենց կողքին նստած ընկերներին: Թե՞ հավաքվեցին փոքր խմբերով և միմյանց հետ քննարկեցին Հիսուսի խոսքերը: Հստակ հասկանալու համար պետք է կարդանք Մատթեոսի պատմությունն այս մասին: Նա գրում է, որ նրանք *«իրենց ներսում* ասացին» (9.3, NKJV, շեղագիրը հեղինակինն է): Մենք տեսնում ենք, որ այդ վարդապետներն անարգեցին Հիսուսին միայն իրենց մտքում: Նրանք խոսեցին իրենց ներսում: Նրանք բարձրաձայն չխոսեցին՝ ասելով ամոթալի, քննադատական կամ նվաստացուցիչ բառեր. նրանք ընդդիմացան միայն իրենց մտքում: Մարկոսը նույնպես գրում է, որ նրանք «իրենց սրտերում միտք էին անում» (2.6): Լսե՛ք Հիսուսի պատասխանը նրանց մտքերին.

> «Եվ Հիսուսն Իր Հոգու մեջ շուտով իմացավ, թե իրենց սրտում այսպես են միտք անում, և ասաց նրանց. «Ինչո՞ւ եք ձեր սրտում այդ բաները մտածում: Ո՞րն է հեշտ. անդամալույծին ասել՝ թողված են քեզ քո մեղքերը, կամ

ասել՝ վե՛ր կաց, քո մահիճն ա՛ռ և մա՛ն եկ: Բայց որ իմանաք, որ մարդու Որդին իշխանություն ունի երկրի վրա մեղքեր թողնելու»: Անդամալույծին ասաց. «Ասում եմ քեզ, վե՛ր կաց, քո մահիճն ա՛ռ և գնա՛ քո տունը»»

– Մարկ. 2.8-11

Անդամալույծն անմիջապես վեր կացավ, մահիճը վերցրեց և դուրս գնաց այդ տնից՝ բոլոր ծառայողների աչքերի առջև: Աստվածաշնչում գրված է, որ այդ առաջնորդները և ուսուցիչները «զարմանում էին և Աստծուն փառավորում՝ ասելով, թե երբեք այսպիսի բան չեն տեսել» (խոսք 12):

Բոլոր առաջնորդները և ուսուցիչները զարմացան, բայց ոչ ոք չբժշկվեց, թեև Տիրոջ զորությունը սկզբնապես այդտեղ էր՝ հենց նրանց բժշկելու համար: Նրանք *ոչ մի վարձատրություն չստացան*, քանի որ *անարգեցին* Հիսուսին՝ ընդամենը իրենց մտքում: Այս պատմության մեջ որոշիչ գործոնը նրանց գործերը կամ խոսքերը չէին, այլ՝ չբարձրաձայնված մտքերը: Հիշեք՝ պատիվ և անարգանք կարելի է ցուցաբերել գործով, խոսքով կամ մտքով, բայց ճշմարիտ պատիվը սկիզբ է առնում սրտից: Մտքերը կարևոր են:

Այդ առաջնորդներից շատերի մոտ արդեն Հիսուսին անարգելու սովորություն էր ձևավորվել: Նրանք ծաղրել և արհամարհել էին Նրան և շատ անգամներ փորձել էին հրապարակավ խայտառակել: Գրված է. «Եվ դպիրները, և՛ փարիսեցիները սպասում էին Նրան... որ Նրանից չարախոսելու պատճառ գտնեն» (Ղուկ. 6.7): Եվ կրկին. «Եվ դարանամուտ լինելով՝ խաբեբա մարդիկ ուղարկեցին, որ կեղծավորությամբ իրենց անձերն արդար էին ցույց տալիս, որ խոսքով բռնեն Նրան» (Ղուկ. 20.20): Ահա ընդամենը մի քանիսը բազմաթիվ նման օրինակներից: Ինչպես տեսնում եք, այդ մարդիկ ոչ միայն հրաժարվում էին պատվել Հիսուսին, այլև անարգում էին Նրան:

Նազարեթի բնակիչները հրաժարվեցին պատվել Հիսուսին և փոքր կամ *մասնակի վարձատրություն* ստացան: Առաջնորդներն անարգեցին Հիսուսին իրենց մտքում և *ոչ մի վարձատրություն* չստացան: Այժմ դիտարկենք նրանց, ովքեր ամբողջական վարձատրություն ստացան, և տեսնենք՝ արդյո՞ք դա որևէ կերպով առնչվում է պատվի սկզբունքի հետ:

3

Ամբողջական վարձք

Իր ծառայության սկզբնական շրջանում Հիսուսը Կափառնայում եկավ և անմիջապես հանդիպեց մի հռոմեացի սպայի, ավելի ճիշտ՝ հարյուրապետի: Նա աղաչեց Հիսուսին բժշկել իր անդամալույծ ծառային, որը սաստիկ տանջանքների մեջ էր: Հիսուսը համաձայնեց. «Ես կգամ, կբժշկեմ նրան» (Մատթ. 8.7):

Հարյուրապետը պատասխանեց. «Տե՛ր, ես *արժանի չեմ*, որ իմ հարկի տակ մտնես» (խոսք 8, շեղագիրը հեղինակինն է):

Ինչպե՞ս թե «արժանի չեմ»: Այս հատվածում *նվաճողը* խոսում էր *նվաճվածի* հետ: Այդ ժամանակ Իսրայելը Հռոմի տիրապետության ներքո էր: Այդ դեպքում, ինչո՞ւ հռոմեացի սպան ասաց հրեա հյուսնին. «Ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես»: Պատկերացրեք, որ Միացյալ Նահանգների մի գնդապետ ասեր մի իրաքցի ջրմուղագործի. «Ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես»: Դուք հասկանո՞ւմ եք, թե այդ մարդը որքան պատվեց Հիսուսին: Պատճառն այն էր, որ այդ հռոմեացի սպան գիտեր, թե իրականում ով էր Հիսուսը: Նա վերաբերվեց Հիսուսին որպես շատ կարևոր մարդու և պատշաճ հարգանք ցուցաբերեց Նրա հանդեպ: Այդ սպան շարունակեց. «Այլ միայն մի խոսք ասա, և իմ ծառան կբժշկվի: Որովհետև ես էլ իշխանության տակ լինող մարդ եմ և իմ ձեռքի տակ զինվորներ ունեմ, և ասում եմ սրան՝ գնա՛, և գնում է, և ուրիշին՝ ե՛կ, և գալիս է: Եվ ծառային՝ այս բա՛նն արա, և անում է» (խոսքեր 8,9):

Առաջինը խոսենք այդ սպայի դիրքի կամ աստիճանի մասին: Հռոմեական լեգեոնում վեց հազար զինվոր կար, և ամբողջ լեգեոնը մեկ հրամանատար ուներ: Վեցհազարանոց լեգեոնի կազմում կային վաթսուն հարյուրապետներ, որոնք ենթակա էին լեգեոնի հրամանատարին, և յուրաքանչյուր հարյուրապետի ենթակայության ներքո հարյուր զինվոր կար:

Նա բացատրեց Հիսուսին, թե ինչպես և ինչու էր իր խնդրանքը պատասխանվելու: Նա ստանում էր իր զինվորների հարգանքը և հնազանդությունը, քանի որ պատվում էր իր վերադաս սպային՝ հնազանդվելով նրա իշխանությանը: Նա վայելում էր իր վերադաս սպայի աջակցությունը, որն իր հերթին վայելում էր Հռոմի իշխանության աջակցությունը: Ըստ էության, նա նկատի ուներ. «Ես *իշխանություն* ունեմ, *որովհետև* պատվում եմ իմ երկիրը և իմ վերադասներին՝ հարգանք ցուցաբերելով նրանց իշխանության հանդեպ: Այնպես որ, բավական է, որ խոսք ասեմ, և իմ ենթականերն անմիջապես կատարում են հրահանգները»: Առավել պարզ ասած, նա պնդում էր. «Ես իշխանություն ունեմ, քանի որ իշխանության ներքո եմ գտնվում»:

Ուշադրություն դարձրեք նրա նախաբանին. «Որովհետև ես *էլ...»:* Մենք անմիջապես տեսնում ենք, որ Նա ընդգրկեց Հիսուսին իր պնդման մեջ: Նա գիտակցում էր, որ Հիսուսի իշխանությունը նույնպես բխում էր իշխանության ներքո լինելուց (որպես կողմնակի նշում, Ավետարաններում Հիսուսը հաճախ է կոչ անում Հորը հնազանդ լինելու մասին): Զարմանալիորեն, այդ հռոմեացի սպան հասկացել էր, որ Աստծո իշխանությունը գործում էր Հիսուսի կյանքում: Ուստի նրա համար պարզ էր, որ Հիսուսն իշխանություն ուներ անտեսանելի հոգևոր իրականության մեջ, ինչպես որ ինքն իշխանություն ուներ զինվորական ոլորտում: Այսպիսով, նա գիտակցում էր, որ անհրաժեշտ էր միայն պարզ հրաման, և այդ տկարությունը ստիպված կլիներ հնազանդվել: Նրա համար դա նույն բանն էր, ինչ իր իշխանության ներքո գտնվողների արագ արձագանքն իր հրամաններին: Ահա թե ինչպես Հիսուսը պատասխանեց նրան.

> «Երբ որ Հիսուսը լսեց, զարմացավ և ասաց ետևից եկողներին. «Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Իսրայելի մեջ էլ այսպիսի հավատք չգտա»»:
>
> – Խոսք 10

Ինչպիսի՞ պնդում: Հիսուսը հայտարարեց, որ այդ հռոմեացի սպան ավելի շատ հավատք ուներ, քան Հովհաննես Մկրտիչը: Մտածե՛ք այս մասին: Հիսուսը «գտավ» Հովհաննես Մկրտչին Իսրայելում: Եկեք շարունակենք այս միտքը. այդ սպան ավելի շատ հավատք ուներ, քան Հիսուսի մայր Մարիամը: Հիսուսը հայտարարեց, որ նա ամենամեծ հավատքն ուներ, որն Ինքը տեսել էր Իսրայելում անցկացրած ավելի քան երեսուն տարում... իսկ Հիսուսը երբեք չէր չափազանցնում: Դուք հասկանո՞ւմ եք Հիսուսի խոսքերի կարևորությունը: Ըստ էության, մեծագույն հավատքի մրցանակը շահեց մի մարդ, որը Հռոմի քաղաքացի էր, և սպա էր այն բանակում, որը զավթել էր Իսրայելը:

Ես հավատքով լցված մարդ եմ, և հուսով եմ՝ դուք նույնպես, քանի որ առանց հավատքի անկարելի է հաճելի լինել Աստծուն (տե՛ս Եբր. 11.6): Ինչպես որ գրված է Սուրբ գրքում. «Հավատքը լսելուց է, լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմ. 10.17): Կարող եմ հավաստիացնել, որ Հովհաննես Մկրտիչն ավելի շատ աստվածաշնչյան խոսքեր էր լսել, քան այդ հռոմեացի սպան, սակայն հռոմեացի սպան ավելի շատ հավատք ուներ: Ես նույնպես կփորձեմ ենթադրել (ամենայն հավանականությամբ՝ ճիշտ կլինեմ), որ Մարիամը՝ Հիսուսի մայրը, տասներկու աշակերտները և այլ մարդիկ Իսրայելում, որոնց Հիսուսը հանդիպել էր, նույնպես ավելի լավ գիտեին Աստծո Խոսքը, քան այդ հռոմեացի սպան, սակայն նա ավելի շատ հավատք ուներ, քան նրանցից յուրաքանչյուրը: Ինչի՞ շնորհիվ նա այդպիսի հավատք ուներ: Շնորհիվ Հիսուսի հանդեպ ցուցաբերած պատվի, ինչպես նաև իշխանության բնույթը հասկանալու և հնազանդվելու (Ղուկ. 17.5-10-ում գրված է, որ միայն Աստծո Խոսքը լսելը չէ, որ հավատք է ծնում. դրան պետք է ավելանա պատիվը և իշխանությանը պատրաստակամորեն հնազանդվելը):

Այդ մարդը ստացավ իր ամբողջական վարձատրությունը՝ պատիվ ցուցաբերելու և իշխանության բնույթը հասկանալու շնորհիվ: Նրա հարգանքն իշխանության հանդեպ ցույց տվեց, որ պատիվը հիմքի պես դրված էր նրա սրտում: Այսպիսով, նրա շարժառիթի հիմքում պատիվն էր:

Կին, որին անկարելի էր մերժել

Մարկոսի Ավետարանի 7-րդ գլխում գրված է մի հույն կնոջ մասին՝ ծնունդով Ասորեստանի Փյունիկիայից, որը Հիսուսի մոտ եկավ օգնություն խնդրելու: Աստվածաշունչն ասում է, որ նա անդադար աղաչում էր Հիսուսին ազատել իր դստերը դիվային ոգու ազդեցությունից: Նշանակում է՝ Հիսուսը չէր պատասխանել նրա առաջին խնդրանքին, նաև երկրորդին, և հնարավոր է՝ դրան հաջորդող բազմաթիվ խնդրանքներին: Շատ հավանական է, որ Նա չէր էլ նայում այդ կնոջը: Բայց այդ կինը շարունակում էր աղաչել: Նա աննահանջ էր և, ի վերջո, պատասխան ստացավ. «Հիսուսն էլ ասաց նրան. «Թող առաջ երեխաները կշտանան, որովհետև լավ չէ երեխաների հացն առնել և շներին գցել»» (խոսք 27):

Դուք կարող եք մեկնաբանել այս խոսքն՝ ինչպես կցանկանաք, բայց փաստ է, որ Հիսուսը շուն անվանեց նրան: Ես ուրախ եմ, որ այդ կինն ամերիկուհի չէր: Եթե այդպես լիներ, միգուցե Հիսուսը խիստ հանդիմանություն ստանար նրանից: Նա կարող էր կշտամբանքներով հարձակվել. «Ինչ: Դու շո՞ւն ես անվանում ինձ: Ի՞նչ ծառայող ես Դու: Ինչպե՞ս ես համարձակվում այդպես վիրավորել ինձ: Ես եկա օգնություն խնդրելու, և սա՞ է այն վերաբերմունքը, որը ստանում եմ: Պատճառն իմ ազգությունն է... այնպես չէ՞: Քանի որ ես հույն եմ, իսկ Դու՝ հրեա, կարծում ես, որ ինձ շուն անվանելու իրավո՞ւնք ունես: Սա վրդովեցուցի՛չ է: Դու նստած ես Քո աշխատակազմի հետ և անտեսում ես մի կարիքավոր կնոջ, որն աղաչում է իր դստեր համար: Որտե՞ղ է այն սերը, որի մասին Դու քարոզում ես: Ես հասկացա՛, հենց հիմա այստեղ չկան բազմություններ, որոնց պետք է տպավորել. միայն Դու ես և Քո աշխատակազմը, և Դու չես թաքցնում Քո իրական բնավորությունը: Կեղծավո՛ր, բավակա՛ն է... ես հեռանում եմ այստեղից»:

Այդ կինն անմիջապես կհեռանար, և նրա դուստրն այդպես էլ չէր բժշկվի: Այնուամենայնիվ, նա այդպես չվարվեց: Փոխարենը, պատշաճ կերպով արձագանքեց Հիսուսի խոսքերին և վարձատրություն ստացավ. ««Այո՛, Տե՛ր, որովհետև շներն էլ սեղանի տակ երեխաների փշրանքից են ուտում»: Եվ ասաց նրան. «Այս խոսքի համար գնա՛, դևը դուրս եկավ քո աղջկանից»» (խոսքեր 28,29):

Ես գրեթե տեսնում եմ, թե ինչպես է Հիսուսը ժպտում և շարժում գլուխը՝ հավանություն տալով այդ հեթանոս կնոջ հավատքին: Ինչպե՞ս կարելի էր մերժել նրան: Հիսուսն ասաց, որ նրա դստերը չարչարող դևը հեռացել է, և տուն հասնելուն պես տեսավ, որ դուստրն ազատագրված է:

Եթե նա անգործունյա և հեշտորեն վիրավորվող լիներ, միգուցե կորցներ վարձատրության ցանկացած հույս: Նա գիտեր, թե ով էր Հիսուսը, և նպատակաուղղված պատվում էր Նրան, սկզբում իր աննահանջ վերաբերմունքով, իսկ հետո՝ չանարգելով Նրան և չհեռանալով Նրանից, նույնիսկ երբ թվում էր, թե իրեն վիրավորանք կամ անպատվություն էր հասցվել: Շնորհիվ իր վճռականության՝ նա *ամբողջական վարձատրություն* ստացավ:

Հետաքրքիր է նշել, որ զարմանալի հավատքի այս երկու օրինակներն էլ հեթանոսներ էին՝ մարդիկ, որոնք Աբրահամի ուխտի մեջ չէին: Հիսուսը զարմացավ՝ տեսնելով հարյուրապետի և հույն կնոջ հավատքը: Նրանք պարզապես հասկանում էին այն սկզբունքները, որոնք այնքան հաճախ կորսված են այսօր... նրանք պատիվ ցուցաբերեցին իրենց հուսահատ հանգամանքներում, և երկուսն էլ ամբողջական վարձատրություն ստացան:

Պատվի սկզբունքը

Ուսումնասիրելով Ավետարանները՝ կտեսնեք այլ մարդկանց, որոնք մասնակի կամ ամբողջական վարձատրություն ստացան, կամ՝ ոչ մի վարձատրություն չստացան: Յուրաքանչյուր պատմություն եզակիորեն արտացոլում է, թե ինչպես էին նրանք պատիվ ցուցաբերում: Ոմանք ակնհայտորեն պատշաճ պատիվ չէին ցուցաբերում Հիսուսի հանդեպ, մյուսներն ի սրտե և շռայլորեն պատվում էին, իսկ ուրիշները բացահայտ անարգում էին Նրան: Նույնիսկ եթե պատիվն անմիջապես նկատելի չէ այդ պատմություններում, դրա սկզբունքը, միևնույն է, անփոփոխ գործում է: Այն հոգևոր օրենք է, քանի որ Աստված ասում է.

> «Ովքեր պատվում են Ինձ, Ես կպատվեմ, և ովքեր արհամարհում են Ինձ, ցածր կգնահատվեն»:
>
> – Ա Թագ. 2.30, NKJV

Պատիվը կարևոր միջոց է՝ Երկնքից ստանալու համար: Ինձ դուր է գալիս «պատվի սկզբունք» անվանել վերոբերյալ խոսքը: Այն գործում է հետևյալ կերպով. Աստծուն պատվող մարդիկ պատիվ կստանան: Յուրաքանչյուրը, ով պատվեց Հիսուսին, պատասխան ստացավ Աստծուց՝ իր ցուցաբերած պատվի համեմատ: Մտածե՛ք այս մասին... բացի այն, որ հարյուրապետի ծառան և հույն կնոջ դուստրը բժշկվեցին, մենք մինչև օրս խոսում ենք այդ մարդկանց որոշման և հավատքի մասին:

Այս սկզբունքը հատկապես արտահայտվում է անմիջապես Զատկից առաջ տեղի ունեցած մի իրադարձության ժամանակ: Հիսուսը Բեթանիայում էր՝ Սիմոն բորոտի տանը: Մինչ Նա սեղան էր նստած, մի կին մոտեցավ Նրան՝ նարդոսի թանկարժեք յուղով լի շշով: Այդ անուշաբույր յուղի արժեքը սովորական աշխատավորի մեկ տարվա աշխատավարձն էր: Կինը լվաց Հիսուսի ոտքերն իր արցունքներով, չորացրեց իր մազերով, ապա բացեց նարդոսի յուղի շիշը և լցրեց Հիսուսի գլխին:

Նա պատվեց Հիսուսին՝ շռայլորեն օծելով Նրան, սակայն բոլորը չէ, որ ուրախացան այդ պատճառով. «Բայց կային ոմանք, որ իրենց մեջ դժվարացան, ասելով. «Ինչո՞ւ համար եղավ յուղի այդ կորուստը: Որովհետև կարելի էր դրան երեք հարյուր դահեկանից ավելի թանկ ծախել և աղքատներին տալ»: Եվ շատ հանդիմանում էին այդ կնոջը» (Մարկ. 14.4,5):

Եթե հաշվի չառնենք այդ հատուկ պահը, նրանց դիտարկումները թվում են չափազանց տրամաբանական, նույնիսկ՝ լրջախոհ: Քրիստոնյային վայել է աղքատների մասին մտածելը, սակայն նրանք չտեսան ընդհանուր պատկերը: Այդ պահին ինչ-որ բան տեղի ունեցավ: Դա երկնային Աստծուն պատվելու հնարավորություն էր՝ Նրա Որդի Հիսուսին պատվելու միջոցով: Լսե՛ք Տիրոջ խիստ հանդիմանությունը.

> «Հանգի՛ստ թողեք նրան: Ինչո՞ւ եք տրտմեցնում: Նա բարի
> և գեղեցիկ [գովեստի արժանի և ազնիվ] արարք գործեց
> Իմ հանդեպ: Որովհետև աղքատները միշտ ձեզ մոտ են,
> և երբ կամենաք, կարող եք բարիք անել նրանց. բայց Ես
> միշտ ձեզ մոտ չեմ լինի: Նա արեց այն, ինչ կարողացավ...
> և, անկասկած, ասում եմ ձեզ, որտեղ էլ ազդարարվի

Բարի լուրը (Ավետարանը), այն, ինչ նա արեց, կպատմվի՝ նրա հիշատակի համար»:

– Մարկ. 14.6-9, AMPC

Լսեցի՞ք, թե ինչպես Հիսուսը գովեց այդ կնոջը: Շատերը մեծ գործեր արեցին Հիսուսի օրերում, բայց ոչ ոք այդ կերպով կամ այդ չափով պատիվ չստացավ: Հիսուսը մարգարեացավ, որ այդ կնոջ բարի և գեղեցիկ արարքը, որով նա պատվեց Իրեն, գովաբանվելու էր այնտեղ, որտեղ Ավետարանը հասնելու էր, ոչ միայն իրենց ժամանակաշրջանում, այլև սերնդեսերունդ՝ հավիտյան:

Այդ կինը ցանկանում էր պատվել Տիրոջը, սակայն, թափելով օծման յուղը Հիսուսի վրա, ինքը պատվի արժանացավ Տիրոջ կողմից: *Պատվի սկզբունքը* մշտապես գործում է և մշտապես վավեր է մնում: Աստված ասում է. «Ովքեր պատվում են Ինձ, Ես կպատվեմ, բայց ովքեր արհամարհում են Ինձ, *կարհամարհվեն»* (Ա Թագ. 2.30, NIV, շեղագիրը հեղինակինն է): Ուշադրություն դարձրեք, որ Նրան պատիվ չցուցաբերող մարդիկ ցածր կգնահատվեն: Այնուամենայնիվ, Աստվածաշնչի «Նոր Միջազգային թարգմանությունը» (NIV) օգտագործում է *«արհամարհել»* բառը, որի սահմանումն է՝ «համարել, որ ինչ-որ մեկն արժանի չէ ձեր ուշադրությանը կամ հարգանքին»: Աստված համարում է, որ Իրեն անարգող մարդիկ արժանի չեն Իր ուշադրությանը: Սա կարող է ենթադրել նրանց կարիքները և աղոթքներն անտեսելը:

Հիսուսն ասում է հետևյալը. «Ինձ ընդունողն Ինձ Ուղարկողին է ընդունում» (Հովի. 13.20): Հիսուսի խոսքերի համատեքստում ինչ-որ մեկին ընդունելը նշանակում է պատվել նրան: Այնպես որ, Հիսուսն իրականում նկատի ունի. «Ինձ պատվողն Ինձ ուղարկող Հորն է պատվում»: Ահա թե ինչու է Նա պարզորեն հայտնում մեզ. «Որդուն չպատվողը Հորն էլ չի պատվում, որ ուղարկեց Նրան» (Հովի. 5.23):

Հիսուսին պատվող մարդիկ իրականում պատվում էին Հորը, թեև չէին գիտակցում: Հիսուսն ասաց. «Ես պատիվ չեմ ընդունում մարդկանցից» (Հովի. 5.41, NKJV): Նրա մտքում և սրտում այդ պատիվն ամբողջությամբ տրվում էր Հորը: Նա դեռ փառավորված չէր: Հենց որ փառավորվեց, Հայրը հրամաններ արձակեց Որդու վերաբերյալ. «Եվ երկրպագեն Նրան Աստծո բոլոր հրեշ-

տակները» (Եբր. 1.6), և «Քո աթոռն, ո՛վ Աստված, հավիտյանս հավիտենից է. Քո թագավորության գավազանն ուղիղ գավազան է» (Եբր. 1.8, նաև կարդացեք Փիլիպ. 2.8-10): Փառավորվելուց հետո Նա երկրպագություն է ստանում նույն կերպով, ինչպես որ Հայրն է երկրպագություն ստանում:

Այնուամենայնիվ, երբ Հիսուսն այս երկրի վրա էր, ապրում և ծառայում էր որպես *մարդու Որդի:* Փիլիպեցիների 2.6,7-ը՝ Աստվածաշնչի «Ընդլայնված թարգմանության Դասական հրատարակությամբ», պնդում է. «Ով, թեև Իր էությամբ մեկ էր Աստծո հետ և Աստծո կերպարանքն ուներ... զրկեց Իրեն [բոլոր արտոնություններից և օրինական արժանապատվությունից], որպեսզի ծառայի (ստրուկի) կերպարանք ընդուներ, քանի որ Նա դարձավ մարդկանց պես և ծնվեց՝ որպես Մարդ»: Այսպիսով, որպես Մարդ, Իր սրտում Նա մշտապես տալիս էր Հորը ամբողջ պատիվը, որը տրվում էր Իրեն: Սա է պատճառը, որ Նա շարունակ, այն մարդկանց, որոնց բժշկում էր, դիմում էր հետևյալ կերպով. «Զգո՛ւյշ կաց, ոչ ոքի չասես, այլ գնա՛, քեզ ցույց տուր քահանային և Մովսեսից հրամայված ընծան մատուցիր՝ նրանց վկայություն լինելու համար» (Մատթ. 8.4), կամ՝ «Զգո՛ւյշ կացեք՝ ոչ ոք չիմանա» (Մատթ. 9.30), և նմանօրինակ խոսքեր, որոնք գտնվում են Ավետարաններում:

Քանի դեռ Հիսուսն այստեղ էր, Նա մարդկանց երկրային կապն էր Հոր հետ: Այնպես որ, Հորը պատվելու շոշափելի ձևը Նրա Որդուն պատվելն էր: Ահա թե ինչու այն անանուն կինը, ով պատվեց Որդի Հիսուսին թանկարժեք յուղով, ոչ մի հանդիմանություն չստացավ Նրանից: Նա երբեք չէր հանդիմանում նրանց, ովքեր պատվում էին Իրեն. փոխարենը՝ գովում էր նրանց՝ Հոր հետ կապ հաստատելու համար: Հասկացեք, որ Նա չէր փնտրում Իր պատիվը, այլ օրինակ էր ծառայում՝ ցույց տալով *Պատվի սկզբունքը* նրանց, որոնց մոտ ուղարկվել էր:

Պատվի անցում

Հիսուսի խաչելության շաբաթվա ընթացքում Նա խորիմաստ բացատրեց, թե ինչպես էր Իր ծառայությունը շարունակվելու նույնիսկ հեռանալուց հետո.

«Ասում եմ ձեզ, թե Ինձ էլ չեք տեսնի, մինչև գա ժամանակը, որ ասեք. «Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը»»

– Ղուկ. 13.35

Այլ կերպ ասած. «Դուք այլևս չեք տեսնի Ինձ, մինչև չընդունեք նրանց, որոնց Ես ուղարկում եմ ձեզ մոտ՝ ասելով. «Օրհնյա՛լ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով»»: Կամ, այլ ձևակերպմամբ. «Դուք չեք վերապրի կամ տեսնի Ինձ, մինչև *չպատվեք* նրանց, որոնց Ես ուղարկում եմ Իմ անունով»: Կանգ առեք և մտածեք այս մասին: Հիսուսն ասաց, որ կհայտնի Իրեն, երբ մենք օրհնենք կամ պատվենք նրանց, որոնց Նա ուղարկում է: Ինչո՞ւ: Հիսուսը պատասխանում է այս հարցին Սուրբ գրքի այլ հատվածներում, որոնցից մեկը հետևյալն է. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ՝ ով որ ընդունի *(պատվի)* նրան, որ Ես կուղարկեմ, Ինձ է ընդունում *(պատվում),* և Ինձ ընդունողն *(պատվողն)* Ինձ Ուղարկողին է ընդունում *(պատվում)»* (Հովհ. 13.20, փակագծերի բառերը հեղինակինն են):

Այս խոսքերի լույսի ներքո կարդացեք, թե ինչ է շարունակում ասել Հիսուսը կյանքում պատվի սկզբունքը կիրառելու վերաբերյալ.

«Ով որ ձեզ ընդունում է, Ինձ է ընդունում, և ով որ Ինձ ընդունում է, Ինձ Ուղարկողին է ընդունում: Ով որ մարգարեի է ընդունում՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի: Եվ ով որ արդարի է ընդունում՝ արդարի անունով, արդարի վարձք կառնի: Եվ ով որ այս փոքրերից մեկին միայն մեկ բաժակ սառը ջուր խմեցնի՝ աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնի իր վարձքը»:

– Մատթ. 10.40-42

Առանց փոխելու այս հատվածի իմաստը, թույլ տվեք այս հատվածի բոլոր *«ընդունել»* բառերը փոխարինել *«պատվել»* բառով, նաև մեկ անգամ ավելացնել «պատվել» բառը վերջին նախադասության մեջ.

«Ով որ ձեզ *պատվում է*, Ինձ *է պատվում*, և ով որ Ինձ *պատվում է*, Ինձ Ուղարկողին *է պատվում:* Ով որ մարգարեի *է պատ-*

վում ՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի: Եվ ով որ արդարի *է պատվում՝* արդարի անունով, արդարի վարձք կառնի: Եվ ով որ, *պատվելով* այս փոքրերից մեկին, միայն մեկ բաժակ սառը ջուր խմեցնի՝ աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնի իր վարձքը»:

Այս խոսքերը պատշաճ կերպով հասկանալու համար կա երկու կարևոր փաստ, որոնք պետք է դիտարկենք: Առաջինը՝ Աստծո թագավորության մեջ գոյություն ունի իշխանության կառուցվածք: Այն սկսվում է Հորից և անցնում է Հիսուսին՝ Նրան, Ում Ինքն ուղարկեց և տվեց ամբողջ իշխանությունը: Հիսուսը հայտարարեց. «Ամեն իշխանություն Ինձ տրվեց Երկնքում և երկրում» (Մատթ. 28.18): Նա եկեղեցու Գլուխն է, և կգա այն օրը, երբ Նա կրկին կհանձնի Թագավորությունն Իր Հորը՝ հենց որ ամեն ապստամբություն Իր ոտքերի տակ դրվի (տե՛ս Ա Կորնթ. 15.24-26):

Հաջորդն Աստծո թագավորության իշխանության կառուցվածքում «մարգարեն» է: Մտապահեք, որ Հիսուսը խոսում էր այնպիսի մարդկանց հետ, որոնք չունեին Նոր կտակարանի գրքերը: Նրանք ծանոթ չէին մեր հասկացություններին և գործելակերպերին, և Հիսուսը խոսում էր նրանց համար հասկանալի լեզվով:

Հին կտակարանում մարգարեները Տիրոջ խոսնակներն էին (տե՛ս Ելից 4.16, 7.1): Եբրայեցիների 1.1,2-ը կրկին հաստատում է սա. «Շատ մասերով և շատ կերպերով Աստված, սկզբում խոսելով մեր հայրերի հետ՝ մարգարեների ձեռքով, այս վերջին օրերում խոսեց մեզ հետ Որդիով»: Այս դիրքի Նոր կտակարանի զուգահեռն այն է, որ հարություն առնելուց և համբարձվելուց հետո Հիսուսը «մի քանիսին տվեց առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ» (Եփես. 4.11):

Եթե Հիսուսն այսօր դիմեր մեզ, միգուցե Իր Խոսքն այսպես ձևակերպեր. «Ով որ առաքյալի է պատվում՝ առաքյալի անունով, նա առաքյալի վարձք կառնի: Ով որ հովվի է պատվում՝ հովվի անունով, նա հովվի վարձք կառնի», և նույնը՝ մարգարեների, ավետարանիչների և ուսուցիչների վերաբերյալ:

Մատթեոսի 10-րդ գլխում Հիսուսն անցում կատարեց մարգարեին (կամ՝ առաջնորդներին) պատվելուց՝ արդարին պատվելուն,

և ավարտեց «փոքրերին» պատվելով: Նա, ըստ էության, խոսեց բոլոր իշխանական դիրքերի մասին, որոնց հետ հավատացյալներն առնչվում են՝ նրանց, ովքեր իշխանությամբ բարձր են մեզնից, նրանց, ովքեր մեզ հետ իշխանության նույն մակարդակի վրա են, և նրանց, ովքեր գտնվում են մեր հոգատարության կամ մեզ լիազորած իշխանության ներքո: Յուրաքանչյուր մարդ, ում հանդիպում ենք, պատկանում է այս երեք խմբերից մեկին:

Այս պնդումը հանգեցնում է մեր երկրորդ կարևոր փաստին: Եթե մենք պատվենք մեր վերադասներին... վարձատրություն կստանանք: Եթե մենք պատվով վերաբերվենք մեզ հետ միևնույն մակարդակի վրա գտնվող մարդկանց (մեզ հավասարներին)... մենք վարձատրություն կստանանք: Եվ, ի վերջո, պատվելով մեր հոգատարության կամ իշխանության ներքո գտնվող մարդկանց... մենք նույնպես վարձատրություն կստանանք: Հիշե՛ք մեր շրջասությունը. «Դուք չեք տեսնի Ինձ, մինչև որ *չպատվեք* նրանց, որոնց Ես ուղարկում եմ Իմ անունով»: Միավորելով այս պնդումը Մատթեոս 10.40-42-ի հետ՝ կբացահայտենք, որ այս երեք մակարդակներից յուրաքանչյուրը կրում է զարմանալի երկնային վարձատրություններ: Նույնպես, այս վարձատրությունները մշտապես փոխանցում են մեզ Հիսուսի մասին ավելի մեծ հայտնություններ և գիտելիք: Մենք կքննարկենք այս ճշմարտությունները մինչև գրքի ավարտը:

4

Հարցն առաջնորդը չէ

Առաջին երեք գլուխներում դիտարկեցինք բազմաթիվ աստվածաշնչյան հատվածներ՝ հաստատելու համար այն փաստը, որ պատիվն անչափ կարևոր է Աստծուց ստանալու համար: Արագ ամփոփենք. Հովհաննեսը պատվիրեց մեզ ջանք անել՝ մեր *ամբողջական վարձատրությունը* ստանալու համար: Քանի որ նա հատուկ նշում է ամբողջական վարձատրությունը, մենք եզրակացնում ենք, որ գոյություն ունի նաև մասնակի վարձատրություն և ոչ մի վարձատրություն: Մենք տեսանք, որ Հիսուսի ծառայության մեջ կային մարդիկ, որ ստացան ամբողջական վարձատրություն, իսկ մյուսները՝ մասնակի վարձատրություն, ուրիշներն էլ բոլորովին վարձատրություն չստացան, և դա պայմանավորված էր այն բանով, թե ինչպես նրանք ընդունեցին (պատվեցին) Աստծուն:

Հեռանալուց առաջ Հիսուսն ասաց. «Ես գնում եմ, և դուք այլևս չեք տեսնի Ինձ, մինչև որ չպատվեք Նրան, Ում Ես ուղարկում եմ Իմ անունով» (Ղուկաս 13.35-ի հեղինակի շրջասությունը): Նա շարունակում է՝ բացատրելով, որ եթե մենք պատվենք որևէ առաջնորդի, կստանանք այն վարձատրությունը, որն Աստված տալիս է այդ առաջնորդի միջոցով: Նույնը վերաբերում է մեզ հավասար մարդկանց, ինչպես նաև մեր իշխանության ներքո գտնվողներին: Սկզբում կխոսենք իշխանություն ունեցող մարդկանց մասին, իսկ հետագա գլուխներում կքննարկենք մյուս երկու մակարդակները:

Մերօրյա օրինակներ

Ես անձամբ ճանաչում եմ բազմաթիվ հրաշալի ծառայողների, որոնք շատ են ճանապարհորդում՝ քարոզելով Ավետարանը: Նրանցից մի քանիսն իսկապես առանձնահատուկ մարդիկ են: Առաջինը Թի Էլ և Դեյզի Օսբորնների ամուսնական թիմն է: Այս գիրքը գրելու պահին երկուսն էլ հասել են իրենց հավիտենական վարձատրությանը Երկնքում: 1980-ական թվականներին Լիզան և ես շատ անգամներ նրանց ծառայելու արտոնություն ենք ունեցել: Այդ օրերին ես աշխատում էի ութ հազար անդամ ունեցող մի եկեղեցում, և իմ պարտականությունը բոլոր հյուր-քարոզիչներին ընդունելն էր: Օսբորնները մի քանի անգամ հյուրընկալվել էին մեզ մոտ, և մենք բավականին ժամանակ էինք անցկացրել նրանց հետ: Մենք մտերմացել էինք և հաճախ էինք գրում կամ զանգում միմյանց: Թի Էլը և ես նույն չափի հագուստ էինք կրում, և նա երկու անգամ ծանրոցներ ուղարկեց ինձ՝ իր հագուստներով: Թե՛ այն ժամանակ, թե՛ մինչև օրս նա իմ հավատքի հերոսներից է:

Այդ ժամանակ Թի Էլը և Դեյզին արդեն միլիոնավոր մարդկանց էին առաջնորդել փրկության: Իրականում, ըստ հաշվարկների, նրանց ծառայության միջոցով ավելի քան 50 միլիոն մարդ էր ընդունել Հիսուսին: Դա տեղի էր ունեցել ոչ թե հեռուստատեսությամբ, այլ աշխարհով մեկ անցկացվող բացօթյա ավետարանչական հավաքույթների միջոցով: Այդ հավաքույթների մեծ մասը, այնուամենայնիվ, անցկացվել էր Աֆրիկայում: Նրանց հավաքույթներին հաճախում էր 50-250 հազար մարդ:

Նրանց յուրաքանչյուր հավաքույթին բազմաթիվ կույր մարդկանց աչքեր էին բացվում: Բոլորովին տեսողություն չունեցող մարդիկ, որոնք գալիս էին հավաքույթներին, հեռանում էին տեսողությունը վերականգնված: Բայց սա միայն սառցաբեկորի գագաթն էր. հարյուրավոր խուլ ականջներ էին բացվում, բազմաթիվ մարդիկ բժշկվում էին անբուժելի հիվանդություններից, անթիվ խեղված մարդիկ, որոնց պատգարակներով էին բերում, տուն էին վերադառնում՝ իրենց պատգարակներն անձամբ տանելով: Օսբորն եղբայրը բազմաթիվ գրքեր է գրել՝ պատմելով այն ուշագրավ հրաշալի բժշկությունների մասին, որոնք տեղի էին ունենում իրենց բացօթյա հավաքույթներին, հատկապես՝ Աֆրիկայում:

Նրանց պատմած ամենահուզիչ պատմություններից մեկը, որը հիշում եմ, մի կնոջ մասին էր, ով մոտեցել էր Դեյզիին Աֆրիկայում տեղի ունեցող մի ավետարանչական համաժողովի հավաքույթների ընթացքում: Նրա գրկում մահացած նորածին էր: Երեխան լիովին փաթաթված է եղել ծածկոցով: Այդ կինը նորածնին տվել է Դեյզիին և թարգմանչի միջոցով խնդրել է աղոթել, որպեսզի կենդանանա: Դեյզին վերցրել է փաթաթված դին և սովորական մի աղոթք արել: Մի քանի վայրկյան անց զգացել է, որ երեխան շարժվում է, և հազ ու փոշտոց է լսել ծածկոցի տակից: Նա բացել է ծածկոցը և տեսել աչքերն իրեն հառած նորածին տղայի. երեխան ողջ էր:

Դեյզին կրկին ծածկել է երեխային և վերադարձրել իր մորը: Մայրը բարձրացրել է ծածկոցը և, տեսնելով նրա երեսը, հուզմունքից գոչել է:

Դեյզին շփոթվել է: Նա զարմացել է, թե ինչո՞ւ մայրը որևէ կերպով չի արձագանքել՝ լսելով երեխայի հազը և փոշտոցը: Ինչո՞ւ է նա համակվել ուրախությամբ, միայն երբ բարձրացրել է ծածկոցը և տեսել երեխայի երեսը:

Դեյզին այդ մասին հարցրել է նորածնի մորը, և նրա պատասխանը եղել է հետևյալը.

- Իմ երեխան ծնվել էր միայն մեկ աչքով: Նա խեղված էր: Նրա մյուս աչքի տեղում միայն դատարկ խոռոչ էր: Իսկ այժմ նա նայում է ինձ երկու գեղեցիկ աչքերով:

Կան անթիվ այլ զարմանալի պատմություններ նրանց միջոցով կատարված հզոր գործերի մասին, և այդ ամենը մեր հարություն առած Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով:

Մեկ այլ ընկեր ունեմ, ով անթիվ ավետարանչական հավաքույթներ է անցկացրել Աֆրիկայում, մասնավորապես՝ Եթովպիայում և Սուդանում: Նրա ավետարանչական հավաքույթներին 50-200 հազար մարդ է մասնակցում: Իր հավաքույթներին նա նույնպես ականատես է լինում, թե ինչպես են հարյուրավոր աչքեր և ականջներ բացվում: Նա տեսնում է, որ կաղերը քայլում են, շատ բժշկություններ են տեղի ունենում, ուռուցքներն են անհետանում:

Մի քանի տարի առաջ նա մի սրտահույզ պատմություն պատ-

մեց: Աֆրիկայի այն հատվածում, որտեղ անցկացնում էր իր հավաքույթները, կար մի մարդ, ով հայտնի էր «կապկամարդ» անունով: Նա այն աստիճան դիվահարված էր, որ ոչ ոք չէր կարողանում զգաստացնել նրան: Նա մերկ էր, ծառերի վրա էր ապրում և ձեռքերով ու ոտքերով էր քայլում: Նրա ձեռքերը նույնքան կոշտացած էին, որքան ոտքերը:

Մի քանի հոգատար տեղացիներ կապկպել էին նրան և բերել այդ հավաքույթին: Ընկերս պատմում էր.

- Ջո՛ն, ես քարոզում էի մեծ բազմությանը և հանկարծ տեսա, որ մի մարդ պարզապես վեր թռավ, մոտավորապես երկուսուկես մետր բարձրությամբ, և անմիջապես ընկավ: Նա չէր շարժվում: Ես մտածեցի, որ մահացավ: Հաջորդ օրը նա կանգնած էր բեմի վրա՝ կոստյումով, և վկայում էր այն մասին, որ Աստված ազատել էր իրեն. այդ մարդը «կապկամարդն» էր:

Նա պատմում էր ինձ, որ տասնյակ հազարների հասնող բազմության թիվն ավելացավ՝ հասնելով հարյուր հազարների, քանի որ «կապկամարդը» հայտնի էր ամբողջ տարածքում: Բազմությունները ցանկանում էին լսել այն Աստծո Խոսքը, որն ազատեց այդ կապված մարդուն դիվային ուժերից:

Ես կարող էի անթիվ պատմություններ պատմել այն տղամարդկանց և կանանց մասին, որոնք նման զորավոր գործեր են տեսել, հատկապես՝ Աֆրիկայում: Այնուամենայնիվ, ասելիքս այն է, որ երբ նույն ծառայողներն Ամերիկա կամ Արևմուտքի այլ երկրներ են վերադառնում, այդ նույն մարդիկ ծառայում են նույն ուղերձով, նույն օծությամբ և նույն ծառայողական մեթոդով, սակայն նրանց հավաքույթներին միայն մի քանի գլխացավեր, մեջքի կամ հոդացավեր են բժշկվում: Ինչո՞ւ: Այս ամենի պատճառը *պատիվն* է: Իմ ընկերները, որոնց մասին պատմում եմ, անչափ մեծ պատվով են ընդունվում այդ երկրներում: Նրանց Աստծո ծառայողներ են համարում և թագավորների պես են վերաբերվում:

«Դուք Աստծո մարդ եք, այնպես չէ՞»

Մի քանի անգամ ես նույնպես ծառայել եմ Աֆրիկայում՝ Քենիայում, Զիմբաբվեում, Անգոլայում և այլ աֆրիկյան երկրներում:

Հաճախ, գրեթե անհարմարավետ էի զգում այն ընդունելության պատճառով, որը ստանում էի (ոչ թե՝ որ նրանց վերաբերմունքը վատն էր, այլ՝ որ այն անսովոր էր ինձ համար): Նրանք թագավորի պես էին վերաբերվում ինձ: Իմ հյուրընկալները սենյակներ էին ամրագրում ինձ համար գեղեցիկ հյուրանոցներում, և ես գիտեի, որ ֆինանսապես դա մեծ ծանրություն էր նրանց համար: Նրանք թույլ չէին տալիս ինձ որևէ բան կրել, նույնիսկ իմ Աստվածաշունչը: Հյուրասիրում էին լավագույն կերակուրներով, և ինձ ծառայում էին նրանց լավագույն աշխատողները:

Մի դեպք եմ հիշում, երբ մի քանի հազար մարդու քարոզելուց հետո ինձ ուղեկցեցին մի սենյակ, որտեղ օդորակիչ կար (այդ հավաքույթին ներկա մարդկանցից քչերն էին երբևէ օդորակիչով սենյակում եղել): Մի կին, որի հետ այլ կանայք կային, ծնկի եկավ իմ առջև՝ գլուխը խոնարհեցնելով, և մեծ լվացակոնք մոտեցրեց, իսկ մյուսի ձեռքում ջրով լի կուժ էր՝ ձեռքերս լվանալու համար: Այն բանից հետո, երբ նրանք լվացին իմ ձեռքերը, ևս մի կին, որը սրբիչն էր պահել ձեռքում, մոտեցրեց և չորացրեց ձեռքերս: Նրանք պատվում էին ինձ՝ տալով իրենց լավագույնը:

Երբ այդ կինը ծնկի էր եկել իմ առջև, ինձ մոտ անհարմարավետության զգացում էր առաջացել: Ես մտածում էի. *«Ինքս կարող եմ լվանալ իմ ձեռքերը. կարիք չկա, որ անեք դա»:* Այդ պահին այնպիսի տպավորություն էր, ասես Սուրբ Հոգին խստորեն զգուշացներ ինձ. «Նույնիսկ չմտածես նրանց մերժելու մասին: Թո՛ւյլ տուր նրանց ծառայել քեզ»:

Կա տարբերություն պատվի և երկրպագության միջև: Մենք հավիտյանս հավիտենից երկրպագելու ենք *միայն* մեր Աստծուն, Տիրոջը և Թագավորին: Այնուամենայնիվ, մենք հավիտյանս հավիտենից պատիվ ենք ցուցաբերելու նրանց, ում պետք է ցուցաբերվի: Այսպիսին են Աստծո թագավորության կանոնները:

Հիշում եմ, որ 1990-ական թվականներին արտոնություն ունեցա քարոզելու մի հայտնի առաքյալի առաջնորդական համաժողովին: Նրա վերակացության ներքո գտնվող եկեղեցիներում ավելի քան հինգ միլիոն անդամ կար: Նրա եկեղեցիները գտնվում էին Աֆրիկայի տասնութ տարբեր երկրներում: Յուրաքանչյուր փետրվար ամսին նա համախմբում է իր վեց հազար

գլխավոր հովիվներին (հովիվների օգնականները չեն մասնակցում այդ հավաքույթներին) և հրավիրում է Ամերիկայում ու այլ երկրներում գտնվող առաջնորդների՝ իր հովիվներին քարոզելու համար: Ես հիշում եմ, որ ամբողջ այդ տասնամյակի ընթացքում ես միայն մի քանի անգամ էի ծառայել նման ուժգին օծության ներքո: Ես բառացիորեն քարոզում էի, ասես այլ աշխարհից լինեի: Աստծո ներկայությունն աներևակայելի էր:

Հավաքույթների շրջանակներում ինձ այնպես էին ծառայում, ինչպես քիչ առաջ նկարագրեցի: Այն բանից հետո, երբ ինձ ծառայող անձնավորությունը հեռացավ, այդ առաքյալն ասաց.

- Դուք տեսա՞ք այն կնոջը, որը հենց նոր ծառայեց ձեզ: Նա այս երկրի Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավարն է:

Ես ցնցված էի: Ինքնատիրապետումս վերականգնելուց հետո պատասխանեցի՝ չհավատալով լսածիս.

- Եվ այդ կինը լվաց իմ ձեռքերը:

Ես չէի հավատում, որ նման կարևոր պաշտոն ունեցող անձնավորությունը կարող էր այդպիսի հասարակ ծառայություն մատուցել: Ինձ համար պատիվ կլիներ նման անձնավորության հետ միևնույն վայրում լինելը, էլ ի՞նչ խոսք, որ նա ծառայեր ինձ:

Այդ մեծ առաքյալը զարմացած հայացքով նայեց ինձ և ասաց.

- Չէ՞ որ դուք Աստծո մարդ եք:

Ես մտածեցի. *«Մենք՝ ամերիկացիներս, պարզապես չենք հասկանում սա»:*

Ինչպիսի՞ ընդունելություն է ստանում ավետաբերը

Ավելի քան 35 տարի ճանապարհորդում և քարոզում եմ Աստծո Խոսքը: Ես նկատել եմ, որ, որպես կանոն, այն վայրերը, որտեղ ամենից հեշտն եմ ծառայում (որտեղ ամենամեծ ազդեցությունը և հրաշքներն են լինում, որտեղ ամենից հեշտն է քարոզելը, և որտեղ Աստծո ներկայությունն առավել ուժգին է), զարգացող երկրներն են, բանտերը և զորամասերը: Ինչո՞ւ: Քանի որ շատ հաճախ մարդիկ այնտեղ պատվով և ակնածանքով են վերաբեր-

վում իշխանությանը: Մյուս կողմից, այն վայրերը, որտեղ ինձ համար ամենից դժվարն է ծառայելը, քրիստոնեական ավագ դպրոցներն ու եկեղեցիներն են, որոնցում չկա հարգանք աստվածային իշխանության հանդեպ:

Հիշում եմ, երբ բացահայտեցի, որ իրականում դա որևէ առնչություն չուներ ինձ հետ՝ որպես ծառայողի, այլ պայմանավորված էր այդ մարդկանց ընդունելությամբ: Ես պետք է քարոզեի Միացյալ Նահանգների հարավ-արևելյան մասում գտնվող մի եկեղեցում: Այդ քաղաքում էր գտնվում նաև այդ նահանգի ամենախիստ ռեժիմի բանտը, որտեղ շուրջ 1500 բանտարկյալ կար: Այդ եկեղեցու գլխավոր հովիվը նաև բանտի կապելլանի օգնականն էր: Նա հարցրեց ինձ՝ արդյո՞ք կցանկանայի քարոզել բանտարկյալներին կիրակի առավոտյան: Բանտի կիրակնօրյա հավաքույթը սկսվում էր առավոտյան ժամը 8:00-ին, իսկ եկեղեցու հավաքույթը՝ ժամը 11:00-ին. այնպես որ, բավականին ժամանակ ունեինք երկուսի համար էլ: Ես ուրախությամբ համաձայնեցի:

Այդ ծառայությանը մասնակցեցին ավելի քան հարյուր բանտարկյալներ: Երկրպագությունը զարմանալի էր. մարդիկ երգում էին ամբողջ սրտով: Ես մոռացել էի, որ գտնվում էի խստագույն ռեժիմի բանտում, մինչև ծառայությունն ավարտվեց, և հարցրի փառաբանության առաջնորդին, թե որքան ժամանակ է նա այդտեղ: Նա այնքան պարզ աչքեր և զվարթ դեմք ուներ, որ մտածեցի՝ պատասխանը լինելու է երկու կամ երեք տարի:

Նա նայեց ինձ մեծ խաղաղությամբ և խոնարհությամբ ու ասաց.

- Պարո՛ն, ես դատապարտված եմ երեք ցմահ ազատազրկման:

Կարիք չկա նկարագրելու, թե որքան էի ցնցված: Նա մեծագույն հարգանքով վերաբերվեց ինձ: Ես զգացի նույնը յուրաքանչյուր տղամարդուց, որը ներկա էր այդ ծառայությանը: Այդ բանտարկյալները զարմացել էին, որ մի քարոզիչ, ով իրենց քաղաքից չէր, ժամանակ էր տրամադրել այցելելու իրենց և պատմելու Հիսուսի մասին: Այն պատիվը, որը նրանք ցուցաբերեցին իմ հանդեպ, ուշագրավ էր: Ես ճշմարտապես խոնարհված էի նրանց ընդունելությունից:

Երբ վերցրի բարձրախոսը, անմիջապես սկսեցի այնպես

սովորեցնել ու քարոզել, ասես այլ աշխարհից լինեի: Օծությունն այնքա՜ն ուժգին էր, և իմ ուժերն այնքա՜ն առատ էին, որ ես ետուառաջ էի վազում՝ նման ֆուտբոլի մարզչի, ով առաջնության է պատրաստում իր թիմին: Այդ տղամարդիկ խանդավառված բացականչում էին. դա հրաշալի ժամանակ էր:

Ես մեկ ժամ քարոզեցի, ինչից հետո Տիրոջ Հոգին իջավ այդ դահլիճում, և հաջորդ մեկուկես ժամում զարմանալի բաներ տեղի ունեցան. այդ տղամարդիկ փրկվում էին, լցվում էին Սուրբ Հոգով, բժշկվում էին և լրիվ ժամանակվա ծառայության կանչ էին ստանում:

Իմ օգնականը, ում հետ ճանապարհորդում էի, ծառայության ավարտին մոտեցավ, վերցրեց բարձրախոսը, և մինչ արցունքները հոսում էին այտերով՝ խանդավառությամբ ասաց.

- Եթե ես այս քաղաքում ապրեի, սա իմ եկեղեցին կլիներ:

Ներկաներից ահռելի գոչյուն պոռթկաց. բոլորը հուզվում էին ուրախությունից:

Մենք հեռացանք բանտից ժամը 10:30-ին: Հովիվը, իմ օգնականը և ես անչափ ոգևորված էինք: Բոլորս մեծ սպասումով խոսում էինք այն մասին, թե որքան հրաշալի էր լինելու մեր ծառայությունն այդ հովվի եկեղեցում: Ես ասացի.

- Այն ամենից հետո, ինչ մենք վերապրեցինք, այս ծառայությունը հրաշալի է լինելու:

Ես գիտեի, որ երբ տեղ հասնեինք, այն փառքը, որը մեզ վրա էր, հորդելու էր այդ եկեղեցական ծառայության մեջ:

Ես երբեք չեմ մոռանա, թե ինչ տեղի ունեցավ: Երբ եկանք այդ ծառայությանը, հազիվ էի կարողանում քարոզել: Մթնոլորտն անչափ ծանր և ճնշող էր: Ես խոչընդոտ էի զգում քարոզելիս: Շարունակ մտածում էի. *«Երկու ժամ էլ չի անցել այն բանից, երբ ես այնպես էի քարոզում և ծառայում, ասես այլ աշխարհից լինեի: Ի՞նչ է տեղի ունենում»:* Ես չէի հասկանում: Չէի կարողանում բորբոքել կամ արծարծել իմ ներսի պարգևը: Ես կաշկանդված էի զգում ինձ: Այն օծությունը, որն իմ կյանքում կար, սահմանափակված էր: Այդ ժամանակ ես չէի հասկանում պատվի սկզբունքը: Ես դեռ այս ամենը սովորելու ընթացքի մեջ էի: Այժմ ուզում եմ, որ բոլորն իմանան այս մասին:

Թույլ տվեք մի պատմություն պատմել՝ կապված այդ բանտում տեղի ունեցած հրաշալի ծառայության հետ: Տասնվեց տարի անց ինձ հրավիրեցին քարոզելու Նեբրասկա նահանգի Օմահա քաղաքում գտնվող մի մեծ եկեղեցում: Ես չգիտեի, թե որքան հաճելի անակնկալ էր սպասում ինձ: Այդ եկեղեցում անցկացրած առաջին հավաքույթից հետո իմացա, որ ձայնային վահանակը վերահսկող ծառայողը, որը լրիվ դրույքով աշխատում էր այդ եկեղեցում, այն մարդն էր, որը վարում էր փառաբանությունն այդ բանտի կիրակնօրյա առավոտյան հավաքույթին: Ես ցնցվեցի, անչափ ուրախացա և հարցրի.

- Ինչպե՞ս դուրս եկար բանտից: Դու դատապարտված էիր երեք ցմահ ազատազրկման և պայմանական վաղաժամկետ ազատման իրավունք չունեիր:

Նա պատմեց հրաշքով ազատվելու իր պատմությունը, որը շատ երկար է՝ այստեղ գրի առնելու համար: Այնուամենայնիվ, նա ցույց տվեց ինձ այն մարգարեական խոսքը, որն ասել էի նրան մեր ծառայության ժամանակ տասնվեց տարի առաջ՝ այն պահին, երբ Սուրբ Հոգին շարժվում էր տղամարդկանց միջև: Այդ բանտային ծառայությունը լսաժապավենով ձայնագրվում էր, ինչը թույլ էր տվել նրան գրի առնել այն, ինչ ասել էի: Այդ տարիների ընթացքում նա պահել էր մարգարեական խոսքը մի նոթատետրում: Նա տվեց ինձ այդ նոթատետրը, և ես կարդացի այն, ինչ տարիներ առաջ ասել էի նրան այդ բանտում: Համաձայն իմ խոսքերի՝ Աստված լրիվ դրույքով ծառայություն էր տալու նրան Իր թագավորության մեջ, և նրա ծառայությունը բանտի չորս պատերի մեջ ընդամենը պատրաստություն էր՝ բանտից դուրս նրա ծառայության համար: Ես ասել էի նրան այդ մարգարեական խոսքը՝ մինչև իմանալը, որ նա երեք ցմահ ազատազրկման էր դատապարտված: Ես այնքա՜ն ուրախ էի, որ չէի իմացել նրա դատավճիռն այդ ծառայության ընթացքում. ինձ համար դժվար կլիներ ասել այդ խոսքերը, եթե տեղյակ լինեի նրա ծանր դատավճռից:

Այս պատմությունը ցույց է տալիս, թե որքան զորավոր կերպով Աստված գործեց այդ բանտային ծառայությանը: Այնուամենայնիվ, դեռ մեկ ժամ չէր անցել, երբ այդ հովվի եկեղեցում էի, մթնոլորտը ծանր էր, և ինձ ճնշված էի զգում: Ես հազիվ էի կա-

րողանում քարոզել: Այդ օրը հասկացա, որ դա որևէ առնչություն չունի ինձ հետ, այլ պայմանավորված է այն բանով, թե ինչպիսի ընդունելություն ստացա՝ որպես Աստծուց ուղարկված ծառայող: Այդ բանտարկյալներն արժևորեցին, պատվեցին և բարձր գնահատեցին ինձ: Իսկ այդ եկեղեցու անդամներն իրենց շարժուձևով ցույց տվեցին. «Մենք արդեն ամեն բան գիտենք, շատ հյուր-ծառայողների ենք լսել. մի՞թե դու այլ բան ես քարոզելու»: Արդյունքների այս ահռելի տարբերությունը բխում է մեկ բառից, որը կոչվում է պատիվ:

Պատվել՝ վիրավորանք ստանալու դեպքում

Ես կշարունակեմ բացատրել Սուրբ գրքից, որ սա գրեթե առնչություն չունի ծառայողի հետ, այլ պայմանավորված է այն բանով, թե ինչպիսի ընդունելություն է ստանում ծառայողը: Հին կտակարանում Եղկանա անունով մի մարդ կար: Նա երկու կին ուներ՝ Աննան և Փենանան (ես շատ ուրախ եմ, որ մեր օրերում այդպես չէ. ինձ դուր է գալիս մեկ կնոջ հետ ամուսնացած լինելը):

Փենանան երեխաներ ուներ, իսկ Աննան՝ ոչ. նա ամուլ էր: Այդ ժամանակ կանայք իրենց սերն ամուսինների հանդեպ արտահայտում էին նրանց համար երեխաներ ծնելով, հատկապես՝ որդիներ: Ինչո՞ւ էր այդպես: Քանի որ տղամարդու սերունդը շարունակելն անչափ կարևոր էր:

Այդ ընտանիքը տարեց տարի Սելով էր գնում՝ Տիրոջը զոհ մատուցելու: Փենանայի երեխաների թիվն ավելանում էր, իսկ Աննան չուներ ոչ մի երեխա՝ Տիրոջ առջև ներկայացնելու համար: Աննան տրտմում էր, և ասես դա բավական չէր, Փենանան էլ վշտացնում էր նրան: Գրված է. «Եվ նրա մրցակիցը նույնպես խստորեն վշտացնում էր նրան՝ նրա կյանքը թշվառ դարձնելու համար» (Ա Թագ. 1.6, NKJV): Պատկերացնո՞ւմ եք Փենանայի վիրավորանքները. «Լսի՛ր, ո՞վ է սիրում մեր ամուսնուն: Ես այսքան երեխա եմ նվիրել նրան: Իսկ դո՞ւ, որտե՞ղ են քո երեխաները: Դու կին չես. նույնիսկ կիսով չափ կին չես: Մեր ամուսինն անտեսո՞ւմ է քեզ ննջարանում: Դու չե՞ս հրապուրում նրան: Իհարկե՝ նա ինձ է սիրում...», և այսպես շարունակ:

Ի վերջո, մեկ տարի Աննան այլևս անկարող էր դիմանալ: Նա

որոշեց խորանի մոտ գնալ և մխիթարություն գտնել Տիրոջ ներկայության մեջ՝ իր թշնամուց հեռու: Նա տրտմած էր և աղոթում էր Աստծուն՝ դառնորեն լաց լինելով:

Աննան իր սրտից էր խոսում. նրա շուրթերը շարժվում էին, բայց բառերը չէին լսվում: Նա խնդրանք էր ներկայացնում Տիրոջ առջև. եթե Տերը բացեր իր արգանդը և զավակ պարգևեր, ինքը կվերադարձներ այդ զավակին Տիրոջը՝ մինչև կյանքի ավարտը և հավիտյան:

Այդ ժամանակ քահանայապետ Հեղին նստած էր նրանից ոչ հեռու և նկատում է նրա շարժուձևը: Նա մտածում էր, որ այդ կինը խմիչքից էր արբել, և ասում է. «Մինչև ե՞րբ պիտի արբածություն անես: Գինովությունդ թո՛ղ» (Ա Թագ. 1.13,14):

Կրկին, ես ուրախ եմ, որ Աննան ամերիկուհի չէր: Եթե այդպես լիներ, Հեղին կարող էր խիստ հանդիմանության արժանանալ նրանից: Ամենայն հավանականությամբ, այդ կնոջ զայրույթը կբորբոքվեր, և նա կմտածեր. *«Ի՞նչ տեսակի հովիվ է նա: Ես բացում եմ իմ սիրտն Աստծո առջև և ծոմ եմ պահում, իսկ նա մեղադրում է ինձ արբած լինելու մեջ: Ո՛չ, չի՛ կարող այսպես լինել. իմ ականջները խաբում են ինձ: Ես միայն պատկերացնում եմ, որ լսեցի սա, այնպես չէ՞: Բայց ո՛չ, նա իսկապես այդպես ասաց: Ինչպիսի՜ դաժան, անվայել և անզգա վարք: Ինչպիսի՜ սրտոր անձնավորություն: Ինչպե՞ս նա կարող է եկեղեցու առաջնորդ լինել: Նրան պետք է խիստ նկատողություն անել, հեռացնել աշխատանքից և զրկել ծառայությունից»:*

Ապա նա հեշտորեն կասեր. «Դու արբա՞ծ անվանեցիր ինձ: Ես ծոմ եմ պահում և բացում եմ սիրտս Աստծո առջև իմ կարիքի համար, իսկ դու մեղադրում ես ինձ արբած լինելու մեջ: Դու նույնիսկ չես հասկանում, երբ ինչ-որ մեկը ջանասիրաբար Աստծուն է փնտրում: Ինչպիսի՞ հովիվ ես դու: Ինչպիսի՞ եկեղեցի է սա: Ես կպատմեմ ամուսնուս, և մենք կհեռանանք այստեղից և կհաճախենք այս փողոցից քիչ հեռու գտնվող եկեղեցին»:

Եթե Աննան այդպես վարվեր, երբեք չէր ստանա իր վարձատրությունը: Նա երբեք երեխա չէր ունենա, և հեշտորեն կլցվեր դառնությամբ Տիրոջ հանդեպ: Մեկ օր նա կմահանար՝ ասելով, որ Աստված չի պատասխանում աղոթքներին. *«Ես ծոմ պահե-*

ցի, ջանասիրաբար աղոթեցի, բայց Աստված չպատասխանեց»: Այնուամենայնիվ, Աննան այդպես չվարվեց: Լսե՛ք նրա պատասխանն այն առաջնորդին, ով վիրավորեց իրեն. «Ո՛չ, իմ տե՛ր, ես տրտմած հոգով կին եմ: Ո՛չ գինի, ո՛չ թունդ խմիչք եմ խմել, այլ բացել եմ իմ սիրտը Տիրոջ առջև: Քո աղախնին չար կին մի՛ համարիր» (Ա Թագ. 1.15,16, AMPC):

Դուք կարող եք տեսնել, որ Աննան մեծապես պատվեց նրան: Առաջին հերթին, նա «իմ տեր» անվանեց Հեղիին, իսկ իրեն անվանեց նրա «աղախինը»: Նա միայն մեծագույն հարգանքով խոսեց Հեղիի հետ: Նա պատիվ ցուցաբերեց Հեղիի հանդեպ: Հեղին պատասխանեց նրան. «Գնա՛ խաղաղությամբ, և թող Իսրայելի Աստված շնորհի քեզ այն, ինչ խնդրում էիր Նրանից» (խոսք 17, AMPC):

Հաջորդ երեք ամսում Աննան հղացավ, և այդ տարի ծնունդ տվեց մանուկ Սամուելին: Նա էր, որ արթնություն էր բերելու ամբողջ Իսրայելին: Այն, ինչ Աննան ցանկանում էր և ինչի համար աղոթում էր, չդրսևորվեց, քանի դեռ չէր պատվել այն քահանային, որն արհամարհել էր իրեն: Ավելի հետաքրքիր է հետևյալը. Հեղին այն քահանան էր, որի մասին Աստված հետագայում ասաց. «Ես զգուշացրել եմ նրան, որ նրա ընտանիքի համար հավիտյան դատաստան է գալիս, որովհետև նրա որդիներն անարգում են Աստծուն, և նա չի սաստել նրանց: Ուստի Ես երդվեցի, որ Հեղիի և նրա որդիների մեղքերը երբեք չեն ներվի» (Ա Թագ. 3.13,14, NLT):

Անկասկած, ոչ ոք չի ցանկանա նման խոսքեր լսել Աստծուց իր կամ իր ընտանիքի մասին: Ոչ մի ներում հավիտյան: Չնայած դրան, Աննան պատասխան ստացավ Աստծուց՝ այդ մարդուն պատվելու միջոցով: Դա գրեթե առնչություն չուներ այն բանի հետ, թե ինչ էր Հեղին արել, այլ պայմանավորված էր այն բանով, թե ինչպես Աննան ընդունեց այդ անձնավորությանը, որն իշխանական դիրք ուներ իր հանդեպ. երբ պատվում ենք նրանց, ովքեր կարգված են մեզ վրա, մենք ստանում ենք այն վարձատրությունը, որն Աստված տալիս է՝ նրանց դիրքի միջոցով:

5

Իշխանություն

Մինչև կշարունակենք մարգարեի կամ առաջնորդի վարձատրության վերաբերյալ քննարկումը, պետք է խոսենք իշխանության կարևորության կամ արժեքի մասին: Երբ այս ճշմարտությունը հաստատվի մեր սրտերում, մենք կկարողանանք անկեղծորեն և ավելի արդյունավետ պատվել մեր վերադասներին:

Հիշեք, որ *պատվելը* նշանակում է «արժևորել, կարևոր և թանկ համարել»: Եթե մեր պատիվն ուղղված է իշխանություն ունեցող մարդուն, ինչի մասին կխոսենք հաջորդ մի քանի գլուխներում, պատիվը հարգանքի և նույնիսկ ակնածանքի իմաստ է ստանում: «Վեբսթերի բառարանը» (1828 թվականի հրատարակություն) *«պատիվ»* բառը սահմանում է որպես «ակնածել, հարգել. *վերաբերվել հարգալից և հպատակությամբ և կատարել դրան վերաբերող պարտականությունները»:* Այս սահմանումից ավելի ենք հասկանում, որ հպատակությունն իշխանությանը՝ ճշմարիտ պատվի կողմերից է:

Եթե ասում ենք, որ պատվում ենք իշխանությանը, սակայն չենք հպատակվում և չենք հնազանդվում, խաբում ենք ինքներս մեզ: Իշխանությանը պատվելը նշանակում է հպատակվել դրան. մենք անարգում ենք իշխանությանը, երբ չենք հպատակվում: Հիշե՛ք հռոմեացի սպային. նա այնպիսի անձնավորություն էր, որը ճանաչում էր, գիտեր, թե ինչ է իշխանությունը, ընդունում էր այն

և հպատակվում: Այդ վերաբերմունքը նրա էության մասն էր և նրա սրտում էր: Դրա շնորհիվ նա մեծապես պատվեց Հիսուսին և ամբողջական վարձատրություն ստացավ:

Իշխանության չորս ոլորտ

Մարդիկ հեշտորեն կարող են աննշան հարգանք ցուցաբերել կամ ընդհանրապես ոչ մի հարգանք չցուցաբերել Աստծո թագավորության կողմից լիազորված իշխանության հանդեպ, եթե նրանք չունեն հիմնավոր պատկերացում դրա մասին, հատկապես մեր ժամանակակից հասարակության մեջ: Մեր սրտերը պետք է հաստատված լինեն այս ճշմարտության մեջ: Մեզ տրված է հետևյալ հակիրճ պատվերը.

> «Ամեն անձ թող հնազանդվի բարձր իշխանություններին, որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չէ, և ներկա իշխանություններն Աստծուց են կարգված: Ուրեմն, իշխանությանը հակառակվողն Աստծո հրամանին է հակառակվում, և հակառակվողներն իրենց անձերին դատաստան կընդունեն»:
>
> – Հռոմ. 13.1,2

Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ այս խոսքն առաջարկ չէ: Այն ոչ թե խորհուրդ է, այլ՝ պատվիրան: Նույնպես, ուշադրություն դարձրեք «ամեն անձ» արտահայտությանը: Այն նշանակում է, որ չկա ոչ մի բացառություն: Ովքեր կանչում են Հիսուսի անունը, պետք է կատարեն այս հրամանը:

Որո՞նք են «բարձր իշխանությունները»: Այս հատվածում Պողոսը հատկապես նկատի ունի քաղաքացիական կամ պետական իշխանությունները: Այնուամենայնիվ, այս հորդորը վերաբերում է ոչ միայն քաղաքացիական կամ պետական իշխանություններին, այլև լիազորած իշխանության այլ ոլորտներին:

Նոր կտակարանը խոսում է լիազորած իշխանության չորս ոլորտի մասին՝ պետական, եկեղեցական, ընտանեկան և հասարակական: Հասարակական ասելով՝ նկատի ունեմ գործատուներին, տնօրեններին, ուսուցիչներին, մարզիչներին և այլոց: Նոր

կտակարանը հատուկ ցուցումներ է տալիս յուրաքանչյուր ոլորտի վերաբերյալ. այնուամենայնիվ, մեծ մասամբ Նոր կտակարանի խորհուրդն անցնում է դրանց սահմանները և վերաբերում է լիազորած իշխանության բոլոր ոլորտներին:

Հիշեք, որ խոսելով մարգարեին մարգարեի անունով ընդունելու մասին, Հիսուսը կրկնեց նույնը արդարի, ինչպես նաև փոքրի վերաբերյալ: Ինչպես արդեն նշվեց, այդ հատվածում տեսնում ենք մարդկանց երեք մակարդակ, որոնց հետ առնչվում ենք՝ մեր առաջնորդները, մեզ հավասար մարդիկ և մեր իշխանությանը վստահված մարդիկ: Ինչ վերաբերում է մեր առաջնորդներին, թեև Նա խոսում է «մարգարեի» մասին՝ հատկապես նկատի ունենալով եկեղեցական իշխանությունը, այս սկզբունքներն անցնում են այդ ոլորտի սահմանները և վերաբերում են իշխանության բոլոր ոլորտներին: Հետևյալ աստվածաշնչյան հատվածները հաստատում են այս պնդումը.

> «Նաև այս պատճառով է, որ դուք հարկեր եք վճարում, որովհետև իշխանություններն աշխատում են Աստծո համար, երբ կատարում են իրենց պարտականությունները: Այնպես որ, վճարե՛ք այն, ինչ պարտական եք նրանց. վճարե՛ք նրանց ձեր անձնական և գույքային հարկերը *և հարգանք ու պատիվ ցուցաբերեք բոլորի հանդեպ»:*
>
> – Հռոմ. 13.6,7, GNT, (շեղագիրը հեղինակինն է)

Պետական իշխանությունները կարգված են Աստծո կողմից և աշխատում են Նրա համար: Պատվելով այդ մարդկանց՝ մենք պատվում ենք նրանց Կարգողին, և Աստված էլ Իր հերթին կպատվի մեզ: Այսպիսին է պատվի սկզբունքը:

Հասարակական իշխանության վերաբերյալ գրված է.

> «Նրանք, որ ծառայության լծի տակ են, թող իրենց տերերին ամեն *պատվի* արժանի համարեն»:
>
> – Ա Տիմոթ. 6.1, (շեղագիրը հեղինակինն է)

Այսօրվա պայմաններում այս խոսքը մեզ համար կհնչեր հետև-

յալ կերպ. «Նրանք, որ աշխատում են վարձատրության դիմաց, թող իրենց գործատուներին և տնօրեններին ամեն պատվի արժանի համարեն»: Կամ՝ կարող էր հնչել հետևյալ կերպ. «Նրանք, որ սովորում են որպես ուսանողներ, թող իրենց ուսուցիչներին ամեն պատվի արժանի համարեն»: Նույնը վերաբերում է թիմերի ղեկավարներին և անդամներին, մարզիչներին և մարզիկներին, նաև այլ տեսակի հարաբերությունների, որոնք ենթադրում են մի կողմի հպատակությունը մյուսին: Ընտանեկան իշխանության վերաբերյալ գրված է.

> «Պատվի՛ր քո հորը և մորը. սա է առաջին պատվիրանը խոստումով, որ քեզ լավ լինի և երկար ապրես երկրի վրա»:
>
> – Եփես. 6.2,3, (շեղագիրը հեղինակինն է)

Մեր ծնողներին պատվելու վարձատրությունը միացված է այս պատվիրանին: Ավելի ուշ խորը կքննարկենք սա: Եվ, վերջինը, եկեղեցական իշխանության վերաբերյալ գրված է.

> «Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, *պատվե՛ք* նրանց, որոնք ձեր առաջնորդներն են Տիրոջ գործի մեջ: Նրանք ջանասիրաբար աշխատում են ձեր միջև և զգուշացնում են ձեզ այն ամենի մասին, ինչը սխալ է: Բարձր կարծիք ունեցե՛ք նրանց մասին և ի սրտե սիրե՛ք նրանց»:
>
> – Ա Թեսաղ. 5.12,13, NLT, (շեղագիրը հեղինակինն է)

Գոյություն ունեն իշխանության ոլորտներից յուրաքանչյուրին վերաբերող ավելի շատ աստվածաշնչյան հատվածներ, և ավելի ուշ մեջբերում կանենք: Իմաստն այն է, որ Աստված պատվիրում է մեզ պատիվ ցուցաբերել լիազորած իշխանության յուրաքանչյուր ոլորտի հանդեպ, և երբ այդպես ենք վարվում, պատվի սկզբունքը գործում է: Մենք կվարձատրվենք. այնուամենայնիվ, վարձատրության չափը՝ մասնակի կամ ամբողջական, որոշվում է ըստ այն չափի, որով արժևորում ենք իշխանությունը:

Թագավորություն

Մենք պետք է հիշենք, որ Աստծո թագավորությունը հենց թագավորություն է: Այն ունի դիրքեր, կանոնադրություն և լիազորած իշխանություն: Ես ասել եմ սա տարիներ շարունակ: Քարոզելով Ավետարանը աշխարհով մեկ և յուրաքանչյուր աշխարհամասում՝ բացի Անտարկտիդայից, պարզել եմ, որ աստվածային իրողություններն ամենից դժվար է փոխանցել Արևմուտքի երկրներում ապրող մարդկանց: Ինչո՞ւ: Պատասխանը պարզ է:

Մենք փորձում ենք հասկանալ Աստծո թագավորության սկզբունքները ժողովրդավարական մտածելակերպով:

Աստծո թագավորությունը ժողովրդավարական չէ: Այնպես որ, եթե փորձենք հաղորդակցվել Աստծո հետ ժողովրդավարական մտածելակերպով, միություն չենք ունենա Նրա հետ: Մենք կմնանք առանց այն պաշտպանության, որը տրվում է Նրա իշխանության կողմից, և կարող ենք հեշտորեն մոլորվել: Հնարավո՞ր է, որ Հիսուսը հենց այս պատճառով ասաց, որ շատերը մեր սերնդից խաբվելու են: Այսօր, ավելի քան երբևէ, մեր մշակույթում անարգում ենք իշխանությունը, սակայն տագնապալին այն է, որ այդպիսին է ոչ միայն մեր հասարակությունը, այլև դավանող հավատացյալների թվում եղող մարդիկ: Մենք պետք է մշտապես հիշենք, որ օրինական իշխանությունը լիովին Աստծուց է, և այն տրված է պաշտպանության, մատակարարման և խաղաղության համար:

Արևմուտքի մտածելակերպը Ամերիկայում գտնվող եկեղեցիների մեծ մասի պառակտման պատճառն է, նաև այն պատճառը, թե ինչու են շատերը հեռանում եկեղեցիներից և հավաքույթներն անցկացնում տներում: Այս դավանող հավատացյալները չեն ցանկանում անձամբ Հիսուս Քրիստոսի կողմից կարգված իշխանության ներքո լինել: Միգուցե ասեք. *«Բայց Ջո՛ն, Չինաստանի եկեղեցին գոյություն ունի տնային եկեղեցիների տեսքով»:* Այո՛, ճիշտ է, բայց նրանք հարկադրված են եղել այդպես վարվել, քանի որ չեն կարողացել բաց հավաքույթներ անցկացնել: Նրանք նաև խիստ կազմակերպված են՝ համաձայն Աստծո Խոսքի սկզբունքների: Նրանք իշխանության զարմանալի կառուցվածք ունեն:

Տարիներ առաջ ինձ խնդրել էին հանդիպել Չինաստանի ընդհատակյա եկեղեցու հինգ առաջնորդների հետ: Այդ հինգ տղամարդիկ տասնյակ միլիոնավոր մարդկանց վերակացուներ էին: Նրանք առաջնորդում էին իրենց երկրի ընդհատակյա եկեղեցու երեցներին: Նրանք այնքան կազմակերպված են: Մեր ծառայությունը գրեթե կես միլիոն գիրք ուղարկեց նրանց եկեղեցիներին, և նրանք մի քանի օրում տարածեցին բոլոր օրինակները: Նրանց կառուցվածքը համապատասխանում է աստվածաշնչյան իշխանությանը:

Շատ տնային եկեղեցիներ, որոնք հայտնվում են Ամերիկայում, այդպիսին չեն: Դրանցում չկա ճշմարիտ նորկտակարանյան կառավարում և հաշվետվողականություն: Եթե ուշադրություն դարձնեք, առաքելական թղթերում Պողոսը շարունակաբար պատվիրում էր Տիտոսի և Տիմոթեոսի պես առաքյալներին երեցներ նշանակել այն եկեղեցիներում, որտեղ ուղարկվում էին: Նրանք պետք է խրատեին, հանդիմանեին, հորդորեին և կառուցեին եկեղեցիները: Գոյություն ուներ հաշվետվողականություն, որը հաստատված էր համաձայն Հիսուս Քրիստոսի կողմից սահմանված կառավարման համակարգի: Ամերիկայի տնային եկեղեցիներում հաճախ այդպես չէ: Փոխարենը, այնտեղ կան բազմաթիվ հավատացյալներ, որոնք վնաս են կրել կամ վիրավորվել են, և այդ պատճառով հիասթափվել են եկեղեցուց և ցանկացած տեսակի համակարգից: Նրանք անցում են կատարել ինքնավար տնային պայմանների, որպեսզի կարողանան մասնակցել հավաքույթների՝ առանց հաշվետվողականության:

Մենք պետք է հիշենք, որ Հիսուսն է հիմնել եկեղեցին, ոչ թե մարդիկ (և եկեղեցին մշտապես անկատար է եղել. պարզապես ընթերցեք Պողոսի թղթերը): Գործք առաքելոց գրքում կարող եք տեսնել, որ հավատացյալներն ունեին ընդհանուր *և* տնային հավաքույթներ: Տներում հավաքվելը լավ է, բայց մենք պետք է առաջնորդություն ստանանք հասուն ծառայողներից և հաշվետու լինենք նրանց:

Խնդրում եմ, հասկացեք, որ ես դեմ չեմ բոլոր տնային եկեղեցիներին: Մեր երկրում կան բազմաթիվ կենսունակ տնային եկեղեցիներ: Այնուամենայնիվ, դրանք իրենց համարում են Քրիս-

տոսի ընդհանուր մարմնի մասը և չեն մեկուսանում՝ հիասթափության, դառնության կամ տարաձայնությունների պատճառով:

Հեշտ է մոռանալը, որ եկեղեցին միակ կազմակերպությունն է, որը գոյություն ունի առաջին հերթին այն մարդկանց համար, ովքեր իր անդամները չեն: Մենք դարձրել ենք եկեղեցին սպառողական մտածելակերպի հերթական զոհը, բայց այն երբեք չպետք է լիներ մեր հարմարավետությունը սնուցող հերթական տիրույթը: Եկեղեցում պետք է կողք-կողքի կանգնենք այնպիսի մարդկանց հետ, որոնք մարտահրավեր են նետում մեր ներկա վիճակին և առաջ են մղում մեզ՝ Աստծո մեջ մեր զարմանալի ընթացքն անցնելու համար:

Ամբողջ օրինական իշխանությունն Աստծուց է

Վերադառնանք մեր աստվածաշնչյան հատվածին Հռոմեացիների թղթից: Յուրաքանչյուրը պետք է հնազանդվի իշխանություններին: Ինչո՞ւ: Պատճառն այն է, որ «Չկա իշխանություն, որ Աստծուց չէ» (13.1): Տիեզերքում օրինական իշխանությունն ամբողջությամբ սկիզբ է առել Աստծո գահից: Եթե դուք ճշմարտապես Աստծո Հոգուց եք ծնված, կճանաչեք և կարժևորեք իշխանությունը: Իրականում, այն մարդը, ով չունի հարգանք իշխանության հանդեպ, Աստծո զավակ չէ: Աստծուն հանդիպելով՝ դուք հանդիպում եք իշխանության, քանի որ Աստված և Նրա իշխանությունն անբաժանելի են: Նույնիսկ եթե ինչ-որ մեկն աղոթել է մեղավորի աղոթքը և ամեն շաբաթ եկեղեցի է հաճախում, եթե նրա կյանքում չկա սրտանց պատիվ իշխանության հանդեպ, նա Աստծո սրբերի թվում չէ:

Միգուցե հարցնեք. «Ջո՛ն, ինչպե՞ս կարող ես նման համարձակությամբ ասել դա»: Հիսուսն ասաց, որ մենք կճանաչենք ճշմարիտ հավատացյալներին իրենց պտղով, ոչ թե այն փաստով, որ նրանք նմուշային աղոթք են արել: Այն մարդը, որը ճշմարտապես ճանաչում և սիրում է Աստծուն, ընդունում է Նրա իշխանությունը, քանի որ Աստծուն ճանաչելը նշանակում է ճանաչել իշխանությունը:

Պողոսը շարունակում է գրել Հռոմեացիների թղթում. «Ներկա իշխանություններն Աստծուց են կարգված» (13.1): Դուք նկատե-

ցիք, որ նա չի ասում, որ իշխանություններն ընտրվում են մարդկանց կողմից: Ո՛չ, Աստված Ինքն է կարգում դրանք: Իրականում, *«կարգել»* բառն այս խոսքում թարգմանված է հունարեն *«տասսո»* բառից, որը նշանակում է «նշանակել, սահմանել կամ հաստատել»: Այս բառի իմաստը ոչ մի դեպքում պատահականություն չի ենթադրում: Խոսքն անմիջապես նշանակելու մասին է: Քանի որ Աստված է կարգել բոլոր իշխանությունները, մենք մերժում ենք դրանց ետևում կանգնած Իշխանությանը, երբ անարգում կամ հրաժարվում ենք հպատակվել դրանց: Թե՛ գիտակցաբար, թե՛ անգիտակցաբար, մենք ընդդիմանում ենք հենց Աստծուն: Ահա թե ինչու է առաքյալը գրում. «Իշխանությանը հակառակվողն Աստծո հրամանին է հակառակվում» (13.2):

Հիշում եմ, երբ առաջին անգամ հասկացա այս ճշմարտությունը: 1992 թվականին Բիլ Քլինթոնն ընտրվեց Միացյալ Նահանգների նախագահ: Ես երեք օր շարունակ ընկճված և բարկացած էի: Դրանից հետո Սուրբ Հոգին հասկացրեց ինձ, որ ոչ ոք կառավարական դիրք չի զբաղեցնում՝ առանց Իր իմացության: Այդ հայտնության արդյունքում ես դադարեցի քննադատել նախագահ Քլինթոնին և սկսեցի ակնածանք ունենալ նրա հանդեպ, աղոթել և գոհանալ Աստծուց նրա համար: Աստված պատվիրում է մեզ Պողոս առաքյալի միջոցով. «Ես հորդորում եմ առաջին հերթին, որ խնդրանքներ, աղոթքներ, բարեխոսություններ և գոհություններ արվեն... նրանց համար, ովքեր իշխանություն ունեն, որպեսզի մենք հանդարտ և խաղաղ կյանք ունենանք՝ ամեն աստվածապաշտությամբ և ակնածանքով» (Ա Տիմոթ. 2.1,2, NKJV):

Ուշադրություն դարձրեք, որ մենք խաղաղ կյանք ենք վարում, երբ ակնածանք ունենք իշխանության հանդեպ: Սա այն վարձատրությունն է, որն Աստված տալիս է իշխանությանը պատվող մարդկանց: Եթե, որպես հավատացյալներ, չպատվենք իշխանություն ունեցող մարդկանց, մենք խնդիրներ կստեղծենք մեզ համար:

Գոյություն ունի երկու տեսակի հալածանք՝ սեփական անձի նկատմամբ և հանուն արդարության: Պետրոս առաքյալը խոսում է երկուսի մասին էլ: Առաջինի վերաբերյալ գրում է. «Չկա առանձնակի առաքինություն այն բանում, որ ընդունում եք այն

պատիժը, որին արժանի եք» (Ա Պետր. 2.20, MSG): Պարզ ասած, երբ սխալ ենք վարվում, մենք պատժվելու ենք դրա համար: Կամ, ավելի պարզ ասած, եթե տեսնում եք կարմիր և կապույտ լույսեր ձեր հետհայաց հայելու մեջ՝ կանգառի նշանն առանց արգելակելու անցնելուց հետո, մի՛ մեղադրեք սատանային: Ինչո՞ւ: Սա այն պատճառներից մեկն է, թե ինչու է Աստված իշխանություններ կարգել. «Որովհետև իշխանները բարի գործերի համար վախի պատճառ չեն, այլ՝ չար գործերի: Կամենո՞ւմ ես, որ իշխանությունից չվախենաս, բարի՛ն գործիր, և նրանից գովասանք կընդունես» (Հռոմ. 13.3): Այսպիսով, սեփական անձին հասցրած հալածանքից ազատվելն անչափ հեշտ է. պարզապես հնազանդվե՛ք իշխանություններին, և դուք խնդիրներ չեք ունենա:

Մյուս տեսակը՝ հանուն արդարության հալածանքն է: Սա այն դեպքն է, երբ մենք պատժվում ենք իշխանությունների կողմից, նույնիսկ երբ ճիշտ ենք վարվել: Պետրոսն այսպես է ասում. «Բայց եթե դուք վատ վերաբերմունքի եք արժանանում բարի վարքի համար և, չնայած դրան, շարունակում եք բարի ծառա լինել, հենց դա է շնորհք համարվում Աստծո մոտ: Սա այն կյանքն է, որին դուք կանչվել եք՝ այն կյանքը, որը Քրիստոսն ապրեց» (Ա Պետր. 2.20,21, MSG):

Երբ մենք վատ վերաբերմունքի ենք արժանանում և շարունակում ենք լինել լավ աշխատող, ուսանող, քաղաքացի, եկեղեցու անդամ, դա պատվի բարձրագույն դրսևորումն է: Անհրաժեշտ է ունենալ Տիրոջ երկյուղը մեր սրտերում, որպեսզի շարունակենք արժեքավոր համարել նրանց, ովքեր վատ են վարվել մեզ հետ:

Այս խոսքերին հետևելու փոխարեն, շատերն այսօր ընդդիմանում են. «Ես ազատ եմ, ես քրիստոնյա եմ, ես ապրում եմ ազատ երկրում և կարիք չկա, որ հանդուրժեմ այս անմտությունը»: Այո՛, դուք ազատ եք, բայց հիշեք, որ Աստծո Խոսքը նաև ասում է. «Որովհետև դուք, եղբայրնե՛ր, ազատության եք կանչվել. միայն թե մի՛ օգտագործեք ազատությունը՝ որպես առիթ մարմնի համար» (Գաղատ. 5.13, NKJV): Մենք կանչված ենք մեր կյանքում անարդար վերաբերմունքին ճիշտ արձագանքելու: Լսեք, թե ինչ է ասում Պողոսը. «Որովհետև հենց սրան էիք դուք կանչված [սա անբաժանելի է ձեր կոչումից]: Որովհետև Քրիստոսն էլ չարչար-

վեց ձեզ համար՝ թողնելով ձեզ [Իր անձնական] օրինակը, որպեսզի դուք Նրա հետքերով գնաք» (Ա Պետր. 2.21, AMPC):

Ո՞րն էր Հիսուսի օրինակը: Նա պատժվեց իշխանությունների կողմից՝ որպես օրինազանց, այնինչ, Նա միայն ճիշտ էր վարվել: Այստեղից բխում է այն դարավոր հարցը, թե *պե՞տք է արդյոք հպատակվել և նույնիսկ պատվել անօրեն իշխանություններին, հատկապես երբ նրանք սխալ են վարվում մեր հանդեպ:*

Անօրեն իշխանությո՞ւն

Շատերն ընդդիմանալով ասել են ինձ.

- Ջո՛ն, ես գիտեմ շատ դաժան և նույնիսկ անօրեն իշխանավորների: Դու նկատի ունես, որ Աստվա՞ծ է կարգում նրանց: Եվ ավելին՝ որ մենք պետք է հպատակվե՞նք նրանց: Մի՞թե այս կանոնը բացառություն չունի:

Այս խոսքերը ճշմարիտ են: Կան բազմաթիվ իշխանավորներ, որոնք չար են, բռնակալ և անարդար. իրականում, Սուրբ գրքում այդպիսի մարդիկ շատ կան: Մենք պետք է ուշադրություն դարձնենք, թե ինչ է ասում Աստծո Խոսքը: Գրված է, որ *ամբողջ իշխանությունն Աստծուց է,* սակայն գրված չէ, որ *ամբողջ իշխանությունն աստվածապաշտ է:*

Երբ Աստված պատվիրեց Նոր կտակարանի հեղինակներին խրատել Իր զավակներին՝ իշխանությանը հպատակվելու համար, Նա գիտեր, որ լինելու էին անօրեն իշխանավորներ: Իրականում, Սուրբ գրքում արդեն իսկ գրված է բազմաթիվ անօրեն իշխանավորների մասին: Օրինակ՝ փարավոնը: Նա դաժանորեն վարվեց Աբրահամի ժառանգների՝ Աստծո ուխտի ժողովրդի հետ: Նա ճնշման և ծեծի էր ենթարկում նրանց և նույնիսկ սպանում էր նրանց երեխաներին:

Որտեղի՞ց էր փարավոնը ստացել իր իշխանությունը: Ըստ Աստվածաշնչի, Աստված ասաց փարավոնին. «[Ես] քեզ վեր կացրի» (Ելից 9.16): Պողոսը հաստատում է սա իր թղթերից մեկում (տե՛ս Հռոմ. 9.17), իսկ որևէ ճշմարտություն հաստատվում է երկու վկաների վկայությամբ (տե՛ս Հովի. 8.17): Անկասկած, Աստված էր բարձրացրել և կարգել փարավոնին իր իշխանական դիրքում,

ոչ թե մարդիկ կամ սատանան: Սա համապատասխանում է այն պնդմանը, որ «Ներկա իշխանություններն Աստծուց են կարգված» (Հռոմ. 13.1):

Հաջորդ օրինակը Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորն է: Նա կործանեց Հուդայի երկիրը, կողոպտեց տաճարը և Աստծո ժողովրդի մեծամասնության տները: Նրա կայսրությունը տարածվում էր ամբողջ հայտնի աշխարհով: Նա այնքան անհնազանդ էր Աստծո ճանապարհներին, որ իր իշխանության մի փուլում խելագարվեց և վտարվեց մարդկությունից: Նա ապրում էր դաշտի գազանների հետ և ցլի պես խոտ էր ուտում. նրա մարմինը թրջվում էր առավոտյան ցողով, մինչև որ մազերը երկարեցին՝ արծվի փետուրների պես, և եղունգները՝ թռչնի մագիլների պես (տես Դանիել 4.33): Այնուամենայնիվ, Աստված պարզ ասաց այդ մարդու մասին. «Ահա Ես կուղարկեմ և կառնեմ *Իմ ծառա* Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորին և նրա աթոռը կդնեմ» (Երեմիա 43.10, շեղագիրը հեղինակինն է): Աստված «Իմ ծառա» անվանեց նրան, որովհետև, կրկին, «ներկա իշխանություններն Աստծուց են կարգված»:

Հաջորդ օրինակը Սավուղ թագավորն է: Ես լսել եմ, որ շատ ծառայողներ ասել են. «Սավուղը ժողովրդի ընտրությունն էր, իսկ Դավիթը՝ Աստծո»: Սա շատ սխալ ենթադրություն է, որը չի համապատասխանում Աստծո Խոսքի խորհրդին: Նման անիրազեկ պնդումները վնաս են հասցնում Աստծո ժողովրդին, քանի որ դրանք անուղղակիորեն ենթադրում են, որ որոշ օրինական իշխանություններ կարող են նշանակված լինել մարդու կողմից, ոչ թե Աստծո: Այդ ենթադրությունն, իր հերթին, կարող է դրդել մարդկանց պատիվ չցուցաբերել և չհպատակվել իշխանությանը, ինչի արդյունքում նրանք վնաս կհասցնեն իրենց: Լսեք, թե ինչ ասաց Աստված այդ անապահով, խելագար և անօրեն առաջնորդի մասին. «Զղջացի, որ Սավուղին թագավոր եմ արել, որովհետև Ինձնից ետ դառավ» (Ա Թագ. 15.11):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված ասաց. «Ես թագավոր եմ արել Սավուղին»: Ոչ թե ժողովուրդը, այլ Աստված էր կարգել նրան: Կրկին, սա համապատասխանում է այն պնդմանը, որ «Ներկա իշխանություններն Աստծուց են կարգված»:

Դավիթը՝ միակ մարդն Աստվածաշնչում, ով «Աստծո սրտի համեմատ մարդ» է կոչվում, կարգվեց Սավուղի իշխանության ներքո: Եվ դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Աստված ասաց, որ մեծապես զղջում էր Սավուղին թագավոր կարգելու համար: Սա պատահականություն չէր, այլ Աստծո ծրագիրն էր:

Սկզբում Սավուղը բարությամբ և հավանությամբ էր վերաբերվում Դավթին, քանի դեռ նա ծառայում էր իր նպատակին: Բայց հենց որ Սավուղը սկսեց դիտարկել Դավթին որպես սպառնալիք իր անվտանգությանը, նա նախանձով համակվեց և փորձեց սպանել նրան: Դավիթը ստիպված փախուստի դիմեց և թաքնվեց՝ կյանքը փրկելու համար:

Հաջորդ տասնչորս տարում Դավիթն ապրեց քարանձավներում, անապատներում և այլ լքված վայրերում, նույնիսկ՝ օտար երկրում: Մտածե՛ք այս մասին: Տասնվեցից մինչև երեսուն տարեկանը նա չէր կարող իր տուն գնալ, նույնիսկ՝ իր ընտանիքին տեսնելու համար: Նա աքսորված էր իր ընտանիքի անդամներից և մանկության բոլոր ընկերներից: Նա այլևս չէր կարող ժամանակ անցկացնել իր լավագույն ընկեր Հոփսաթանի հետ, քանի որ Սավուղը կարող էր խլել իր կյանքը: Նա զրկվեց այն ամենից, ինչը փայփայում էր իր պատանեկության տարիներին, ինչն ապահովություն, հարմարավետություն և ուրախություն էր պատճառում իրեն, տասնչորս տարով՝ այն առաջնորդի պատճառով, որի ներքո Աստված կարգել էր նրան: Մի՞թե Աստված կարող էր այդպես վարվել Իր սրտի համեմատ մարդու հետ:

Նույնիսկ այն բանից հետո, երբ Աստված հաստատեց, որ զղջացել էր Սավուղին կարգելու համար, Դավիթը շարունակում էր պատվել և հպատակվել իր թագավորին: Դավիթը շարունակ ապացուցում էր Սավուղին իր անմեղությունը, սակայն Սավուղը մշտապես ձգտում էր խլել նրա կյանքը: Իր աքսորից մի քանի տարի անց Դավիթը հնարավորություն ուներ վերջ տալու այն թշվառությանը, որի պատճառն իր առաջնորդն էր: Ենգադդիի անապատում Սավուղին սպանելու հնարավորություն ընձեռվեց: Թագավորը և նրա բանակը ցած էին դրել իրենց զենքերը Ենգադդիի մի քարայրում և տեղյակ չէին, որ Դավիթը և իր մարդիկ, լիովին զինված, թաքնվել էին այդ քարայրի ետնամասում: Դավ-

թի մարդիկ խրախուսում էին նրան սպանել Սավուղին. նրանք նույնիսկ խեղաթյուրված մեկնեցին Աստծո Խոսքը՝ հորդորելով նրան անել դա. «Ահա սա այն օրն է, որի համար Տերը քեզ ասել է, թե՝ ահա՛ քո թշնամուն քո ձեռքը կմատնեմ, և քո աչքերին հաճո երևացածն արա նրան» (Ա Թագ. 24.5):

Նրանք, ըստ էության, աղաչում էին. «Դավի՛թ, Սավուղ թագավորը մոլագար է. նա կործանում է մեր ազգը, նա անմեղ ընտանիքների և քահանաների է սպանել: Մեծ մարգարե Սամուելն օծել է քեզ՝ Իսրայելի հաջորդ առաջնորդը լինելու համար. Աստված է ասել դա: Եթե դու չսպանես նրան, նա կսպանի քեզ: Սա ինքնապաշտպանություն է. ցանկացած դատարան հավանություն կտա քո արարքին և անմեղ կճանաչի քեզ»: Այդ փաստարկները գերազանց էին, և նրանք նույնիսկ ստիպված չէին հիշատակել ակնհայտը՝ այն, որ Դավթին ուղղված Սավուղի անտեղի մեղադրանքները և հարձակումները դժբախտացրել էին թե՛ նրա, թե՛ իրենց կյանքը:

Նրանց ճնշումը չհամոզեց Դավթին, բայց մի գաղափար տվեց. նա մեկընդմիշտ կապացուցեր Սավուղին իր անմեղությունը՝ նրա հանդերձից մի կտոր կտրելով: Եթե Սավուղն ապացույց ունենար, որ Դավիթը կարող էր սպանել իրեն, սակայն զսպեց թե՛ իրեն, և թե՛ իր մարդկանց, նա այլևս չէր մտահոգվի, որ Դավիթը ցանկանում էր խլել իր իշխանական դիրքը, և կդադարեր նրան սպանելու իր հետապնդումները:

Հենց որ Դավիթը մի կտոր կտրեց իր առաջնորդի հանդերձից, նրա սիրտը խռովվեց, և նա խղճի խայթ զգաց: Նա անարգեց իր թագավորին: Ինչպե՞ս կարող էր նման բան անել: Նա արագ ուշքի եկավ՝ խստորեն պատվիրելով իր մարդկանց. «Դադարե՛ք անմտորեն խոսել: Մենք չենք հարձակվի Սավուղի վրա: Նա իմ թագավորն է, և ես աղոթում եմ, որ Տերը պահի ինձ ցանկացած արարքից, ինչը կվնասի Նրա ընտրյալ թագավորին» (խոսք 6,7, CEV):

Այնուամենայնիվ, քանի որ նա արդեն վնասել էր իր թագավորի հանդերձը, որոշեց ցույց տալ իր անմեղությունը: Նա հեռվից ձայն տվեց իր առաջնորդին.

«Ինչո՞ւ համար ես մարդկանց խոսքին ականջ դնում, որ ասում են, թե. «Ահա Դավիթը քո չարությունն է ուզում»: Ահա այսօր քո աչքերը տեսնում են, որ Տերն այսօր քարայրի մեջ քեզ իմ ձեռքը մատնեց: Եվ ասացին, որ քեզ մեռցնեմ, բայց ես քեզ խնայեցի և ասացի. «Ես իմ ձեռքը դեպի իմ տիրոջը չեմ մեկնի, որովհետև նա Տիրոջ օծյալն է»: Եվ տե՛ս, հա՛յր իմ, տե՛ս, քո վերարկուի ծայրն իմ ձեռքին է:

Եվ ես քո վերարկուի ծայրը կտրելով՝ քեզ չմեռցրի: Հասկացի՛ր և տե՛ս, որ իմ ձեռքին չարություն և անօրինություն չկա, և քեզ դեմ մի հանցանք չեմ արել, բայց դու ուզում ես իմ անձը մեռցնել: Տերը դատաստան անի իմ ու քո մեջ, և Տերը իմ վրեժը քեզնից առնի: Բայց իմ ձեռքը քեզ վրա չի լինի»:

– Ա Թագ. 24.10-13

Եթե որևէ վրեժխնդրության կարիք լիներ, որն, անկասկած, կար, Դավիթը վստահում էր Աստծուն դրա համար: Բայց ինչ վերաբերում էր իրեն, նա ոչինչ չարեց՝ բացի Սավուղին պատվելուց: Նա նույնիսկ «իմ հայր» անվանեց այն մարդուն, որը դժբախտացրել էր իր կյանքը:

Սավուղը, մեծապես զարմացած Դավթի բարության համար, բացականչեց ի պատասխան. «Դու ինձնից արդար ես, որովհետև ինձ բարիք հատուցեցիր, բայց ես քեզ չարիք հատուցեցի» (խոսք 17): Դրանից հետո Սավուղը և նրա զինվորները հեռացան:

Դավթի պատվո մեծագույն քննությունը

Այժմ, երբ Դավիթն ապացուցեց իր անմեղությունը, միգուցե մտածեք, որ Սավուղը հանգիստ կթողներ նրան: Նման դաժան առաջնորդի դեպքում դա անհավանական է: Կարճ ժամանակ անց Սավուղը լսեց, որ Դավիթը թաքնվում էր Եքեղայի բլուրների մոտ: Եվ կրկին, Սավուղը երեք հազար մարդ ընտրեց Իսրայելի լավագույն զինվորներից՝ Դավթին հետապնդելու և սպանելու համար:

Կարո՞ղ եք պատկերացնել Դավթի վիճատությունը: Ընդամենը կարճ ժամանակ անց նա ապացուցել էր Սավուղին իր անմեղությու-

նը, սակայն Սավուղը շարունակում էր հետապնդել նրան: Դա միանշանակ վկայում էր այն մասին, որ Դավթի հույսերը չարդարացան. նրա առաջնորդը սառնասիրտ մարդասպան էր: Գրեթե բոլորը բարկությամբ կլցվեին նման իրավիճակում: *«Ես պատիվ ցուցաբերեցի իմ առաջնորդի հանդեպ՝ խնայելով նրա կյանքը, թեև կարող էի հեշտորեն խլել այն՝ որպես ինքնապաշտպանություն, և սա՞ եմ ստանում՝ ի պատասխան իմ ցուցաբերած պատվի»:* Շատերը հեգնանքով կմտածեին. «Այս անգամ դու կվճարես դրա համար»:

Շուտով Դավիթն իմացավ, որ Սավուղի բանակը խորը քնի մեջ էր, որը Տիրոջից էր (տե՛ս Ա Թագ. 26.12): Նա հարցրեց իր մարդկանց, թե ով է ցանկանում թաքուն թափանցել Սավուղի բանակատեղին: Գնալու ցանկություն հայտնեց կատարյալ կամավորը՝ Աբեսսան, որը Հովաբի փոքր եղբայրն էր (այդ եղբայրներն արյան ծարավ մարդիկ էին):

Այնպես որ, Դավիթը և Աբեսսան գիշերով եկան Սավուղի բանակատեղին: Սավուղը խորը քնած էր զորքի մեջտեղում՝ Աբենների կողքին: Աբեսսան ասաց Դավթին. «Աստված այսօր քո թշնամուն քո ձեռքը մատնեց: Եվ հիմա թող տուր, որ նիզակով մեկ անգամից գետնին զարկեմ նրան և չկրկնեմ» (խոսք 8):

Ես ասես տեսնում եմ, թե ինչպես էր Դավիթը վարանում՝ պատասխանելու համար: Նա մտածում էր. *«Այս պահին կարող եմ ամբողջությամբ վերջ տալ իմ թշվառությանը, և ոչ միայն իմ, այլև իմ մարդկանց և մեր սիրելի ազգի թշվառությանը: Ինձ հետ է իմ հետևորդներից մեկը, որը մշտապես հավատարիմ է եղել ինձ. նա խնդրում է ինձ կատարել այն, ինչը տրամաբանական է ոչ միայն ինձ համար, այլև նրանց, ովքեր հետևում են ինձ: Այս հավատարիմ մարդիկ ցանկանում են կրկին տեսնել իրենց ընտանիքները: Ինչո՞ւ ես պետք է հավատարիմ լինեմ Սավուղին, այլ ոչ թե իմ մարդկանց: Սավուղը ստեց ինձ: Նա վարկաբեկեց իմ անունը՝ ասելով ամբողջ ազգին, որ ես դավաճան եմ: Նա զրկեց ինձ իմ արտոնություններից՝ հեռացնելով իմ հոր տնից և Իսրայելի քաղաքացիությունից: Նա վերցրեց իմ կնոջը և այլ տղամարդու տվեց նրան» (Ա Թագ. 25.44): Նա խլեց իմ ամբողջ ունեցվածքը:*

Դավթի մտքերն ընդհատեց այն անձնավորությունը, որը հավատարիմ էր եղել նրան և կյանքը նվիրել էր նրա բարեկեցությա-

նը. այդ անձնավորությունը Աբեսսան էր:

- Դավի՛թ, ի՞նչ ես անում: Ինչո՞ւ ես վարանում հրամայել ինձ մահապատժի ենթարկել այս հրեշին:

Ես պատկերացնում եմ, որ Աբեսսան շարունակեց.

- Նույնիսկ չասես, որ մտածում ես դա չանելու մասին: Դու շարունակ ապացուցել ես քո անմեղությունը: Հիշո՞ւմ ես Ենգադդիի քարայրը: Նա քոնն էր, սակայն դու խնայեցիր նրա կյանքը: Դու, անկասկած, ապացուցեցիր նրան քո հավատարմությունը, սակայն նա շարունակում է հետապնդել քեզ՝ կյանքդ խլելու համար: Սա ինքնապաշտպանություն է. ցանկացած դատարան կարդարացնի քո արարքը:

Պատասխան դեռ չկար:

Ես պատկերացնում եմ, որ Աբեսսայի համբերությունը սպառվում էր.

- Դավի՛թ, դու օծվեցիր մեծ մարգարե Սամուելի կողմից՝ որպես Իսրայելի հաջորդ թագավոր: Դու ես, որ պետք է ազատես մեր ժողովրդին այս անօրեն թագավորից: Չե՞ս հիշում, որ նա սառնասրտորեն սպանեց Նոբ քաղաքի ութսունհինգ քահանաներին, նրանց կանանց և երեխաներին, միայն որովհետև նրանք հաց տվին մեզ (տե՛ս Ա Թագ. 22-րդ գլուխը): Նա կեղտոտ մարդասպա՛ն է:

Ի վերջո, Աբեսսան չդիմացավ.

- Դավի՛թ, կարծում ես՝ ինչո՞ւ է Աստված քուն բերել ամբողջ այս բանակի վրա: Նա արել է դա, որպեսզի դու ազատես մեր ազգն այս անօրեն թագավորից:

Դավիթը կշռադատեց իր հավատարիմ ընկերոջ խորհուրդը: Որքան էլ տրամաբանական թվար, այն չէր համապատասխանում Աստծո խորհրդին: Այնպես որ, Դավիթն անտեսեց Աբեսսայի խոսքերը, ինչպես և իր մտքերն ինքնապաշտպանության մասին, և խստորեն պատվիրեց.

- Վնաս չհասցնե՛ս նրան: Տերն, անկասկած, կպատժի նրան, ով վնաս կհասցնի Իր ընտրյալ թագավորին: Կենդանի Տիրոջո՛վ, - շարունակեց Դավիթը, - ես գիտեմ, որ Տերն Ինքը կսպանի Սավուղին, կա՛մ երբ գա բնական մահով մահանալու նրա ժամա-

նակը, կա՛մ երբ նա պատերազմի ժամանակ մահանա: Տերը չանի, որ ես փորձեմ վնաս հասցնել նրան, որին Տերը թագավոր է դարձրել (տե՛ս Ա Թագ. 26.9-11, GNT):

Դավիթը զսպեց իր ծառային, և երկուսն էլ հեռացան բանակատեղիից:

Ինչո՞ւ էր Աստված խորը քուն բերել ամբողջ բանակի վրա. որ փորձեր Դավթի սիրտը և տեսներ՝ արդյո՞ք նա Աստծո սրտի համեմատ մարդ կմնար, թե՞ կդառնար Սավուղի պես և անձամբ կտնօրիներ իրավիճակը: Նա կանարգե՞ր Աստծուն՝ անարգելով Աստծո կողմից կարգված մարդուն: Դա վճռորոշ պահ էր Դավթի համար:

Դավիթը պատվեց թագավորին, նույնիսկ երբ թագավորն արեց այն, ինչ կարող էր՝ իրեն անպատվելու համար: Դրա վարձատրությունն ավելին էր լինելու, քան ինքը կարող էր պատկերացնել: Ահա թե ինչ ասաց Աստված այն անձնավորության մասին, որն արժևորեց իր դաժան առաջնորդին և հարգանք ցուցաբերեց նրա հանդեպ.

> «Իմ Դավիթ ծառային գտա, Իմ սուրբ յուղով օծեցի, որ Իմ ձեռքը կհաստատի նրան, և բազուկս կզորացնի նրան: Թշնամին չի նեղացնի նրան, և անօրինության որդին չի չարչարի նրան: Բայց Ես նրա երեսի առջև կփշրեմ նրա թշնամիներին և կզարկեմ նրան ատողներին: Եվ Իմ ճշմարտությունն ու Իմ ողորմությունը նրա հետ կլինի... Մեկ անգամ երդում եմ արել Իմ սրբությամբ, թե սուտ չեմ ասի Դավթին: Նրա զավակը հավիտյան պիտի լինի, և նրա աթոռը՝ ինչպես արեգակն Իմ առջև: Ինչպես լուսինը հավիտյան հաստատ պիտի լինի, և ինչպես վկան ամպերում՝ հավատարիմ»:
>
> – Սաղմ. 89.20-24,35-37

Դավիթը նայեց Սավուղի դաժանությունից այն կողմ և տեսավ այն իշխանությունը, որը նրա կյանքում էր: Նա վարվեց՝ համաձայն պատվի սկզբունքի. պատվելով այն անձնավորությանը, որին Աստված կարգել էր՝ որպես իր առաջնորդ, նա իրականում պատվում էր անձամբ Աստծուն: Եվ եթե նա պատվում էր Աստ-

ծուն, Աստված էլ նրան կպատվեր: Ես կասեի, որ վերոբերյալ աստվածաշնչյան հատվածը ցույց է տալիս այն անսահման պատիվը, որն Աստված ցուցաբերեց Դավթի հանդեպ: Սա հիրավի մեծ վարձատրություն է:

Այդ դեպքից կարճ ժամանակ անց Աստված իսկապես դատեց Սավուղին. մարտի ժամանակ փղշտացիները սպանեցին նրան: Հենց որ Դավիթը լսեց նրա մահվան լուրը, սիրո երգ նվիրեց Սավուղին և Հոնաթանին, և սովորեցրեց այն Հուդայի բոլոր մարդկանց, որպեսզի երգեին: Նա պատվեց իր առաջնորդին նույնիսկ այն բանից հետո, երբ դատաստանի ենթարկվեց:

Մենք դիտարկեցինք ընդամենը մի քանի աստվածաշնչյան օրինակներ, որոնք հստակ ցույց են տալիս, որ Աստված է, որ օրինական իշխանություն է տալիս մարդուն, այլ ոչ թե մարդը կամ դիվային ուժերը: Մարդկության պատմության ընթացքում Աստված կարգել է յուրաքանչյուր առաջնորդի, անկախ այն բանից՝ նրա վարքը բարի՞ է եղել, թե՞ խիստ: Այդ առաջնորդը՝ տղամարդ, թե կին, կարգվել է հատուկ պատճառով, ինչը երբեք պատահական չի եղել: Թույլ տվեք ևս մեկ անգամ կրկնել Աստծո անսխալական Խոսքը. «Ներկա իշխանություններն Աստծուց են կարգված»:

Ինչ վերաբերում է խիստ առաջնորդին, նրա իշխանությունը կարգված է Աստծո կողմից, սակայն նրա դաժան վարքն Աստծուց չէ: Այդ առաջնորդը հաշիվ կտա Աստծուն, բայց այդ ընթացքում նրա իշխանության ներքո գտնվող մարդիկ կփորձվեն, ինչպես Դավիթը: Եթե նրանք պատիվ ցուցաբերեն, մեծապես կվարձատրվեն:

Մենք տեսանք, որ Աստված է կարգում բոլոր իշխանավորներին: Հաջորդ գլխում կշարունակենք քննարկել հետևյալ հարցը. *«Արդյո՞ք մենք պետք է հպատակվենք իշխանությանը, նույնիսկ եթե այն խիստ է և անօրեն»:*

6

Խիստ իշխանություն

Վերջին գլխում տեղեկացանք Սուրբ գրքից, որ Աստված է կարգում բոլոր օրինական իշխանավորներին, նույնիսկ նրանց, որոնք խիստ են: Ինչպե՞ս բարի Աստված կարող է դաժան մարդկանց կարգել իշխանական դիրքերի: Պատասխանը պարզ է. Աստված է իշխանություն տվողը, բայց Նա չէ դաժանության հեղինակը: Մարդն է պատասխանատու իր դաժան արարքների համար, ոչ թե Աստված: Հիշե՛ք հետևյալ ճշմարտությունը. *ամբողջ իշխանությունն Աստծուց է, բայց ամբողջ իշխանությունն աստվածապաշտ չէ:*

Այժմ անդրադառնանք մյուս դարավոր հարցին: Պե՞տք է արդյոք հպատակվել դաժան իշխանությանը, երբ իշխանություն ունեցող մարդիկ սխալ են վարվում մեր հանդեպ: Մենք կարող ենք տեսնել պատասխանը Դավթի կյանքում: Նրա օրինակը ցույց է տալիս, որ Աստծո կամքն է, որ մենք հնազանդվենք իշխանությանը, նույնիսկ երբ այն անօրեն է: Բայց եկեք մեկ քայլ առաջ գնանք: Անմիջապես կարդանք այս հարցի պատասխանը Պետրոս առաքյալի թղթից.

> «Ծառաները (աշխատակիցները, ուսանողները, քաղաքացիականները, եկեղեցու անդամները և այլք) հնազանդ լինեն տերերին (գործատուներին, տնօրեններին, ուսուցիչներին, եկեղեցու առաջնորդներին, պետական

իշխանություններին) ամեն վախով, ոչ միայն բարիներին և հեզահոգիներին, բայց ժանտաբարոներին էլ»:

– Ա Պետր. 2.18, (փակագծերի բառերը հեղինակինն են)

Հրաշալի է ունենալ բարի և հեզահոգի առաջնորդներ, և նրանք կարևոր են մեր զարգացման և աճի համար: Այնուամենայնիվ, Պետրոսը ոչ միայն մատնանշում է *բարի* և *հեզահոգի* առաջնորդներին, այլև հատուկ շեշտում է, որ մենք պետք է հնազանդվենք նաև *ժանտաբարո* կամ *խիստ* առաջնորդներին:

Ուշադրություն դարձրեք, որ նա ասում է՝ «ամեն վախով»: Սրանում է նրա պատվերի գաղտնիքը: Հիշեք, որ ճշմարիտ պատիվը սկիզբ է առնում Աստծո հանդեպ ակնածալի երկյուղ ունեցող սրտից: Ամերիկայում իշխանություններին ասում ենք. «Դուք պետք է վաստակեք իմ հարգանքը, մինչև որ ես կպատվեմ և կհպատակվեմ ձեզ»: Այնուամենայնիվ, համաձայն Եսայի մարգարեի, Տիրոջ երկյուղը չի դատում աչքի տեսածով և ականջի լսածով, այլ՝ արդարությամբ (տե՛ս Եսայի 11.3,4): Ուստի, Տիրոջ երկյուղը մարդու սրտում ասում է իր առաջնորդին. «Ես գիտեմ, որ ձեր կյանքում իշխանություն կա, և որ այն սկիզբ է առնում Աստծուց: Այնպես որ, արդեն հարգանք և պատիվ եմ ցուցաբերում ձեր հանդեպ: Կարիք չկա, որ վաստակեք այն, քանի որ ես պատվում եմ ձեր դիրքը, ոչ թե ձեր վարքը»:

Կրկին, ուշադրություն դարձրեք նրա պատվերի վերջին մասին. «ոչ միայն բարիներին և հեզահոգիներին, բայց *ժանտաբարոներին էլ»:* Մեկ օր, մտորելով այս խոսքի շուրջ, մտածեցի. *«Ինչպե՞ս թե ժանտաբարո: Միգուցե այս բառը մի փոքր ծայրահեղ կերպով է թարգմանված Աստվածաշնչում: Ես կստուգեմ այն հունարենով»:*

Առաջինը, որ բացեցի, *«Թայերի բառարանն»* էր: Ես բացահայտեցի, որ *«ժանտաբարո»* բառը հունարենում *«սկոլիոս»*-ն է: Թայերը սահմանում է այս բառը որպես «անազնիվ, այլասերված, չար, անարդար և այլն»: Ես անմիջապես վեր թռա աթոռից. *«Սա առավել վատ է»:* Մտածեցի. *«Միգուցե նա սխալվել է. ես այլ աղբյուր կդիտարկեմ»*՝ հուսալով, որ թեթևություն կստանամ: Ես վերցրի «Վ. Է. Վայնի բառարանը», որը Հունարեն Նոր կտակարան-

յան բառերի ևս մեկ մասնագետ է: Նա սահմանում է այս բառը որպես «բռնակալական կամ անարդար տերեր (առաջնորդներ)»:

Շարունակեցի իմ որոնումը և գտա այլ թարգմանություններ, որոնցում այս խոսքն ավելի խիստ էր ներկայացված: «Նոր դարի թարգմանության» մեջ գրված է. «Ոչ միայն նրանց, որոնք լավն են ու բարի, այլև նրանց, որոնք խարդախ են»: «Ժամանակակից Անգլերեն թարգմանության» մեջ գրված է. «Այսպես վարվեք ոչ միայն նրանց հանդեպ, որոնք բարի և հոգատար են, այլև նրանց հանդեպ, որոնք դաժան են»: «Նոր Ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչում» գրված է «անխոհեմ»:

Մենք պետք է հարցնենք. «Մի՞թե Աստված ցավ է պատճառում Իր զավակներին»: Իհարկե՝ ո՛չ: Նա լավագույն Հայրն է տիեզերքում: Նա ոչ միայն սիրող է. Նա *Սեր է:* Այնպես որ, եկեք պարզենք հետևյալը. արդյո՞ք ինձ սիրող երկնային Հայրը պատվիրում է Իր զավակին, որ հնազանդվի խիստ, դաժան, անազնիվ, այլասերված, բռնակալական, անարդար և խարդախ առաջնորդի: Եվ ի՞նչն է պատճառը, որ Նա ոչ միայն խնդրում է ինձ անել դա, այլև պատվիրում է: Կան շատ պատճառներ, բայց ես կարող եմ ամփոփել բոլորը մեկ արտահայտությամբ. *«իմ օգտի համար»:*

Գոյություն ունի երեք օգտակար բան այսպիսի առաջնորդներին պատվելու մեջ: Առաջինը՝ եթե մենք, անարդար վերաբերմունքի արժանանալով, հնազանդվենք իշխանությանը հպատակվելու պատվերին, մեր գործն Աստծո ձեռքերում կլինի, Ով արդարությամբ է դատում (տես Ա Պետր. 2.21-23): Եթե որոշենք ինքներս լուծել մեր խնդիրը, Աստված ետ կկանգնի, և մենք մենակ կմնանք՝ հայտնվելով ոչ բարենպաստ վիճակում: Շատ հաճախ, քանի որ խոսքն իշխանության մասին է, մեզ հետ արդարացիորեն չեն վարվի: Հազվագյուտ դեպքերում կարող ենք հաղթել մեր պայքարում, բայց մեր սրտում ոչ քրիստոսանման վերք կամ արմատ կմնա, որը հետագայում կդրսևորվի՝ խնդիրներ կամ, նույնիսկ, ապականություն բերելով:

Երկրորդը՝ Պետրոսն ասում է, որ երբ մենք պատիվ կամ օրհնություն ենք հատուցում անարդար վերաբերմունքի դիմաց, տեղի է ունենում հետևյալը. «Չար մի՛ հատուցեք չարի փոխարեն, կամ վիրավորանք՝ վիրավորանքի փոխարեն: Ընդհակառակը, չարի

փոխարեն օրհնություն *(պատիվ)* հատուցեք, որովհետև սրա համար եք դուք կանչված, *որ օրհնություն ժառանգեք»* (Ա Պետր. 3.9, NIV, փակագծերի բառերը հեղինակինն են):

Մենք կանչված ենք, որ ճիշտ վարվենք անարդար վերաբերմունքի դեպքում՝ պատվելով (արժևորելով, հնազանդվելով և օրհնելով) նրանց, ովքեր բարի չեն մեր հանդեպ: Ինչո՞ւ ենք մենք կանչված դրան: Որպեսզի դրա շնորհիվ օրհնություն (վարձատրություն) ստանանք: Այնպես որ, երբ ինչ-որ մեկը սխալ է վարվում ձեր հանդեպ, հատկապես երբ այդ անձնավորությունն իշխանություն ունի, կարող եք մեծապես ոգեշնչվել, քանի որ դուք վարձատրություն եք ստանալու:

Առաջխաղացումը՝ որպես վարձատրություն

Ցանկանում եմ կիսվել մի պատմությամբ, որը գրել եմ իմ նախորդ գրքերից մեկում: Սա դասական օրինակ է այն մասին, թե ինչպես է Աստված վարձատրում մեզ, երբ պատվում ենք մեր հանդեպ սխալ վարվող մարդկանց:

Ես մի մտերիմ հովիվ ընկեր ունեմ, որի անունն է Ալ Բրայս: Մի քանի տարի առաջ նա հովվում էր Դալլասի եկեղեցիներից մեկը, և մի կիրակի առավոտյան քարոզում էր Պետրոսի Առաջին թղթից: Երբ Ալն ավարտեց քարոզը, եկեղեցու անդամներից մեկը (նրան կանվանեմ Բրայեն) մոտեցավ նրան՝ անչափ կարևոր հարցով:

- Հովիվ Բրա՛յս, - ասաց նա, - ես կրտսեր գործադիր ղեկավար եմ մի խոշոր ապահովագրական ընկերությունում: Տարիներ շարունակ քրտնաջան աշխատել եմ և արդեն փոխտնօրեն դառնալու շեմին էի: Մեր բոլոր աշխատողները գիտեին, որ ես վաստակել էի այդ առաջխաղացմանը հասնելու ձիրքը: Ես իսկապես արժանի էի այդ աշխատանքին: Բայց երբ այդ պաշտոնը թափուր դարձավ, մեր ընկերությունն այն տվեց այլ աշխատողի:

- Ո՞րն էր պատճառը, - հարցրեց հովիվ Ալը:

- Նա սպիտակամորթ է, իսկ ես սևամորթ եմ: Հովի՛վ, դա խտրականություն է: Ես հավատում եմ, որ կարող եմ ապացուցել դա: Իրականում, ես պատրաստվում էի դատական հայց ներկա-

յացնել հաջորդ շաբաթվա սկզբում, բայց այս առավոտ դուք քարոզեցիք այս ուղերձը և շփոթեցրիք ինձ:

Հովիվ Բրայսը նայեց Բրայենին և ասաց.

- Դուք ցանկանում եք վարվել Աստծո՞ ուզած կերպով, թե՞ ձեր ուզած կերպով:

Բրայենն անվարան պատասխանեց.

- Հովի՛վ, ես ամբողջ սրտով սիրում եմ Աստծուն: Ես ցանկանում եմ վարվել Աստծո ուզած կերպով: Այդ պատճառով էլ հիմա զրուցում եմ ձեզ հետ: Խնդրում եմ, աղոթե՛ք ինձ համար:

- Այո՛, - պատասխանեց Ալը: Երկուսն էլ խոնարհեցրին գլուխները և հանձնեցին Բրայենի գործը Հայր Աստծո ձեռքերի մեջ՝ Նրա արդար դատաստանին:

Հաջորդ առավոտյան Բրայենն աշխատանքի գնաց այն մտադրությամբ, որ լինելու է առաջինը, ով պատիվ է ցուցաբերելու այդ առաջխաղացում ստացած աշխատողին: Նա գնաց այդ անձնավորության գրասենյակը, պարզեց ձեռքը և լայն ժպտալով ասաց.

- Շնորհավորում եմ քեզ պաշտոնի բարձրացման առթիվ և ուզում եմ, որ իմանաս՝ ես լինելու եմ քո թիմի լավագույն անդամը:

Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի անհարմարավետ զգացում ունեցավ այդ մարդը, քանի որ նա նույնպես գիտեր, որ այդ պաշտոնը սխալ անձնավորության էր տրվել: Հակառակ դեպքում Բրայենն *իր* ղեկավարը կլիներ և այդ սեղանի մոտ նստած կլիներ:

Մի քանի շաբաթ անցավ, և ոչինչ տեղի չունեցավ: Դուք պետք է հասկանաք, որ հաճախ հենց այդպես է լինում: Աստծո դատաստանը կամ փրկությունը գալիս է, սակայն հաճախ ավելի ուշ, քան մենք կցանկանայինք: Այնուամենայնիվ, Բրայենը կանգ չառավ այն փաստի վրա, որ իր հետ սխալ էին վարվել: Փոխարենը, նա ընտրեց պատվի ճանապարհը: Նա շարունակեց լավագույնս կատարել իր պարտականությունները:

Մի օր Բրայենը զանգ ստացավ մի մրցակից ընկերությունից՝ խոշոր միջազգային ապահովագրական ընկերությունից, որը մասնաճյուղ ուներ Դալլասում: Զանգող անձնավորությունն ասաց.

- Մենք հետևել ենք, թե ինչպես եք դուք աշխատում մեր ընդհանուր հաճախորդների հետ, և շատ տպավորված ենք: Ձեզ հետաքրքրո՞ւմ է աշխատանքը մեր ընկերությունում:

Բրայենը երկար մտածելու կարիք չուներ.

- Ո՛չ, չի՛ հետաքրքրում, - ասաց նա: Ես չեմ ցանկանում փոխել իմ աշխատանքը: Տարիներ շարունակ աշխատել եմ այս ընկերությունում: Ես մեծ առավելություններ և կայուն հաճախորդներ ունեմ: Իմ հաճախորդները և աշխատակիցները հարգանքով են վերաբերվում ինձ և գիտեն իմ բնավորությունը: Ես նպաստավոր աշխատանքային պայմաններ ունեմ, և իրականում չեմ սիրում փոփոխություններ: Շնորհակա՛լ եմ, բայց իսկապես հետաքրքրված չեմ դրանով:

Մյուս ընկերության աշխատակիցը համառեց.

- Ես միայն մեկ հանդիպում եմ խնդրում. մենք կարող ենք միասին ճաշել, որպեսզի զրուցենք ձեզ հետ: Ի՞նչ վնաս կարող է լինել դրանից:

Բրայենը փորձեց առավել հաստատակամ լինել.

- Ասում եմ ձեզ, դուք վատնում եք ձեր ժամանակը: Ես հետաքրքրված չեմ դրանում:

Գրեթե այնպիսի տպավորություն էր, որ այդ մարդը դժվարությամբ էր լսում.

- Շատ լավ, կարո՞ղ եք ընդամենը մեկ անգամ ճաշել մեզ հետ:

Գրեթե վիատվելով՝ Բրայենն ասաց.

- Լա՛վ, ես կհանդիպեմ ձեզ հետ:

Նրանք որոշեցին հանդիպման ժամանակը, և եկավ ճաշի որոշված օրը: Բրայենը և մյուսները ողջունեցին միմյանց և կերակուր պատվիրեցին: Այդ խոշոր ապահովագրական ընկերության գործադիր տնօրեններից մեկն ասաց.

- Բրայե՛ն, մենք հետևել ենք ձեզ և անչափ տպավորված ենք ձեր գործելաոճով: Մեր աշխատակիցները ցանկանում են, որ դուք մեզ մոտ աշխատեք:

Բրայենը տարուբերեց գլուխը.

- Հեռախոսով արդեն ասացի: Դուք վատնում եք ձեր ժամանա-

կը: Ես չեմ ցանկանում փոխել իմ աշխատանքը: Ես կայունություն եմ սիրում: Ես մեծ առավելություններ ունեմ: Շատ բան եմ ներդրել իմ ընկերության մեջ: Ես պարզապես չեմ ցանկանում դա:

- Լա՛վ, Բրայե՛ն, մենք հասկանում ենք ձեզ: Բայց խնդրում ենք հետևյալը: Տուն գնացե՛ք, խորհրդակցե՛ք ձեր կնոջ հետ, և միասին որոշե՛ք այն աշխատավարձի չափը, որը ցանկանում եք ստանալ մեզնից: Եվ եկեք կրկին հանդիպենք մեկ շաբաթ անց ու քննարկենք:

Գրեթե հակառակ իր ցանկությանը, Բրայենը հոգոց հանեց և ասաց.

- Լա՛վ, այդպես էլ կվարվեմ:

Նա տուն գնաց: Նա իսկապես լրջորեն չէր ընդունել այդ ամենը և գրեթե ոչինչ չասաց իր կնոջն այդ առաջարկի մասին մինչև երկրորդ հանդիպմանը նախորդող երեկոն: Բրայենը զրուցում էր իր կնոջ հետ և ի վերջո ասաց.

- Ես իրականում չեմ ցանկանում փոխել իմ աշխատանքը: Նրանք խնդրեցին, որ աշխատավարձի չափ որոշենք: Ես արդեն հոգնել եմ այս ամենից, ուստի հետևյալ կերպ կվարվեմ: Ես կընդունեմ աշխատավարձ որոշելու նրանց առաջարկը և անհեթեթ մի բան կանեմ: Նրանց կասեմ, որ ցանկանում եմ իմ ներկա աշխատավարձի եռապատիկը: Նրանք այնպես կծիծաղեն ինձ վրա, որ ես ստիպված կլինեմ հեռանալ ռեստորանից, և այս խոսակցությունն անմիջապես կավարտվի:

Նա մի կարճ նամակ գրեց և այնպիսի գումար նշեց, որն իր ներկա աշխատավարձի եռապատիկն էր: Մտապահե՛ք, որ նա արդեն իսկ բարձր պաշտոն ուներ իր ընկերությունում: Նման բարձր թիվ նշելն անհեթեթ էր թվում:

Հաջորդ օրը Բրայենը ճաշի գնաց: Կերակուր պատվիրելուց հետո այդ ապահովագրական ընկերության գործադիրներից մեկը հարցրեց Բրայենին՝ արդյո՞ք նա որոշել էր իր աշխատավարձի ցանկալի չափը:

- Այո՛, - պատասխանեց Բրայենը:

Նա արդեն ուզում էր հանել նամակը բաճկոնի գրպանից, բայց մյուս անձնավորությունը թույլ չտվեց.

- Ո՛չ, ո՛չ: Իրականում, մենք չենք ուզում տեսնել, թե որքան գումար եք ցանկանում ստանալ մեզնից: Մենք, նախ, ուզում ենք ցույց տալ, թե որքան ենք ցանկանում վճարել ձեզ:

Նա մի նամակ դրեց սեղանին: Բրայենը վերցրեց այն և մի քանի տող կարդալուց հետո գրեթե ուշագնաց եղավ: Այն թիվը, որը նրանք առաջարկում էին, իր ներկա աշխատավարձի *քառապատիկն* էր: Բրայենն այնքան ապշած էր, որ չգիտեր, թե ինչ պատասխաներ: Նա պարզապես հառել էր աչքերն այդ նամակին: Այնուամենայնիվ, մյուս ապահովագրական ընկերության ներկայացուցիչները սխալ հասկացան նրա լռությունը և եզրակացրին, որ միգուցե իրենց առաջարկը բավականին բարձր չէր: Նրանք ավելի բարձր գումար և ավելի շատ առավելություններ առաջարկեցին:

Ի վերջո, Բրայենը վերականգնեց ինքնատիրապետումը և ասաց.

- Պարոնա՛յք, ես քրիստոնյա եմ: Ուզում եմ տուն տանել այս առաջարկը, որպեսզի աղոթեմ դրա վերաբերյալ կնոջս հետ: Ես կապ կհաստատեմ ձեզ հետ:

- Իհա՛րկե, իհա՛րկե, մի՛ շտապեք, - պատասխանեցին նրանք:

Բրայենը տուն գնաց և պատմեց այդ մասին կնոջը: Երկուսն էլ աղոթեցին, և Աստծո Հոգին միաժամանակ խոսեց երկուսի հետ: Տիրոջից եկած ուղերձը հետևյալն էր. «Որդի՛ս, դու հանձնեցիր քո գործն Իմ ձեռքերի մեջ: Ես արդարացրել եմ քեզ: Սա Իմ առաջխաղացումն է: Վերցրո՛ւ այն»:

Այժմ, տարիներ անց, Բրայենն այլևս չի ապրում Դալլասում: Նա ավագ գործադիր ղեկավար է այդ խոշոր ապահովագրական ընկերության միջազգային գրասենյակում, որը գտնվում է Վիրջինիայում: Այն ընկերությունը, որտեղ Բրայենն աշխատում էր, և որտեղ նրա հանդեպ սխալ վարվեցին՝ չտալով այն առաջխաղացումը, որին արժանի էր, գաճաճ է այդ ընկերության համեմատ:

Ի՞նչ կարելի է եզրակացնել այս պատմությունից: Իհարկե, Բրայենը կարող էր պաշտպանել իրեն և նույնիսկ վրեժ լուծել: Դա օրինավոր դատական գործ էր: Նա ուներ իրավունքներ, որ կարող էր պահանջել: Նրան անտեսել էին և նրա հետ սխալ էին

վարվել: Հավանաբար, նա կհաղթեր այդ գործը, բայց նույնիսկ եթե հաղթեր, չէր լինի այնտեղ, որտեղ այսօր է: Նա բաց կթողներ այն օրհնությունը, որն Աստված պատրաստել էր իր համար: Նա որոշում կայացրեց պատվել իշխանություն ունեցող մարդկանց, նույնիսկ երբ անարդարացի վերաբերմունքի արժանացավ: Նա որոշեց վրեժ չլուծել և հանձնեց իր գործն Աստծո ձեռքերի մեջ, ինչի արդյունքում ամբողջական վարձատրություն ստացավ:

Հպատակություն և հնազանդություն

Երրորդ պատճառը, թե ինչու է մեզ պատվիրված հնազանդվել խիստ իշխանություններին, այն է, որ երբ վստահում ենք Աստծուն՝ մեզ արդարացնելու փոխարեն, մեզանում աստվածապաշտ բնավորություն է ձևավորվում: Պետրոսը շարունակում է. «Արդ, Քրիստոսը, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց» (Ա Պետր. 4.1):

Այս թղթի ենթատեքստում Քրիստոսի չարչարանքը դիտարկվում է որպես անարդար վերաբերմունք իշխանության կողմից: Մենք պետք է զինվենք նույն մտքով: Ինչո՞ւ: Մենք կանչված ենք պատիվ ցուցաբերելու իշխանությանը, նույնիսկ այն դեպքում, երբ այն անարդար է վարվում մեր հանդեպ:

Պետրոսը պնդում է, որ եթե այսպես վարվենք, մեղքից կդադարենք: Շրջասության ենթարկելով այս պնդումը՝ մենք հոգևոր հասունության կհասնենք: Պողոսը հաստատում է սա՝ գրելով. «Մենք նույնպես կարող ենք ցնծալ, երբ խնդիրների և նեղությունների ենք բախվում, որովհետև գիտենք, որ դրանք լավ են մեզ համար. դրանք օգնում են մեզ համբերություն սովորել: Իսկ համբերությունը հաստատուն բնավորություն է ձևավորում մեզանում» (Հռոմ. 5.3,4): Երբ մեր մեջ հաստատուն բնավորություն է կառուցվում, մենք հեշտորեն ենք կարողանում պատվել այն մարդկանց, որոնք, ըստ մեր չափանիշների, պատվով չեն վարվում: Մենք սկսում ենք վարվել Տիրոջ երկյուղի ավելի մեծ չափով, ինչն իր հերթին ավելի մեծ վարձատրություն է բերում:

Այժմ եկեք պատշաճ հոգևոր հավասարակշռություն բերենք մեր քննարկման մեջ: Աստվածաշունչը խրատում է մեզ անպայմանականորեն հպատակվել իշխանությանը. այնուամենայնիվ, այն չի սովո-

րեցնում մեզ անպայմանականորեն հնազանդվել իշխանությանը:

Գոյություն ունի տարբերություն հպատակության և հնազանդության միջև: Հպատակությունը կապ ունի մեր վերաբերմունքի հետ, իսկ հնազանդությունը՝ մեր գործողությունների հետ: Ահա թե ինչու է գրված. «Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.19): Հիշում եմ, որ մի անգամ Սուրբ Հոգին շտկեց ինձ: Ես վիատված էի, քանի որ հոգևոր ընթացքիս մեջ խնդիրներ կային: Վեց ամիս շարունակ ոչինչ չէի ստանում Աստծուց իմ եկեղեցում. իմ հովվի ուղերձները չէին սնուցում ինձ: Աղոթքի մեջ Տերը մատնացույց արեց այս խոսքը՝ ասելով, որ դա էր պատճառը, որ ոչինչ չէի ստանում:

- Ես հնազանդ եմ, - ընդդիմացա: Ես կատարում եմ այն, ինչ հանձնարարում են իմ հովիվը և ավագ ծառայողները:

Սուրբ Հոգին արագորեն պատասխանեց. «Ես չասացի՝ եթե լսեք, երկրի բարիքը կուտեք: Փոխարենը ասացի՝ եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք: Հնազանդությունը կապ ունի քո գործերի հետ, իսկ հոժարությունը՝ քո վերաբերմունքի: Եվ քո վերաբերմունքից տհաճ հոտ է գալիս»:

Հանկարծ հասկացա, թե որքան կարևոր էր իմ սրտի վերաբերմունքը: Կրկին, հիշեք, որ Տիրոջ երկյուղը բնակվում է մեր սրտում, իսկ պատիվը բխում է սուրբ երկյուղից:

Մենք տեսնում ենք սա նաև Նոր կտակարանում: Պողոսը գրում է. *«Հնազանդվե՛ք* նրանց, ովքեր իշխանություն ունեն ձեզ վրա, և *հպատակվե՛ք,* որովհետև նրանք հսկում են ձեր անձերը՝ որպես մարդիկ, որոնք պետք է հաշիվ տան: Թույլ տվեք նրանց անել դա ուրախությամբ, և ոչ թե տրտմությամբ, որովհետև դա անօգուտ կլինի ձեզ համար» (Եբր. 13.17, NKJV, շեղագիրը հեղինակինն է): Ուշադրություն դարձրեք, որ նա հատուկ նշում է, որ մենք պետք է և՛ հնազանդվենք, և՛ հպատակվենք նրանց, ովքեր իշխանություն ունեն մեզ վրա: Հնազանդությունը կապ ունի մեր գործերի հետ. հպատակությունը կապ ունի իշխանության հանդեպ մեր վերաբերմունքի հետ: Կրկին, ուշադրություն դարձրեք, որ եթե չենք պատվում մեզ վրա կարգված մարդկանց, դա անօգուտ է թե՛ մեզ համար, թե՛ այդ առաջնորդների: Մենք կորցնում ենք մեր վարձատրությունը:

Ինչպես արդեն նշեցի, Աստվածաշունչը սովորեցնում է անպայմանական հպատակություն իշխանությանը, բայց ոչ՝ անպայմանական հնազանդություն: Կա միայն մեկ դեպք, կրկնում եմ՝ մեկ դեպք, երբ Աստվածաշունչը պատվիրում է մեզ չհնազանդվել ոչ մի իշխանության. երբ իշխանությունը հրամայում է մեզ մեղք գործել (այնպիսի բան անել, ինչը հակառակ է Աստծո գրված Խոսքին):

Գոյություն ունեն բազմաթիվ սուրբգրային օրինակներ այս մասին, սակայն կդիտարկենք միայն մեկը: Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը հրաման արձակեց, որ բոլորը պետք է խոնարհվեն և երկրպագեն մի ոսկե պատկերի, երբ լսեն երաժշտական գործիքների ձայնը: Ըստ այդ հրամանի, հրաժարվողներին պատիժ էր սպառնում. նրանց կրակե հնոցի մեջ էին գցելու:

Այդ ժամանակ այդ թագավորության մեջ երեք հրեա երիտասարդներ կային, որոնց անուններն էին Սեդրաք, Միսաք և Աբեդնագով: Թագավորը բարեհաճությամբ էր վերաբերվում նրանց, քանի որ նրանք օժտված և իմաստուն էին: Այնուամենայնիվ, այս երեք երիտասարդներն Աստծո երկյուղն ունեին, իսկ նրանց առաջնորդի հրամանն ուղղակիորեն խախտում էր Տորայում գրված երկրորդ պատվիրանը, որն Աստված տվել էր Մովսեսին:

Այս երեք երիտասարդները մտածված չհնազանդվեցին թագավորի հրամանին: Շուտով Նաբուգոդոնոսոր թագավորն իմացավ նրանց անհնազանդության մասին: Նա վրդովվեց նրանց արարքի պատճառով և հրամայեց իր առջև բերել, որպեսզի հարցում անի: Լսե՛ք նրանց պատասխանը. «Ո՛վ Նաբուգոդոնոսոր, մենք կարիք չունենք պաշտպանելու մեզ քո առջև: Եթե գցվենք վառվող հնոցը, այն Աստված, Ում ծառայում ենք, կարող է փրկել մեզ: Նա կփրկի մեզ քո իշխանությունից, Ձե՛րդ Մեծություն, բայց նույնիսկ եթե չանի դա, մենք ուզում ենք պարզ ասել, Ձե՛րդ Մեծություն, որ մենք երբեք չենք ծառայի քո աստվածներին և չենք երկրպագի այն ոսկե արձանին, որին դու կանգնեցրել ես» (Դանիել 3.16-18, NLT):

Նրանք հաստատ կանգնեցին՝ հնազանդվելով Աստծո պատվիրանին, սակայն պատվով խոսեցին թագավորի հետ: Նրանք «Ձերդ Մեծություն» անվանեցին թագավորին: Նրանք չասացին.

«Բռնակալ շո՛ւն, մենք երբեք չե՛նք կատարի քո ասածը»: Անհարգալից խոսելը կնշանակեր անարգել Աստծուն, Ով իշխանական դիրք էր տվել այդ մարդուն: Մենք պարտավոր ենք հպատակվել (պատվել) իշխանությանը, նույնիսկ երբ պետք է չհնազանդվենք իշխանություն ունեցող մարդու հրամանին:

Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը պատիվ ցուցաբերեցին Աստծո և թագավորի հանդեպ: Առաջին հերթին նրանք պատվեցին Աստծուն՝ հրաժարվելով մեղանչել, նույնիսկ իմանալով, որ սարսափելի հնոցի մեջ են գցվելու: Երկրորդ հերթին նրանք պատվեցին թագավորին՝ հպատակվելով նրա իշխանական դիրքին և հարգալից խոսելով նրա հետ, նույնիսկ երբ նա ատելությամբ խոսեց իրենց հետ: Նրանք որևէ կերպով չծաղրեցին և չսպառնացին՝ ի պատասխան: Նրանք ապրում էին պատվի սկզբունքով: Նրանց վարձատրությունը մեծ և ամբողջական էր լինելու, թեև սկզբում, անկասկած, այդպես չէր թվում:

Թագավորն անմիջապես հրամայեց կրակի հնոցը գցել նրանց: Նա այն աստիճան բարկացավ, որ հրամայեց սովորականից յոթ անգամ ուժեղ վառել այդ հնոցը: Դրանից հետո պատվիրեց իր բանակի կազմում գտնվող քաջ զինվորներին, որ այդ երեք երիտասարդ հրեաներին կապեն իրենց իսկ հանդերձներով և հնոցը նետեն:

Հնոցն այնքան ուժգնորեն էր վառվում, որ կրակը սպանեց այն զինվորներին, որոնք մոտեցրին այդ երիտասարդներին հնոցի մուտքին: Այնուհետև գրված է.

> «Եվ այս երեք մարդիկ՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, ընկան կրակով բորբոքված հնոցը՝ կապված: Այն ժամանակ Նաբուգոդոնոսոր թագավորն ապշել էր և շտապելով վեր կացավ ու ասաց իր խորհրդականներին. «Չէ՞ որ մենք երեք մարդ գցեցինք կրակի մեջ՝ կապված»: Նրանք պատասխանեցին և ասացին թագավորին. «Այո՛, ո՛վ թագավոր»: Նա էլ պատասխանեց և ասաց. «Ահա ես չորս մարդ եմ տեսնում՝ արձակված ման են գալիս կրակի մեջ և չեն վնասվել, և չորրորդի կերպարանքն աստվածների որդու է նման»: Այն ժամանակ մոտեցավ Նաբուգոդոնոսորը կրակի հնոցի դռանը, պատասխանեց և ասաց. «Ո՞վ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով՝

> Բարձրյալ Աստծո ծառաներ, դուրս ելեք, եկեք»:
>
> Այն ժամանակ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը դուրս եկան կրակի միջից: Եվ ժողովվեցին կուսակալները, նախարարները և կառավարիչները և թագավորի խորհրդականները, մտիկ տվին այն մարդկանց, որ նրանց մարմնի վրա կրակը չէր տիրել, և նրանց գլխի մազը չէր այրվել, և նրանց անդրավարտիքները չէին փոխվել, և կրակի հոտ էլ չկար նրանց վրա»:
>
> – Դանիել 3.23-27

Այս երեք երիտասարդները ոչ միայն փրկվեցին կրակի զարհուրելի տանջանքից, այլև երկնային ընկերակից ունեցան: Նրանց կապված նետեցին, բայց նրանք արձակված քայլում էին հնոցի մեջ: Նրանց վրայի պարաններն այրվեցին, բայց նրանց հանդերձներն անվնաս մնացին: Երբ դուրս եկան, նրանց վրայից նույնիսկ կրակի հոտ չէր գալիս: Նրանց վարձատրությունն ի հայտ եկավ հնոցից դուրս գալուց հետո: Գրված է.

> «Այդ ժամանակ թագավորն առաջխաղացում տվեց Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին Բաբելոնի գավառում»:
>
> – խոսք 30, NKJV

Նրանք առաջխաղացում ստացան: Եթե մենք պատվենք իշխանություն ունեցող մարդուն, որն անարդարացիորեն է վարվում մեր հանդեպ, մենք վարձատրություն կստանանք, ինչպես այն ապահովագրական ընկերության գործադիր անդամը և այն երեք հրեա երիտասարդները, որոնց մասին հենց նոր կարդացինք: Սա հոգևոր օրենք է. պատվելով նրանց, ում Աստված կարգում է մեզ վրա, մենք Աստծուն ենք պատվում, և Աստված, Իր հերթին, կպատվի մեզ: Հենց որ կարողանանք տեսնել մեր հանգամանքներից այն կողմ և կենտրոնանալ այս հոգևոր օրենքի վրա, երբեք չենք հիասթափվի:

Ահա թե ինչու է Պետրոսը շարունակում ասել. «Եվ ո՞վ է նա, որ չարչարի ձեզ, եթե դուք բարուն հետևող լինեք» (Ա Պետր. 3.13): Այլ կերպ ասած, երբ դուք ձեր սրտի խորքում հասկանաք պատվի

սկզբունքը, ինչ կարող են անել մարդիկ: Ցանկացած անարդարացի արարք ձեր հանդեպ, հատկապես ձեզ վրա իշխանություն ունեցող մարդկանց կողմից, պարզապես առաջխաղացման կամ վարձատրության կպատրաստի ձեզ, եթե ճիշտ կերպով արձագանքեք: Այսպիսով, մենք պետք է տանք հետևյալ հարցը. քանի՞ վարձատրություն կամ առաջխաղացում ենք բաց թողել՝ պատվի սկզբունքով չվարվելու պատճառով:

7

Պատվել պետական առաջնորդներին

«Որովհետև կառավարիչներից պետք է վախենան ոչ թե նրանք, ովքեր բարին են գործում, այլ նրանք, ովքեր չարն են գործում: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանավորներից: Այդ դեպքում, բարի՛ն գործիր, և նրանք կգովեն քեզ, որովհետև նրանք *Աստծո ծառաներն* են, որոնք աշխատում են քո օգտի համար: Բայց եթե դու չարը գործես, վախեցի՛ր նրանցից, որովհետև նրանց պատժելու ուժն իրական է: Նրանք Աստծո ծառաներն են և բերում են Աստծո պատիժը նրանց վրա, ովքեր չարն են գործում: Սրա համար դուք պետք է հնազանդվեք իշխանություններին՝ ոչ թե պարզապես Աստծո պատժի պատճառով, այլ՝ որպես խղճի հարց: Նաև սրա համար է, որ դուք հարկեր եք վճարում, քանի որ *իշխանություններն աշխատում են Աստծո համար*, երբ կատարում են իրենց պարտականությունները: Այդ դեպքում, վճարեք՝ ինչ որ պարտք եք նրանց. վճարե՛ք նրանց ձեր անձնական և գույքային հարկերը և *հարգանք ու պատիվ ցուցաբերեք բոլորի հանդեպ»:*

– Հռոմ. 13.3-7, GNT, (շեղագիրը հեղինակինն է)

Ուշադրություն դարձրեք, որ այս հատվածում պետական իշխանություններն «Աստծո ծառաներ» են կոչվում, և մեզ պատ-

վիրված է պատշաճ կերպով պատիվ և հարգանք ցուցաբերել նրանց հանդեպ: Նույնպես ուշադրություն դարձրեք, որ Պողոսը նկատի ունի *բոլոր* այդ մարդկանց, ոչ թե միայն մի քանիսին: Ես մեծ հարգանք ու պատիվ եմ զգում իմ սրտում ամեն անգամ, երբ տեսնում եմ ոստիկանի, հրշեջի, քաղաքային խորհրդի անդամի, քաղաքապետի, նահանգային օրենսդրի, նահանգապետի, դատավորի, կոնգրեսականի, սենատորի կամ որևէ պետական պաշտոն զբաղեցնող այլ մարդու: Իմ ներսից հարգանք ու պատիվ է բարձրանում, երբ քաղաքային, նահանգային կամ պետական հաստատություններ եմ գնում: Ես հասկացել եմ, որ պատճառն իմ սրտում բնակվող Տիրոջ երկյուղն է:

Վերջերս շտապում էի կարևոր հանդիպման իմ աշխատակազմի հետ: Այդ շաբաթ սկսվել էր ուսումնական տարին, և նախորդ երկուսուկես ամսում՝ ամառային արձակուրդի ընթացքում, ես ժամում 60 կիլոմետր արագությամբ էի մեքենա վարում մեր բնակավայրում: Այնուամենայնիվ, ուսումնական տարվա ընթացքում արագության սահմանաչափն իջնում է ժամում 30 կիլոմետրի՝ դպրոցական դասերի ժամերին: Ես չնկատեցի ազդանշանային լույսը, որը զգուշացնում էր վարորդներին իջեցված արագության գոտու մասին, և շարունակեցի վարել ժամում 60 կիլոմետր արագությամբ: Եվ տեսա, որ թփերի մեջ թաքնված մոտոցիկլետով ոստիկանը միացրեց ազդանշանային լույսերը. ես անմիջապես կանգնեցրի մեքենաս ճանապարհի եզրին:

Նա լուրջ և հաստատակամ էր, ինչպես ոստիկանների մեծ մասը, երբ պահանջում էր իմ վարորդական վկայականը և մեքենայի ապահովագրական քարտը: Ես հարգալից էի և ցույց տվեցի, որ լիովին գիտակցում էի, թե ինչու կանգնեցրեց ինձ, և զղջում էի: Մենք մի փոքր խոսեցինք իմ խախտում կատարելու մասին: Այնուհետև նա ասաց, որ շատերը տրտնջում, բողոքում և արդարանում են, երբ նա կանգնեցնում է նրանց:

- Պարո՛ն, ես մեղավոր եմ, - պատասխանեցի:

Նա ասաց, որ այդպիսի արագությամբ դպրոցին կից տարածքով վարելու տուգանքը կազմում էր 220 դոլար: Բայց, ի զարման ինձ, նա վերադարձրեց իմ վարորդական վկայականը և ապահովագրական քարտը՝ ասելով. «Հաճելի օր ձեզ», և քայլեց դեպի իր մոտոցիկլետը:

Ես ցնցված էի: Ձայն տվեցի նրան.

- Դուք տուգանք չեք գրելու:

Նա պարզապես ժպտաց և ձեռքով հրաժեշտ տվեց: Ես հեռացա գոհության ահռելի զգացումով՝ այդպիսի ողորմություն ստանալու պատճառով: Ասելը, որ ես շնորհակալ էի, նշանակում էր ոչինչ չասել:

Միշտ չէ, որ այդպես է լինում: Տարիների ընթացքում մի քանի անգամ տուգանք եմ ստացել, թեև միևնույն հարգանքով եմ վերաբերվել ոստիկաններին: Ես հիշում եմ մի դեպք, երբ մեքենայով օդանավակայան էի գնում մի նոր աշխատակցի հետ: Ես մոռացա արագության մասին, և մեքենաս կանգնեցրին, կրկին մեր բնակավայրում: Օգնականս, ցանկանալով արժանանալ իմ հավանությանը, ծաղրանքով խոսեց այդ ոստիկանի մասին, մինչ նա մոտենում էր մեր մեքենային: Նա բարկացավ այդ ոստիկանի վրա, քանի որ ես միայն մի քանի կիլոմետրով էի գերազանցել արագության սահմանաչափը. այլ ոստիկաններ կարող էին անտեսել դա:

Կրկին, ես սիրալիր և հարգալից խոսեցի այդ ոստիկանի հետ, բայց նա այնքան սիրալիր չէր, որքան նախորդ պատմության ոստիկանը: Նա խիստ էր և մի ստացական տվեց ինձ՝ տուգանքի ամբողջական չափով: Ես հատուկ սպասեցի, որ վերցնեմ ստացականը, իսկ հետո ասացի.

- Պարո՛ն, ես զղջում եմ արածիս համար. գիտեմ, որ մեղավոր եմ: Շնորհակալությո՛ւն, որ կատարում եք ձեր աշխատանքը և ծառայում եք մեր բնակավայրին:

Ես գիտեի, որ երբ տուգանքը գրանցվում էր նրա ձեռքի համակարգչում, այն անկարելի էր չեղյալ դարձնել:

Այդ սպայի կեցվածքը լիովին փոխվեց, և նրա ձայնի հնչողությունը մեղմացավ, երբ նա տեսավ իմ հարգանքն իր իշխանության հանդեպ: Նա ցույց տվեց, որ ցանկանում էր ետ վերցնել այդ տուգանքը, բայց երկուսով էլ գիտեինք, որ չէր կարող անել դա: Ես ցանկացա օրինել այդ մարդուն, որին դիտարկում էի որպես Աստծո ծառայող՝ համաձայն Հռոմեացիների թղթի: Մենք ավարտեցինք մեր շփումը կարճ ընկերական զրույցով:

Հենց որ այդ ոստիկանը թույլ տվեց մեզ հեռանալ, ես ասացի իմ աշխատակցին.

- Երբ դու ցանկանում էիր արժանանալ իմ հավանությանը՝ չարախոսելով այդ ոստիկանի մասին, հակառակ արդյունքը ստացար, - և շարունակեցի խրատել նրան:

Կարճ ժամանակ անց նա գիտակցեց, որ իր դաստիարակությունը չէր խթանում նման հարգալից կարծիք ոստիկանների մասին, և այն վերաբերմունքը, որը նա սովորական էր համարում, լիովին հակառակ էր այն ամենին, ինչ Աստծո Խոսքը պատվիրում է մեզ պետական իշխանությունների վերաբերյալ: Այդ դեպքից հետո իմ աշխատակիցը սովորեց նրանց հանդեպ պատիվ ցուցաբերելու սկզբունքը:

Պետական իշխանության վարձատրությունը

Թույլ տվեք մի վկայություն պատմել պետական իշխանություններին պատվելու միջոցով վարձատրություն ստանալու մասին: Ես սկսեցի ճանապարհորդել ութսունական թվականների վերջում: Իմ ճանապարհորդության սկզբնական տարիներին մի քանի անգամ քարոզեցի ԱՄՆ-ի Միջին Արևմուտքի եկեղեցիներից մեկում: Այդ եկեղեցում գրեթե հարյուր հիսուն անդամ կար, և այն լճացած էր: Տարեց տարի ես այցելում էի այդ եկեղեցի, բայց նրանց անդամների թիվը չէր ավելանում: Ի վերջո, դադարեցի այցելել: Մի քանի տարի անց հրավեր ստացա քարոզելու նրանց ամենամյա համաժողովին (նախկինում նրանք չէին հրավիրում ինձ): Ես ուշադրություն դարձրի, որ մի քանի հայտնի քարոզիչներ ընդունել էին այդ հրավերը, և մեզ տեղեկացրին, որ ավելի քան ութ հարյուր մարդ էր հաճախելու այդ համաժողովին: Իհարկե, ես շատ զարմացա:

Ինձանում հետաքրքրություն առաջացավ: Աղոթելուց հետո հանձնարարեցի օգնականիս ընդունել այդ հրավերը: Ես կրկին գնացի այդ քաղաք, և կանգնեցնելով մեքենաս նրանց նոր շենքի կայանատեղիում՝ անմիջապես նկատեցի, որ այն լեցուն էր մեքենաներով: Մտնելով դահլիճ և տեսնելով մոտավորապես ու-

թից ինը հարյուր մարդու՝ ես ոգևորությամբ համակվեցի: Աստծո ներկայությունը շատ ավելի ուժգին էր, քան այն, ինչ նախկինում վերապրել էի այդ եկեղեցում, և մենք հրաշալի ծառայություն անցկացրինք:

Ծառայությունից հետո, երբ մենակ էի այդ եկեղեցու հովվի հետ, հարցրի.

- Ի՞նչ տեղի ունեցավ: Տարիներ շարունակ ձեր եկեղեցին լճացած վիճակում է եղել. ինչպե՞ս այն արագորեն աճեց: Ես ընդամենը երեք տարի այստեղ չեմ եղել:

Առանց վարանելու նա պատմեց ինձ իրենց վճռորոշ պահի մասին.

- Ջո՛ն, իմ եկեղեցու անդամները մշտապես բողոքում էին հարկեր վճարելուց և պետական իշխանությունների սխալներից: Ես այնքա՜ն էի հոգնել այդ ամենից, որ պետք է ինչ-որ բան անեի: Այնպես որ, սկսեցի աղոթել, և Աստված մի գաղափար տվեց:

Նա պատմեց, որ այցելել է իրենց քաղաքի պետական պաշտոնյաներին և հարցրել, թե որն է նրանց ամենամեծ կարիքը: Նրանք պատասխանել են, որ իրենց հրշեջ բաժանմունքը հատուկ դիմակների կարիք ունի, որոնցով հրշեջները կարող են տեսնել ծխի միջով: Հրդեհների դեպքում մահերի մեծ մասը տեղի է ունենում ծուխ շնչելու պատճառով, ոչ թե այրվածքների: Հաճախ հրշեջների խնդիրն այն է, որ ծխի չափազանց մեծ խտության պատճառով նրանք չեն կարողանում տեսնել իրենցից ընդամենը մեկ մետր հեռավորության վրա գտնվող մարդկանց: Այս հատուկ դիմակները թույլ են տալիս հեշտորեն տեսնել տուժածներին և արագորեն փրկել: Դա քաղաքի մեծագույն կարիքն էր, բայց քաղաքի բյուջեն բավական չէր դրա համար: Միայն այդպիսի մեկ դիմակն արժեր քսանհինգ հազար դոլար:

Հաջորդ կիրակի այդ հովիվն ամբիոնից քարոզում է Հռոմեացիների 13-րդ գլուխը: Նա սիրով հանդիմանում է իր եկեղեցու անդամներին՝ իրենց քաղաքի պետական պաշտոնյաների դեմ բողոքելու համար:

Նա ասում է եկեղեցու անդամներին, որ այդ մարդիկ Աստծո ծառաներն են, և որ հավատացյալները չեն կարող օրհնված լինել,

եթե փորձում են հնարավորինս քիչ հարկեր վճարել և անարգում են պետական իշխանություններին: Հաստատուն սուրբգրային հիմք դնելուց հետո նա շարունակեց՝ պատմելով քաղաքին անհրաժեշտ հրշեջ դիմակի մասին, և հայտարարեց, որ հատուկ զոհաբերություն է հավաքելու, որը փոխանցելու է քաղաքին՝ այդպիսի մեկ դիմակ գնելու համար: Նա ասաց իր եկեղեցու անդամներին, որ դա լավ միջոց է, որով իրենք կարող են պատվել այն մարդկանց, ում Աստված պետական պաշտոնյաներ էր կարգել՝ իրենց ծառայելու համար:

Եկեղեցին արձագանքեց՝ ապաշխարելով իր վերաբերմունքի համար, և նվիրաբերեց քսանհինգ հազար դոլար: Հովիվը զանգեց քաղաքապետին և հարցրեց՝ արդյո՞ք կարող է հավաքել քաղաքի պետական պաշտոնյաներին այդ շաբաթ, քանի որ իր եկեղեցին պատրաստվում է գումար նվիրաբերել իրենց՝ մեկ հրշեջ դիմակ գնելու համար: Քաղաքապետարան հասնելով՝ հովիվը և նրա օգնականները զարմացան այն պատճառով, թե որքան պաշտոնյաներ և աշխատակիցներ էին եկել այդ նվիրատվության արարողությանը՝ պատվի այդպիսի զարմանալի քայլին ականատես լինելու համար:

Մինչև նվիրատվության չեկը հանդիսավոր կերպով նվիրաբերելը, հովիվը կարդաց Հռոմեացիների 13-րդ գլխից և ասաց, որ իր եկեղեցու անդամները բարձր էին գնահատում քաղաքապետարանի պաշտոնյաներին և աշխատակիցներին՝ համարելով նրանց Աստծո ծառաներ: Նա շնորհակալություն հայտնեց այն ամենի համար, ինչ նրանք անում էին՝ ամբողջ քաղաքի բնակչությանը պաշտպանելու և ծառայելու համար: Այդ մարդիկ զգացված էին եկեղեցու կողմից ցուցաբերած պատվի և առատաձեռնության պատճառով (հաճախ մենք պատիվ ենք ցուցաբերում՝ ֆինանսական նվիրատվություն կատարելով: Հիշեք, որ պատվելը նշանակում է արժևորել: Մենք միջոցներ ենք ներդնում այն բաներում, որոնք արժևորում ենք):

Հովիվը շարունակեց պատմել.

- Մի քանի ամիս անց մենք մեր նոր շենքի ընծայման արարողությունն էինք կատարում: Քաղաքապետարանի մի քանի տասնյակ աշխատակիցներ և պաշտոնյաներ այցելեցին այդ արարո-

ղությանը: Շատերը փրկություն ստացան և որոշում կայացրին հաճախել մեր եկեղեցի: Հենց դա էր, որ բացեց այս քաղաքի դռները մեզ համար:

Մենք պետք է հիշենք, որ Հիսուսն ասաց. «Ով որ մարգարեի է ընդունում (պատվում)՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի»: Նա հատկապես խոսում էր եկեղեցական իշխանության մասին, բայց հիշեք, որ իշխանությանը վերաբերող հոգևոր օրենքները հաճախ հատում են սահմանները՝ վերաբերելով իշխանության բոլոր ոլորտներին: Այնպես որ, նույնպես կարելի է ասել. «Ով որ պետական պաշտոնյայի է պատվում՝ պետական պաշտոնյայի անունով, նա կառնի պետական պաշտոնյաների ունեցած վարձքը»:

Իսկ ո՞րն է նրանց վարձատրությունը: Պատասխանն է՝ ձեր բնակավայրի բանալին: Նրանք մեր գյուղերի, քաղաքների, նահանգների և պետությունների բնական դռնապաններն են, և այդ դիրքն Աստծուց է տրված նրանց: Որքա՜ն բնակավայրեր և երկրներ կարող էինք բացել Ավետարանի համար, եթե բոլոր եկեղեցիները միաբանվեին և պատվեին իրենց պետական առաջնորդներին, այլ ոչ թե քննադատեին նրանց և փորձեին խուսափել հարկեր վճարելուց:

Հիմնանորոգում

Ես Դենի անունով մի լավ ընկեր ունեմ: Նա հովիվ էր Ավստրալիայի Ադելաիդե քաղաքում գտնվող մի մեծ եկեղեցում (նա փոխանցեց այդ եկեղեցին մի բացառիկ առաջնորդի և այժմ ճանապարհորդում և կրթում է երիտասարդ առաջնորդների): Առաջին անգամ, երբ ծառայեցի նրա համաժողովին, նա մի ուշագրավ պատմություն պատմեց: Մեկ անգամ նա ասում է իր եկեղեցուն, որ ցանկանում է պատվել իրենց քաղաքին ծառայող և այն պաշտպանող մարդկանց: Տևական ժամանակ մտածելուց և աղոթելուց հետո հասկանում է, որ մեծագույն կարիքը քաղաքում հանրային միջնակարգ դպրոցների ցանցն էր: Նա գտնում է այդ քաղաքի ամենից խարխլված դպրոցը, որի շենքը և տարածքը գրեթե կիսաքանդ վիճակում էին: Այցելում է այդ դպրոցի տնօրինությանը և հարցնում՝ կարո՞ղ է արդյոք եկեղեցին գալ այդ դպրոց

և մեկ շաբաթվա ընթացքում լիովին «հիմնանորոգել»: Նրանք ուրախությամբ համաձայնում են:

Նա կիսվում է եկեղեցու հետ իրենց քաղաքը պատվելու տեսիլքով: Խնդրում է բոլոր հյուսներին և այլ արհեստների տիրապետող մարդկանց մեկ օրով նվիրաբերել իրենց տաղանդները: Նա խնդրում է նաև եկեղեցու մյուս անդամներին նվիրաբերել իրենց աշխատանքը: Մի քանի շաբաթվա ընթացքում եկեղեցու առաջնորդները կազմակերպում են այդ խոշոր նախաձեռնությունը: Նրանք շինանյութ են գնում և անհրաժեշտ սարքավորումներ բերում՝ այդ դպրոցին լիովին նոր տեսք հաղորդելու համար:

Նա այդ նշանավոր օրվանից մի տեսանյութ է ցույց տալիս: Ես դիտում էի, թե ինչպես էին հյուսները պոկում հին հարդարանքը և այլ փտած ու մաշված մակերեսներ, արհեստավորները դուրս էին հանում պահարանները՝ փոխարինելով նորերով, տասնյակ տղամարդիկ և կանայք հղկում, պաստառում և ներկում էին: Ես դիտում էի, թե ինչպես էին նրանք նոր գրատախտակներ կախում և նոր սարքավորանք տեղադրում, փխրեցնում հողը և նոր ճիմեր փռում, նաև ծառեր, թփեր և ծաղիկներ տնկում: Դպրոցն ամբողջությամբ տեսագրվել էր մինչև աշխատանքների սկիզբը և անմիջապես այդ վերանորոգումից հետո: Դա աներևակայելի էր. այն լիովին նոր տեսք էր ստացել:

Եկեղեցին այնքա՜ն էր ոգևորվել՝ քաղաքին ծառայելու համար: Միշտ էլ այդպես է. մեր սիրտն ուրախությամբ է համակվում, երբ պատիվ ենք ցուցաբերում մարդկանց, ովքեր դրան չէին սպասում: Եկեղեցին հասկացավ, որ իրենց վարձատրությունն այն բավականությունն էր, որը վերապրեցին՝ կարողանալով օգնել իրենց քաղաքին Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Այնուամենայնիվ, կար ավելի մեծ վարձատրություն: Այդ ժամանակվա Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդը լսեց այն մասին, թե ինչպես էր այդ եկեղեցին օրհնել իրենց քաղաքը, և հայտարարեց, որ կայցելի այդ եկեղեցի և անձամբ շնորհակալություն կհայտնի նրանց: Ես դիտեցի այն տեսանյութը, որտեղ այդ երկրի ղեկավարն այցելում է եկեղեցի և ի սրտե շնորհակալություն հայտնում նրանց: Որպես արդյունք, այդ եկեղեցին ամենից հարգված եկեղեցիներից է այդ քաղաքում: Նրանց համբավը և ազդեցությունը

մեծապես ավելացավ իրենց բնակավայրում և երկրում:

Եվ սա վերջը չէ: Երբ հովիվ Դենին կիսվում էր այդ վերանորոգման պատմությամբ, այն շատերին մղեց գործողության:

Ի պատասխան, շատ այլ եկեղեցիներ սկսեցին իրենց նախագծերը, և այժմ դրա շնորհիվ ավելի քան երկու հարյուր դպրոցներ են վերանորոգվել Ավստրալիայում, Անգլիայում, Շվեդիայում, Սինգապուրում և Մալազիայում:

Հովիվ Դենիի եկեղեցին նույնպես շարունակեց օգնել իրենց բնակավայրին. նրանք վերանորոգեցին քաղաքում գտնվող կանանց բանտը: Այդ նախագծի ընթացքում եկեղեցին աշխատանքային հարաբերություններ ձևավորեց Քրեակատարողական ծառայությունների վարչության հետ, ինչի արդյունքում բանտարկյալներին «ցերեկային այցերի» թույլտվություն տվեցին՝ եկեղեցի հաճախելու համար: Այդ կանանցից շատերն այժմ փրկված են և բանտում հավաքույթներ են անցկացնում:

Բարի համբավ

Միգուցե մտածեք, թե ինչու է կարևոր ձեր քաղաքում բարի համբավ ունենալը: Պատճառը պարզ է. առաջին հերթին, դա համապատասխանում է Սուրբ գրքին: Պողոսը պնդում է, որ եկեղեցու առաջնորդները «պետք է բարի համբավ ունենան և վայելեն [եկեղեցուց] դուրս գտնվող մարդկանց համակրանքը, որպեսզի չարախոսության առարկա չդառնան, իրենց վրա նախատինք չբերեն և սատանայի ծուղակը չընկնեն» (Ա Տիմոթ. 3.7, AMPC): Մենք անարգանք ենք ստեղծում Ավետարանի հանդեպ, եթե բարի համբավ չունենք եկեղեցուց դուրս գտնվող մարդկանց միջև. սա իր հերթին խոչընդոտում է Ավետարանի տարածմանը, ինչը հենց սատանայի ծուղակն է:

Հռոմում բնակվող մի անհավատ առաջին դարի եկեղեցու քրիստոնյաների մասին գրել է. «Նրանք անցկացնում են իրենց օրերն այս երկրի վրա, բայց Երկնքի քաղաքացիներ են: Նրանք հնազանդվում են ընդունված օրենքներին և միևնույն ժամանակ գերազանցում են այդ օրենքներն իրենց կյանքով» («Նամակ Դիոգնետոսին», գլուխ 5):

Գործք առաքելոց գրքում եկեղեցու մասին գրված է հետևյալը. *«(Եկեղեցուց դուրս գտնվող)* մարդիկ նրանց բարձր էին գնահատում, գովում էին և կարևոր էին համարում» (Գործք 5.13, AMPC, փակագծերի բառերը հեղինակինն են): Ինչո՞ւ էին մարդիկ բարձր գնահատում նրանց. նրանց կյանքի ավելի բարձր չափանիշների պատճառով: Ճշմարիտ սրբության կողմերից մեկն այն է, որ մենք բարձրանում ենք՝ հասնելով Աստծո թագավորության մակարդակի մտածելակերպին և կենսաոճին:

Ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Բայց Ջո՛ն, մենք պետք է փոխզիջումնե՞ն ենթարկենք Ավետարանը՝ պետական իշխանություններին պատվելու և հասնելու համար»: Միանշանակ՝ ո՛չ: Հովհաննես Մկրտիչը զգուշացրեց Հերովդեսին նրա անօրինության մասին, քանի որ Հերովդեսն ապրում էր իր եղբոր կնոջ հետ: Իրականում, նա գլխատվեց հենց այդ պատճառով:

Ես ճանաչում եմ մի ծառայողի, ով հանդիպել է նախագահ Քլինթոնին՝ նրա պաշտոնավարության ընթացքում, և զգուշացրել այն դատաստանի մասին, որը գալու էր նրա և ամբողջ երկրի վրա, եթե նա և մյուս առաջնորդները շարունակեին անմեղ երեխաների սպանության (արհեստական վիժեցման) օրինականացումը: Այդ ծառայողն այնպես արեց դա, որ նախագահը մեծ հարգանքով ընդունեց նրա զգուշացումը, ինչպես որ Հերովդեսն ընդունեց Հովհաննեսի զգուշացումը:

Հերովդեսը վախենում էր Հովհաննեսից, քանի որ նա մարգարե էր: Շատերը գալիս են պաշտոնյաների մոտ գերազանցության, քննադատող և դատող վերաբերմունքով, ինչը շատ հեռու է պատվից: Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը պատվով խոսեցին թագավորի հետ, թեև նրանք խոսում էին ընդդեմ նրա կռապաշտության:

Հակադրություն

Իմ կինը մի երազ էր տեսել, որը երբեք չեմ մոռանա: Դա նախագահ Քլինթոնի պաշտոնավարման տարիներին էր: Մի գիշեր նա ցնցված արթնացրեց ինձ և ասաց.

- Ջո՛ն, մի երազ տեսա, որը պետք է պատմեմ քեզ:

Աստված հաճախ է խոսում Լիզայի հետ երազների միջոցով:

- Մենք մի մեծ լսարանում էինք և լսում էինք մի ծառայողի: Ես չգիտեմ, թե ով էր այդ ծառայողը, բայց նա հայտնի էր քրիստոնյաների շրջանում: Նա խոսում էր նախագահ Քլինթոնի դեմ և պարսավում էր նրան: Նա անդադար ասում էր, թե որքան վատն էր նախագահ Քլինթոնը: Նրա եկեղեցու անդամների մեծ մասը խանդավառությամբ «Ամեն» էր գոչում՝ հավանություն տալով նրա խոսքերին: Դու և ես շատ անհարմարավետ էինք զգում:

Նա շարունակեց.

- Ապա տեսա մի մարդու, որը ստվերում էր: Նա վեր կացավ և քայլեց դեպի այդ մեծ լսարանի ետնամասը: Ես զգացի, որ պետք է հետևեմ նրան: Երբ ճեմասրահ հասա, նա շրջվեց և նայեց ինձ. նախագահ Քլինթոնն էր: Նա համակված էր տրտմությամբ և տխրությամբ, խիստ վշտացած էր, իսկ հետո ուշագնաց եղավ:

Լիզան ասաց.

- Ջո՛ն, երազիս մեջ ես գիտեի, որ նա եկեղեցի էր եկել՝ աջակցության և օգնության համար: Բայց եկեղեցին ծաղրում էր նրան. այն զուրկ էր ճշմարիտ սիրուց և գթասրտությունից: Աստված ցույց էր տալիս ինձ, որ մենք խստացնում էինք նրա սիրտը, ինչի պատճառով նա շրջվում էր այն բանից, ինչն անհրաժեշտ է թե՛ անձամբ իրեն, թե՛ մեր երկրին:

Համեմատենք այս երազն իմ ընկերներից մեկի ծառայության հետ, ով նախկինում մի մեծ եկեղեցու հովիվ էր ԱՄՆ-ի Արևմուտքում: Նա նույնպես մեր երկրի մայրաքաղաքում գտնվող Աղոթքի ազգային կենտրոնի ղեկավարն էր: Տարիներ շարունակ ղեկավարում էր այդ ծառայությունը, քանի որ Աստված դրել էր նրա սրտում ծառայել Սենատին, Ներկայացուցիչների պալատին և Վաշինգտոնում գտնվող այլ պետական պաշտոնյաների: Նա տարվա մեջ գրեթե քսաներկու շաբաթ Վաշինգտոն Կ.Շ.-ում էր լինում, երբ դեռ հովվական ծառայության մեջ էր, սակայն նրա բազմահազարանոց եկեղեցին ծաղկուն էր մնում և շարունակում էր աճել:

Նա ասում էր ինձ.

- Ջո՛ն, ես հանդիպում եմ այդ առաջնորդներին միմիայն մեկ

նպատակով. ես շնորհակալություն եմ հայտնում նրանց՝ մեր երկրին ծառայելու համար, և հարցնում եմ՝ կարո՞ղ եմ աղոթել նրանց համար:

Նա պատմում էր ինձ, որ հաճախ կարիք ուներ ցուցումներ տալ հովիվներին և հավատացյալների խմբերին (որոնք այցելում էին կառավարության ներկայացուցիչներին), թե ինչպիսի վերաբերմունք ցուցաբերեն նրանց հանդեպ: Հաճախ նա պետք է զինաթափեր նրանց իրենց առաջնորդների հանդեպ ունեցած դատող վերաբերմունքից: Նրանք լիբերալ էին համարում կառավարության ներկայացուցիչներին, և դա կուրացրել էր նրանց աչքերն այն փաստի համար, որ Աստված պատվիրում է պատիվ ցուցաբերել նրանց հանդեպ և աղոթել նրանց համար:

Նա շարունակեց՝ ասելով, որ եկեղեցական խմբերը հաճախ զարմանում էին, թե որքան զգայուն և բաց էին այդ առաջնորդները: Պատճառն այն էր, որ եկեղեցական խմբերն այցելում էին այդ պաշտոնյաներին՝ նրանց պատիվ ցուցաբերելու, ոչ թե ինչ-որ բան խնդրելու կամ խորհուրդներ տալու համար: Թույլ տվեք երկու վկայություն պատմել, որոնք լսել եմ նրանից: Կարդալով այս վկայությունները, մտապահեք, որ այն երկու առաջնորդները, որոնց մասին նա խոսում է, շատ լիբերալ են համարվում:

«Արդեն մի քանի անգամ ես հանդիպել էի այդ կոնգրեսականին: Մեզ հետ ուսանողական տարիքի երիտասարդ երաժիշտների խումբ կար մի եկեղեցուց, և այդ կոնգրեսականը հրավիրեց մեզ իր գրասենյակ, որտեղ տեղի ունեցավ մեր հանդիպումը նրա և նրա աշխատակազմի անդամներից մի քանիսի հետ: Մենք սկսեցինք զրույցը նրա հետ սովորական ձևով: Շնորհակալություն հայտնեցինք նրան՝ իր շրջանի քաղաքացիներին, ինչպես նաև մեր երկրին հավատարմորեն ծառայելու համար:

Նա կիսվեց որոշ մտքերով և մի քանի հարց ուղղեց:

Այնուհետև հարցրի նրան՝ դեմ չէ՞ր լինի, եթե մենք երգեինք, իսկ հետո աղոթեինք նրա համար: Նա հոժարաբար համաձայնեց:

Երբ սկսեցինք երգել, կարելի էր զգալ, թե ինչպես էր օծությունը բարձրանում այդ գրասենյակում, և շուտով բոլորի աչքերին արցունքներ էին: Մեկ հայրենասիրական և մեկ ավետարանա-

կան երգ երգեցինք և ավարտեցինք աղոթքով: Այդ ամենն այնքա՜ն տպավորիչ էր, որ երբ ավարտեցինք, ոչ ոք ոչինչ չէր կարողանում ասել, այդ թվում՝ կոնգրեսականը:

Ի վերջո նա նայեց ինձ և փորձեց իր բառերով նկարագրել, թե ինչ զգաց և ինչպիսի ազդեցություն թողեց մեր հանդիպումը: Սակայն նրան չհաջողվեց դա: Նա, ի վերջո, ասաց. «Հովի՛վ, գիտեք, ես երկու փոքրիկ երեխա ունեմ: Անշուշտ պետք է եկեղեցի վերադառնամ, այնպես չէ՞»: Նա շնորհակալություն հայտնեց մեր այցի համար»:

Ահա և հաջորդ պատմությունը այլ կոնգրեսականի մասին, որը նա պատմեց.

«Առաջին անգամ, երբ հանդիպեցի այդ կոնգրեսականին, ինձ ուղեկցեցին նրա գրասենյակ մի եկեղեցուց ժամանած շուրջ տասնհինգ բարեխոսի և նրանց հովվի հետ: Դատելով նրա շարժումներից՝ կարող էի ասել, որ նա չէր պատկերացնում, թե ինչի համար էինք եկել, քանի որ մենք եկեղեցական խումբ էինք և ներկայացնում էինք Աղոթքի ազգային կենտրոնը:

Նա շատ սիրալիր ընդունեց մեզ և հարցրեց, թե ինչ կարող էր անել մեզ համար: Ես պատասխանեցի, որ մենք չէինք եկել, որպեսզի ինչ-որ բան ստանայինք նրանից, այլ պարզապես ցանկանում էինք շնորհակալություն հայտնել նրան մեր երկրին ծառայելու համար, ինչպես նաև աղոթել նրա համար մինչև գնալը:

Նա հանդարտվեց և, հարմարավետ նստելով աթոռին, ասաց. «Սա նվեր է ինձ համար»: Նա պատմեց իր առօրյայից. մարդիկ ամեն օր իր գրասենյակ էին գալիս և փող էին խնդրում: Նա ասաց, որ կարծես թվային ցուցատախտակ է պատկերացնում իր պատին, որին շարունակ ավելանում են այն գումարները, որոնք ամեն օր խնդրում են իրենից: Ապա մեզ նայելով՝ ասաց. «Բայց այսօր դուք եկել եք՝ ինձ ինչ-որ բան տալու համար: Նախկինում նման բան երբեք չի եղել»:

Մենք աղոթեցինք նրա համար և երբ ավարտեցինք, նա ասաց. «Դեմ չեմ՞ք լինի, որ աղոթեք նաև իմ աշխատակազմի համար»: Նրա աշխատակազմի անդամները եկան, և մենք աղոթեցինք նաև նրանց համար:

Երբ ավարտեցինք, նա նայեց իր ժամացույցին և ասաց. «Քիչ առաջ իմ հանդիպումներից մեկը չեղարկվել է: Դեմ չե՞ք լինի, որ Կապիտոլիում տանեմ ձեզ և ցույց տամ այն»: (Որպես կանոն, կոնգրեսականները նման բան չեն անում: Դա պրակտիկանտների կամ ավելի ցածր շղթայի աշխատակիցների գործն է):

Նա Կապիտոլիում տարավ մեզ և մեկուկես ժամ շարունակ ծանոթացրեց այդ շենքին: Մեր հանդիպման ավարտին այդ կոնգրեսականը և ես փոխանակեցինք մեր այցեքարտերը, և նա հեռացավ:

Մոտավորապես երկու շաբաթ անց ես մի խելահեղ, սակայն ոգեշնչված հեռախոսազանգ ստացա այն հովվից, ով ներկա էր այդ հանդիպմանը: Նա պատմեց, որ քիչ առաջ հեռախոսազանգ է ստացել այդ կոնգրեսականից, որը հարցրել է՝ կարո՞ղ է այդ շաբաթավերջին իր եկեղեցի այցելել: Մենք զրուցեցինք այն մասին, թե ինչպես նա պետք է ամեն ինչ կազմակերպեր: Եվ ահա, կիրակի օրը այդ կոնգրեսականը եկավ՝ իր կնոջ և իր աշխատակազմի ղեկավարի հետ»:

Երկրպագությունից հետո հովիվը ներկայացրեց այդ կոնգրեսականին և նրա կնոջը, և նրանք խոսք ուղղեցին եկեղեցուն: Եկեղեցին աղոթեց նրանց համար, ինչն իսկապես հուզեց նրանց: Այդ ամենը տեղի ունեցավ, քանի որ նրանք պատիվ էին ցուցաբերել այդ կոնգրեսականի հանդեպ և աղոթել էին նրա համար նրա գրասենյակում:

Այդ հովիվը, որն իմ ընկերն է, մի քանի տասնյակ նման վկայություններ ունի: Այս պահին միգուցե հարցնեք. «Արդյո՞ք պետք է ասենք ճշմարտությունը մեր առաջնորդներին»: Այո՛, ինչպես Հովհաննես Մկրտիչը, ինչպես այն ծառայողը, որը զգուշացրեց նախագահ Քլինթոնին, ինչպես այլ ծառայողներ, որոնք այդպես են վարվել, և նրանք, ովքեր դեռ այդպես կվարվեն: Այնուամենայնիվ, եթե մեր առաջնորդները չհամարեն, որ եկեղեցին բաղկացած է այնպիսի մարդկանցից, որոնք վարվում են Հիսուս Քրիստոսի սիրով և գթասրտությամբ, նաև ճշմարտապես պատվում են իրենց իշխանական դիրքը, նրանք չեն լսի մեզ: Մենք պետք է խոսենք ճշմարտությունը, բայց այն պետք է ասվի սիրով և Տիրոջ երկյուղով:

Կլինեն պահեր, երբ Աստված կուղարկի Իր ծառայողին կամ ծառայողներին որևէ պետական առաջնորդի մոտ՝ խիստ խոսքով, ինչպես որ Հին կտակարանի մարգարեները գնում էին թագավորների մոտ: Այնուամենայնիվ, ի՞նչ օգուտ այն բանից, որ մենք քննադատում ենք մեր առաջնորդներին մեր տներում, փոքր խմբերում և եկեղեցական հավաքույթներին, և հավանություն ենք տալիս այն մարդկանց, որոնք նույն կերպով են վարվում: Սա չարախոսություն է, ոչ ավելին: Մենք պետք է այնպիսի խոսքեր ասենք մեր ծածուկում, որոնք պատրաստ կլինենք ուղղել մեր առաջնորդներին՝ սիրով և պատվով բոցավառվող սրտով: Հակառակ դեպքում, կթունավորենք մեր սրտերը, և դա ի հայտ կգա, երբ հանդիպենք նրանց:

Պատվե՛ք թագավորին

Լսե՛ք Պետրոս առաքյալի խոսքերը: Նա պատվիրում է մեզ. «Աստծուց վախեցե՛ք, թագավորին պատվե՛ք» (Ա Պետր. 2.17):

Պետրոսը նկատի ունի. «Ինչպե՞ս կարող եք ասել, որ երկյուղ ունեք Աստծուց, Ում չեք տեսնում, եթե չեք կարողանում պատվել այն առաջնորդին, ում Նա կարգել է Իր իշխանությամբ, ում դուք տեսնում եք»: Եթե երկյուղ ունենանք Աստծուց, մենք կպատվենք առաջնորդներին՝ թե՛ պետական, թե՛ հասարակական, թե՛ ընտանեկան, թե՛ եկեղեցական:

Ինչպես նշեցինք նախորդ գլխում, Ամերիկայում մենք առաջնորդներին ասում ենք. «Դուք պետք է վաստակեք իմ հարգանքը»: Այնուամենայնիվ, Տիրոջ երկյուղն ասում է. «Ես տեսնում եմ այն իշխանությունը, որն Աստված տվել է ձեզ, այնպես որ, ես արդեն հարգանքով եմ վերաբերվում ձեզ»:

Ես ուսումնասիրություն կատարեցի՝ պարզելու համար, թե որ թագավորին Պետրոսը նկատի ուներ: Իհարկե, Սուրբ գիրքը որևէ մասնավոր մեկնություն չունի. նրա խոսքերն ուղղված են պատմության ընթացքում ապրող բոլոր հավատացյալներին՝ պատվիրելով պատիվ ցուցաբերել իրենց երկրների առաջնորդներին: Այնուամենայնիվ, Պետրոսի պարագայում խոսքը Հերովդես Ագրիպպաս Ա թագավորի մասին է, որը խիստ չար և շահամոլ առաջնորդ էր:

Նա իշխանության եկավ մ.թ. 37 թվականին՝ Հիսուսի հարությունից հետո: Նա արեց դա խորամանկության և նրբանկատության միջոցով: Իր հեռատեսությամբ նա գործի դրեց բոլոր միջոցները, որոնք կարող էին նպաստել իր առաջխաղացմանը: Գլխավոր քաղաքական հնարքն այն էր, որ Հռոմի կայսր Կալիգուլայի սպանվելուց հետո նա օգնեց Կլավդիոսին տիրանալ գահին: Կլավդիոսը վարձատրեց այդ խորաթափանց քաղաքական քայլը՝ հաստատելով Ագրիպպասին իր դիրքում և ավելացնելով նրա թագավորությանը Հրեաստանի և Սամարիայի տարածքները: Նա նույնքան մեծ թագավորության տիրակալ դարձավ, որքան իր պապ Հերովդես Մեծը:

Իր իշխանության ընթացքում Հերովդես Ագրիպպաս Ա-ն հարկադրված էր իր դիրքորոշումն արտահայտել հուդայականության և քրիստոնեության միջև ընթացող պայքարի վերաբերյալ: Առանց վարանելու, նա ստանձնեց քրիստոնյաների դաժան հալածիչի դերը: Նոր կտակարանում գրված է. «Այն ժամանակ Հերովդես [Ագրիպպաս Ա] թագավորը ձեռք գցեց, որ եկեղեցուց մի քանիսին չարչարի: Եվ Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը, սրով սպանեց: Եվ տեսնելով, որ հրեաներին հաճելի է, նրա վրա Պետրոսին էլ բռնեց» (Գործք 12.1-3): Այդ կառավարիչը դաժանորեն էր վարվում հավատացյալների հետ, քանի որ դա ծառայում էր նրա քաղաքական նպատակներին, և դրանով նա շահում էր հրեաների բարեհաճությունը: Նա սպանեց Հակոբոսին՝ Հիսուսի երեք ամենամտերիմ առաքյալներից մեկին, և որոշեց սպանել նաև Պետրոսին:

Պետրոսին մահապատժի ենթարկելու Ագրիպպասի ծրագրերը խափանվեցին եկեղեցու աղոթքների և հնազանդության միջոցով (խոսքեր 5-19): Պետրոսի ազատությունը մեծապես զորացրեց հավատացյալներին: Սուրբ գիրքը խոսում է նրանց հնազանդության վարձատրության մասին. «Եվ Աստծո Խոսքն աճում էր և շատանում» (խոսք 24):

Սրբերի շարունակական աղոթքները և նրանց հնազանդությունը իշխանություններին պատվելու հարցում՝ առավել մեծ ազդեցություն ունեցան: Շարունակելով կարդալ՝ տեսնում ենք, որ Հերովդես Ագրիպպաս Ա թագավորը հատուկ օր որոշեց, երբ նա

դուրս եկավ ժողովրդի առջև, նստեց իր գահին՝ թագավորական հանդերձներով, և խոսք ուղղեց ժողովրդին: «Եվ ամբոխն աղաղակում էր, թե՝ դա Աստծո ձայն է, և ոչ թե մարդու: Եվ իսկույն Տիրոջ հրեշտակը զարկեց նրան, որովհետև Աստծուն չտվեց փառքը: Եվ որդերով լցվեց, մեռավ» (խոսքեր 22,23):

Դատաստանը եկավ, բայց՝ Տիրոջ սրով, ոչ թե Աստծո ժողովրդի կողմից: Աստված է առաջնորդների վրա դատաստան բերողը: Մեզ պատվիրված է աղոթել առաջնորդների համար և պատվել նրանց: Եթե դատաստանի կարիք կա, Աստված ասում է, որ մենք պետք է տեղ տանք դրան: Մենք խոչընդոտում ենք արդարությամբ դատելու Աստծո խոստմանը, երբ չենք հնազանդվում Նրան՝ մեր առաջնորդների համար աղոթելու և նրանց պատվելու հարցում: Այնպես որ, ըստ էության, մենք զրկում ենք երկիրը կամ բնակավայրը հենց աստվածային միջամտությունից, որի կարիքը ունենք:

Ժամանակակից օրինակ

Այդպիսի մի պատմություն տեղի ունեցավ վերջերս Նիգերիայում: 1993 թվականին այդ երկրում իշխանության եկավ մի անօրեն առաջնորդ՝ Սանի Աբաչան, որը չեղյալ հայտարարեց համապետական ընտրությունները և բանտարկեց հաղթող թեկնածու համարվող Մոշուդ Աբիոլային: Դրանից հետո նա մահապատժի ենթարկեց ժողովրդավարական առաջնորդներից շատերին և սկսեց իր բռնապետական կառավարումը: Նրա կառավարման ընթացքում շատ անմեղ մարդիկ սպանվեցին: Նա թալանեց երկիրը մոտավորապես երեք միլիարդ դոլարով՝ փոխանցելով այդ գումարը Եվրոպայում գտնվող իր բանկային հաշիվներին:

Ես Մարկ անունով մի մտերիմ հովիվ ընկեր ունեմ, և նա հաճախ է Նիգերիա այցելում: Նա ընկերացել է երկու հայտնի նիգերիացի հովիվների՝ Է. Ա. Ադեբոյեի և Եպիսկոպոս Դեյվիդ Օյեդեպոյի հետ, որոնք խոշոր քրիստոնեական շարժման առաջնորդներ են: Նրանց ամենամսյա աղոթքի հավաքույթներին սովորաբար մեկ միլիոն հավատացյալ է հաճախում: Տարին երկու անգամ նրանք աղոթքի հատուկ հավաքույթներ են անցկացնում, որոնցից մեկը տեղի է ունենում հունիսին, իսկ մյուսը՝ դեկտեմ-

բերին: Երկու հավաքույթներին էլ հաճախում է ավելի քան երկու միլիոն հավատացյալ:

Իմ ընկերը, նաև այլ ծառայողներ, որոնք հաճախ են այցելում այդ երկիր, ասում են ինձ, որ հավատացյալները Նիգերիայում հարգանքով և մեծ պատվով են վերաբերվում պետական իշխանություններին: Այնուամենայնիվ, նրանք ջանասիրաբար աղոթում են, որ իրենց երկրում իշխի արդարությունը:

Հովիվ Մարկը պատմում էր, որ 1998 թվականի սկզբին՝ այդ ամենամսյա աղոթքի հավաքույթներից մեկի ընթացքում, երրորդ ամենահայտնի նիգերիացի հովիվ Էմմանուել Կուրը՝ Նիգերիայի հյուսիսից, տեսել է, որ ամպերը ցրվում են, և հայտնվում են երկու ահռելի հրեշտակներ՝ հսկա թրերով: Աստված ցույց է տվել նրան, որ Աբաչայի օրերն արդեն համարված են. իրականում, նա մարգարեացել է, որ նրա անկումը տեղի կունենա երեք ամսում: Եվ Նա չէր կարող խուսափել դրանից, եթե չապաշխարեր:

Նախագահին տեղեկացրին, թե ինչ էր ասել հովիվ Կուրը: Աբաչան «խաղաղության զոհ» ուղարկեց. նա շատ մեծ գումար նվիրաբերեց՝ հուսալով ետ դարձնել այդ մարգարեությունը: Հովիվ Կուրը պատմեց Մարկին, որ Տերն ասել է իրեն. «Մի՛ դիպչիր դրան, որպեսզի նրա [Աբաչայի] բորոտությունը քեզ վրա չգա»: Հովիվ Կուրը տեղեկացնում է նախագահին, որ նա պետք է ապաշխարի և ընդունի Տիրոջը:

Աստված դուռ բացեց այդ աղոթքի հավաքույթն առաջնորդող հովվի՝ Ադեբոյեի համար, որպեսզի նա խոսեր նախագահ Աբաչայի հետ: Նա նույնպես զգուշացրեց նախագահին, որ եթե չապաշխարի, կհեռացվի իր պաշտոնից՝ մահվան միջոցով:

1998 թվականի հունիսի աղոթքի հատուկ հավաքույթին՝ երեք ամիս անց այն բանից հետո, երբ Կուրը հրեշտակներ էր տեսել, հովիվ Ադեբոյեն պատվիրում է ներկաներին շրջվել դեպի իրենց կողքին գտնվող մարդիկ և ուրախ նոր տարի մաղթել միմյանց: Ներկաները մի փոքր շփոթվում են: Նա ասել է, որ լուծը կոտրված է, և մարդիկ պարելու են փողոցներում:

Այդ հռչակումից հետո քսանչորս ժամում նախագահն անսպա-

սելիորեն մահանում է սրտի կաթվածից: Լրատվական հրապարակումներից մեկում (որը գտա համացանցում) գրված էր հետևյալը. «Համաձայն «Բի-Բի-Սի»-ի, պետական ռադիոն մեջբերեց տեղական լուրերի հաղորդումն այն մասին, որ նիգերիացիները երկրով մեկ տոնում էին նրա մահը փողոցներում»: Այդ աղոթքի հավաքույթին ներկա մարդիկ հասկացան, որ Ադեբոյեն խոսում էր այդ բռնապետի կառավարման լծի մասին:

Կարճ ժամանակ անց Նիգերիան օրհնվեց քրիստոնյա նախագահով, ով ընդունում էր երկրի երկու գլխավոր հովիվներին՝ որպես հոգևոր առաջնորդների: Երկիրը մեծ աստվածային շարժ վերապրեց: Աբաչայի իշխանության ժամանակ ավետարանիչ Ռեյնհարդ Բոնկեին թույլ չէր տրվում այցելել այդ երկիր: Նրա մահից հետո նոր նախագահը՝ Օլուսեգուն Օբասանյոն, հրավիրեց Ռեյնհարդին իր երդմնակալության արարողությանը: Երբ նա այնտեղ էր, նախագահը կրկին թույլատրեց նրան այցելել այդ երկիր:

Ռեյնհարդ Բոնկեի առաջին ավետարանչությունը տեղի ունեցավ 1999 թվականի հոկտեմբերին: Մինչև 2006 թվականի հոկտեմբերը, Նիգերիայում անցկացրած նրա ավետարանչական հավաքույթների տվյալներով, 42 միլիոն մարդ ընդունել էր Հիսուս Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ: Սա հաստատվում է այն քարտերով, որոնք մարդիկ լրացրել էին, երբ Հիսուս Քրիստոսին ընդունելու որոշում էին կայացրել, և ես գիտեմ այս մասին իմ ընկերներից մեկի խոսքով, որն այդ ժամանակ Բոնկեի ծառայության գործադիր տնօրենն էր:

Նիգերիայի բնակչության թիվը 2000 թվականին 123.337.822 էր: Այնպես որ, ըստ էության, 42 միլիոն դարձի եկածները կազմում են ամբողջ երկրի բնակչության մեկ երրորդը: Եվ մենք դեռ պետք է գումարենք այն պտուղը, որը բերել են այդ երկրի հովիվները, ինչպես նաև այլ ավետարանիչներ և հավատացյալներ, որոնք աշխատել են Նիգերիայում 1999 թվականից (արժե նշել, որ Նիգերիայի բնակչությունը կազմում է ամբողջ Աֆրիկա մայրցամաքի բնակչության մեկ չորրորդը): Սա անվանում եմ մարդկանց զարմանալի հունձք: Հիշեք, թե ինչ է գրված Սուրբ գրքում Հերովդեսի սպանվելուց հետո. «Եվ Աստծո Խոսքն աճում էր և

շատանում» (Գործք 12.24): Ինչո՞ւ նա սպանվեց: Կրկին, պատճառը Տիրոջ երկյուղով վարվող (ինչը նաև ենթադրում է առաջնորդներին պատվելը) սրբերն էին և միասնաբար աղոթող եկեղեցին:

Երբ Աստծո ժողովուրդը պատվի իշխանություն ունեցող մարդկանց և աղոթի նրանց համար, ապրի Տիրոջ Խոսքին հնազանդվելով, մենք Աստծո Հոգու մեծ թափում կտեսնենք մեր գյուղերում, քաղաքներում և երկրներում: Ուրեմն, ինչի՞ն ենք սպասում:

8

Պատվել հասարակական առաջնորդներին

«Նրանք, որ ծառայության լծի տակ են, թող իրենց տերերին ամեն պատվի արժանի համարեն, որ Աստծո անունը և վարդապետությունը չհայհոյվի»:

– Ա Տիմոթ. 6.1

Այս խոսքում Պողոսը նկատի ունի հասարակական առաջնորդներին, որոնց թվում են մեր գործատուները, տնօրենները, ուսուցիչները, մարզիչները և այլք: Ինչպես նշեցինք նախորդ գլուխներից մեկում, այսօր մենք կկարդայինք այս խոսքը հետևյալ կերպով. «Նրանք, որ աշխատում են վարձատրության դիմաց, թող իրենց գործատուներին և տնօրեններին ամեն պատվի արժանի համարեն», կամ՝ «Նրանք, որ սովորում են որպես ուսանողներ, թող իրենց ուսուցիչներին ամեն պատվի արժանի համարեն»: Նույնը վերաբերում է մարզիչներին և մարզիկներին, նաև այլ հարաբերությունների, որոնք ենթադրում են մի կողմի հպատակությունը մյուսին հասարակական միջավայրում:

Ուշադրություն դարձրեք, որ, Պողոսի խոսքով, մենք պետք է պատվենք հասարակական առաջնորդներին, որպեսզի Աստծո անունը և Ավետարանի ուսմունքը «չհայհոյվի»: Համաձայն «Ընդլայնված թարգմանության»՝ «Որպեսզի Աստծո անունը և ուսմուն-

քը [Նրա մասին] *վատ համբավ չունենան* և *չհայհոյվեն* (շեղագիրը հեղինակինն է)»: «Վատ համբավ» բառակապակցության սահմանումն է «հանրության կողմից ցածր գնահատվելու վիճակ»: *«Հայհոյություն»* բառի սահմանումն է «անհարգալից վերաբերմունք Աստծուն կամ սուրբ բաներին»:

Ի մի բերելով այս երկու բառերը՝ տեսնում ենք, որ երբ մենք՝ հավատացյալներս, չենք պատվում մեր գործատուներին, ուսուցիչներին և այլ ղեկավարների, արդյունքում հասարակությունը ցածր է գնահատում Աստծո թագավորությունը, ինչը կարող է այն աստիճանի հասնել, որ մարդիկ անհարգալից վերաբերվեն Աստծուն կամ սուրբ բաներին:

Ի՞նչ կերպով է մեր հասարակությունն անհարգալից վերաբերմունք ցուցաբերել Աստծո իրողությունների հանդեպ: Աղոթքները հեռացվել են մեր դպրոցներից. Տասը պատվիրանները հեռացվել են մեր դատարաններից. մեր ժամանցային մշակույթի զգալի մասը լի է անարգանքով և նույնիսկ աթեիստական է. մեր երաժշտության մեծ մասը բացահայտ կերպով անպատվում է Աստծուն. մեր կրթական համակարգը արարչագործությանը հավատացող մարդկանց ներկայացնում է որպես նեղմիտ անհատների, որոնք նույնիսկ սպառնալիք են գիտելիքի առաջխաղացման համար, և այս ցուցակը կարելի է շարունակել: Հնարավո՞ր է, որ մենք՝ հավատացյալներս, նպաստել ենք մեր հասարակության անաստված դիրքորոշմանը՝ հասարակական առաջնորդներին չպատվելու պատճառով: Համաձայն վերևում գրված Պողոսի խոսքերի, հենց սա է տեղի ունենում, երբ մենք ճշմարիտ պատիվ չենք ցուցաբերում:

Ավետարանի ողբերգական ներկայացում

Ես կարող էի շատ օրինակներ բերել այս մասին, բայց մի քանի տարի առաջ ինձ հետ մի պատմություն տեղի ունեցավ, որը լավագույնս պատկերում է այն, ինչ Պողոսը նկատի ունի: Ես ինքնաթիռ նստեցի և, շնորհիվ իմ հաճախակի թռիչքներ կատարող ուղևորի կարգավիճակի, ինձ տեղափոխեցին առաջին կարգ: Ես նստեցի մի լավ հագնված գործարարի կողքին, որը դանդաղորեն ալկոհոլային կոկտեյլ էր ըմպում: Ես նրա հետ շփվելու և Ավետարանով կիսվե-

լու մղում զգացի և անմիջապես զրույց սկսեցի: Մեր միջև փոխադարձ համակրանք առաջացավ, որի արդյունքը սահուն և խթանիչ շփումն էր. կարճ ասած, մենք ընդհանուր լեզու գտանք:

Նա հզոր անհատականության տեր մարդ էր: Գիտեի, որ նա առաջնորդ է: Հարցրի, թե ինչով է զբաղվում, և ասաց, որ իր քաղաքի մեծությամբ երկրորդ տաքսի ծառայության սեփականատերն է: Ես շարունակեցի զրուցել նրա հետ այն մասին, թե ինչպես էր ղեկավարում իր ընկերությունը: Նրա գործի մասին բավականին ժամանակ զրուցելուց հետո հարցրեց, թե ինչով էի ես զբաղվում.

- Ես Աստծո գործն եմ կատարում՝ որպես Ավետարանի ծառայող:

Նրա բարյացակամ հայացքն անմիջապես խոժոռվեց. նա փնթփնթաց և շրջվեց: Ես ապշեցի. այն մարդը, ով այդքան ընկերացել էր, հանկարծ արհամարհեց ինձ և սկսեց այնպես վարվել, ասես չէր ուզում որևէ կապ ունենալ ինձ հետ: Այնուամենայնիվ, մինչ այդ մեր զրույցն այնքան լավ էր ընթացել, որ ես գիտեի, որ կարող էի շարունակել: Այնպես որ, անկաշկանդ հարցրի.

- Դուք շատ բուռն արձագանքեցիք դրան: Ի՞նչն է պատճառը:

Նա կրկին շրջվեց դեպի ինձ՝ դեմքի լուրջ արտահայտությամբ, և ասաց.

- Գիտեք, դուք ինձ դուր եկաք, այնպես որ, ես պարզապես կպատմեմ ձեզ, թե ինչու չեմ ցանկանում ոչ մի գործ ունենալ ծառայողների և քրիստոնյաների հետ:

Դա շատ հետաքրքրեց ինձ:

- Ես մի աշխատող ունեի, - ասաց նա: - Այդ կինը «վերստին ծնվածներից» էր (ես ոչինչ չասացի): Աշխատանքի ընթացքում նա ժամեր շարունակ քարոզում էր իմ աշխատողների մեծ մասին, որ նրանք պետք է «փրկվեն»: Բացի այն, որ նա արդյունավետ աշխատող չէր, նա նույնպես ազդում էր մյուս աշխատողների արդյունավետության վրա:

Ի վերջո, նա հեռացավ՝ տանելով իր հետ մեր ընկերությանը պատկանող իրեր և թողնելով ութ հազար դոլարի միջազգային զանգերի պարտք, որը գոյացել էր նրա որդու հետ հեռախո-

սազրույցներից, ով ապրում էր Գերմանիայում (դա իննսունական թվականների կեսերին էր, երբ միջազգային հեռախոսազանգերը շատ թանկ արժեին):

Այդ պատմությունը վշտացրեց ինձ: Այդ ընկերության աշխատողների համար դժվար կլիներ լսել Աստծո Խոսքը, քանի որ այն վատ համբավ ուներ՝ այդ կնոջ վարքի պատճառով: Նա անարգել էր այդ ընկերության սեփականատիրոջը՝ քարոզելով այն ժամանակ, երբ պետք է աշխատեր, և բացահայտ գողություն էր կատարել: Նա պետք է ամենավստահելի աշխատողը դառնար: Ահա թե ինչու է Պողոսը պատվիրում աշխատողներին.

> «[Պատվիրի՛ր] ծառաներին հնազանդ լինել իրենց տերերին, հաճեցնող լինել և ամեն կերպով գոհացնել նրանց: [Զգուշացրո՛ւ նրանց], որ չառարկեն կամ չհակասեն, ո՛չ էլ գողանան՝ փոքր արժեք ունեցող բաներ վերցնելով, այլ մշտապես ցույց տան իրենց՝ որպես ճշմարտապես հուսալի և լիովին վստահելի ու հավատարիմ, որպեսզի ամեն ինչում նրանք զարդարանք լինեն այն ուսմունքին, [որը] Աստծո՝ մեր Փրկչի մասին է և Նրա կողմից է, և արժանահավատ դարձնեն այն»:
>
> – Տիտոս 2.9,10, AMPC

Այդ կինը վարկաբեկել էր այն, ինչ քարոզում էր (մեր կենսաոճը շատ ավելի բարձր է խոսում, քան այն, ինչ մենք քարոզում ենք): Նա նախատինք էր բերել Ավետարանի վրա: Եթե նա կատարեր այն, ինչ պատվիրում է Աստծո Խոսքը, այսինքն՝ պատվեր իր գործատուին, նա լիովին այլ կերպ կվերաբերվեր այդ ձեռնարկությանը: Պատվելը նշանակում է արժևորել, հպատակվել, թանկ համարել: Նա լիովին այլ վերաբերմունք և վարք կունենար, եթե նրա սրտում պատիվ լիներ: Նա լավ աշխատելու շարժառիթ կունենար և, ազնիվ լինելու հետ մեկտեղ, կբարձրացներ Ավետարանի համբավը:

Այդ ձեռնարկատիրոջ հետ իմ զրույցի մնացած մասը բաղկացած էր այդ կնոջ վարքի համար ներողություն խնդրելուց: Նա լսում էր, բայց դա այնքան էլ չէր սփոփում նրան: Նրան պատճառած վնասը խորն էր, և այն շատ դժվար կլիներ շտկել: Դա ազդեց մեր զրույցի վրա մինչև այդ թռիչքի ավարտը:

Մի քանի տարի անց ես պատմեցի այս պատմությունը մի եկեղեցում՝ իմ ուղերձի ընթացքում: Մեր ֆինանսական գործընկերներից մեկն ավելի ուշ լսեց այն լսասկավառակով: Նա կապ հաստատեց մեր ծառայության հետ և խնդրեց փոխանցել այդ մարդու ընկերության անվանումը և հասցեն: Նա ցանկություն էր ունեցել նամակ գրել այդ գործատուին՝ ներողություն խնդրելով, և ութ հազար դոլարի չեկ ուղարկել նրան՝ որպես վկայություն Աստծո սիրո մասին:

Ես այնպես ոգևորվեցի այդ մարդու խնդրանքից, ով ցանկանում էր կապ հաստատել այդ ընկերության տնօրենի հետ և հատուցել նրա կրած վնասը, որ որոշեցի անձամբ կազմակերպել դա: Կապ հաստատելով այդ ընկերության հետ՝ իմացա, որ ամիսներ առաջ այդ մարդը մահացել էր սրտի կաթվածից: Դա ևս մեկ ցավալի հարված էր իմ սրտին: Ես հարցնում էի ինքս ինձ՝ արդյո՞ք նա լսում էր այն, ինչ ասում էի նրան ինքնաթիռում, բայց, անկեղծ ասած, չկարողացա Ավետարանով կիսվել նրա հետ, քանի որ նա փակված էր դրա համար: Միայն կարող էի հուսալ, որ նա մեկ այլ մշակի էր հանդիպել, ով ներկայացրել էր նրան Ավետարանը: Ես բավականին ժամանակ մտածում էի, որ *միգուցե նա հաշտվել էր Աստծո հետ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:* Գիտեի, որ դրա համար հրաշք էր պետք՝ նրա նախկին աշխատողի վարքի պատճառով:

Որքան ավելի հեշտ կլիներ Ավետարանով կիսվել այդ ձեռնարկատիրոջ հետ ինքնաթիռում, եթե նա այնպիսի աշխատող ունենար, ով պատվում էր իրեն և իր ընկերությունը: Այդ մարդն ավելի տրամադրված կլիներ Ավետարանի ուղերձի հանդեպ: Ինչո՞ւ: Նա, հավանաբար, կասեր. «Ջո՛ն, ես հասկանում եմ, թե ինչ ես ասում: Իմ լավագույն աշխատողները քրիստոնյաներ են եղել: Իմ կյանքը խառնաշփոթի մեջ է: Ես ուզում եմ, որ Հիսուսը հավիտենական կյանք տա ինձ: Այո՛, ես ուզում եմ աղոթել քեզ հետ»:

Մյուս կողմից, եղել են անհավատ տնօրեններ, որոնք պատմել են ինձ, որ տեսել են ճշմարիտ քրիստոնեության դրսևորումն իրենց աշխատողների կյանքում, ոչ թե՝ որովհետև նրանք քարոզում են, այլ՝ որովհետև նրանք քրիստոնեական բնավորություն են դրսևորում դժվարին իրավիճակներում և իրենց աշխատանքային էթիկայի մեջ: Նրանք պատմում էին ինձ, որ

մյուսներից ավելի քրտնաջան են աշխատում, որ իմ ամենից անկեղծ և վստահելի աշխատողներն են, որ երբեք չեն վիճում, չեն տրտնջում և չեն հակառակվում ինձ:

Ի՞նչն է հնարավորություն տալիս այդ հավատացյալներին աշխատել բոլորովին այլ կերպով, քան այն կինը, որի մասին պատմեցի: Պատասխանը պարզապես Տիրոջ երկյուղն է, որը ճշմարիտ պատիվ է ձևավորում մեր սրտերում նրանց հանդեպ, որոնց մասին Աստված հոգ է տանում և որոնց Նա սիրում է:

Լսարանում

Տարիների ընթացքում անթիվ պատմություններ եմ լսել այն մասին, որ հավատացյալները կա՛մ վստահություն են ներշնչում Ավետարանի հանդեպ, կա՛մ վարկաբեկում են այն՝ աշխարհիկ միջավայրում պատվաբեր կամ վատահամբավ վարք դրսևորելով: Ես առաջին անգամ ծանոթացա այս երկու երևույթների հետ, երբ դեռ ուսանող էի:

Հիսուս Քրիստոսին որպես իմ Տեր ընդունել եմ տղաների ուսանողական հանրակացարանում, երբ սովորում էի «Փերդյու» համալսարանում: Ես մեծացել եմ կաթոլիկ միջավայրում և հավատարմորեն եկեղեցի եմ հաճախել, սակայն, իրականում, փրկություն ստանալու կարիք ունեի: Ես հիշում եմ, թե ինչպես մեր տղաների հանրակացարանի ուսանողներից մեկը գրավեց իմ ուշադրությունը: Առաջինը, նկատեցի նրա սիրով լի, բայց հաստատակամ բնավորությունը և վարքը: Նա փայլուն մարզիկ էր և շատ կարգապահ էր: Ես նկատեցի, որ նա ներկա էր լինում հանրակացարանի երեկույթների միայն սկզբում, մինչև որ բոլորս հարբում էինք, և երբ իրավիճակն անվերահսկելի էր դառնում, նա հեռանում էր: Երեկույթներին շատ սիրալիր զրուցում էր և՛ տղաների, և՛ աղջիկների հետ, և ամբողջ ընթացքում միայն գազավորված ըմպելիքներ էր խմում:

Նա նկատեց, որ ես կրոնական եմ, բայց հեռու եմ Աստծուց: Այնպես որ, սկզբում ընկերացավ ինձ հետ և որոշ ժամանակ անց, մի երեկո, թակեց իմ դուռը: Ինձ հետ Աստծո Խոսքով կիսվելիս՝ հարցրեց.

- Ջո՛ն, կարո՞ղ ես պատմել ինձ Միացյալ Նահանգների նախագահի մասին:

Ես պատասխանեցի.

- Իհարկե, նրա անունը Ջիմի Քարթեր է, իսկ կնոջ անունը՝ Ռոզալին: Նա Ջորջիա նահանգի նախկին նահանգապետն է, իսկ դրանից առաջ եղել է գետնանուշ աճեցնող ագարակատեր:

- Լավ, - պատասխանեց նա: - Իսկ հիմա կարո՞ղ ես պատմել Հիսուսի մասին:

- Իհարկե, - ասացի ես: - Նա ծնվել է կույսից, Նրա խորթ հոր անունը Հովսեփ էր, Նա տասներկու աշակերտ ուներ, Նա մահացավ խաչի վրա:

- Հրաշալի՛ է, - ասաց նա: - Իսկ հիմա ասա ինձ՝ դու ճանաչո՞ւմ ես նախագահ Քարթերին՝ ինչպես քո մորը:

- Ո՛չ, - անմիջապես պատասխանեցի:

Նա հարցրեց, թե որն է տարբերությունը:

- Նա իմ մայրն է: Ես անձամբ եմ ճանաչում նրան: Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգների նախագահին, ես երբեք չեմ հանդիպել նրան:

Նա շարունակեց.

- Ուրեմն, դու անձամբ հաղորդակցվում ես քո մոր հետ, սակայն, չնայած որ շատ բան գիտես նախագահի մասին, դու չես ճանաչում նրան, այսինքն՝ անձամբ չես հաղորդակցվում նրա հետ:

- Ճի՛շտ է, - պատասխանեցի ես:

Նա տվեց հաջորդ հարցը.

- Դու ճանաչո՞ւմ ես Հիսուսին՝ ինչպես քո մորը:

Ես ապշած նստել էի և չգիտեի ինչ ասել: Նա սկսեց պատմել Աստծո ամբողջական ծրագրի մասին: Նա ասաց, որ Աստված ուղարկել է Հիսուսին՝ ոչ թե մեզ եկեղեցու այցելուներ դարձնելու համար, այլ՝ որ անձամբ հաղորդակցվի մեզ հետ, քանի որ Նա ձգտում է մեզ և սիրում է մեզ: Ես անչափ տպավորվեցի, երբ հասկացա, թե ինչու եմ ստեղծվել:

Հաջորդ մեկ տարվա ընթացքում ես ժամեր շարունակ Աստվածաշունչ էի կարդում և չէի հագենում: Ես ցանկանում էի իմանալ Աստծո Խոսքը: Մինչև կյանքս Հիսուսին նվիրելը, Աստ-

վածաշունչն ինձ համար ընդամենը պատմությունների և կանոնների հավաքածու էր: Այժմ այն ինձ ուղղված Աստծո Խոսքն է, քանի որ կենդանացել է իմ սրտում:

Որպես Ճարտարագիտության ֆակուլտետի ուսանող, ես կարող էի մի քանի լրացուցիչ առարկա ընտրել: Ընտրովի առարկաների ցուցակում ներկայացված էր մի քանիսը «Նոտր Դամ» համալսարանի կողմից, որը մշտական պրոֆեսոր ուներ «Փերդյու» համալսարանում: Ես ընտրեցի «Հին կտակարանի ուսումնասիրություն սկսնակների համար» դասընթացը: Երբ նորահավատ էի, չէի հասկանում Հին կտակարանի որոշ ուսմունքներ և մտածում էի, որ հրաշալի կլիներ ընդհանուր պատկերացում կազմել այդ մասին:

Մեր խմբի դասերը տեղի էին ունենում ամեն երկուշաբթի և տևում էին երեք ժամ: Սկսելով առաջին դասը՝ այդ պրոֆեսորը, ըստ էության, անակնկալի բերեց ինձ: Նա ասաց, որ Աստվածաշնչի գրքերում ավելի քան վեց հարյուր հակասություն կա, որ պատմականորեն անհնար է ապացուցել՝ համաձայն Աստվածաշնչի, որ Հիսուսը մեռելներից հարություն է առել, և որ Կարմիր ծովը ճահճուտ էր, երբ Մովսեսը հատեց այն Իսրայելի զավակների հետ: Այս պատմությունը նման տպավորիչ կերպով է ներկայացված Աստվածաշնչում, քանի որ, սերնդեսերունդ փոխանցվելով, այն ավելի ու ավելի է չափազանցվել, մինչև որ ճահճուտն ահռելի ծովի է վերածվել:

Ավելորդ է ասել, որ այդ կիսամյակը շատ ծանր էր ինձ համար: Ես հիշում եմ բազմաթիվ լարված քննարկումներ այդ պրոֆեսորի և այլ ուսանողների հետ: Մի երկուշաբթի պրոֆեսորը և ես բանավիճեցինք մեր երեք դասաժամերից երկուսի ընթացքում: Նրա հետ խոսելու ամբողջ ընթացքում ես հաստատուն և վճռական էի, բայց հարգալից էի նրա ուսուցչական դիրքի հանդեպ:

Այդ դասընթացի սկզբում մեզ ծավալուն հետազոտական աշխատանք էր հանձնարարված, որը պետք է պատրաստ լիներ առաջին կիսամյակի ավարտին: Այն կազմելու էր մեր վերջնական կիսամյակային գնահատականի մեկ երրորդը: Ես մեծ ջանք թափեցի՝ պատրաստելով այդ գրավոր աշխատանքը: Վերջին դասին պրոֆեսորը վերադարձրեց մեր գնահատված աշխատանքները:

Ստանալով իմը՝ առանց որևէ գնահատականի, այլ՝ «Անավարտ» նշումով, ես տարակուսանքի մեջ էի: Մոտեցա նրան դասի ավարտին, և նա ասաց.

- Ջո՛ն, ուզում եմ հանդիպել քեզ իմ գրասենյակում և խոսել այն գնահատականի մասին, որը նշանակել եմ քեզ:

Մի քանի օր անց մենք հանդիպեցինք նրա գրասենյակում: Նա ասաց.

- Ջո՛ն, մենք երկու տարբեր աշխարհներում ենք ապրում: Ես հասկացա, որ չեմ կարող գնահատել քո աշխատանքը: Այդ պատճառով, կատարեցի «Անավարտ» նշումը, ինչը, ըստ էության, նշանակում է, որ այն չի ազդի քո վերջնական գնահատականի վրա: Ես կհաշվեմ քո երկու քննությունների միջին արդյունքը՝ այս կիսամյակի վերջնական գնահատականը նշանակելու համար:

Նա շարունակեց.

- Ջո՛ն, ես մի շարք «հիմնարար քրիստոնյա» ուսանողներ եմ ունեցել իմ դասերին, և նրանք իմ մեծագույն գլխացավանքներից են եղել: Նրանք խառնաշփոթ են ստեղծել դասերիս ընթացքում, դադարել են հաճախել, իսկ մի քանիսը նույնիսկ հրաժարվել են իրենց համոզմունքներից:

Նա ավելի մեղմ ձայնով շարունակեց.

- Ջո՛ն, դու տարբերվում ես նրանցից: Նույնիսկ մեկ քայլ չնահանջեցիր քո համոզմունքներից: Դու մնացիր քո դիրքում, սակայն հարգալից էիր խոսում ինձ հետ: Դու նույնպես վաստակել ես քո համակուրսեցիների հարգանքը: Ես շատ շնորհակա՛լ եմ քո համարձակության համար և այն հարգանքի համար, որը ցուցաբերել ես իմ հանդեպ:

Աստված ինչ-որ բան ցույց տվեց ինձ մեր զրույցի միջոցով. երբ մենք հաստատուն կանգնում ենք Նրա Խոսքի հայտնության վրա, բայց անում ենք դա՝ պատվելով մեր առաջնորդներին, Աստված կգործի՝ հանուն ճշմարտության: Մյուս «հիմնարար քրիստոնյաները», որոնք եղել էին նրա դասերին, իրենց վարքով հակասել էին իրենց նպատակին. նրանք պետք է Հիսուս Քրիստոսին ներկայացնեին իրենց ուսուցչին և համակուրսեցիներին: Իրականում,

նրանք վարկաբեկել էին ճշմարիտ Ավետարանն իրենց ուսուցչի և համակուրսեցիների առջև՝ խառնաշփոթ ստեղծելով այդ պրոֆեսորի դասերին: Նրանք մեծ հնարավորություն էին բաց թողել՝ պատվի սկզբունքով չվարվելու պատճառով:

Մենք երբեք չպետք է հրաժարվենք այն ամենից, ինչ Աստծո Խոսքն է պնդում: Մենք պետք է հաստատ կանգնենք: Այնուամենայնիվ, պետք է հեզությամբ և խոնարհությամբ ուղղենք հակառակվողներին: Եթե սա մեր տնօրեններին, մարզիչներին կամ ուսուցիչներին է վերաբերում, մենք պետք է մեր կյանքով քրիստոսանմանության օրինակ լինենք: Երբ հնարավորություն ընձեռվի, պետք է բացենք մեր բերանը և խոսենք ճշմարտությունը՝ ունենալով սեր և հարգանք մեր առաջնորդների հանդեպ:

Պատվել հասարակական առաջնորդներին

Ինչպե՞ս պատվել հասարակական առաջնորդներին: Հիշենք *«պատիվ»* բառի սահմանումը: Այն նշանակում է արժևորել, թանկ և ծանրակշիռ համարել, հարգալից վերաբերվել, հպատակվել, նաև հնազանդվել, եթե դա չի հակասում Սուրբ գրքին:

Եթե մտորենք այս սահմանման շուրջ և աղոթենք սրա վերաբերյալ, մեր վարքը դրական ազդեցություն կթողնի մեր աշխատավայրերում, ուսումնական հաստատություններում և խաղադաշտերում: Եթե խնդրենք Աստծուն պատվով լցնել մեր սիրտը մեր հասարակական առաջնորդների հանդեպ, մենք պատվով կվերաբերվենք նրանց: Փոխարենը մեր իրավունքների համար պայքարելը, մենք կնախընտրենք կատարել նրանց ցանկությունները, ոչ թե մերը: Մենք կձգտենք հաջողակ դարձնել նրանց, անկախ այն բանից՝ ճանաչում կստանա՞նք, կամ պատշաճ կերպով կվճարվե՞նք մեր աշխատանքի համար: Ինչպե՞ս անել դա: Աստվածաշունչը հայտնում է.

> «Ստրուկնե՛ր (աշխատողներ), հնազանդվե՛ք ձեր երկրային տերերին (գործատուներին կամ տնօրեններին) խորը հարգանքով և երկյուղով: Անկեղծորե՛ն ծառայեք նրանց, ինչպես որ Քրիստոսին կծառայեիք: Ամեն

ժամանակ փորձեք հաճեցնել նրանց, ոչ թե միայն երբ նրանք հետևում են ձեզ: Որպես Քրիստոսի ստրուկներ, կատարե՛ք Աստծո կամքը ձեր ամբողջ սրտով: Խանդավառությա՛մբ աշխատեք, ասես գործում եք Տիրոջ համար, ոչ թե մարդկանց: Հիշե՛ք, որ Տերը կվարձատրի յուրաքանչյուրիս այն բարության համար, որը գործում ենք»:

– Եփես. 6.5-8, NLT, (փակագծերի բառերը հեղինակինն են)

Ուշադրություն դարձրեք հետևյալ խոսքերին. «Խանդավառությա՛մբ աշխատեք, ասես գործում եք Տիրոջ համար»: Եթե մեր սիրտն այսպիսին է, մենք կդադարենք ստրուկ լինելուց և ծառա կդառնանք: Միգուցե ասեք. «Ես ստրուկ չե՛մ»: Մինչև արագորեն պատասխանեք այս պնդմանը, թույլ տվեք ներկայացնել տարբերությունը ստրուկի և ծառայի միջև: Ստրուկը կատարում է նվազագույն պահանջները. ծառան գործում է իր առավելագույն ներուժով: Ստրուկից գողանում են. ծառան տալիս է: Ստրուկը հարկադրված է գործում. ծառան հոժարաբար է գործում: Ծառան հնարավորություններ է փնտրում, ոչ թե սպասում է հանձնարարությունների: Նա կանխատեսում է այն մարդու կարիքները, որին ինքը ծառայում է, և հոգում է դրանք՝ չսպասելով, որ իրեն խնդրեն:

Եթե կարծում եք, որ ձեր տնօրենն անարդարացի է վարվում ձեզ հետ և խստորեն է վերաբերվում, դուք պետք է գործեք, ոչ թե հակազդեք: Հակազդող մարդը տրտնջում է, որ իր հետ անարդարացի են վարվում, կամ դառնում է անաշխույժ և անարդյունավետ: Գործող մարդը գրոհում է չարին՝ բարիով (տե՛ս Հռոմ. 12.21): Նա կարող է մոտենալ իր հետ խստորեն վարվող տնօրենին և ասել. «Պարո՛ն, ես տեսնում եմ, որ կա որոշ հավելյալ աշխատանք, որը պետք է կատարել. ուզում եմ, որ իմանաք, որ հաջորդ շաբաթ ես երկու ժամ շուտ կգամ և կկատարեմ այդ աշխատանքը, և կարիք չկա, որ վճարեք ինձ դրա համար»:

Եթե այսպես վարվեք կոնֆլիկտային իրավիճակներում, դուք կշահեք թե՛ Աստծո, թե՛ մարդու բարեհաճությունը: Որտեղի՞ց գիտեմ սա: Առակաց 3.3,4-ում գրված է, որ երբ գրենք շնորհքը և ճշմարտությունը մեր սրտի տախտակին, մենք շնորհք և հաճություն կգտնենք Աստծո և մարդկանց առջև:

Եթե դուք բարեհաճություն չգտնեք ձեր տնօրենի առջև նման պատվավոր վարքով, Աստված դուռ կբացի ձեզ համար այլ վայրում, որտեղ դուք բարեհաճություն կգտնեք՝ նման այն ապահովագրական ընկերության կրտսեր գործադիր ղեկավարին, որի մասին խոսեցինք նախորդ գլուխներից մեկում: Նա պատվեց իր ղեկավարներին, թեև նրանք արհամարհեցին նրան: Եվ Աստված դուռ բացեց նրա համար ավելի մեծ ընկերությունում: Այժմ նա վայելում է իր ամբողջական վարձատրությունը՝ որպես այդ ընկերության ավագ գործադիր ղեկավարներից մեկը:

Սա օրենք է: Եթե պատվեք ձեր հասարակական առաջնորդներին, Աստված կպատվի ձեզ, և դուք ամբողջական վարձատրություն կստանաք: Միգուցե այն չգա ձեր տնօրենի, ուսուցչի կամ մարզչի միջոցով, բայց այն կգա. Աստված հետևում է Իր Խոսքին, որ կատարի:

9

Պատվել ընտանեկան առաջնորդներին

Եկեք անցում կատարենք ընտանիքին: Մենք կսկսենք՝ խոսելով երեխաների մասին: Սուրբ գիրքը պատվիրում է մեզ. «Պատվի՛ր քո հորը և մորը. սա է առաջին պատվիրանը խոստումով, որ քեզ լավ լինի և երկար ապրես երկրի վրա» (Եփես. 6.2,3):

Մեր ծնողներին պատվելը ո՛չ առաջարկ է, ո՛չ խորհուրդ. դա պատվիրան է: Արդյո՞ք ոմանք մոռացել են, որ Նոր կտակարանի հավատացյալներ լինելով, պետք է պահենք Աստծո պատվիրանները: Դա վկայություն է այն մասին, որ Աստծո սերը ճշմարտապես բնակվում է մեզանում: Հիսուսն ասում է. «Ով որ Իմ պատվիրաններն ունի և պահում է, նա է Ինձ սիրողը» (Հովհ. 14.21): Հովհաննես առաքյալը հաստատում է սա՝ գրելով. «Եվ սա է սերը, որ Նրա պատվիրանների համեմատ գնանք» (Բ Հովհ. 6):

Հիսուս Քրիստոսին Տեր ընդունելով՝ մենք փոխվում ենք. այն անձնավորությունը, որը նախկինում գոյություն ուներ, այլևս չի ապրում: Մենք բառացիորեն նոր ստեղծված ենք: Մեր սրտերը նոր են դառնում, քանի որ Աստծո երկյուղը և սերը բնակվում են մեզանում: Այժմ մեր ցանկություններն ուղղված են Աստծուն. մենք ձգտում ենք հաճեցնել Նրան, քանի որ դա է մեր բնությունը: Մենք այնպես ենք ապրում, որ «կարևորն Աստծո պատվիրանները պահելն է» (Ա Կորնթ. 7.19, NKJV):

Ի հակադրություն, ովքեր սովորաբար անտեսում են Աստծո պատվիրանները, ճշմարիտ հանդիպում չեն ունեցել Հիսուս Քրիստոսի հետ՝ Սուրբ Հոգու միջոցով: Նրանք կարող են դավանել, որ քրիստոնյա են, սակայն, ինչպես սովորեցնում է Հիսուսը, մենք կճանաչենք նրանց ճշմարիտ բնությունը՝ նրանց պտուղներից (տես Մատթ. 7.20): Եթե նրանք անտեսում են Աստծո պատվիրանները կամ թեթևորեն են վերաբերվում, նրանցում չկա այն, ինչ Աստծո սրտում է: Հովհաննեսը գրում է. «Ով որ ասում է, թե «Ճանաչեցի Նրան *(Հիսուս Քրիստոսին)»,* և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս *(խաբված)* է, և ճշմարտությունը չկա նրանում» (Ա Հովհ. 2.4, փակագծերի բառերը հեղինակինն են): Հովհաննեսը պարզորեն ասում է, որ այդ մարդն Աստծո զավակ չէ. նա խաբված է: Միգուցե մտածում է, որ փրկված է, բայց իրականում այդպես չէ:

Կրկին հիշենք պատվի սահմանումը. արժևորել, բարյացակամորեն վերաբերվել և բարձր գնահատել: Մեր ծնողներին պատվելը նշանակում է, որ մենք հարգանքով և սիրով ենք վարվում նրանց հանդեպ: Հիշեք, որ պատիվը կարող է արտահայտվել գործով, խոսքով և նույնիսկ մտքով, բայց ճշմարիտ պատիվն ամբողջությամբ սկիզբ է առնում սրտից: Այնպես որ, եթե երիտասարդ տղաները կամ աղջիկները մշտապես թեթևամտորեն, անփութորեն և առանց ակնածանքի են խոսում իրենց ծնողների հետ, նրանք ցույց են տալիս, որ իրենց սրտում չկա ճշմարիտ պատիվ ծնողների հանդեպ, որովհետև սրտի ավելացածից է խոսում բերանը (տես Մատթ. 12.34): Նրանց անարգանքը նույնպես կարող է արտահայտվել իրենց վարքով, օրինակ՝ ձայնի հնչողությամբ, վեր բարձրացված աչքերով, նողկանք արտահայտող հայացքով, դժկամորեն խնդրանքներ կատարելով, տրտնջալով և այլն:

Ծնողներին անարգելը սովորական բան է դարձել Ամերիկայում: Դա արմատացել է մեր մշակույթի մեջ: Կան մի շարք հանրաճանաչ «ընտանեկան ֆիլմեր», որոնք թույլ չէի տա, որ երեխաներս դիտեին: Դրանցից մի քանիսը նույնիսկ դասվում են «բոլոր տարիքների համար» շարքում և թողարկվել են «վստահելի կինոընկերությունների» կողմից: Մենք պետք է որ անվտանգ համարեինք դրանք: Դրանց սյուժեները հաճախ հուզիչ են: Այնուամենայնիվ, երեխաների շփումը ծնողների հետ այդ ֆիլմերում բոլորովին այլ հարց է: Նրանք այնպես են վերաբերվում իրենց հորը

և մորը, ասես անմիտ և անհասկացող լինեն: Նրանք բացահայտ անտեսում են իրենց ծնողների ցուցումները, սակայն ֆիլմի վերջում պատկերվում են որպես հերոսներ, որոնք ստանում են իրենց սրտի ուզածը, թեև արհամարհանքով են վերաբերվել ծնողներին: Միգուցե մտածեք, որ ես չափազանցնում եմ, բայց լսեք, թե ինչ է Աստված ասում. «Անիծված է նա, որ անարգում է իր հորը կամ մորը: Բոլոր մարդիկ ասեն՝ ամե՛ն» (Երկր. Օր. 27.16, AMPC):

Հասկանո՞ւմ եք, թե որքան խիստ է *«անիծված»* բառը: Աստծուց անեծք ստանալը շատ լուրջ խնդիր է: Մենք կարող էինք ակնկալել, որ կլսեինք հետևյալը. «Անիծված է նա, ով սպանում է, գողանում է, սեռական անբարոյություն է գործում կամ կախարդություն է անում»: Այնուամենայնիվ, Աստված ասում է, որ իր հորը կամ մորն անարգողն անիծված է: Հիշենք «անարգանք» կամ «անպատվություն» բառի սահմանումը. վերաբերվել սովորականի պես, հասարակ և աննշան համարել: Դրա ավելի խիստ ձևն ամոթալի կամ նվաստացուցիչ վերաբերմունքն է:

Սերունդներ տևող անեծք

Աստվածաշնչում կան մի շարք օրինակներ այն մասին, որ մարդիկ անեծք բերեցին իրենց կյանքում՝ ծնողներին անարգելու պատճառով: Նոյի կրտսեր որդի Քամը դրա վառ օրինակն է:

Ջրհեղեղից հետո Նոյը հողագործությամբ էր զբաղվում: Մի երեկո նա արբեց: Ի՞նչն էր պատճառը: Միգուցե ընկճվածություն էր զգում, քանի որ նա երկրի վրա մնացած վերջին հայրն էր: Կամ, միգուցե, փորձում էր ազատվել ջրհեղեղից հետո կյանքը վերսկսելու ճնշումներից: Ինչ էլ լիներ, ակնհայտ է, որ նա սաստիկ ճնշված էր և թեթևության էր ձգտում, բայց՝ սխալ միջոցներով: Արբած վիճակում, նա մի կերպ իր վրանը հասավ, հանեց բոլոր հագուստները և խորասուզվեց քնի մեջ:

Քամը մտավ այն վրանը, որտեղ պառկած էր հայրը, տեսավ նրա մերկ մարմինը, հոգոց հանեց և գնաց ու պատմեց բոլոր տղամարդկանց (այդ ժամանակ այնքան էլ շատ տղամարդ չկար, որոնց կարելի էր պատմել, միայն Սեմը և Հաբեթը): Ես պատկերացնում եմ, որ նա քմծիծաղ էր տալիս և ծաղրանքով ասում. «Տղանե՛ր, չեք հավատա, թե ինչ է պատահել: Մեր հայրը ուշագնացության չափ արբած է և լիովին մերկ է: Դուք պետք է տեսնեք դա, գնացի՛նք»:

Երբ Սեմը և Հաբեթը լսեցին իրենց եղբոր արհամարհական խոսքերը, այլ կերպ արձագանքեցին: Նրանք մի հանդերձ վերցրին, իրենց ուսերից վեր պահեցին, ետ-ետ քայլելով այդ վրանը մտան և ծածկեցին Նոյի մերկությունը, քանի որ չէին ցանկանում տեսնել իրենց հոր ամոթը:

Հաջորդ առավոտյան Նոյն արթնացավ և իմացավ, թե ինչ էր արել Քամը: Գրված է.

> «Եվ նա անիծեց Քանանի՝ Քամի որդիների ժառանգներին. «Անե՛ծք քանանացիների վրա: Թող նրանք Սեմի և Հաբեթի սերունդների ծառաներից ամենացածրերը լինեն»: Եվ հետո Նոյն ասաց. «Թող Սեմն օրհնված լինի իմ Տեր Աստծո կողմից, և թող Քանանը նրա ծառան լինի: Թող Աստված լայնացնի Հաբեթի տարածքը, և թող նա բաժնեկցի Սեմի առատությանը, և թող Քանանը նրա ծառան լինի»»:
>
> – Ծննդ. 9.25-27, NLT

Նոյի բերանից դուրս եկած այս մարգարեական խոսքը կատարվեց մի քանի սերունդների կյանքում: Քանանացիները, որոնք Քամի ժառանգներն էին, անեծքի տակ հայտնվեցին և, ի վերջո, Աստծո հրամանով նվաճվեցին Իսրայելի զավակների կողմից:

Քամն անարգեց իր հորը և անեծք բերեց ինչպես իր, այնպես էլ իր ժառանգների կյանքում: Հետաքրքրական է նշել, որ Քամի վարքը խիստ հետևանքների հանգեցրեց, այնինչ Սուրբ գիրքը չի նշում Նոյի արբածությունից բխող ոչ մի հետևանք: Իրականում, Եբրայեցիների 11-րդ գլխում թվարկված հավատքի հերոսներից մեկը հենց Նոյն է՝ այո՛, այն մարդը, որն այնքան էր արբել, որ չէր կարողանում կանգնած մնալ: Ակնհայտ է, որ նա ապաշխարեց իր մեղքից և ներում ստացավ: Այնուամենայնիվ, Եբրայեցիների 11-րդ գլխում գրված չէ Քամի մասին. իրականում, նրա անունն այլևս դրականորեն չի հիշատակվում Աստվածաշնչում:

Նոյի բարոյական ձախողումը պատվի փորձություն դարձավ նրա երեք որդիների համար: Նրանցից մեկը պատիվ չցուցաբերեց և ապստամբեց: Մյուս երկուսը հարգալից վարվեցին և թույլ չտվեցին իրենց դատել այն, ինչի համար պատասխանատու չէին: Նոյի վարքն աստվածահաճո չէր. սակայն Աստված էր, որ պետք է զբաղվեր դրանով, ոչ թե նրա որդիները: Երկու որդինե-

ը, որոնք հասկանում էին սա, շարունակեցին ի սրտե պատվել նրան: Երրորդ որդին, ով որոշեց դատել իր հոր արարքները, անարգանքով վարվեց և արդյունքում անեծք ստացավ:

Անհրաժեշտ է նշել ևս մեկ հետաքրքրական փաստ: Քամը ճշտորեն ներկայացրեց իրավիճակը. նրա հայրը արբած էր և մերկ էր: Այնուամենայնիվ, Քամը սկզբունքորեն սխալ էր: Տրամաբանորեն նրա արարքն արդարացի էր: Նա ընդամենը կրկնեց իր տեսածը. նա միայն «ճիշտը խոսեց»: Այնուամենայնիվ, պատվի և Աստծո թագավորության սկզբունքն այլ է:

Անարգանքն ավելանում է ժամանակի ընթացքում

Եվս մեկ անձնավորություն Աստվածաշնչում, որն անարգեց իր հորը, Ռուբենն էր՝ Հակոբի առաջնեկը, որի մայրը Լիան էր: Ինչպե՞ս Ռուբենն անարգեց իր հորը: Անկողին մտնելով հոր հարճերից մեկի՝ Բաղղայի հետ:

Այնուամենայնիվ, կարծում եմ՝ այս պատմության մեջ կա ավելին, քան պարզապես իր հորը պատկանող կնոջ հետ անկողին մտնելը: Հակոբի գլխավոր կանայք երկուսն էին՝ Լիան և Ռաքելը, որոնք նաև քույրեր էին: Բաղղան Ռաքելի աղախինն էր: Ռաքելի և Լիայի միջև մրցակցություն կար, որը բորբոքվում և շարունակ սաստկանում էր այն պատճառով, որ Հակոբը նախընտրում էր Ռաքելին: Այդպես էր նրանց ամուսնության սկզբից մինչև Ռաքելի մահը:

Երբ Աստված տեսավ, որ Լիան սիրված չէր, Նա բացեց նրա արգանդը: Լիան հղացավ և ծնեց Ռուբենին: Նրա արձագանքը Ռուբենի ծնունդին այսպիսին էր. «Անկասկած, Տերը տեսավ իմ տառապանքը: Ուրեմն, հիմա իմ ամուսինը կսիրի ինձ» (Ծնն. 29.32, NKJV):

Որոշ ժամանակ անց նա ծնունդ տվեց իր երկրորդ որդուն: Երբ նա ծնվեց, Լիան ասաց. ««Քանի որ Տերը լսեց, որ ես սիրված չեմ, այդ պատճառով տվեց ինձ նաև այս որդուն»: Եվ Շմավոն անվանեց նրան *(նշանակում է «լսված»)*» (խոսք 33, NKJV, շեղագրով բառերը հեղինակինն են):

Նա ծնեց երրորդ որդուն: Նրա կրկնակի հուսալքությունը երևում է այն բանից, թե ինչ ասաց, երբ երեխան ծնվեց. ««Այս անգամ իմ ամուսինը կկապվի ինձ հետ, քանի որ ես երեք որդի ծնեցի նրա համար»: Այդ պատճառով նրա անունը Ղևի կոչվեց

(նշանակում է «կապված»)» (խոսք 34, NKJV, շեղագրով բառերը հեղինակինն են):

Երբ Ռաքելը տեսավ իր քրոջ հաջողությունը, և որ ինքը չէր հղիանում, նա ծրագիր մշակեց՝ ի չիք դարձնելու համար Լիայի առավելությունն իր հանդեպ: Նա որոշեց իր աղախին Բաղղային տալ Հակոբին և ասաց. «Ահա՛ իմ աղախին Բաղղան, նրա մոտ մտի՛ր: Նա իմ ծնկների վրա ծնի, և ես էլ նրանից որդիներ ստանամ» (30.3): Հենց որ երեխան ծնվեց, Ռաքելն ասաց. «Իմ քրոջ հետ աստվածային ըմբշամարտությամբ մարտնչեցի և հաղթեցի էլ» (խոսք 8):

Ռուբենը, առաջնեկ լինելով, տեսնում էր իր մոր և Ռաքելի վեճերն ու մրցակցությունը: Նա բավականին մեծ էր և հասկանում էր այն ցավը, որն իր մայրը զգում էր՝ իր հորից անտեսված լինելու պատճառով: Մեկ անգամ Ռուբենը դաշտեր գնաց և մանրագորներ գտավ իր մոր համար: Հենց որ Լիան ստացավ դրանք իր որդուց, Ռաքելը նախանձեց և ցանկացավ վերցնել դրանք, և նրանք պայմանավորվածության եկան: Ռաքելը պետք է թույլ տար Լիային, որ մեկ գիշեր Հակոբի հետ լիներ:

Այդ երեկո, երբ Հակոբը եկավ դաշտից, Լիան հանդիպեց նրան և ասաց. «Ինձ մոտ պիտի մտնես, որովհետև քեզ վարձով առել եմ իմ որդու մանրագորներով» (խոսք 16): Այս միջադեպից ակնհայտ է դառնում, որ Հակոբը մեծ մասամբ գիշերներն անցկացնում էր Ռաքելի հետ, և միակ միջոցը, որով Լիան կարող էր ստանալ նրան, դրա համար վճարելն էր:

Ռուբենը ցավով էր հետևում այդ խիստ հարաբերություններին իր ընտանիքում: Համոզված եմ՝ նրա վրդովմունքն այն պատճառով, որ իր հայրը ոչ բարյացակամ և անգութ էր վարվում իր մոր հետ, օրեցօր ավելանում էր:

Այդ ամենը չէր սահմանափակվում ննջարանով, այլ արտահայտվում էր բոլոր բնագավառներում: Ժամանակ անցավ, և երբ Հակոբն արդեն տասը որդի ուներ, Ռաքելը վերջապես երեխա ունեցավ. նա ծնունդ տվեց Հովսեփին: Ռուբենի վրդովմունքն ավելանում էր, երբ տեսնում էր, որ իր հայրը նախապատվություն էր տալիս Ռաքելի միակ որդուն: Հովսեփն արտոնյալ դիրք ուներ և ավելի շատ սեր էր ստանում, քան մյուս եղբայրները: Նրան նույնիսկ փառավոր պատմուճան նվիրեցին, որը նրա հոր նախապատվության նշանն էր:

Երբ նրանց ընտանիքը փախավ Լիայի և Ռաքելի հայր Լաբանից, նրանք լուր ստացան, որ Եսավը դուրս էր եկել չորս հարյուր

մարդկանցով՝ իրենց դիմավորելու համար: Հակոբը վախով համակվեց, քանի որ լավ էր հիշում, որ իր եղբայրը երդվել էր սպանել իրեն՝ նրա առաջնեկությունը գողանալու համար:

Փորձելով փրկել իր կյանքը և սերունդը, Հակոբը խմբերի բաժանեց իր ընտանիքը: Նա խմբերով ուղարկեց նրանց իր առջևից՝ Եսավին դիմավորելու համար: Գաղափարն այն էր, որ եթե Եսավը սպաներ առաջին խմբերին, Հակոբը կհասցներ փախչել եղբորից՝ փրկելով իր կյանքը և նրանց, ովքեր ամենից մոտ էին իրեն: Տեսնենք, թե ինչպես նա բաժանեց իր ընտանիքը. «Եվ նա հարճերին և նրանց երեխաներին առջևում դրեց, Լիային և նրա երեխաներին՝ նրանցից հետո, և Ռաքելին ու Հովսեփին՝ բոլորից հետո» (Ծնն. 33.2, AMPC): Կարո՞ղ եք պատկերացնել այն վիրավորանքը և բարկությունը, որը զգաց Ռուբենը: Նա և նրա մայրն ուղարկվեցին Ռաքելից առաջ՝ մահանալու համար, մինչ իր հայրը, նախապատվություն տալով Ռաքելին և նրա որդուն, պահեց նրանց վերջին խմբում՝ իր հետ:

Ժամանակն անցնում էր, և նրա վրդովմունքն ավելանում էր: Ռաքելը ծնունդ տվեց երկրորդ որդուն և մահացավ ծննդաբերության ժամանակ: Հակոբը մեծ սուգ արեց և արձան կանգնեցրեց նրա գերեզմանին, որը մնալու էր գալիք սերունդների ընթացքում: Հետաքրքրական է նշել, որ ոչ մի տեղ գրված չէ Լիայի արձանի մասին, այլ միայն Ռաքելի: Ակնհայտ է, որ այդ արձանը մեծ և տպավորիչ էր: Ամենայն հավանականությամբ, մինչ այդ պահը Ռուբենն արդեն սաստիկ դառնացած էր:

Անմիջապես Ռաքելի մահվանից հետո Աստվածաշնչում գրված է. «Ռուբենը գնաց և իր հոր հարճ Բաղղայի հետ պառկեց» (Ծնն. 35.22): Ռուբենը տառապանք էր զգում՝ հետևելով այդ մրցակցությանը: Նա վրդովմունք էր զգում այն պատճառով, որ իր հայրը նախապատվություն էր տալիս Ռաքելին և չէր սիրում իր մորը: Շատ հնարավոր է, և նույնիսկ հավանական է, որ նա պառկեց Բաղղայի հետ ոչ թե պարզապես սեռական հարաբերության համար, այլ որպեսզի ամոթ բերեր Ռաքելի վրանին և մի փոքր հատուցեր այն վիրավորանքի համար, որն ինքը զգում էր իր հոր արարքների պատճառով:

Այժմ տեսեք, թե ինչ է Աստված ասում Ռուբենի մասին բոլոր եղբայրների մահից շատ ժամանակ անց. «Իսրայելի ավագ որդին Ռուբենն էր: Բայց քանի որ նա *անպատվեց* իր հորը՝ քնելով հոր

հարճերից մեկի հետ, նրա առաջնեկությունը տրվեց իր եղբայր Հովսեփի որդիներին: Այս պատճառով, Ռուբենը թվարկված չէ տոհմաբանական արձանագրության մեջ՝ որպես առաջնեկ» (Ա Մնաց. 5.1, NLT, շեղագիրը հեղինակինն է):

Անչափ հետաքրքրական է նշել, որ Հակոբի կողմից Ռաքելին սիրելը և Լիային անտեսելը սխալ էր: Իրականում, Աստված լավ չէր համարում դա, քանի որ գրված է. «Երբ Տերը տեսավ, որ Լիան սիրված չէր, Նա բացեց նրա արգանդը» (Ծնն. 29.31, NKJV): «Ընդլայնված թարգմանության Դասական հրատարակության» մեջ գրված է. «Երբ Տերը տեսավ, որ Լիան արհամարհված էր», Աստված օրհնեց Լիային այն բնագավառում, որում նրա ամուսինը վշտացնում էր նրան:

Ռուբենը ճիշտ էր հասկանում ամեն ինչ: Նրա գնահատականն իր հոր վարքի վերաբերյալ մտացածին չէր: Այնուամենայնիվ, այն, ինչ նա սկսեց փայփայել իր ներսում, թունավորեց նրան: Նա թողեց այն պատիվը, որն Աստված դնում է յուրաքանչյուր երեխայի սրտում, և վրդովմունք ընդունեց, ինչի արդյունքն անարգանքն էր: Նա թույլ տվեց, որ անարգանքն այն աստիճան ավելանար, որ արդարացրեց անպատիվ վարքն իր հոր հանդեպ: Դա թանկ նստեց նրա վրա. նա կորցրեց իր առաջնեկությունը:

Հիշե՛ք նախորդ գլուխներից, որ Հեղի քահանան վիրավորեց Աննային, սակայն Աննան թույլ չտվեց, որ նրա անհարգալից վերաբերմունքը խանգարեր իրեն ցուցաբերել այն պատիվը, որն Աստված պատվիրում է ցուցաբերել իշխանություն ունեցող մարդկանց: Նա ամբողջական վարձատրություն ստացավ: Ռուբենը, ընդհակառակը, կորցրեց վարձատրությունը, որն իր ժառանգությունն էր: Նրա գնահատականը հարյուր տոկոսով ճիշտ էր, սակայն նրա արձագանքը հարյուր տոկոսով սխալ էր:

Թույլ մի՛ տվեք, որ մարդկանց սխալ վարքն ազդի ձեզ վրա

Վերջին մի քանի տարում ինձ համար առավել պարզ է դառնում, որ մենք չենք կարող թույլ տալ, որ մարդկանց սխալ վարքն ազդի այն բանի վրա, ինչ մենք գիտենք ճիշտ վարքի մասին: Այս ճշմարտությունը վառ կերպով երևում է Մովսեսի կյանքում:

Իսրայելի զավակները, ինչպես և Հակոբը, շարունակ վարվում

էին Աստծուն ոչ հաճելի կերպով: Հակոբն անարգում էր կնոջը, իսկ իսրայելցիները մշտապես տրտնջում էին: Ինչպես և Ռուբենի դեպքում, Մովսեսը տուժեց նրանց սխալ վարքից. նա զրկվեց Խոստման երկրից և քառասուն տարի անապատում մնաց՝ նրանց արարքների պատճառով:

Երբ նրանք հերթական անգամ տրտնջացին՝ ջուր չունենալու պատճառով, Աստված պատվիրեց Մովսեսին խոսել ժայռին, որպեսզի ջուր բխի: Բայց մինչև այդ պահը Մովսեսն այնքա՛ն էր հոգնել նրանց վարքից, որ հավաքեց իսրայելցիներին և գոչեց.

> ««Լսե՛ք հիմա, ո՛վ ապստամբներ, այս ապառաժից ջո՞ւր հանենք ձեզ համար»: Եվ Մովսեսը ձեռքը բարձրացրեց և գավազանով երկու անգամ ապառաժին զարկեց»:
>
> – Թվոց 20.10,11

Իր արարքի արդյունքում Մովսեսը զրկվեց ամբողջ ազգը Խոստման երկիր տանելու արտոնությունից: Տարիներ անց սաղմոսերգուն գրեց հետևյալը. «Եվ բարկացրին նրան Մերիբայի ջրերի վրա, և Մովսեսին չար եղավ նրանց պատճառով: Որովհետև դառնացրին նրա հոգին, և նա մեղանչեց իր շրթունքներով» (Սաղմ. 106.32,33):

Նրանց չար վարքը բարկացրեց Մովսեսին, և նա Աստծո Խոսքին հակառակ վարվեց: Ես գրել եմ իմ Աստվածաշնչում՝ այս խոսքի կողքին. «Մենք չենք կարող արդարացնել մեր սխալ վարքն ուրիշների սխալ վարքով»: Սա դժվար դաս է, որը յուրաքանչյուրս պետք է սովորի:

Ռուբենի հոր վարքն իր մոր հանդեպ պատվավոր չէր, սակայն դա չէր արդարացնում Ռուբենի անպատիվ վերաբերմունքը և վարքն իր հոր հանդեպ: Աստված պատվիրում է մեզ պատվել մեր հորը և մորը՝ անկախ այն բանից, թե որքան լավը կամ վատն ենք համարում նրանց, կամ որքան պատվավոր կամ անպատիվ է նրանց վարքը:

Կրկին, որպես կողմնակի նշում, թույլ տվեք հիշեցնել այն կարևոր սկզբունքը, որը սովորեցինք նախորդ գլխում: Մենք մշտապես պետք է պատվենք և հպատակվենք իշխանությանը, ինչպես նաև պետք է հնազանդվենք իշխանությանը: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է հնազանդությանը, մենք չպետք է հնազանդվենք

իշխանությանը, եթե այն պատվիրում է մեզ Աստծո Խոսքին հակառակ վարվել: Օրինակ, եթե ծնողը պատվիրի երեխային ստել իր ուսուցչին, երեխան կարող է հարգալից կերպով ասել. «Մայրիկ, Հայրիկ, ես հարգում և պատվում եմ ձեզ, բայց չեմ կարող ստել, որովհետև դա մեղք է Աստծո դեմ»: Կամ, որպես ավելի խիստ օրինակ, եթե հայրը սեռական ոտնձգություն է կատարում իր երեխայի՝ որդու կամ դստեր հանդեպ, երեխան պետք է օգնություն փնտրի իշխանություն ունեցող այլ մարդկանցից: Երեխան չի անարգում իր հորը, երբ օգնություն է փնտրում թե՛ իր, թե՛ իր ծնողի համար:

Կրկնակի վարձատրություն

Կրկին կարդանք այս գլխի սկզբում գտնվող հատվածը. «Պատվի՛ր քո հորը և մորը. սա է առաջին պատվիրանը խոստումով, որ քեզ լավ լինի և երկար ապրես երկրի վրա» (Եփես. 6.2,3):

Պատվի վարձատրությունը կրկնակի է, և այն հստակ նշված է այս խոսքում: Առաջինը՝ ձեր կյանքում ամեն ինչ լավ կլինի: Դուք հաջողություն կունենաք կյանքում՝ խաղաղության, ուրախության, սիրո և առողջության հետ: Դուք լիարժեք կյանք կվայելեք: Երկրորդը՝ դուք խոստում ունեք, որ վաղաժամ չեք մահանա՝ հիվանդությունից, ավտովթարից կամ այլ անսպասելի դժբախտ պատահարից:

Միգուցե մտածեք. *«Բայց ես ճանաչում էի այնպիսի մարդու, ով պատվում էր իր ծնողներին, սակայն վաղաժամ մահացավ»:* Հնարավոր է, որ այդպես լինի: Դուք կարող եք հարցնել. «Իսկ ինչո՞ւ այդ խոստումը չգործեց նրանց կյանքում»: Պարզ ասած, Աստծո խոստումներն ինքնաշխատ չեն. դրանք անհրաժեշտ է հավատքով ընդունել: Միգուցե այս պնդումը զարմացնի ձեզ, բայց թույլ տվեք ցույց տալ այս ճշմարտությունը մի աստվածաշնչյան օրինակով:

Աստված խոստացավ Աբրահամին, որ իր որդի Իսահակի միջոցով գալու էր խոստացված Սերունդը: Աստծուց տրված հստակ խոսքը հետևյալն էր. «Ես Իմ ուխտը կհաստատեմ նրա հետ՝ հավիտենական ուխտ նրանից հետո նրա սերնդի համար» (Ծնն. 17.19): Որպես հաստատություն, մենք կարդում ենք. «Քո սերունդները կկոչվեն և կհամարվեն Իսահակի տոհմի միջոցով» (Հռոմ. 9.7, AMPC):

Ո՞վ կին ընտրեց Իսահակի համար: Պատասխանն է՝ Աստված: Հիշեք, որ Աբրահամի ծառան գնաց՝ Աբրահամի ազգականներից Իսահակին կին փնտրելու: Տեղ հասնելուն պես նա աղոթեց.

«Ով Տե՛ր, իմ տիրոջ Աբրահամի Աստվա՛ծ, հանդիպեցրո՛ւ իմ առջև այսօր և իմ տեր Աբրահամին բարերարությո՛ւն արա: Ահա ես ջրի աղբյուրի մոտ կկանգնեմ, և այս քաղաքի մարդկանց աղջիկները դուրս են գալիս ջուր հանելու: Եվ լինի՝ այն աղջիկը, որին որ ես ասեմ՝ սափորդ ցածացրո՛ւ, որ խմեմ, և նա ասի՝ խմի՛ր, և քո ուղտերին էլ կխմեցնեմ, նա լինի Քո ծառա Իսահակի համար *սահմանածդ»* (Ծնն. 24.12-14, շեղագիրը հեղինակինն է):

Իսկապես որ, այս աղոթքը շատ հստակ էր. պատահական զուգադիպությունը գրեթե անհավանական էր: Ուղտերն ահռելի քանակությամբ ջուր են խմում, և շատ քիչ անձանոթներ ողորմածաբար այդքան ջուր կհանեին ջրհորից, եթե Աստված չդրդեր նրանց: Աբրահամի ծառան պետք է վստահ լիներ. այնպես որ, նա հստակ և բարդ խնդրանք ներկայացրեց: Նույնպես ուշադրություն դարձրեք, նա ասաց, որ այդ առաջադրանքը կատարողը պետք է *սահմանված* լիներ, այսինքն՝ լիներ այն կինը, որին Աստված ընտրել էր Իսահակի համար:

Մինչև որ նա ավարտեց իր խնդրանքը, Ռեբեկան, ով Աբրահամի ազգականների դուստրն էր, եկավ՝ սափորն ուսին: Աբրահամի ծառան շտապելով մոտեցավ և խնդրեց նրան. «Սափորիցդ ինձ մի քիչ ջո՛ւր խմեցրու» (խոսք 17): Ուշադրություն դարձրեք, որ նա ոչինչ չասաց ուղտերի մասին: Նա խնդրեց նրան ճիշտ այնպես, ինչպես ասել էր իր աղոթքի մեջ: Աղջիկն ուրախությամբ համաձայնեց և ջուր տվեց նրան: Այժմ կարդացեք, թե ինչ կատարվեց դրանից հետո. «Ուղտերիդ էլ ջուր քաշեմ, մինչև որ ամենը խմեն, վերջացնեն» (խոսք 19):

Կատարվեց այն, ինչ խնդրել էր Աբրահամի ծառան: Նա զարմացավ և ուրախությամբ համակվեց: Նա հիացած էր այն պատճառով, թե որքան արագ պատասխանվեց իր աղոթքը:

Այնուամենայնիվ, նրա գործը դեռ ավարտված չէր: Անհրաժեշտ էր հատել վերջին կամուրջը դեպի Իսահակի ընտրյալ հարսնացուն, որի ընտրությունն Աստված հաստատել էր: Արդյո՞ք նրա ընտանիքը թույլ կտար նրան գնալ մի մարդու հետ, ում իրենք չէին ճանաչում, և ընդմիշտ տարվել մի երկիր, որը ծանոթ չէր իրենց:

Հենց որ Աբրահամի ծառան ամեն ինչ պատմեց Ռեբեկայի ընտանիքին, այդ տան տղամարդիկ պատասխանեցին. «Այս բանը Տիրոջից է դուրս եկել. մենք քեզ վատ կամ լավ չենք կարող ասել» (խոսք 50): Հաջորդ օրը Ռեբեկայի ընտանիքը թույլ տվեց նրան գնալ: Աբ-

րահամի ծառան բերեց նրան Իսահակի մոտ, և նրանք ամուսնացան:

Ահա այս պատմության զարմանալի կողմը: Աստված հրաշքով ընտրեց այդ կնոջն Իսահակի համար: Այնուամենայնիվ, հենց որ նրանք ամուսնացան, պարզվեց, որ Ռեբեկան ամուլ էր. նա չէր կարողանում երեխաներ ունենալ: Ինչ: Ինչո՞ւ Աստված ամուլ կին ընտրեց Իսահակի համար, եթե Նա խոստացել էր, որ Սերունդը գալու էր Իսահակի միջոցով: Պատասխանն այն փաստն է, որ Աստծո խոստումներն ինքնաբերաբար չեն կատարվում. դրանք պետք է հավատքով ստացվեն և ընդունվեն: Գրված է. «Եվ Իսահակն աղաչեց Տիրոջն իր կնոջ համար, որ ամուլ էր, և Տերը լսեց նրա աղաչանքը, և նրա կինը՝ Ռեբեկան, հղացավ» (Ծննդ. 25.21):

«Ընդլայնված թարգմանության Դասական հրատարակության» մեջ գրված է. «Իսահակը շատ աղոթեց Տիրոջն իր կնոջ համար, քանի որ նա չէր կարողանում երեխաներ ունենալ, և Տերը շնորհեց նրան աղոթքի պատասխանը, և Ռեբեկան՝ նրա կինը, հղացավ»: Ինչ էր նա աղոթում: Նա աղաղակում էր. «Աստվա՛ծ, Դու խոստացար, որ ազգեր և թագավորներ են սերվելու ինձնից, և Սերունդը գալու է իմ սերունդներից: Ինչպե՞ս դա կարող է լինել, եթե իմ կինը չի կարողանում երեխաներ ունենալ: Աղոթո՛ւմ եմ, ո՛վ Տեր, բացի՛ր Ռեբեկայի արգանդը, որպեսզի խոստացված Սերունդը գա՝ Քո խոստման համաձայն»:

Հոգևոր օրենք

Գոյություն ունի հոգևոր օրենք, որը պետք է իմանանք և հասկանանք: Սուրբ գիրքը հայտարարում է. «Ո՛վ Տեր, Քո խոսքը հավիտյան հաստատ է Երկնքում» (Սաղմ. 119.89):

Ուշադրություն դարձրեք, որ գրված *չէ*. «Քո խոսքը հաստատ է Երկնքում և երկրի վրա»: Ո՛չ, այստեղ հստակ նշված է, որ Նրա խոսքը հավիտյան հաստատ է Երկնքում. ոչինչ գրված չէ երկրի մասին: Այդ դեպքում, ինչպե՞ս է Նրա խոսքը հաստատվում երկրի վրա: Շարունակելով ուսումնասիրել Աստվածաշունչը՝ տեսնում ենք հետևյալը. «Երկու և երեք վկաների *բերանից ամեն բան (կամ՝ խոսք) կհաստատվի»* (Բ Կորնթ. 13.1, շեղագիրը հեղինակինն է): Ուշադրություն դարձրեք, որ խոսքերը հաստատվում են երկուսի կամ երեքի *բերանից:* Իսկ այժմ տեսեք, թե ինչ է Աստված ասում. «Այնպես էլ պիտի լինի Իմ *բերանից* դուրս եկած խոս-

քը. այն պիտի *պարապ եկ չդառնա Ինձ մոտ*, այլ կատարի Իմ ուզածը և հաջողվի նրանում, ինչի համար որ Ես նրան ուղարկեցի» (Եսայի 55.11, շեղագիրը հեղինակինն է):

Ինչպե՞ս է Նրա խոսքը վերադառնում Նրա մոտ: Պատասխանը պարզ է՝ մեր բերանից դուրս գալով: Աստված առաջինն է. մենք երկրորդն ենք: Երբ մեր բերանով խոսում ենք Նրա խոսքը, որն արդեն դուրս է եկել Նրա բերանից, մենք հաստատում ենք Նրա խոսքն այս երկրի վրա: Դուք հասկանո՞ւմ եք այս զարմանալի ճշմարտությունը: Աստված խոստացավ, որ Սերունդը գալու էր Իսահակի միջոցով, բայց անհրաժեշտ էր, որ Իսահակը խոսեր այդ խոստումն իր բերանով, որպեսզի հաստատեր այն երկրի վրա՝ և՛ իր կյանքում, և՛ իր ընտանիքում:

Աստված ասում է, որ երկար կյանք է խոստանում մեզ, եթե պատվենք մեր ծնողներին: Եթե *հավատքով* դավանենք այս խոստումը, մենք կհաստատենք այն, ինչ Նա արդեն խոսել է մեր կյանքում: Մենք երկրորդ բերանն ենք, որը հաստատում է այս խոստումն այստեղ՝ երկրի վրա: Ես այնքա՛ն ոգևորված եմ այս խոսքերը գրելու ընթացքում, որ հազիվ եմ զսպում ինձ: Սա նշանակում է, որ մենք կարող ենք հակառակվել հիվանդությանը՝ հռչակելով Աստծո ուխտի խոստումը երկար կյանք ունենալու մասին, և այն ստիպված կլինի հեռանալ: Մենք կարող ենք վստահաբար անվտանգություն հռչակել մեր ճանապարհորդությունների ժամանակ, տանը կամ ցանկացած վայրում, որտեղ վտանգ կա: Մենք կարող ենք վստահաբար ասել. «Ես չեմ վախենա բյուրավոր ժողովրդից, որ չորս կողմովս պատել են» (Սաղմ. 3.6), որովհետև «Աստված երկար օրերով կկշտացնի ինձ և Իր փրկությունը ցույց կտա ինձ» (կարդացե՛ք Սաղմ. 91.16):

Մենք նույնպես կարող ենք դավանել խոստումը բարեհաջող կյանքի մասին: Եթե բախվել ենք դժվարության, դժգույն և անհույս թվացող իրավիճակների, կարող ենք համարձակ ասել. «Ես պատվել եմ իմ մորը և հորը: Ինձ է պատկանում Աստծո ուխտի խոստումը՝ այն, որ իմ կյանքը բարեհաջո՛ղ է լինելու: Հիսուսի անունով, ես հրամայո՛ւմ եմ պակասությանը, հակառակություններին, ընկճվածությանը, թյուր հանգամանքներին (և այլ բաներին) հեռանալ և նահանջել»:

Մենք կարող ենք նույն կերպով կիրառել Աստծո ուխտի ցանկացած խոստում: Միակ տարբերությունը նրանց միջև, ովքեր

առատ կյանք են վայելում, և նրանց, ովքեր պակասություն են կրում, այն է, թե ինչ ենք խոսել մեր բերանով: Աստված ասում է. «Ես կանչում եմ երկինքն ու երկիրը՝ այսօր ձեր դեմ վկայելու համար, որ դրել եմ ձեր առջև կյանքը և մահը, օրհնությունները և անեծքները. ուրեմն, ընտրի՛ր կյանքը, որպեսզի դու և քո սերունդներն ապրեք» (Երկր. Օր. 30.19, AMPC): Ուշադրություն դարձրեք, որ մենք պետք է ընտրենք կյանքը: Ինչո՞ւ: Քանի որ, եթե չընտրենք կյանքը (ուխտի օրհնությունները), մահն արդեն իսկ գործում է այս աշխարհում: Այդ դեպքում, ինչպե՞ս ենք մենք ընտրում կյանքը: Կրկին, գրված է. «Մահն ու կյանքը լեզվի իշխանության մեջ են, և ովքեր թույլ են տալիս իրենց գործածել այն, կուտեն դրա պտուղը» (Առակ. 18.21, AMPC):

Մենք կարող ենք համաձայնել կա՛մ Աստծո ուխտի խոստումների, կա՛մ սատանայի անեծքների՝ պակասության, հիվանդության և մահվան հետ: Սա այնքան պարզ է, որ շատերը չեն հասկանում այս ճշմարտությունը: Այս պատճառով է, որ Հակոբոսը գրում է.

> «Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենս: Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է, որ կարող է իր ամբողջ մարմինը սանձահարել: Տե՛ս, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ հնազանդվեն մեզ, և նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք... Այնպես էլ լեզուն՝ մի փոքր անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում: Տե՛ս, մի փոքր կրակը որքա՜ն բան է վառում»:
>
> – Հակոբ. 3.2,3,5

Մի փոքր կայծը կարող է մի ամբողջ անտառ վառել: Այսինքն, վախով ասված բառերը կարող են կործանում բերել ձեր կյանքում: Բարի լուրն այն է, որ Աստծո ուխտի խոստումները պատկանում են մեզ, և երբ ընդունենք դրանք մեր սրտում, մեր բերանը կխոսի դրանց համապատասխան: Հակոբոսը շարունակում է՝ ասելով, որ լեզուն նման է ջրի աղբյուրի, որը չի կարող միաժամանակ քաղցր և դառը ջուր բխեցնել: Գլխավորը ոչ թե աղբյուրն է, այլ՝ հողը, որից այդ աղբյուրի ջուրը բխում է: Այսինքն, ոչ թե լեզուն, այլ ակունքը՝ այն, թե ինչ կա մեր սրտում:

Որովհետև Հիսուսն ասում է. «Սրտի ավելացածից խոսում է նրա բերանը» (Ղուկ. 6.45):

Աստված ասում է, որ դուք բարեհաջող և երկար կյանք կունենաք, եթե պատվեք ձեր ծնողներին: Մինչ ընթերցում եք այս խոսքերը, Սուրբ Հոգին սերմում է այս ճշմարտությունը ձեր սրտում, և դուք կսկսեք խոսել դրան համապատասխան: Աստծո հանդեպ ձեր հավատքը մի՛ կառուցեք այլ մարդկանց փորձառության վրա. կառուցե՛ք այն Աստծո անաղարտ Խոսքի վրա: Ես գիտեմ, որ վաղաժամ չեմ մահանալու. այս խոստումը խորապես արմատացած է իմ սրտում, և Աստված հսկում է Իր Խոսքը՝ այն կատարելու համար:

Պատվի կանչ՝ կնոջ համար

Աստծո Խոսքում գրված է կնոջ մասին. «Թող կինն անպայման հարգի իր ամուսնուն և պատկառի նրանից [ուշադիր լինի նրա հանդեպ, հաշվի առնի նրա կարծիքը, պատվի նրան, գերադասի նրան, խորապես ակնածի նրանից և արժևորի նրան և հենվի նրա վրա, գովի նրան, նաև անչափ սիրի և հիանա նրանով» (Եփես. 5.33, AMPC):

Ինչպիսի՜ ձևակերպում: Մենք տեսնում ենք, որ Պողոսը մանրակրկիտ ներկայացնում է, թե ինչպես կինը պետք է պատվի իր ամուսնուն (ավելի ուշ այս գրքում կխոսեմ նաև այն մասին, որ ամուսինները պետք է պատվեն իրենց կանանց):

Ամուսինն ընտանիքի գլուխն է: Այս գաղափարը չի ծնվել կանանց ստորադասությանը հավատացող տղամարդկանց մտքերում. սա Աստծո գաղափարն է: Անկարելի է ճշմարիտ խաղաղություն և օրհնություն ունենալ այնպիսի ընտանիքում, որտեղ ամուսինը հարգված չէ որպես գլուխ: Սակայն եթե աստվածապաշտ կինն արժևորում է ամուսնուն՝ որպես ընտանիքի առաջնորդի, նա վարձատրություն կստանա իր պատվի համար: Այն կարող է գալ անմիջապես իր ամուսնու միջոցով, բայց երբեմն՝ այլ ճանապարհներով:

Վերջերս ծառայում էի Եվրոպայի մեծ եկեղեցիներից մեկում: Մի կին ասաց ինձ.

- Ջո՛ն, ձեր շնորհիվ է, որ ես այս եկեղեցում եմ:

Նրա խոսքերը մի փոքր շփոթեցրին ինձ: Նա պատմեց իր պատմությունը: Տարիներ առաջ նրանց եկեղեցու առաջնորդական թիմը փոխվեց: Նա և ամուսինը երկար տարածություն էին անցնում այդ եկեղեցի հաճախելու համար: Այնպես որ, թվում էր՝

ժամանակն էր իրենց տանը ավելի մոտ գտնվող այլ եկեղեցի որոնել: Մի քանի եկեղեցի այցելելուց հետո այդ կնոջը մի եկեղեցի դուր եկավ, որը մոտ էր իրենց բնակավայրին: Այնուամենայնիվ, նրա ամուսինը զգում էր, որ իրենք չպետք է միանային այդ եկեղեցուն, այլ պետք է վերադառնային նախկին եկեղեցին: Կինը շարունակում էր դժկամորեն հաճախել իրենց նախկին եկեղեցին, բայց նաև հաճախում էր այդ նոր եկեղեցու կիրակնօրյա երեկոյան հավաքույթներին:

Նա ավելի էր կապվում այդ նոր եկեղեցու հետ և ներգրավվում էր դրանում: Ի վերջո, այդ եկեղեցու առաջնորդներն ասացին նրան.

- Ե՞րբ ես հստակ ասելու ամուսնուդ, որ դու պետք է հնազանդվես Աստծո առաջնորդությանը և հաճախես մեր եկեղեցի:

Այդ տեսակի առաջնորդությունը զարհուրեցնում է ինձ:

Նրանց խոսքերն ազդեցին այդ կնոջ վրա: Նա ասաց իր ամուսնուն, որ որոշել է փոխել եկեղեցին: Դրանից հետո նա հանդիպեց իր նախկին եկեղեցու հովվին և տեղեկացրեց, որ հեռանալու է եկեղեցուց, թեև ամուսինը շարունակելու է հաճախել այդ եկեղեցի: Եկեղեցական հավաքույթի նախորդ երեկոյան նրա մոտ հայտնվեց իմ՝ *«Ծածկոցի տակ»* գիրքը, որում ես բացահայտում եմ Աստծո կողմից սահմանված իշխանության կառուցվածքը:

- Ջո՛ն, - ասաց նա, - ես ամբողջ գիշեր արթուն մնացի և կարդացի այդ գիրքը: Ամբողջ ընթացքում ես լաց եմ եղել՝ հասկանալով իմ ապստամբությունն Աստծո և ամուսնուս դեմ: Հաջորդ օրը ես ապաշխարեցի թե՛ իմ ամուսնու, թե՛ իմ հովվի առջև:

Նա հոժարաբար վերադարձավ իր նախկին եկեղեցին: Մի քանի ամիս անց այդ եկեղեցու հովվի կինը ծանոթացրեց նրան իրենց եկեղեցու կանանցից մեկի հետ: Պարզվեց, որ երկուսն էլ նմանատիպ տեսլական ունեին մի գործարար նախաձեռնության վերաբերյալ, և նրանք սկսեցին այդ գործը: Այսօր նրանք շատ հաջողակ են և իրենց գործից զգալի ֆինանսական միջոցներ են ներդնում Աստծո թագավորության մեջ:

- Ջո՛ն, - ասաց նա, - եթե մնայի այն եկեղեցում, ի վերջո լքելու էի ամուսնուս և այդպես էլ չէի մտնելու ձեռնարկություն սկսելու իմ կոչման մեջ:

Նա շարունակեց՝ ասելով, որ այն եկեղեցին, որի առաջնորդները համոզում էին իրեն անարգել իր ամուսնու առաջնորդությունը, այլևս գոյություն չունի: Նա պատվեց իր ամուսնուն, ինչի արդյուն-

քում ստացավ և՛ պաշտպանություն, և՛ վարձատրություն:

Չփրկված ամուսիններ ունեցող կանայք

Պետրոս առաքյալը տալիս է գրեթե նույն ցուցումը, ինչ Պողոսը.

> «Ամուսնացած կանա՛յք, հնազա՛նդ եղեք ձեր ամուսիններին [հպատակեցրե՛ք ձեզ՝ որպես երկրորդական և կախյալ նրանց հանդեպ և հարմարվե՛ք նրանց], որպեսզի նույնիսկ եթե նրանցից մի քանիսը չեն հնազանդվում [Աստծո] Խոսքին, նրանք շահվեն՝ ոչ թե խոսակցություններով, այլ իրենց կանանց [աստվածահաճո] կյանքով, երբ նրանք տեսնեն այն սուրբ և պարկեշտ ձևը, որով դուք վարվում եք՝ ձեր պատկառանքի հետ միասին [ձեր ամուսնու հանդեպ. դուք պետք է զգաք նրա հանդեպ այն, ինչ ենթադրում է ակնածանքը. հարգեք նրան, ապավինեք նրան և ակնածեք նրանից. պատվեք, արժևորեք, գնահատեք և մարդկային իմաստով՝ պաշտեք նրան, այսինքն՝ հիանաք ձեր ամուսնով, գովեք, նվիրված լինեք, խորապես սիրեք և վայելեք ձեր ամուսնուն]»:
>
> – Ա Պետր. 3.1,2, AMPC

Պետրոսը ցույց է տալիս, որ նույնիսկ եթե հավատացյալ կնոջ ամուսինը փրկված չէ, կնոջ կողմից պատիվ ցուցաբերելն է, որ շահելու է նրա ամուսնուն, ոչ թե նրան քարոզելը կամ սովորեցնելը: Ես ճանաչում եմ տղամարդկանց, որոնք իրենց կանանց այսպիսի վերաբերմունքով շահվել են Տիրոջ համար: Հրաշալի օրինակ է Սմիթ Վիգլսվորթը, որն ամենաակնառու քրիստոնյա ծառայողներից էր Եվրոպայում 1900-ական թվականների սկզբում:

Վիգլսվորթը ջրմուղագործ էր, և տարիների ընթացքում նա լրջորեն անտարբեր էր դարձել Աստծո հանդեպ: Չէր ցանկանում որևէ կապ ունենալ քրիստոնեության հետ: Ի հակադրություն, Պոլին՝ նրա կինը, շատ նվիրված հավատացյալ էր, և նրա նախանձավորությունն Աստծո հանդեպ շարունակ ավելանում էր: Պոլիի նվիրումն առավել ակնհայտ էր դարձնում Վիգլսվորթի հոգևոր թմրությունը, և եկավ մի պահ, երբ կնոջ ներկայությունը վրդովեցնում էր նրան:

Նա խստորեն հալածում էր կնոջը՝ հավատքի պատճառով, և ուղղակիորեն պատվիրեց նրան եկեղեցի չհաճախել: Կինը չէր

հետևում ամուսնու պատվերին, քանի որ դա հակառակ էր Աստծո կամքին (կրկին, ինչպես արդեն նշեցինք, մենք պետք է հնազանդվենք իշխանությանը, քանի դեռ այն չի պատվիրում մեզ խախտել Աստծո գրված Խոսքը):

Պոլին սովորաբար ընթրիք էր պատրաստում ամուսնու համար, իսկ հետո երեկոյան եկեղեցական հավաքույթի էր գնում: Մի երեկո նա սովորականից ուշ վերադարձավ եկեղեցուց: Եվ երբ տուն մտավ, Սմիթը պահանջեց.

- Ես եմ այս տան տերը, և ես չեմ հանդուրժելու, որ դու այսքան ուշ վերադառնաս:

Պոլին հանդարտորեն պատասխանեց.

- Ես գիտեմ, որ դու իմ ամուսինն ես, բայց իմ Տերը Քրիստոսն է:

Խստորեն վրդովված և բարկացած՝ Վիգլսվորթը բացեց տան ետնամուտքը և ուժով դուրս հրեց կնոջը տնից՝ փակելով դուռը ետևից: Առավոտյան արթնանալով՝ Սմիթը բացեց դուռը՝ օրաթերթը վերցնելու համար, և կինն ընկավ տան շեմին (նա ամբողջ գիշեր քնել էր՝ դռանը հենված): Նա անմիջապես վեր կացավ և ուրախությամբ ասաց.

- Սմի՛թ, ի՞նչ ես ցանկանում նախաճաշին, - և սկսեց նախաճաշ պատրաստել նրա համար:

Ինչպես հետագայում պարզվեց, Աստծուն հնազանդվելու և ամուսնուն պատվելու Պոլիի վճռականությունը խորը ազդեցություն թողեց Վիգլսվորթի կյանքում: Նա մեծ հանդիմանություն զգաց և լիովին նվիրվեց Հիսուս Քրիստոսին ծառայելուն: Նրա աշխատանքը մինչև օրս հարգանքով է հիշատակվում և ուսումնասիրվում: Շատերը փրկվեցին, բժշկվեցին և նույնիսկ մեռելներից հարություն առան՝ նրա ծառայության միջոցով:

Պոլիի վարձատրությունը Քրիստոսի ատյանի առջև անասելի կլինի՝ այն հարյուր հազարավոր մարդկանց պատճառով, որոնք կրել են նրա ամուսնու ծառայության ազդեցությունը: Նրա վարձատրությունը ոչ միայն փոխված ամուսինն էր, այլև մեծ հունձքը գալիք կյանքում:

Դուք սկսում եք հասկանալ. մեզ հանձնարարված է պատիվ ցուցաբերել՝ ոչ միայն հանուն այն մարդկանց, ում պատվում ենք, այլև հանուն Աստծո թագավորության և հանուն մեզ: Մենք վնաս ենք կրում, երբ պահում ենք պատիվն այն մարդկանցից, որոնց այն պետք է տրվի:

MessengerX

Ձեր հավելվածը ամենօրյա աշակերտության համար

Լիովին անվճար

Պարզապես ներբեռնե՛ք ձեր շարժական սարքի վրա և օգտագործե՛ք:
Կամ օգտագործե՛ք վեբ-տարբերակը՝ հետևյալ հասցեով.

MessengerX.com

115+ լեզուներ, որոնց թիվն ավելանում է

- Դիտեք և ներբեռնեք նյութեր ավելի քան 115 լեզուներով:
- Կիսվեք նյութերով ձեր ընկերների հետ կամ ուսումնական խումբ սկսեք:
- Մենք մշտապես ավելացնում ենք նոր նյութեր:

Դիտեք: Կարդացեք: Լսեք:

Հետազոտեք նյութերի ընդարձակ դարան, որն ընդգրկում է դասընթացներ, էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր և ավելին, որոնք կարող եք դիտել, կարդալ և լսել:



Աճ ամենակարևոր բնագավառներում

Հետազոտեք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխհարաբերությունները, ձեր կյանքի նպատակը, ազատագրում պոռնոգրաֆիայից, ձեր հավատքը կառուցելը, Աստծո ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և ավելին:

Ձեր աճի ուղին

MessengerX-ի նպատակն է օգնել ձեզ, որ անեք հաջորդ քայլը ձեր կյանքում: Մենք ստեղծել ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք կօգնեն ձեզ մնալ այդ ուղու վրա:

Ավելի շատ հնարավորություններ, որոնք ձեզ դուր կգան

- Պարզ և հեշտ գործիքներ, որոնք կօգնեն ձեզ կիսվել այս նյութերով և նույնիսկ ուսումնական խմբեր սկսել:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռուստացույցերով դիտելու համար:
- Պահպանեք ձեր առաջադիմությունը ձեր բոլոր սարքերի վրա: Պահպանեք ձեր նախընտրելի նյութերը ձեր գրադարանում՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեք նյութերը ձեր սարքի վրա՝ անցանց դիտման համար:
- Խելացի որոնում և զտում՝ գտնելու համար հենց այն, ինչ փնտրում եք:
- Ինքնաշխատ կերպով նվագարկեք աուդիո գրքերի, աուդիո Աստվածաշնչերի և նույնիսկ երկրպագության երգերի հաջորդական գլուխներ՝ ձեր լեզվով:

MessengerX - Այնքան հեշտ, որքան 1-2-3-ը



1 Ներբեռնեք **MessengerX** հավելվածը «Apple Store»-ից և «Google Play»-ից

2 Ստեղծեք հաշիվ և օգտվեք հավելվածից ձեր լեզվով

3 Որոնեք, կարդացեք, դիտեք, լսեք և ներբեռնեք ձեր նախընտրելի նյութերը և կիսվեք դրանցով

Աշակերտ դարձեք և աշակերտեք

Լինելով **MessengerX**-ի մաս, դուք կօգնեք մեզ տրամադրել այս թարգմանված նյութերն աշխարհով մեկ գտնվող մարդկանց:

Որովհետև յուրաքանչյուրն արժանի է իմանալու:

MessengerX.com

Download on the App Store

GET IT ON Google Play

Available on all browsers

10

Պատվել եկեղեցական առաջնորդներին

Ինչպես արդեն նշեցինք, Աստծո թագավորությունը հենց թագավորություն է: Այդ իսկ պատճառով, եկեղեցում պետք է լինի կարգված իշխանություն և հոգևոր աստիճանների հաջորդականություն: Պատվելով եկեղեցական առաջնորդին՝ մենք պատվում ենք Հիսուսին, և պատվելով Հիսուսին՝ մենք պատվում ենք Հայր Աստծուն (տե՛ս Մատթ. 10.40,41): Մեր վարքը որևէ առաջնորդի հանդեպ, խոսքը և նույնիսկ մտքերը նրա մասին ցույց են տալիս, թե ինչպես ենք վերաբերվում Նրան, Ով ուղարկել է այդ առաջնորդին:

Աստված նաև ասում է. «Նրանց, ովքեր պատվում են Ինձ, Ես կպատվեմ, և նրանք, ովքեր արհամարհում են Ինձ, ցածր կգնահատվեն» (Ա Թագ. 2.30, NKJV): Մեր վերաբերմունքն Աստծո հանդեպ արտացոլվում է այն վարքով, որը ցուցաբերում ենք եկեղեցական առաջնորդների հանդեպ: Դուք չեք կարող ասել, որ Աստծո երկյուղն ունեք, եթե հարգանք չունեք եկեղեցական առաջնորդների հանդեպ:

«Ես վախենում եմ Աստծուց, ոչ թե մարդուց»

Երբեք չեմ մոռանա մի դեպք, որը տեղի ունեցավ իմ ծառայություններից մեկի ժամանակ, որը վառ կերպով պատկերում

է այս ճշմարտությունը: Այն բանից հետո, երբ սովորեցրի վիրավորանքից ազատ լինելու կարևորության մասին, շատերն արձագանքեցին իմ կանչին և առաջ եկան՝ աղոթքի համար: Այդ մեծաթիվ խմբում մի երիտասարդ կար, որը, ինչպես ես զգացի, մեծ վիրավորանք էր կրում իր ներսում: Ես խնդրեցի նրան բեմ բարձրանալ, որպեսզի շարունակեի ծառայել նրան: Երբ նա բարձրացավ, ևս մեկ մարդ դուրս եկավ բազմությունից և բեմ բարձրացավ:

Այդ երկրորդ մարդը կապած երկար մազեր ուներ. նրա հագին ջինս էր, կարճաթև վերնաշապիկ, սև կաշվե բաճկոն, և նրա ձեռքերն ամբողջությամբ պատված էին դաջվածքներով: Նրա հայացքը բարկացկոտ էր, և ակնհայտ էր, որ նա վրդովված էր: Ես զգացի, որ այդ երիտասարդն անմիջապես լարվեց և այլևս չէր կարող ոչինչ ընդունել:

Ես դիմեցի այդ մարդուն՝ քաղաքավարիորեն խնդրելով իջնել բեմից:

Նա հառեց աչքերն ինձ վրա և կոպտորեն ասաց.

- Ո՛չ:

Հաղթահարելով իմ շփոթմունքն այն պատճառով, որ նա բացահայտ անտեսեց խնդրանքս, ես հավաքեցի մտքերս և ասացի.

- Պարո՛ն, ես չեմ շարունակի, մինչև չիջնեք բեմից:

- Ո՛չ, - կրկին ասաց նա:

Այդ պահին ես մի փոքր բարկացա. մտածում էի, թե ինչո՞ւ կարգուկանոնի ծառայողները չէին օգնում ինձ և բեմից չէին իջեցնում այդ մարդուն: Հանկարծ հասկացա, որ բոլորը սարսափում էին նրանից: Այժմ, լիովին գիտակցելով, որ իմ առջև իշխանության հանդեպ հարգանք չունեցող ապստամբ էր, ես պետք է հաստատուն լինեի, մնայի իմ իշխանական դիրքում և վստահեի Աստծուն: Հասկանալով, որ չէի կարող ծառայել այդ երիտասարդին նման պայմաններում, ես հաստատակամորեն կրկնեցի.

- Պարո՛ն, այժմ հրամայում եմ ձեզ իջնել այս բեմից:

Նա կրկին հառեց աչքերն ինձ վրա և ասաց.

- Ո՛չ: - Անհարմարավետ դադարից հետո նա ավելացրեց. - Ես վախենում եմ Աստծուց, ոչ թե մարդուց:

Այդ մարդը չէր վախենում Աստծուց: Նա վախենում էր Աստծո այն պատկերից, որը հորինել էր իր մտքում և սրտում, որը երկնքի և երկրի ճշմարիտ Աստվածը չէր: Եթե նա ճշմարտապես Աստծո երկյուղն ունենար, կպատվեր ինձ՝ որպես Աստծո ծառայողի, և կինազանդվեր իմ խնդրանքին:

Ես տեղի չտվեցի. ներքուստ դիմեցի Սուրբ Հոգուն՝ օգնության համար: Հանկարծ, կարծես ինչ-որ մեկն ասեր ինձ, որ այդ մարդն այդ տղայի հայրն էր. ես պարզապես իմացա դա: Հարցրի նրան, և նա հաստատեց: Ես ասացի.

- Պարո՛ն, եթե ուզում եք, որ ձեր որդին օգնություն ստանա Աստծուց, դուք պետք է իջնեք բեմից: Եթե ոչ, դուք պատասխանատու կլինեք Աստծո բժշկարար զորությունը ձեր որդուց ետ պահելու համար:

Այդ խոսքերը կարծես խոցեցին նրա խստասրտությունը այն աստիճան, որ նա դժկամորեն իջավ բեմից՝ շարունակելով հառել հայացքն ինձ վրա: Նրա որդին կրկին բացվեց՝ Աստծուց ընդունելու համար, և Աստված զորավոր կերպով հպվեց նրան: Այն, ինչ Աստված արեց նրանում, զարմանալի էր: Նա փղձկաց և սկսեց լաց լինել:

Ծառայությունից հետո ես հանդիպեցի նրա հոր հետ այդ եկեղեցու հովվի գրասենյակում: Նա այդ քաղաքում գտնվող մոտոցիկլետավարների վատահամբավ խմբի անդամ էր: Նա կոպիտ էր և անհասանելի էր թվում, բայց ես չնահանջեցի: Թեև մեղմորեն էի խոսում նրա հետ, սակայն մեր խոսակցությունն այնքան լարված ընթացավ, որ մի պահ մտածեցի՝ միգուցե հարձակվի ինձ վրա:

Ես ասացի նրան, որ անկարելի է Աստծո երկյուղն ունենալ և հարգանքով չվերաբերվել Նրա ծառայողներին: Աստծո երկյուղն ունենալը նշանակում է հարգել Նրա կողմից կարգված իշխանությանը: Ես բացատրեցի, թե ինչու էր նա սխալ վարվում՝ հրաժարվելով կատարել բեմից իջնելու իմ խնդրանքը:

Ի վերջո, նա մի փոքր մեղմացավ: Նույնիսկ այդ ժամանակ չնահանջեցի. ես հաստատակամորեն շեշտադրում էի Աստծո Խոսքի ճշմարտությունը, և վերջապես նա չկարողացավ զսպել իրեն և լաց եղավ: Պարզվեց, որ նրա հայրը խորը վերքեր էր

հասցրել նրան, և նրա պատկերացումը կյանքի, իշխանության և Աստծո մասին ենթարկվել էին իր հոր դաժան վերաբերմունքի ազդեցությանը: Քանի որ նա չէր ներել հորը, մասամբ նույնպիսի վիրավորական ձևով էր վարվել իր որդու հանդեպ: Մինչև իմ հեռանալը, նա հանդարտորեն լալիս էր՝ փոքր երեխայի պես:

Հենց որ հասկացավ իր սխալը և ընդունեց այդ հովվի և իմ առաջնորդությունը՝ ներողություն խնդրելով մեզնից, նա կարողացավ առատորեն ընդունել Աստծուց: Մեր հանդիպումը հետաքրքրական էր այնքանով, որ, ի վերջո, նա սկսեց այնպես վերաբերվել ինձ, ասես ես նրա հերոսներից մեկը լինեի: Երբ ամեն ինչ ավարտվեց, այն մարդը, որը սկզբում թվում էր, թե ուզում է վնասել ինձ, մեծ համակրանքով լցվեց իմ հանդեպ:

Աննկատ անարգանք

Վերոբերյալ օրինակը ծայրահեղ դեպք էր. այնուամենայնիվ, խորապես արմատավորված այս վերաբերմունքը շատ ավելի տարածված է հավատացյալների միջև, քան գիտակցում ենք: Այդ մարդու անարգանքը բացահայտ էր: Նա ոչինչ չէր ծածկում և, ըստ էության, դա թույլ տվեց հեշտորեն օգնել նրան: Նրա վերաբերմունքն անթաքույց էր, սակայն շատերը, նույն վիճակում գտնվելով, այլ կերպ են արտահայտում իրենց անարգանքը: Վախենալով որպես անպարկեշտ կամ անկարգ պիտակվելուց՝ նրանք ձևանում են, թե միաբան են՝ գործով և խոսքով, սակայն ներսում անարգանք են կրում: Այդ անարգանքն արտահայտվում է շատ ավելի աննկատ:

Այն մարդիկ, որոնց ես նկատի ունեմ, պատվում են առաջնորդներին իրենց շուրթերով, բայց նրանց սրտերը հեռու են Աստծուց կարգված ծառայողներին պատվելուց: Նրանց վերաբերմունքն արտահայտվում է այն բանով, թե ինչպես են նրանք արձագանքում զոհաբերություններին, փոփոխություններին եկեղեցու ուղղվածության մեջ կամ առաջնորդների տարբեր խնդրանքներին: Հովիվը խնդրում է եկեղեցու անդամներին երկրպագության հատուկ երեկոյի հաճախել, և գալիս է ամբողջ եկեղեցու մեկ տասներորդը: Կամ նա խնդրում է եկեղեցու անդամներին մասնակցել ամիսը մեկ անգամ տեղի ունեցող ավետարանչական միջոցառ-

մանը, և գալիս է ընդամենը եկեղեցու մեկ քսաներորդը:

Ես հյուրընկալվում եմ շատ եկեղեցիներում, որոնք հազարավոր այցելուներ ունեն և երկուսից չորս կիրակնօրյա հավաքույթ են անցկացնում: Սովորաբար այդ չորս հավաքույթներից երեքի ժամանակ լսարանում ազատ տեղեր չեն լինում: Բայց երբ հովիվը միացյալ աղոթքի հավաքույթի է կանչում եկեղեցուն երկուշաբթի երեկոյան, հաճախ կարելի է միայն մի քանի հարյուր մարդու տեսնել: Ինչո՞ւ: Հովվի հանդեպ պատիվ չունենալու պատճառով:

Միգուցե մտածեք. *«Ջո՛ն, դա մի փոքր ծայրահեղ է»:* Թույլ տվեք ևս մեկ օրինակ բերել, որը ցույց կտա, որ իմ խոսքերը ծայրահեղ չեն: Պատկերացրեք, որ մի կիրակի հովիվը հայտարարում է եկեղեցու բոլոր անդամներին. «Այս ամիս մենք ամեն երկուշաբթի հատուկ երեկոյան աղոթքներ ենք անցկացնելու: Հաջորդ չորս երկուշաբթի օրերին մենք հավաքվելու ենք երեկոյան ժամը յոթից ութը՝ եկեղեցու դահլիճում»: Մինչ այդ պահը այդ հայտարարությունն այնքան էլ գրավիչ չէ եկեղեցու անդամների 80 տոկոսի համար, հատկապես այն պատճառով, որ դա խանգարելու է երկուշաբթի երեկոյան ֆուտբոլին:

Հովիվը շարունակում է. «Մեր հատուկ աղոթքների վերջին երեկոյի ավարտից հետո, մի հարուստ կին մեր քաղաքից, հինգ հարյուր հազար դոլարի չեկ է նվիրելու նրան, ով մասնակցել է աղոթքի բոլոր հավաքույթներին»:

Ձեր կարծիքով, որքա՞ն մարդ կմասնակցի այդ հավաքույթներին: Ես միայն պատկերացնում եմ, որ տեղերը բավական չէին լինի բոլոր այցելուների համար: Մարդիկ նախապես կգային՝ իրենց տեղ ապահովելու համար, վախենալով, որ միգուցե չկարողանան եկեղեցու դահլիճ մտնել:

Ինչպե՞ս դուք կարծագանքեիք: Մի՛ խաբեք ձեզ, քանի որ դրանով կթաքցնեք ձեր սրտի շարժառիթները:

Անկեղծորեն երկու հարց տվեք ձեզ: Առաջինը՝ դուք կհաճախեի՞ք այդ աղոթքի հավաքույթներին, եթե չլիներ հայտարարությունը խոստացված գումարի մասին: Երկրորդը՝ դուք կհաճախեի՞ք այդ հավաքույթներին, եթե ձեզ կես միլիոն դոլար խոստանային: Մտածե՛ք այդ մասին. դուք կկարողանայիք մարել ձեր տան և մեքենայի պարտքերը, և դեռ շատ գումար կմնար՝ այլ հետաքրքրությունների համար:

Եթե ձեր պատասխանն է «ոչ»՝ առաջին հարցին, և «այո»՝ երկրորդ հարցին, դուք հենց նոր բացահայտեցիք, թե որքանով եք արժևորում ձեր հովվի խոսքը: Հիշեք՝ պատվելը նշանակում է արժևորել:

Աստված ասում է. «Հնազանդվե՛ք նրանց, ովքեր առաջնորդում են ձեզ, որովհետև նրանք հսկում են ձեր անձերը» (Եբր. 13.17): Սա Աստծո ցուցումն է Իր ժողովրդին. մենք պետք է հնազանդվենք մեր եկեղեցական առաջնորդներին: Այնպես որ, եթե ձեր անկեղծ գնահատմամբ դուք բացահայտեցիք, որ կանեիք դա փողի համար, բայց չէիք անի միայն ձեր հովվի խնդրանքով, ո՞վ է ձեր տերը: Հիսուսն ասում է, որ կան միայն երկու տերեր, որոնց կարող եք հնազանդվել. կա՛մ Աստված, կա՛մ հարստությունը (տես Մատթ. 6.24):

Եկեք մի քանի խիստ հարց տանք: Դուք ժամանակի՞ն եք գալիս եկեղեցական ծառայություններին: Դուք հակառակությո՞ւն եք զգում, երբ ձեր հովիվը խնդրում է հատուկ զոհաբերություն տալ: Դուք շարունակ անտեսո՞ւմ եք եկեղեցուն կամ համայնքին օգնելու և ծառայելու ձեր առաջնորդի կանչը: Դուք արդարացումնե՞ր եք փնտրում՝ կիրակի երեկոյան նշանակված հատուկ ծառայությանը չմասնակցելու համար: Իսկ այժմ հարցրեք ձեզ. եթե այդ խնդրանքներից յուրաքանչյուրի համար ձեզ հինգ հարյուր հազար դոլար խոստանային, դուք ա՞յլ որոշում կկայացնեիք: Եթե այո, ի՞նչն է պատճառը: Ես թույլ կտամ, որ պատասխանեք այս խիստ հարցին, բայց հիշեք՝ անկե՛ղծ եղեք: Պատասխանելիս մտապահե՛ք Հիսուսի խոսքերը. «Ով որ ձեզ ընդունում է, Ինձ է ընդունում, և ով որ Ինձ ընդունում է, Ինձ Ուղարկողին է ընդունում» (Մատթ. 10.40): Կրկին, կարելի է այսպես կարդալ. «Ով որ ձեզ պատվում է, Ինձ է պատվում, և ով որ Ինձ պատվում է, Ինձ Ուղարկողին է պատվում»: Երբ գնահատում եք ձեր հովվի խոսքը, դուք գնահատում եք Աստծո Խոսքը, որովհետև Աստված է ուղարկել նրան ձեզ մոտ:

Այժմ հասկանում ենք, թե ինչու շատերը ծաղկուն կյանք չունեն: Գրված է. «Տիրոջ տան մեջ տնկվածները մեր Աստծո սրահներում կբուսնեն» (Սաղմ. 92.13): Երբ մենք տնկված ենք եկեղեցում, մեր կյանքը կծաղկի՝ թե՛ այժմ, թե՛ Քրիստոսի ատյանի առջև: Ուշադ-

րություն դարձրեք, որ սաղմոսերգուն չի ասում՝ «Տիրոջ տուն հաճախողները»: Դուք կարող եք եկեղեցի հաճախել, սակայն տնկված չլինել: Տնկված լինելը նշանակում է, որ այդտեղ դուք նվիրել եք ձեր կյանքը՝ Աստծուն ծառայելու համար: Այդտեղ է, որ դուք զոհաբերում եք, ծառայում եք և հնազանդվում եք առաջնորդներին: Երբ տնկված ենք, մենք արժևորում ենք մեր տեղական եկեղեցին, ինչպես որ ծառն արժևորում է այն հողը, որից կյանք է ստանում:

Դուք կարող եք բարգավաճման, հաջողության և երջանկության պահեր վերապրել՝ նույնիսկ եկեղեցում տնկված չլինելով, սակայն այդ օրհնությունները տևական չեն լինելու: Մենք պետք է ձգտենք ոչ թե վաղանցիկ օրհնությունների, այլ այնպիսի օրհնության, որը մնայուն է, և որը մեծ հաճություն և բավականություն է պատճառելու մեզ վերջին տարիներին, և ամենից առավել՝ Քրիստոսի ատյանի առջև, որտեղ ամեն ինչ ի հայտ է գալու:

Եթե դուք տնկված եք եկեղեցում, դուք կարժևորեք ձեր եկեղեցու առաջնորդի խոսքերը: Թեթևորեն չեք վերաբերվի այն ամենին, ինչ նա խնդրում է ձեզնից: Դուք Աստծո երկյուղը կունենաք և, Աստծուց երկյուղած լինելով, կպատվեք Նրա կողմից նշանակված առաջնորդներին: Պատվելով Նրա կողմից նշանակված առաջնորդներին, դուք կստանաք այն ամբողջական վարձատրությունը, որն Աստված պատրաստել է ձեզ համար:

Բարձր կարծի՛ք ունեցեք նրանց մասին

Մեզ պատվիրված է. «Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, պատվե՛ք նրանց, որոնք ձեր առաջնորդներն են Տիրոջ գործի մեջ: Նրանք ջանասիրաբար աշխատում են ձեր միջև և զգուշացնում են ձեզ այն ամենի մասին, ինչը սխալ է: Բարձր կարծի՛ք ունեցեք նրանց մասին և ամբողջ սրտո՛վ սիրեք նրանց՝ նրանց աշխատանքի պատճառով» (Ա Թեսաղ. 5.12,13, NLT):

Ծառայելով գրեթե 40 տարի՝ որոնցից յոթը՝ տեղական եկեղեցիներում, իսկ մնացածը՝ որպես շրջիկ քարոզիչ, նկատել եմ, որ ամենից շատ բավականություն ունեցող, երջանիկ, բարգավաճող և հաջողակ հավատացյալները նրանք են, ովքեր բարձր կարծիք ունեն իրենց եկեղեցական առաջնորդների մասին, նաև ի սրտե

սիրում են և նվիրված են նրանց: Աստված կարգադրում է մեզ, որ այսկերպ վարվենք. այնպես որ, մի՞թե տրամաբանական չէ, որ իմ դիտարկումը ճիշտ է: Հակառակը նույնպես ճշմարիտ է:

Տարիների ընթացքում հանդիպել եմ թե՛ այսպիսի, թե՛ հակառակ վերաբերմունք ունեցող մարդկանց: Ես հանդիպել եմ մարդկանց, որոնք, իրենց կարծիքով, նույնքան որակավորված են, որքան իրենց հովիվները: Նրանք հանդուրժում են իրենց առաջնորդներին՝ միայն նրանց դիրքի պատճառով: Նրանք կարծում են, որ կարող էին նույն հաջողությամբ և նույնիսկ ավելի արդյունավետ կերպով առաջնորդել իրենց եկեղեցին կամ ծառայությունը: Հաճախ նրանք սպասում են իրենց ժամին, երբ Աստված «առաջխաղացում կտա»՝ սեփական ծառայությունը սկսելու համար: Նրանք համարում են, որ իրենց հովիվներին կարելի է հեշտորեն փոխարինել, և սովորական մարդկանց պես են վերաբերվում նրանց:

Նման վերաբերմունք կարող է ունենալ նաև այնպիսի անձնավորությունը, որը ձգտում չունի ծառայության հանդեպ. նա աշխատում է գործարար ոլորտում և եկեղեցի է հաճախում, քանի որ ճիշտ է համարում դա: Այս մարդիկ, ի տարբերություն վերևում նշվածների, համարում են, որ իրենց հովվի դիրքը կարող է զբաղեցնել ցանկացած մարդ, հատկապես՝ իրենք, բայց իրենք որոշել են կարիերա կառուցել գործարար ոլորտում: Նրանց կարծիքով հովիվները խելամիտ մարդիկ չեն և հենց այդ պատճառով են ծառայության մեջ հայտնվել:

Երկու դեպքում էլ կարելի է տեսնել, որ այս մարդիկ չեն ապրում իրենց կյանքի լիարժեք ներուժով: Միգուցե նրանք հաջողություն ունեն գործարար ոլորտում կամ ծառայության մեջ, բայց դա նույնիսկ մոտ չէ այն հաջողության չափին, որը կլիներ նրանց կյանքում, եթե տնկվեին եկեղեցում և արժևորեին Աստծո պարգևին, այսինքն՝ իրենց հովվին: Շատ հաճախ այսպիսի մարդիկ խնդիրներ ունեն ամուսնության մեջ և իրենց երեխաների հետ. նրանք նեղություններ են կրում առողջական, ֆինանսական և կյանքի այլ ոլորտներում:

Ցավալի պատմություն

Ես կարող էի անթիվ օրինակներ պատմել այն մարդկանց մասին, որոնք չեն արժևորում և նույնիսկ անարգում են իրենց առաջնորդներին (շուտով կխոսենք նաև դրական կողմի մասին): Այնուամենայնիվ, այն պատմությունը, որը ցանկանում եմ պատմել, և որը վառ կերպով պատկերում է այս ողբերգությունը, երկու տղամարդկանց մասին է, որոնց ճանաչում եմ: Ես մի ընկեր ունեմ, ով մեծ եկեղեցու հովիվ է: Ավելի քան 25 տարի պարբերաբար ծառայում եմ նրա եկեղեցում, բայց 35 տարուց ավելի ճանաչում եմ նրան:

Նա վայելում է թե՛ իր եկեղեցու անդամների, թե՛ բազմաթիվ ազգային և համաշխարհային առաջնորդների հարգանքը:

Տարիներ առաջ նա օգնեց մի երիտասարդի բացահայտել Աստծո առաջնորդությունն իր կյանքում: Այդ երիտասարդը, ում կանվանենք Բիլ, մեծացել էր այնպիսի հարանվանական խմբում, որը չէր հավատում Աստծո Խոսքի շատ արժեքավոր ճշմարտությունների: Իմ ընկերը, ում կանվանենք Ռենդի, առաջնորդեց Բիլին դեպի Սուրբ Հոգու մկրտությունը: Աստված զորավոր կերպով գործածեց նրան՝ Բիլին ծառայության պտղաբեր ընթացքի մեջ հաստատելու համար:

Կարճ ժամանակ անց Բիլին հեռացրին իր եկեղեցուց՝ Սուրբ Հոգու մկրտությունն ընդունելու պատճառով: Հովիվ Ռենդին մի խումբ մարդկանց հետ գնաց և հավաքեց Բիլի բոլոր տնային իրերը, որոնք նրա հարանվանությունը հանել էր նրա տնից, և բնակարան վարձեց Բիլի և նրա ընտանիքի համար:

Ի վերջո, Բիլը մի ծաղկուն եկեղեցու հովիվ դարձավ մեկ այլ քաղաքում: Նա քչից սկսեց, սակայն, Աստծո ազդեցիկ պարգևի շնորհիվ, որը կար նրա կյանքում, եկեղեցին արագորեն աճեց: Մի քանի տարի անց նա մի կինոթատրոն գնեց և վարձակալվող առևտրային տարածքից տեղափոխվեց եկեղեցու վերանորոգված կինոթատրոնը: Նա խնդրեց Հովիվ Ռենդիին մասնակցել եկեղեցու ընծայմանը՝ այն ազդեցության պատճառով, որը Ռենդին թողել էր իր կյանքում: Դա հրաշալի իրադարձություն էր:

Եկեղեցին շարունակում էր աճել, սակայն Բիլի կյանքում ուժ-

գին կախվածություն եղավ, որն ինքը գաղտնի էր պահում: Նրա կախվածությունը շարունակաբար ծանրանում էր, մինչև որ եկեղեցու երեցներն իմացան այդ մասին:

Բիլը շարունակ զանգում էր Ռենդիին և ասում, որ թողնելու է ծառայությունը, բայց չէր ասում պատճառը: Հովիվ Ռենդին խրախուսում էր Բիլին, մինչև որ այդ եկեղեցու երեցներից մեկը զանգեց Ռենդիին և պատմեց Բիլի կախվածության մասին: Ռենդին անմիջապես ինքնաթիռ նստեց՝ Բիլի մոտ գնալու և օգնելու նրան: Ցավոք, երեցները տեղյակ լինելով Բիլի կախվածության մասին, միևնույն է՝ ցանկանում էին, որ նա շարունակեր ծառայել:

Ռենդին, լսելով այդ երեցների խոսքերը, ասաց.

- Եթե դուք նույնիսկ փորձեք ծառայության մեջ պահել Բիլին, ես կմնամ մինչև կիրակնօրյա հավաքույթը և հրապարակավ կբացահայտեմ այս իրավիճակը: Դուք չեք մտածում նրա ընտանիքի մասին. դուք մտածում եք միայն ձեր և եկեղեցու մասին: Բայց եթե ընդունեք նրա հրաժարականը, ես կօգնեմ ձեզ նշանակել նոր ծառայողի:

Նույն օրը հովիվ Ռենդին փրկեց Բիլին և նրա ընտանիքին և վճարեց, որպեսզի նրանք այլ նահանգ տեղափոխվեն՝ իր եկեղեցուն մոտ լինելու համար, և լավ վարձատրվող աշխատանք գտավ Բիլի համար: Ժամանակի ընթացքում Բիլը վերականգնվեց՝ Ռենդիի ծառայության շնորհիվ:

Հետագայում Ռենդին ընդգրկեց Բիլին իր ծառայողական թիմում՝ դարձնելով նրան իր օգնականներից մեկը, որպեսզի օգներ նրան վերադառնալ Աստծուց ունեցած իր կոչմանը: Միևնույն ժամանակ քրիստոնեական պարբերականները սկսեցին գրել Բիլի ազատագրման մասին, և նրա համբավը տարածվեց՝ իր վկայության շնորհիվ: Որոշ ժամանակ անց Բիլին առաջարկեցին միանալ այլ ծառայության և ուսուցիչ դառնալ՝ խոստանալով օգնել նրան կառուցել իր շրջիկ քարոզչի ծառայությունը: Հովիվ Ռենդին զգաց, որ Բիլը դեռ պատրաստ չէր այդ քայլին, և այլ խորհուրդ տվեց: Բիլին թվում էր, թե իր հովիվը վերահսկում և սահմանափակում էր իրեն: Նա անտեսեց Ռենդիի խորհուրդը և ընդունեց այդ առաջարկը:

Որոշ ժամանակ անցավ, և մեկ օր Բիլը և ես միասին ընթրելու հնարավորություն ունեցանք մի խումբ այլ առաջնորդների հետ:

Ընթրիքի գրեթե ամբողջ ընթացքում Բիլը բողոքում էր հովիվ Ռենդիից: Նա քննադատում էր այն, թե ինչպես էր Ռենդին առաջնորդում իր եկեղեցին, թե ինչպիսի վերաբերմունքի էր ինքն արժանանում, երբ նրա թիմում էր, նաև այն, որ իր նախկին հովիվը համաձայն չէր Բիլի հեռանալուն: Ես հասկացա, որ նա վիրավորված էր, և այդ պատճառով էր, որ խիստ վատ կարծիք ուներ այն մարդու մասին, ով այդքան բան էր արել իր համար:

Ես պաշտպանեցի Ռենդիին այդ ընթրիքի ժամանակ, բայց հասկացա, որ դա անարդյունավետ էր: Ես գիտեի, որ այդ ամենը քննարկելը ճիշտ չէր՝ առանց Ռենդիի, ով կարող էր ներկայացնել իր տեսանկյունը: Այնպես որ, ավարտեցի այդ խոսակցությունը՝ ասելով, որ Ռենդին հավատքի հայր էր նրա համար, և նույնիսկ եթե նա սխալ էր (ես շատ ուշադիր էի, որպեսզի չասեի, որ նա սխալ էր), Բիլը ճիշտ չէր վարվում, երբ քննադատում և անարգում էր նրան: Ես պատմեցի նրան այն աստվածաշնչյան օրինակները, որոնք ավելի վաղ ներկայացրի այս գրքում, սակայն Բիլը, տեղի չտալով, շարունակեց վատաբանել հովիվ Ռենդիին:

Մի քանի ամիս անց ես զանգ ստացա Հովիվ Ռենդիից: Դեռ հիշում եմ նրա տրտմած ձայնը: Նա այնպես էր խոսում, ասես ինչ-որ մեկը մահացել էր: Բիլը գիրք էր հրատարակել, որի գլուխներից մեկում գրում էր, թե ինչպես վարվել վերահսկող եկեղեցիների և հովիվների դեպքում: Ռենդին ասաց.

- Ջո՛ն, ուզում եմ չորս էջ կարդալ քեզ Բիլի նոր գրքից:

Ռենդին կարդաց Բիլի զրպարտիչ պատմությունն իր, իր թիմի և իր եկեղեցու մասին: Թեև նա ոչ մի անուն չէր նշել, ակնհայտ էր, թե ում մասին էր գրում: Ի վերջո, դա միակ եկեղեցին էր, որտեղ նա հովվի օգնական էր եղել, և Ռենդիի եկեղեցու համազգային համբավի պատճառով, շատերը, կարդալով Բիլի գիրքը, կհասկանային, թե որ առաջնորդին նա նկատի ուներ: Կարդալով Բիլի գիրքը՝ դուք կմտածեիք, որ հովիվ Ռենդին հրեշավոր անձնավորություն էր, ով վերահսկում էր բոլորին (հետաքրքրական է, որ այն տարիների ընթացքում, երբ ես քարոզում էի Ռենդիի եկեղեցում, նրա մեծ աշխատակազմում շատ քիչ փոփոխություններ էին լինում. նրա աշխատողները շատ նվիրված էին և անչափ սիրում էին նրան):

Այդ չորս էջն ավարտելուց հետո Ռենդին ասաց.

- Ջոն, ես կարող եմ անձամբ դիմանալ այս ամենին, բայց ցավում եմ մեր եկեղեցու անդամների համար (որոնց թիվը մի քանի հազար էր), որոնք անպատճառ կկարդան սա, քանի որ նա հովիվ էր այս եկեղեցում: Սա կարող է հեշտորեն թունավորել նրանց, և նրանք այլևս չեն կարողանա ոչինչ ստանալ Աստծուց այս եկեղեցում:

Ես վիատվեցի: Չէի հավատում լսածիս: Ռենդին փրկել էր Բիլին այնպիսի վիճակից, որում քչերը ձեռք կմեկնեին: Նա ընդունել էր Բիլին, հոգ էր տարել նրա մասին և վերականգնել էր նրան: Ինչ-պես Բիլը կարող էր անել դա: Ես գիտեի՝ նա անարգանքի սերմեր էր ցանում, որոնց հունձքը հաճելի չէր լինելու: Իրականում, այդ հունձքը կործանարար էր լինելու, եթե նա չապաշխարեր:

Մի քանի տարի անց Բիլը կրկին հովվական ծառայություն ստանձնեց: Եվ կրկին, այն եկեղեցին, որը նա հովվում էր, սկսեց աճել՝ այն պարգևի շնորհիվ, որն Աստված տվել էր նրան (Աստծո պարգևը գործում է հաջողության որոշակի չափով, նույնիսկ երբ մենք Աստծո սրտի համեմատ չենք վարվում): Այնուամենայնիվ, եկավ նրա հունձքի ժամանակը: Նա կրկին իր հին գերության մեջ հայտնվեց: Այս անգամ ամեն ինչ ավելի վատ էր, քանի որ դա մեկ այլ ընտանիք կործանեց: Այդ մասին իմացվեց թե՛ եկեղեցում, թե՛ ամբողջ այդ բնակավայրում: Եկեղեցին մեծ վնաս կրեց: Շատերը գայթակղվեցին և հիասթափվեցին:

Ես համոզված եմ, որ եթե Բիլը պատվեր իր հոգևոր հորը, պատշաճ ժամանակին կուղարկվեր՝ իր ծառայությունը սկսելու համար, երկրորդ անգամ մեղքի մեջ չէր հայտնվի և մինչև օրս վառ վկայություն կլիներ այն մասին, թե ինչպես Աստված կարող է ազատել մեզ մեղքից և վերականգնել: Այնուամենայնիվ, իր հոգևոր հորն անարգելու պատճառով տեղի ունեցավ այնպիսի ողբերգություն, որը շատերին խոցեց: Դրանից կարելի էր խուսա-փել: Ես պատմում եմ այս պատմությունը՝ հուսալով, որ շատերը կխուսափեն նման ողբերգությունից:

Բիլն Աստծո Խոսքն ուսուցանելու զարմանալի պարգև ուներ: Իրականում, ես հիանում էի նրան տրված հայտնություններով: Մարդիկ, որոնք ճանաչում էին նրան և մասնակցում էին նրա հա-վաքույթներին, պատմում էին, թե որքան ազդեցիկ էին նրա ուս-

մունքները: Որքա՜ն ողբերգական է. եթե Բիլը պատվեր իր հոգևոր հորը, թե՛ ինքը, թե՛ այն մարդիկ, որոնց կյանքում ինքն ազդեցություն ուներ, բարեհաջող ընթացք կունենային:

Պողոս առաքյալը պնդում է. «Որովհետև թեև դուք տասը հազար ուսուցիչներ ունենաք Քրիստոսում, դուք շատ հայրեր չունեք» (Ա Կորնթ. 4.15, NKJV): Մենք պետք է հիշենք հետևյալը. Աստված ասում է, որ մենք անեծքի ներքո ենք հայտնվում, երբ անպատվում ենք մեր հորը: Սա վերաբերում է ոչ միայն մեր բնական հայրերին, այլև՝ հոգևոր: Անձամբ ես հավատում եմ, որ բազմաթիվ ողբերգական իրադարձություններից հնարավոր կլիներ խուսափել, եթե դրանցում հայտնված մարդիկ ճշմարիտ պատիվ կառուցեին իրենց սրտերում և հսկեին սրտերը վիրավորանքի դեմ, հատկապես՝ իրենց հոգևոր հայրերի և մայրերի նկատմամբ:

Երկու կամ երեք վկա

Այն անձնավորությունը, որը ծառայության էր նշանակել ինձ, կորցրեց ութ հազար անդամից բաղկացած իր ամբողջ եկեղեցին: Այսօր այդ եկեղեցին այլևս գոյություն չունի, քանի որ հովիվը լքեց իր կնոջը՝ ավելի երիտասարդ կնոջ պատճառով: Նա ասաց եկեղեցուն, որ լքում է կնոջը, և եթե դա նրանց դուր չի գալիս, կարող են հեռանալ և այլ եկեղեցի հաճախել: Դա կործանարար հարված էր: Ողբերգական է, որ շատ տղամարդիկ այդ եկեղեցում նրա ճանապարհով գնացին և ամուսնալուծվեցին:

Այն մարդիկ, ովքեր ինձ հետ էին ծառայում, երբ աշխատում էի այդ եկեղեցում, սկսեցին դառնորեն քննադատել նրան: Ես նույնպես քննադատում էի նրան: Ես հիասթափված էի նրանից և բարկացած էի: Այն պատիվը, որը կար իմ սրտում նրա հանդեպ՝ որպես իմ հոգևոր հոր, արագորեն ի չիք էր դառնում: Ես հեռացել էի այդ եկեղեցուց այդ դեպքից հինգ տարի առաջ: Նա օրհնությամբ ուղարկել էր Լիզային և ինձ մեկ այլ նահանգ՝ նոր ծառայության, բայց թեև մենք այլևս այդ եկեղեցում չէինք, ես շարունակ ավելի էի հիասթափվում նրանից և ավելի էի բարկանում:

Դրան հաջորդող երկու շաբաթվա ընթացքում չորս երազ տեսա իմ նախկին հովվի մասին: Երկու շաբաթվա ընթացքում չորս երազ տեսնելը և դրանք հիշելը լիովին անսովոր բան է ինձ

համար: Ես գրեթե ամաչում եմ, երբ գրում եմ սա, բայց չորրորդ երազից հետո ի վերջո հասկացա, որ Աստված ինչ-որ բան էր ասում: Ես աղոթեցի և հարցրի. «Հա՛յր, ի՞նչ ես ցույց տալիս ինձ այս երազների միջոցով»:

Եվ անմիջապես խիստ ձայն լսեցի. «Նա Իմ ծառան է: Բավակա՛ն է դատես Իմ ծառային»:

Իմ գործը չէր իմ նախկին հովվին քննադատելը կամ դատելը, ով հայր էր եղել ինձ համար: Հենց որ հասկացա դա, ես ապաշխարեցի և նամակ գրեցի նրան՝ ներողություն խնդրելով:

Իր կնոջից ամուսնալուծվելուց երկու ամիս անց նա ամուսնացավ մի երիտասարդ կնոջ հետ, և կարճ ժամանակ անց եկեղեցին նվազեց՝ հասնելով չորս հարյուր անդամի: Նա փորձեց փրկել եկեղեցին, բայց միայն ժամանակի հարց էր, մինչև որ եկեղեցու դռներն ընդմիշտ փակվեցին: Արդյո՞ք կարելի է լքել մի եկեղեցի, որտեղ հովիվը բացահայտ մեղքի մեջ է և չի պատրաստվում ապաշխարել: Պատասխանն է՝ միանշանակ՝ այո՛: Պողոսը գրում է.

> «Ես գրեցի ձեզ իմ [նախորդ] նամակում, որ չհաղորդակցվեք [մտերմորեն և սովորության համաձայն] անբարո (անմաքուր) մարդկանց հետ, ոչ թե [իհարկե, նկատի ունենալով, որ դուք պետք է] ընդհանրապես խորշեք այս աշխարհի անբարո մարդկանցից, կամ ագահ յուրացնողներից և խաբեբաներից և գողերից և կռապաշտներից, քանի որ, հակառակ դեպքում, դուք ստիպված կլինեիք ընդհանրապես հեռանալ այս աշխարհից և հասարակությունից: Բայց գրում եմ ձեզ, որ չհաղորդակցվեք այն մարդու հետ, ով կրում է [քրիստոնյա] եղբոր անունը, եթե հայտնի է, որ նա հանցավոր է անբարոյության կամ ագահության մեջ, կամ կռապաշտ է [որի անձը նվիրված է ցանկացած բանի, ինչը զավթում է Աստծո տեղը], կամ անպարկեշտ [վիրավորիչ, հայհոյող, նախատող, զրպարտող] լեզու ունեցող մարդ է, կամ արբեցող է, կամ խաբեբա է, կամ թալանչի է: [Ո՛չ], դուք նույնիսկ կերակուր չպետք է ուտեք նման մարդու հետ»:
>
> – Ա Կորնթ. 5.9-11, AMPC

Պողոսը պարզորեն պնդում է, որ մենք չպետք է մտերմորեն հաղորդակցվենք այնպիսի «քրիստոնյայի» հետ, ով անբարո կյանք է վարում: Այդ առաջնորդն անբարո կերպով վարվեց, երբ ամուսնալուծվեց կնոջից, քանի որ անհաշտ էին, և ամբողջ այդ ընթացքում թաքցնում էր իր իրական մտադրությունը, որն ավելի երիտասարդ կնոջ հետ ամուսնանալն էր: Համաձայն Հիսուսի խոսքերի, ամեն ինչ շատ պարզ է, քանի որ Նա պնդում է. «Ես ասում եմ ձեզ, թե նա, ով որ իր կնոջն արձակի՝ առանց պոռնկության պատճառի, և ուրիշին առնի, շնություն է գործում, և արձակվածին առնողը շնություն է գործում» (Մատթ. 19.9):

Այնպես որ, եթե մենք չպետք է կերակուր ուտենք այնպիսի «քրիստոնյայի» հետ, ով գիտակցաբար մեղքի մեջ է ապրում, անկասկած, մենք չպետք է հաղորդություն ունենանք նրա հոգու հետ. մենք չպետք է հաճախենք այդպիսի մարդու ծառայություններին: Այնուամենայնիվ, եթե նա ապաշխարի, մենք կրկին կկարողանանք ընդունել նրանից:

Միգուցե հարցնեք. «Բայց Ջո՛ն, մի՞թե դա չի նշանակում դատել նրան»: Իմ պատասխանն է՝ դա նշանակում է դատել նրա պտուղը: Մենք պետք է դատենք պտուղը, այսինքն՝ մարդկանց գործերը, բայց ոչ՝ նրանց սրտի շարժառիթները: Պողոսն ասում է. «Իմ պատասխանատվությունը չէ դրսի մարդկանց դատելը, բայց անկասկած՝ ձեր գործն է եկեղեցու ներսում լինողներին դատելը, որոնք այս կերպերով մեղանչում են» (Ա Կորնթ. 5.12, NLT):

Առանց մանրամասնելու, ես դատում էի իմ հովվի սրտի շարժառիթները, և դա էր պատճառը, որ Աստված ստիպված էր զգուշացնել ինձ երազների միջոցով: Միայն Աստված կարող է դատել մարդու սրտի շարժառիթները: Պողոսը գրում է.

> «Ուրեմն, ժամանակից առաջ մի՛ դատեք, մինչև Տերը գա, որ խավարի ծածուկ բաները կբերի լույսի մեջ և սրտերի խորհուրդները (շարժառիթները) կհայտնի»:
>
> – Ա Կորնթ. 4.5,
>
> (փակագծերի բառերը հեղինակինն են):

Այդ իսկ պատճառով, ես շարունակում եմ հուսալ իմ նախկին հովվի համար:

Օգնեմ ձեզ, որ հստակ հասկանաք սա. մեկ անգամ խոսում էի ծառայության մեջ գտնվող մի անձնավորության հետ, ով մտահոգված էր մի համաժողովի ընթացքում մեկ այլ ծառայողի քարոզած ուղերձով: Իմ ընկերը հեռախոսով վերլուծում էր այդ քարոզն ինձ հետ՝ հիշատակելով աստվածաշնչյան հատվածներ, որոնք հստակ ցույց էին տալիս այն սխալները, որ կային այդ ծառայողի ուղերձում: Ես համաձայնեցի այն ամենին, ինչ նա ասաց այդ ուղերձի վերաբերյալ (այլ ծառայողներ նույն մտահոգություններն էին արտահայտել): Այնուամենայնիվ, իմ ընկերը, ում հետ հեռախոսով խոսում էի, շարունակեց.

- Կարծում եմ՝ նա այսպիսի ուսմունք է քարոզում, որպեսզի եզակի ուղերձ ունենա, որը դուռ կբացի բազմաթիվ մեծ եկեղեցիներում և համաժողովներում ծառայելու համար:

Ես անմիջապես ընդհատեցի ընկերոջս և ասացի.

- Այժմ դու դատում ես նրա շարժառիթները, և դա սխալ է:

Ես ասացի իմ ընկերոջը, որ մենք կարող ենք դատել այդ մարդու պտուղը՝ այն, ինչ նա ասել և արել է, այս դեպքում՝ նրա ուղերձը, բայց ոչ՝ նրա շարժառիթը: Միայն Աստված կարող է անել դա: Ես հենց այդպես էի վերաբերվում իմ հովվին, և դա էր պատճառը, որ Աստված խստորեն զգուշացրեց ինձ:

Այն չորս հարյուր մարդիկ, որոնք մնացին իմ նախկին հովվի առաջնորդության ներքո այն բանից հետո, երբ նա ամուսնացավ այդ երիտասարդ կնոջ հետ, հայտնվեցին խիստ աղճատված ծառայողական պայմաններում: Նրանց հավատարմությունը սուրբգրային չէր: Նրանք մնացին սխալ հոգու, ոչ թե Սուրբ Հոգու մթնոլորտում:

Մինչև օրս ես դեռ պատվում եմ իմ նախկին հովվին, թեև նա հրապարակավ չի ապաշխարել (այժմ նա ամուսնացած է երրորդ կնոջ հետ): Եթե նա եկեղեցի ունենար, ես չէի հաճախի նրա ծառայություններին, բայց նա պատվավոր դիրք կունենա իմ սրտում մինչև կյանքիս ավարտը: Հիշեք՝ այն բանից հետո, երբ Աստված դատեց Սավուղին, Դավիթը դեռևս պատվում էր նրան. Դավիթը սիրո երգ երգեց նրա մասին և սովորեցրեց այդ երգը Հուդայի բնակիչներին:

Եթե իմ նախկին հովիվն այսօր զանգեր ինձ և օգնություն

խնդրեր, ես կօգնեի նրան՝ ինչով կարողանայի և որքան արագ կարողանայի: Նա բազմաթիվ հրաշալի ճշմարտություններ սովորեցրեց ինձ Աստծո Խոսքից, որոնցից մինչև օրս օգուտ եմ քաղում: Նա հավատաց ինձ և հնարավորություն տվեց, երբ ուրիշ ոչ ոք չարեց դա: Երբ դեռ անփորձ էի և շատ սխալներ էի գործում, նա ներում և խրախուսում էր ինձ: Ես մշտապես կպատվեմ նրան: Նույնիսկ գրելով այս խոսքերը՝ ինչը անում եմ միայն մարդկանց օգնելու համար, ես սրտով տրտմում եմ, քանի որ և՛ նա, և՛ այլ մարդիկ ցավ են կրել՝ նրա որոշումների պատճառով: Հուսով եմ, որ նա կապաշխարի և կրկին կդառնա այն մեծ առաջնորդը, ինչպիսին անցյալում էր: Սուրբ գիրքը պնդում է, որ Աստծո հույսը չի մարում և չի թուլանում (տե՛ս Ա Կորնթ. 13.7):

Մյուս կողմից, շատերն այսօր հեռանում են եկեղեցիներից, քանի որ ասեկոսեներ են լսում այն մասին, որ իրենց հովիվը մեղք է գործում: Ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Մենք չպետք է ասեկոսեներ լսենք: Գրված է. «Երեցի վրա գանգատ մի՛ ընդունիր, բայց միայն երկու կամ երեք վկաներով» (Ա Տիմոթ. 5.19):

Վկան նա է, ով անհերքելի ապացույց ունի, որը կարող է հաստատվել դատարանում: Խոսքը երկու մարդկանց մասին չէ, որոնք միասին դավեր են նյութում, կամ մի քանիսի, որոնք նույն սուտ լուրն են տարածում: Ո՛չ, այլ՝ երկու կամ երեք մարդկանց, որոնք առանձին ապացույցներ ունեն: Ինչո՞ւ է Պողոսը գրում այս խոսքերը. մեզ պաշտպանելու համար:

Մտածե՛ք այս մասին. եթե մենք հավատում ենք որևէ առաջնորդի մասին ասեկոսեի, դա դուռ է բացում կասկածամտության և սխալ համոզմունքների համար: Անարգանքը հեշտորեն մուտք է գործում մեր սիրտը: Եթե մենք անարգենք որևէ առաջնորդի, այլևս չենք կարողանա ստանալ այն վարձատրությունը, որն Աստված ցանկանում է տալ մեզ նրա միջոցով: Ահա թե ինչու են շատերն Արևմուտքում դժվարությամբ ստանում Աստծուց: Մեր օրերում ծառայության մեջ բազմաթիվ ամոթալի բացահայտումներ են եղել, ինչի պատճառով բազմաթիվ մարդկանց սրտերում կասկածամտություն է ձևավորվել: Այսօր շատերը եկեղեցում վիրավորված են և նույնիսկ արհամարհական վերաբերմունք ունեն, ինչը ոչ մի դեպքում չի նպաստում պատվի ձևավորմանը: Թշնա-

մու ծրագիրը հենց սա է եղել. ետ պահել և հեռացնել մեզ այն երկնային անոթներից՝ Աստծո առաջնորդներից, որոնց միջոցով կարող ենք պատասխաններ ստանալ:

Աննան կարողացավ ընդունել Հեղիից, թեև հետագայում Հեղիի որկրամոլությունը և ագահությունը բացահայտվելու էին, և նա դատաստանի էր ենթարկվելու: Աննան թույլ չտվեց, որ արհամարհանքը մուտք գործեր իր սիրտը, նույնիսկ երբ Հեղիի թյուր բնավորությունը զգալ տվեց իրեն՝ նրան արբած անվանելով: Աննան գործեց, ոչ թե հակազդեց: Շատերն այսօր հակազդում են այն ցավալի ծառայողական ձախողումներին, որոնք թույլ են տվել Արևմուտքի մեր եկեղեցական առաջնորդները:

Իմ ծառայության տարիներին բազմաթիվ վատ լուրեր եմ լսել առաջնորդների մասին, բայց ես անձնական համոզմունք ունեմ՝ հիմնված Ա Տիմոթեոս 5.19-ի վրա, որն ուղղորդում է իմ կյանքը: Ես ինքնաբերաբար անտեսում եմ ցանկացած վատ լուր, եթե այն միայն մեկ մարդուց է, կամ՝ եթե այն չունի հստակ ապացույց առնվազն երկու մարդուց: Ես պետք է ունենամ առանձին ապացույցներ առնվազն երկու մարդուց՝ իմ լսած լուրին հավատալու համար: Եթե ես որևէ կշիռ վերագրեմ այդ լուրերին, չեմ կարողանա ստանալ Երկնքից: Յուրաքանչյուր առաջնորդի միջոցով մենք կարող ենք վարձատրություն ստանալ Երկնքից: Անձամբ ես չեմ ուզում բաց թողնել այն, ինչ Աստված ունի ինձ համար, և հավատում եմ, որ դուք նույն կերպով եք մտածում:

Դրական կողմը

Ինչ վերաբերում է դրական վերաբերմունքին, ես ճանաչում և սիրում եմ շատերին եկեղեցում, որոնք պատիվ են ցուցաբերել, ամբողջ սրտով սիրել և նվիրվել են իրենց առաջնորդներին: Նրանցից մի քանիսն աշխատում են եկեղեցիներում, մի քանիսն առաջնորդների օգնականներ են, և շատերը եկեղեցիների անդամներ կամ ծառայությունների գործընկերներ են:

Ես հիացմունքով եմ հետևել, թե ինչպես է Աստված տարիների ընթացքում առաջխաղացում բերել այդ մարդկանց կյանքերում: Միշտ չէր, որ նրանք արագ հաջողությունների էին հասնում կամ առաջխաղացում էին ստանում: Այնուամենայնիվ, հետևելով

նրանցից շատերին՝ տասը, քսան, երեսուն և նույնիսկ քառասուն տարի, ես տեսել եմ ոչ շատ արագ, բայց հաստատուն աճ նրանց կյանքի բոլոր բնագավառներում:

Հիշում եմ նրանց, ովքեր խիստ վրդովված էին իմ նախկին հովվի պատճառով, որի մասին քիչ առաջ պատմեցի: Նրանցում այնպիսի վերաբերմունք ձևավորվեց, որ չէին կարողանում պատվել նրան: Նրանք սկսեցին քննադատել, և շատերի կյանքում դա ողբերգական հետևանքների հանգեցրեց: Ոմանք ամուսնալուծվեցին, մյուսները սարսափելի բաներ կրեցին՝ կապված իրենց երեխաների հետ, ուրիշները ֆինանսապես սնանկացան: Կային մարդիկ, որոնք հովվական ծառայություն ստանձնեցին կամ եկեղեցիներ հիմնեցին, սակայն տարիներ տևող աշխատանքից հետո չկարողացան ծաղկուն եկեղեցի կառուցել:

Որպես ծայրահեղ դեպք, ես հիշում եմ ինձ հետ աշխատող մի կնոջ, ով հյուրընկալվեց մի հեռուստատեսային հաղորդման և խոսեց իմ հովվի դեմ (ով կորցրել էր իր ամբողջ եկեղեցին): Նա գերազանց առողջություն ուներ, սակայն երկու ամիս անց հանկարծամահ եղավ՝ ուղեղի զանգվածային անոթալայնանքի պատճառով: Կարելի՞ է ասել, որ դա պատահականություն էր: Միայն Աստված գիտի պատասխանը: Բայց ես գիտեմ, որ Պողոսը գրում է, որ շատ հավատացյալներ չեն զանազանում Տիրոջ մարմինը, և դա է պատճառը, որ շատերը «թույլ և հիվանդ են ձեր միջև, և շատերը ննջում են (ժամանակից շուտ մահանում են)» (Ա Կորնթ. 11.30, NKJV, փակագծերի բառերը հեղինակինն են): Պողոսը գրեց սա հաղորդության համատեքստում: Այնուամենայնիվ, այս ճշմարտությունը վերաբերում է նաև քրիստոնեական կյանքի այլ բնագավառներին: Տիրոջ մարմինը զանազանելը ավելին է, քան խաղողի հյութ խմելը և կրեկեր ուտելը:

Մյուս կողմից, ես տեսել եմ անթիվ տղամարդկանց և կանանց, որոնք տուժել են իմ նախկին հովվի պատճառով, սակայն շարունակել են սիրել և պատվել նրան իրենց սրտում, ինչպես Դավիթը, և բոլորն անչափ հաջողակ են այսօր: Ես տեսել եմ, որ նրանք հաջողակ են դարձել ծառայության մեջ, գործարարության մեջ, կյանքում: Նրանց ամուսնություններն ամուր են մնացել. նրանց երեխաները շարունակել են սիրել Աստծուն և բարգավաճել են:

Նրանք ապրում են հարուստ և լիարժեք կյանքով, քանի որ պատվով և անկեղծությամբ են վարվել: Նրանք հսկել են իրենց սիրտը և իրենց շուրթերը: Նրանք հաճելի են եղել Աստծո սրտին:

Ինչո՞ւ չձգտել այն բարի կյանքին, որն Աստված ցանկանում է տալ մեզ: Մի՞թե իսկապես արժե լինել քննադատող, ամբարտավան և վիրավորված: Ի՞նչ պտուղ է դա տալիս: Տեսնելով դրա երկարաժամկետ հետևանքները՝ չեմ ցանկանում որևէ առնչություն ունենալ նման վերաբերմունքի հետ՝ անկախ այն բանից, թե ինչպես է որևէ առաջնորդ վարվել ինձ հետ: Ուղղակի չարժե այդպիսին լինել: Բայց բոլոր պատճառներից ամենակարևորը հետևյալն է. այն մարդիկ Աստվածաշնչում, որոնք պատվում էին իրենց առաջնորդներին, Աստծո սրտին մոտ էին մնում: Ինձ համար սա մեծագույնն է բոլոր վարձատրություններից՝ ճանաչել Նրա սիրտը և խորը հաղորդություն ունենալ Նրա հետ: Այս կյանքում դրանից ավելի մեծ բան չկա:

11

Կրկնակի պատիվ

«Լավ վերակացություն անող երեցները թող երկպատիկ պատվի արժանի լինեն, մանավանդ նրանք, որ խոսքով և վարդապետությամբ են աշխատում: Որովհետև գիրքն ասում է, թե՝ կալի մեջ աշխատող եզի դունչը չկապես, թե՝ մշակն արժանի է իր վարձքին»:

– Ա Տիմոթ. 5.17,18

Սա միակ հատվածն է Աստվածաշնչում՝ իշխանությանը «երկպատիկ պատիվ» ցուցաբերելու մասին: Մենք պետք է կրկնակի պատիվ ցուցաբերենք Ավետարանի ծառայողներին՝ այլ առաջնորդների համեմատ:

Ինչպե՞ս կարելի է գործնականորեն անել սա: Մեր վարքը և խոսքը քրիստոնյա առաջնորդների հանդեպ պետք է մեծագույն հարգանքով լինի: Մենք պետք է պաշտոնական ձևով դիմենք նրանց, օրինակ՝ «Հովիվ», «Պարոն», «Տիկին», իհարկե, եթե նրանք չեն արգելում, որ անենք դա: Նրանց հետ խոսելիս պետք է մշտապես ուշադիր լինենք նրանց հանդեպ և չպետք է հեռանանք, քանի դեռ չեն ավարտել մեզ հետ խոսելը:

Երբ որևէ առաջնորդ սովորեցնում է Աստծո Խոսքը, պետք է ուշադիր լսենք: Մենք անարգանք ենք ցուցաբերում՝ թույլ տալով, որ մեր միտքը թափառի: Հիշեք՝ պատիվը ցուցաբերվում է ոչ

միայն գործով և խոսքով, այլև մտքով: Այս պատճառով, Պողոսը հորդորում է մեզ. «Մի՛տք դիր կարդալուն, հորդորին և վարդապետությանը» (Ա Տիմոթ. 4.13):

Ծառայության ընթացքում մեր կողքին նստած մարդու հետ զրուցելն անարգանք է քարոզչի հանդեպ, և ավելին՝ անձամբ Սուրբ Հոգու հանդեպ: Անձնական հաղորդակցությունը պետք է հետաձգվի մինչև հավաքույթի ավարտը: Նույնպես չպետք է սոցիալական ցանցերի էջեր դիտենք, տեքստային հաղորդագրություններ ուղարկենք մեր ընկերներին, զանգեր կատարենք կամ էլ հեռանանք՝ ծառայությունը դեռ չավարտված: Մենք չպետք է ուշանանք հավաքույթներից կամ ծառայություններից: Ինչպե՞ս մեր գործատուն կարձագանքեր, եթե ամեն օր տասնհինգ րոպե ուշանայինք աշխատանքից: Նույնիսկ մեր մտքով չի անցնի այդպես վարվելը: Իսկ ինչո՞ւ ենք մենք այդպես վարվում մեր առաջնորդների կողմից որոշված հավաքույթներին հաճախելիս:

Մենք պետք է մտածենք, թե ինչպես կարող ենք ծառայել մեր առաջնորդներին, նույնիսկ չսպասելով նրանց խնդրանքներին: Նախապես ծրագրեր կազմեք նրանց համար և պատրաստ եղեք անկանխատեսելի խոչընդոտների: Ծառայելով նրանց՝ մենք պետք է մշտապես փորձենք ամեն ինչ անել լավագույն ձևով և առավել բարձր չափանիշներով: Մենք պետք է գերազանցության ձգտենք այն ամենում, ինչ անում ենք, երբ ներկայացնում ենք նրանց:

Եթե ձեզ խնդրել են որևէ առաջադրանք կատարել ձեր առաջնորդի համար, ապա արե՛ք դա արագ և գերազանց: Մի՛ գնացեք ոչ համապատասխան հագուստով և կեղտոտ մեքենայով: Դուք պետք է պատշաճ կերպով ներկայացնեք ձեր առաջնորդին: Նախկինում ինձ դիմավորել են օդանավակայաններում այնպիսի մեքենաներով, որոնք լեցուն էին անպետք իրերով և աղբով: Ես մտածում էի. *«Ինչպե՞ս այս ծառայության ղեկավարը կզգար իրեն, եթե իմանար, որ իր թիմի անդամն այս կերպով է ընդունում իր հյուրին: Այս մարդն անարգել է ոչ միայն ինձ, այլև այն հովվին, ով խնդրել է նրան լինել իմ հյուրընկալը»:*

Լիզան և ես շուրջ հիսուն մարդուց բաղկացած հրաշալի աշխատակազմ ունենք: Ես զարմացած եմ՝ թե ինչպես են նրանք

վերաբերվում մեզ: Իմ աշխատասենյակում՝ սեղանիս միշտ թարմ ջրով լի բաժակ կա: Շատ հաճախ են նրանք մեքենաս տանում բենզալցակայան և լիցքավորում, նույնիսկ երբ դեռ բավականին վառելիք կա: Նրանք հետևում են, որ իմ մեքենան մշտապես մաքուր լինի: Տարիներ շարունակ ես որոշված տեղ չունեի մեր գրասենյակի կայանատեղիում, բայց մեր աշխատողները, գրասենյակի մուտքի դռանը ամենամոտ գտնվող հատվածում մշտապես տեղ էին թողնում Լիզայի և ինձ համար:

Նրանք ոտքի են ելնում, երբ մտնում եմ նրանց աշխատասենյակները կամ մեր խորհրդակցությունների սենյակը, և ինձ «Պարոն»-ով են դիմում: Նրանք որևէ հարցով դիմելիս նախապես հանգամանորեն ուսումնասիրում են՝ մինչև ինձ ներկայացնելը:

Նրանք կանխատեսում են իմ հարցերը և արդեն պատրաստի պատասխաններ ունեն, մինչև կպատասխանեմ դրանց: Ցանկացած խնդրանք, որը ներկայացնում եմ նրանց, արագորեն կատարվում է, և եթե որևէ առաջադրանք կատարելու միջոցներից մեկը խոչընդոտի է բախվում, նրանք շարունակում են միջոցներ փնտրել, մինչև որ կատարեն այն: Նրանց տրված առաջադրանքը չի կատարվում միայն այն դեպքում, եթե անկարելի է կատարել: Բայց մինչ այդ մասին տեղեկացնելը, նրանք փորձում են ցանկացած հնարավոր միջոց, ինչպես նաև պատրաստում են այլընտրանքներ՝ իմ սկզբնական խնդրանքը կատարելու համար:

Այն պատիվը, որը նրանք ցուցաբերում են մեր հանդեպ, ազդեցիկ և նպատակաուղղված է: Նախևառաջ, ես մշտապես հիշում եմ, որ պատվելով ինձ՝ նրանք պատվում են Հիսուսին: Երկրորդը՝ ես լիովին գիտակցում եմ, որ նրանք վարձատրություն են ստանալու դրա համար: Երրորդը՝ ես մտապահում եմ, թե ինչու են նրանք ծառայում մեզ. նրանք չեն ցանկանում, որ մեր ուժերն ուղղված լինեն այնպիսի բաների, որոնք կշեղեն մեզ մեր առաջադրանքից: Որքան ավելի Լիզան և ես կարողանանք կենտրոնանալ Տիրոջից մեզ տրված կոչման վրա, այնքան ավելի շատ մարդկանց կկարողանանք ծառայել: Այս ամենի նպատակը ծառայությունն է Աստծո թագավորության մեջ, և երբ մենք պատվում ենք միմյանց (հաջորդ գլուխներում դեռ կխոսեմ այն մասին, թե

ինչպես ենք պատվում մեր աշխատակազմին), ավելի արդյունավետ ենք դառնում Աստծուն հաճեցնելու մեջ:

Լիզան և ես պատիվ չենք որոնում: Երբ առաջնորդը պատվի է ձգտում կամ պատիվ է որոնում, նա Աստծո սրտի համեմատ չի վարվում: Հիսուսն ասաց. «Ես չեմ ձգտում մարդկային պատվի» (Հովհ. 5.41, AMPC): Նա միայն ձգտում էր այն պատվին, որը գալիս է Իր Հորից: Նա հանդիմանում էր Իր օրերի առաջնորդներին՝ ասելով. «Զարմանալի չէ, որ դուք չեք կարողանում հավատալ: Որովհետև դուք ուրախությամբ պատվում եք միմյանց, բայց չեք մտածում այն պատվի մասին, որը գալիս է միայն Աստծուց» (Հովհ. 5.11, NLT): Այս առաջնորդները ձգտում էին մարդկանց գովեստին և պատվին՝ իրենց եսասիրությանը, հպարտությանը և իշխող բնավորությանը գոհացնելու համար: Հիսուսը պատիվ էր ստանում թե՛ տղամարդկանցից, թե՛ կանանցից՝ հանուն նրանց, և ամենից առավել՝ հանուն Իր Հոր:

Մենք՝ հավատացյալներս, նույնպես պետք է լիովին գիտակցենք հետևյալը. այն պատիվը, որը ստանում ենք, պետք է փոխանցվի Հիսուսին և Հորը մեր սրտերում. մենք պետք է ուրախանանք այն մարդկանց համար, որոնք պատվում են մեզ՝ գիտակցելով, որ Հայրն Իր հերթին կպատվի նրանց, այսինքն՝ նրանք վարձատրություն կստանան: Ես չեմ կարող չափից ավելի շեշտադրել սա. անկախ այն բանից, թե ով եք դուք, եթե պատիվ ստանալու այլ դրդապատճառներ ունեք, դուք գնում եք սխալ ճանապարհով, որը չի տանում դեպի կյանք և աստվածապաշտություն:

Կրկնակի ֆինանսներ

Գոյություն ունեն Ավետարանի ծառայողներին «կրկնակի պատիվ» ցուցաբերելու անթիվ միջոցներ, որոնց մասին կարող էի գրել: Այնուամենայնիվ, ես դեռ չեմ անդրադարձել այն հատուկ միջոցին, որի մասին Սուրբ Հոգին խոսում է Պողոս առաքյալի միջոցով Ա Տիմոթեոսի 5.17,18-ում: Եթե շարունակենք ընթերցել, կբացահայտենք, որ նա մասնավորապես նկատի ունի ֆինանսները: Պողոսն այսպես է ավարտում իր պնդումը. «Մշակն արժանի է իր վարձքին»: «Նոր Կենդանի թարգմանության» մեջ գրված է. «Երեցները, որոնք լավ են կատարում իրենց աշխատանքը,

պետք է լավ վճարվեն»: «Ժամանակակից Անգլերեն թարգմանության» մեջ գրված է. «Եկեղեցական առաջնորդները, որոնք լավ են կատարում իրենց գործը, արժանի են երկու անգամ ավելի վճարվելուն, հատկապես եթե նրանք ջանասիրաբար քարոզում և սովորեցնում են»: «Բարի լուր» թարգմանության մեջ գրված է. «Այն երեցները, որոնք արդյունավետ աշխատում են՝ որպես առաջնորդներ, պետք է կրկնակի աշխատավարձ ստանալու արժանի համարվեն»: Եվ, ի վերջո, «Ընդլայնված Աստվածաշունչը» հայտարարում է, որ այն երեցները, որոնք արդյունավետ կատարում են իրենց պարտականությունները, պետք է կրկնակի չափով արժանի համարվեն «պատշաճ ֆինանսական աջակցության»:

Կրկին, այս հոգևոր սկզբունքը կարելի է գտնել Հիսուսի խոսքերում՝ ուղղված Իր աշակերտներին. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. ով որ *պատվի* նրան, որ Ես կուղարկեմ, Ինձ է *պատվում*, և Ինձ *պատվողն* Ինձ Ուղարկողին է *պատվում»* (Հովհ. 13.20, *«ընդունել»* բառը փոխարինվել է *«պատվել»* բառով): Ուշադրություն դարձրեք *«նրան, որ Ես կուղարկեմ»* բառերին: Կարելի է տեսնել, որ Հիսուսը շեշտադրում է անձամբ Իր ներգրավվածությունը: Մենք տեսնում ենք նույնը, երբ Պողոսը նկարագրում է ծառայության հինգ պարգևների հանձնարարական ստանալը և ուղարկվելը.

> «Եվ Նրա [Հիսուս Քրիստոսի] պարգևները [տարբեր] էին. [Նա Ինքը կարգեց և տվեց մեզ մարդկանց]. մի քանիսը՝ առաքյալներ (հատուկ ավետաբերներ) լինելու, ոմանք՝ մարգարեներ (ոգեշնչված քարոզիչներ և մեկնիչներ), ոմանք՝ ավետարանիչներ (Ավետարանի քարոզիչներ, ճանապարհորդող միսիոներներ), ոմանք՝ հովիվներ (Նրա հոտի գառնարածները) և ուսուցիչներ»:
>
> – Եփես. 4.11, AMPC

Ուշադրություն դարձրեք «Նա Ինքը կարգեց» բառերին: Հիսուսն անձամբ է շնորհում ծառայության պարգև ունեցող ծառայողներին: Այս մարդիկ Քրիստոսի մարմնում գտնվող երեցներն են, որոնք «խոսքով և վարդապետությամբ են աշխատում» (Ա Տիմոթ. 5.17):

Աստված հատկապես պնդում է, որ նրանք պետք է «երկու անգամ ավելի» (CEV) պատիվ ստանան և վճարվեն:

Ավելի քան երեսունհինգ տարի շրջիկ քարոզիչ լինելով՝ երբևէ չեմ տեսել, որ այս պատվիրանը բացառություն ունենա: Ես եղել եմ այնպիսի եկեղեցիներում, որտեղ հովիվը և հովվի օգնականները լավ չեն վճարվում: Միաժամանակ այդ եկեղեցու բազմաթիվ անդամներ գեղեցիկ տներում են ապրում և թանկարժեք մեքենաներ են վարում, նրանց երեխաները բարձրակարգ դպրոցներ են հաճախում և այլն: Զավեշտալի է, որ, ուսումնասիրելով այդ եկեղեցիների անդամների ֆինանսական վիճակը, պարզվում է, որ մեծ մասը ֆինանսական խնդիրներ ունի: Գործարարները մշտապես խոչընդոտների են բախվում և նույնիսկ տևական կորուստներ կրում: Արդյունքում, շատերը մեծ պարտքեր ունեն: Շատ ընտանիքներ հաճախ այնպիսի խնդիրների են բախվում, որոնք սպառում են իրենց խնայողությունները: Հնարավո՞ր է, որ պատճառն այն է, որ հավատացյալներն անտեսում են իրենց առաջնորդներին լավ վճարելու Աստծո պատվիրանը:

Ամեն ինչ ավելի պարզ է դառնում հակառակ պատկերը տեսնելու դեպքում: Ես նույնպես եղել եմ շատ եկեղեցիներում, որտեղ հովիվը և օգնականները բավականին լավ են վճարվում: Հաճախ եկեղեցու անդամները հատուկ քայլեր են անում իրենց ծառայողների համար. նվերներ են գնում, ընթրիք են պատվիրում հաճելի վայրերում և սիրալիրության այլ ժեստեր են ցուցաբերում: Ընդհանուր առմամբ, հետևելով այդ եկեղեցիների ընտանիքներին, եթե երկար ժամանակ տնկված են եկեղեցում, նրանք բարգավաճում են և հաջողակ կյանք ունեն: Նրանք միշտ պատրաստ են օգնել այրիներին, միայնակ մայրերին կամ կարիքավոր ընտանիքներին, քանի որ հավելյալ միջոցներ ունեն: Այդ եկեղեցիները կարող են ավելին անել ավետարանչական ծրագրերի համար և ավելի մեծ միջոցներ նվիրաբերել միսիոներական գործունեությանը, քան եկեղեցիների նախորդ խումբը: Այդպիսի արդյունքը չպետք է զարմացնի մեզ, քանի որ այն համապատասխանում է պատվի սկզբունքին:

Իսկ այժմ մտածեք այս մասին: Առաջին խմբին պատկանող եկեղեցիները, որոնք պատշաճ կերպով չեն վճարում իրենց

հովվին և նրա օգնականներին, պարծենում են, որ չեն վատնում իրենց ֆինանսները: Նրանք կարծում են, որ դրանով կարող են ավելին անել Աստծո թագավորության համար՝ միջոցներ նվիրաբերել միսիոներական գործունեությանը, օգնել աղքատներին և այլն: Այնուամենայնիվ, քանի որ նրանք չեն կատարում իրենց երեցներին լավ վճարելու Աստծո պատվիրանը, չեն կարողանում հասնել կարիքավորներին. նրանք նույնիսկ մոտ չեն մյուս խմբին պատկանող եկեղեցիների արդյունքներին, քանի որ իրենց գործարար մարդիկ խնդիրներ ունեն և, հետևաբար, իրենք բավականաչափ նվիրատվություններ չեն ստանում: Ինչո՞ւ մենք չենք հասկանում, որ Աստծո իմաստությունը մշտապես ճշմարիտ հաջողության ուղին է: Երբ մենք չենք վարվում այնպես, ինչպես Աստված է պատվիրում Իր Խոսքում, քանի որ համոզված ենք, որ ինքներս կարող ենք ավելին անել՝ Նրա գործը խթանելու համար, իրականում դա հպարտություն է կամ էլ կեղծ խոնարհություն: Մենք անուղղակիորեն ասում ենք, որ Աստծուց ավելին գիտենք: Աստված սիրում է աղքատներին, բայց միևնույն ժամանակ պատվիրում է մեզ կրկնակի վճարել Իր Խոսքը քարոզող մշակներին:

Ես գիտակցում եմ, որ այս ճշմարտությունը չարաշահվել է, հատկապես Ամերիկայում գտնվող ծառայողների մի փոքր տոկոսի կողմից: Ես տրտմում եմ, երբ առաջնորդները մշտապես խոսում են փողի և նյութականի մասին: Այդպիսի մարդիկ ճոխ կյանք են վարում և ավելի ձգտում են ժամանակավոր իրողություններին ու հաճույքներով լի կյանքին, քան կորսված և խոցված մարդկանց հասնելուն: Նրանք թողել են այն, ինչ Աստծո սրտում է, և ընտրել են վարձկանների ճանապարհը: Այժմ նրանց քարոզն աղավաղված է. նրանք կորցրել են իրենց արդյունավետությունը: Ահա թե ինչ է ասում Աստված նման առաջնորդներին.

> «Որովհետև Իմ ժողովրդի առաջնորդները՝ Տիրոջ դեռները, Նրա հովիվները, կույր են ցանկացած վտանգի հանդեպ: Նրանք նման են լուռ պահապան շների, որոնք չեն զգուշացնում, երբ վտանգ է մոտենում: Նրանք սիրում են պառկել, քնել և երազել: Եվ նրանք ագահ են շների պես, որոնք երբեք չեն հագենում: Նրանք հիմար

հովիվներ են. բոլորը հետևում են իրենց ճանապարհին, բոլորն անձնական շահի մտադրություն ունեն»:

– Եսայի 56.10,11, NLT

Ուշադրություն դարձրեք վերջին խոսքերին. «Բոլորն անձնական շահի մտադրություն ունեն»: «Ժամանակակից Անգլերեն թարգմանության» մեջ գրված է. «Դուք այնպիսի հովիվներ եք, որ անարդար եք վարվում ձեր գառների հետ՝ եսասիրական շահի համար»: Կան որոշ առաջնորդներ (ուրախ եմ ասել, որ նրանք շատ քիչ են), որոնք շահագործել են կանանց եկեղեցում, նաև չարաշահել են ֆինանսները և ծառայության համար նախատեսված այլ միջոցներ՝ իրենց անձնական հաճույքի համար: Նրանք խեղաթյուրել են պատվին վերաբերող այս ճշմարտությունը: Նրանց միտքը խավարել է, և նրանք գլխիվայր են շրջել ծառայության ամբողջ գաղափարը. այժմ այն իրենց շահերին է սպասարկում: Նրանք հեռացել են ծառայության ճշմարիտ նպատակից, որն Աստծո ժողովրդին պատշաճ կերպով սպասավորություն անելն ու կորսվածներին հասնելն է: Եթե նրանք չփոխվեն, նրանց վերջը սաստիկ դժգույն կլինի:

Այսպիսով, թե՛ քրիստոնեական ծառայության մեջ, թե՛ Աստվածաշնչում եղել են դեպքեր, երբ պատվի սկզբունքը չարաշահվել է: Այնուամենայնիվ, մենք պետք է հարց տանք. մի՞թե այդ չարաշահումները պետք է դրդեն մեզ թողնել Աստծո ծառայողներին կրկնակի պատիվ տալու սուրբգրային պատվիրանը: Աստված երբեք չի արդարացնի որևէ սխալմունք, որը գործվում է՝ ի պատասխան այլ սխալմունքի:

Զարմանալի շրջադարձ

Ամենավառ օրինակը եկեղեցու երեցից ֆինանսական պատիվը պահելու հետևանքների մասին, որի ականատեսը եղել եմ, տեղի է ունեցել մեր շրջիկ ծառայության վաղ տարիներին: Հիշում եմ, որ կինս և ես պետք է ծառայեինք շուրջ 120 անդամ ունեցող մի եկեղեցում: Այդ եկեղեցին գործում էր տարիներ շարունակ, և անդամների թիվը տատանվում էր 35-120-ի միջև: Այն չէր բարձրանում արդյունավետության նոր մակարդակի և ազդեցություն

չէր թողնում թե՛ իր բնակավայրի, թե՛ շրջակա բնակավայրերի վրա, որոնցում ավելի քան 250.000 բնակիչ կար:

Մենք պետք է քառօրյա հավաքույթներ անցկացնեինք: Այդ եկեղեցու հովիվը խնդրեց ինձ մնալ իր տանը, քանի որ եկեղեցու համար դժվար կլիներ տեղավորել մեզ հյուրանոցում: Մենք համաձայնեցինք, որովհետև նրանք նաև մեր ընկերներն էին, երբ սկսում էինք մեր շրջիկ ծառայությունը:

Մենք տեղ հասանք կիրակի երեկոյան և, ինչպես պարզվեց, այդ զույգն ապրում էր ոչ թե տան մեջ, այլ վարձակալած երկհարկանի բնակարանում: Նրանց մեքենան հին էր, և տանը շատ իրեր չունեին, բայց նրանք տրամադրեցին մեզ այն, ինչ ունեին: Այդ հովվի կինը չափազանց հյուրասեր էր, նրանք շատ բարի և գթասիրտ զույգ էին: Ես զարմացա, որ նրա կինը դեռ աշխատում էր մի խոշոր ավիաընկերությունում՝ որպես ուղեկցորդուհի: Նա ամսվա ընթացքում քաղաքում չէր լինում մոտավորապես տասնհինգից տասնութ օր:

Հավաքույթները բավականին լավ էին ընթանում, սակայն մթնոլորտում ինչ-որ լարվածություն կար: Մենք չէինք կարողանում ճեղքում ունենալ Աստծո ներկայության, զորության և օծության մեջ: Թվում էր՝ կար Երկնքից ստանալու խոչընդոտ: Եկեղեցու մարդիկ սրտաբաց էին, նկատելի էր, որ շատերը խորապես սիրում էին Աստծուն: Դա շփոթեցնում էր ինձ:

Հավաքույթների երրորդ օրը ես տևական ժամանակ տրամադրեցի աղոթքին: Հոգիս անհանգիստ էր. չէի հասկանում, թե որն էր խնդիրը, նույնպես և չէի կարողանում փարատել իմ ունեցած զգացումը: Աղոթքի մեջ շարունակ մտածում էի, որ այդ հովիվը և նրա կինը ֆինանսապես ապահովված չէին: Ի վերջո լսեցի Աստծուց. «Դու պետք է զբաղվես այս խնդրով այսօրվա ծառայությանը»:

Ես հարցրի, թե ինչպես անեմ դա, և Աստված ցույց տվեց, որ այդ խոչընդոտը քանդելու համար պետք է սովորեցնեի այդ եկեղեցուն իրենց հովվին ֆինանսապես օրհնելու կարևորության մասին: Ես ուժգնորեն զգացի, որ պետք է զոհաբերություն հավաքեմ այդ հովվի և նրա կնոջ համար, սակայն դեռ հստակ չգիտեի, թե ինչպես էի անելու դա:

Ցերեկվա ընթացքում այդ հովիվն ասաց.

- Ջո՛ն, այսօր երեկոյան ես զոհաբերություն չեմ հավաքելու քո ծառայության համար: Ուզում եմ, որ ինքդ անես դա:

Ես ժպտացի՝ տեսնելով ինձ համար բացված դուռը: Փոխարենը զոհաբերություն հավաքեի մեր ծառայության համար, ես զոհաբերություն էի հավաքելու այդ հովվի և նրա կնոջ համար: Երբ այդ հովիվը ներկայացրեց ինձ այդ երեկո, և ես բեմ բարձրացա, նա շշնջաց.

- Հիշի՛ր, Ջո՛ն, դու լիովին ազատ ես զոհաբերության հարցում:

Ես պարզապես ժպտացի: Գիտեի, որ նա լիովին անակնկալի էր գալու այն պատճառով, ինչ անելու էի: Ես կանգնեցի ամբիոնի ետևում և խնդրեցի եկեղեցուն բացել Ա Տիմոթեոսի 5.17-ը: Հաջորդ 45 րոպեում սովորեցնում էի նրանց, թե որքան կարևոր է ֆինանսապես հոգալ իրենց հովվի մասին:

Առանց ամբարտավան թվալու կարող եմ գրել, որ ես խստորեն հանդիմանեցի այդ եկեղեցուն: Մի պահ ասացի.

- Ինչո՞ւ ձեր հովվի կինը պետք է ամսվա կեսը ճանապարհորդությունների մեջ անցկացնի: Այս զույգը պետք է ֆինանսապես այնքան կայուն վիճակում լինի, որ ձեր հովվի կինը կարողանա տանը մնալ և օգնել ամուսնուն:

Այդ հովվի երեսն ավելի ու ավելի էր շառագունում: Նա անհանգիստ էր այդ առճակատման պատճառով: Նա վախենում էր, որ մարդիկ կմտածեին, որ ինքն էր խնդրել ինձ խոսել այդ մասին, և մտահոգվում էր, որ միգուցե մի քանի ընտանիք հեռանար եկեղեցուց (ուզում եմ պարզաբանել, որ ես ոչ մի եկեղեցում չեմ խոսի հիմնարար ուսմունք չհանդիսացող որևէ թեմայով, եթե իմանամ, որ այդ եկեղեցու առաջնորդը համաձայն չէ իմ ասածին: Այս դեպքում ես տեղյակ չէի այդ մասին: Պարզապես նկատեցի, որ իմ ուղերձը քարոզելու ընթացքում նա ավելի ու ավելի էր անհանգստանում):

Կարող եմ ուրախությամբ ասել, որ այդ երեկո եկեղեցին ընդունեց այն, ինչ Աստված դրել էր իմ սրտում: Ուղերձիս վերջում ասացի.

- Ձեր հովիվը խնդրել էր, որ այս երեկո զոհաբերություն հավաքեի մեր ծառայության համար: Սակայն մենք այլ բան կանենք:

Այս երեկո հավաքված զոհաբերությունը փոխանցվելու է ձեր հովվին և նրա կնոջը: Ի դեպ, կատարելով այս նվիրատվությունը, ձեր հարկերը չեն նվազի. ես ցանկանում եմ, որ ցույց տաք ձեր գնահատանքն Աստծո պարգևի՝ ձեր հովվի հանդեպ:

Մենք զոհաբերություն հավաքեցինք, և ծառայությունն ավարտվեց: Ես զրուցեցի եկեղեցու անդամներից մի քանիսի հետ, իսկ հովիվն աննկատ դուրս պրծավ սրահից՝ գնալով եկեղեցու գրասենյակ: Երբ նկատեցի, որ նա հեռացել է դահլիճից, հետևեցի նրան: Անմիջապես նկատեցի, որ նրա դեմքն այլևս շառագունած չէր. այն սովորական տեսք ուներ: Ես արդեն գիտեի, որ լավ լուր էի լսելու, և ժպտալով հարցրի.

- Որքա՞ն էր զոհաբերության չափը:

Նա ասաց զոհաբերության չափը: Ես գրեթե ուշագնաց եղա. այն նրանց կիրակնօրյա ծառայություններին հավաքված զոհաբերության եռապատիկից ավելին էր: Ես գիտեի, որ այդ զոհաբերությունն առատ էր լինելու, բայց այն գումարի չափը, որ նրանք ասացին, ավելին էր, քան կարող էի պատկերացնել այդպիսի քանակ ունեցող եկեղեցուց:

Հաջորդ երկուշաբթի այդ հովիվը զանգեց ինձ և ոգեշնչված ձայնով ասաց.

- Ջո՛ն, ուղարկում եմ քեզ մեր կիրակնօրյա ծառայության ձայնագրությունը:

Ես հանկարծակիի եկա նրա խոսքերից.

- Լա՛վ, ես կլսեմ, թե ինչ ես երեկ քարոզել:

Նա արագորեն պատասխանեց.

- Ջո՛ն, ես չեմ քարոզել: Ուղիղ երկու ժամ իմ եկեղեցու անդամները, հաջորդաբար մոտենում էին բեմին և վկայում այն զարմանալի ֆինանսական հրաշքների մասին, որոնք այդ շաբաթ տեղի էին ունեցել նրանց ընտանիքներում և ձեռնարկություններում: Ես երկյուղով համակվեցի, բայց չզարմացա: Գիտեի, որ Աստված զարմանալի աշխատանք էր կատարելու, բայց չէի մտածում, որ դա այդքան արագ էր տեղի ունենալու:

Երեք տարի անց ես վերադարձա այդ եկեղեցի: Նրանք այլևս չէին հավաքվում վարձակալած առևտրային տարածքում, այլ

ավագ դպրոցի շենք էին վերանորոգել և տեղափոխվել էին այնտեղ: Ավելին՝ եկեղեցին չէր վարձակալում այդ շենքը. նրանք գնե՛լ էին այն: Նրանց հավաքույթներին հաճախողների թիվը հնգապատկվել էր: Հովվի կինը թողել էր աշխատանքը, քանի որ նա ֆինանսապես պատիվ էր ստանում եկեղեցուց, և արդյունքում եկեղեցու ընտանիքները և գործարարները բարգավաճել էին:

«Մի՛ ասա՝ ինձ դուր է գալիս ինչ-որ բան»

Այս սկզբունքը երբեք չի ձախողվում: Եթե մենք ֆինանսապես պատվենք մեր հոգևոր առաջնորդներին, կբարգավաճենք: Ես մտածում եմ Դոկտոր Դեյվիդ Չոյի մասին, ով աշխարհի ամենամեծ եկեղեցիներից մեկի հովիվն է Սեուլում՝ Հարավային Կորեայում: Նա տարիներ առաջ հիմնեց իր եկեղեցին ետնախորշերում, և այս գիրքը գրելու պահին նրա եկեղեցական խորհրդի երկու անդամներից տեղեկացա, որ նրա եկեղեցում ավելի քան հիսուն հազար միլիոնատեր կա: Մի քանի անգամ հյուրընկալել եմ նրան, գոլֆ եմ խաղացել նրա հետ, ճաշել եմ նրա և նրան ուղեկցող մարդկանց հետ ռեստորաններում: Նա սովորաբար ճանապարհորդում է մի քանի գործարարների և օգնականների հետ: Այդ մարդիկ ամեն ինչ անում են, որպեսզի Չոյի յուրաքանչյուր կարիք լրացված լինի. նրանք գնում են այն, ինչ անհրաժեշտ է նրան, և ես հատուկ ուշադրություն դարձրի, որ նրանք սեղան չեն նստում՝ քանի դեռ նա չի նստել: Նրանք մեծապես պատվում են Չոյին: Հնարավո՞ր է, որ քաղաքի ծայրահեղ աղքատ շրջանում հիմնված այդ եկեղեցին այդքան շատ հարուստ անդամներ ունի այն պատվի շնորհիվ, որը նրանք ցուցաբերում են իրենց հովվի հանդեպ:

Ես մի մտերիմ ընկեր ունեմ, որի անունն Ալ Բրայս է: Նա մի զարմանալի եկեղեցի է հովվում Ֆայեթվիլում, Հյուսիսային Կարոլինայում: Ալը մասնակցել է Միացյալ Նահանգների գոլֆի սիրողական մրցաշարին 1980 թվականին. նա գերազանց գոլֆ խաղացող է: Դոկտոր Չոն սիրում է գոլֆ խաղալ իր բազմաթիվ օգնականների և ընկերների հետ, ուստի Ալը հատկապես դուր եկավ նրան:

Մի անգամ Դոկտոր Չոն և նրա օգնականները Միացյալ Նահանգներում էին և պետք է գոլֆ խաղային Ալի հետ: Դոկտոր Չոյի հետ ճանապարհորդող մարդկանցից մեկը դուրս եկավ իր վարձած ավտոմեքենայից և վերցրեց իր գոլֆի մականները: Նա քիչ առաջ գոլֆի նոր դիզայներական պայուսակ էր գնել Նյու Յորքի Հինգերորդ պողոտայից, որը մի քանի հազար դոլար արժեր: Ալը, սիրալիր լինելու համար, ասաց, որ այն գեղեցիկ է: Հանկարծ, ի զարման Ալի, այդ մարդն իր նոր պայուսակից հանեց իր մականները: Դատարկելով դրանք՝ նա վերցրեց Ալի մականները նրա պայուսակից և դրեց իր նոր դիզայներական պայուսակի մեջ: Ալն արագորեն ասաց.

- Ո՛չ, կանգ առեք, ի՞նչ եք անում:

Այդ կորեացին պատասխանեց.

- Ես պատվում եմ ձեզ. ուզում եմ նվիրել ձեզ այս պայուսակը:

Իմ ընկերը փորձեց թույլ չտալ դա, բայց նա չէր ցանկանում տարհամոզվել:

Մի քանի ամիս անց Ալը Կորեայում էր և կրկին պատրաստվում էր գոլֆ խաղալ Դոկտոր Չոյի և նրա օգնականների հետ: Նա տեսավ գոլֆի կոշիկների շատ գեղեցիկ զույգ սպորտային խանութում և ասաց.

- Այս կոշիկները հրաշալի տեսք ունեն:

Դոկտոր Չոյի մարդկանցից մեկն անմիջապես վերցրեց այդ կոշիկը դարակից և գնաց դրամարկղի մոտ: Ալն ասաց.

- Ո՛չ, ո՛չ, ես կոշիկի կարիք չունեմ: Պարզապես նկատեցի, որ դրանք շատ լավն են:

Այդ մարդն ասաց.

- Ո՛չ, պարոն, ես պատվում եմ ձեզ: Ուզում եմ, որ դրանք ձերը լինեն:

Երբ Ալը պատմում էր դա ինձ, նա ջերմորեն ծիծաղեց և ասաց.

- Ես սովորել եմ այն, որ երբ Դոկտոր Չոյի մարդկանց հետ եմ, և ինձ ինչ-որ բան է դուր գալիս, երբեք չարտահայտվեմ, քանի որ նրանք կգնեն դա ինձ համար:

Այդ հավատացյալները բարձր մակարդակի պատիվ են ցուցաբերում և օրհնված են դրա շնորհիվ:

Օրհնված կյանք

Ես մեկ այլ ընկեր ունեմ՝ Ջեքը, ով հիմա Տիրոջ մոտ է: Նա շատ հաջողակ և ազդեցիկ անձնավորություն էր: Նրա ծառայությունը մեծ ազդեցություն է թողել հարյուր հազարավոր մարդկանց կյանքերում:

Երբ Ջեքը երիտասարդ էր և առաջին քայլերն էր անում ծառայության մեջ, նրա հովվի եկեղեցին մեծ հարգանք էր վայելում Միացյալ Նահանգներում: Իր հովվին տարիներ շարունակ ծառայելուց հետո Ջեքն ուղարկվեց մեկ այլ վայր ԱՄՆ-ում՝ նոր եկեղեցի հիմնելու համար:

Մի քանի տարում նրա եկեղեցին հասավ հինգ հազար անդամի: Ես հաճախ էի քարոզում այնտեղ, և մենք հաճույքով էինք միասին ժամանակ անցկացնում: Հստակ հիշում եմ, որ մի օր նա պատմում էր ինձ, թե որքան էր սիրում, արժևորում և հարգում իր նախկին հովվին: Նա այդ մարդուն համարում էր իր հոգևոր հայրը: Ջեքն ասաց.

- Ջո՛ն, ես որոշել եմ, որ ամեն անգամ, երբ տեսնեմ իմ հովվին, հազար դոլարի չեկ նվիրեմ:

Ես զարմացա այդ տեսակ պատիվ տալու գաղափարից:

Նրա խոսքերից հետո սկսեցի մտածել, թե որքան մեծ վարձատրություն էր նա վայելում: Նրա թաղման արարողությունը տևեց ավելի քան չորս ժամ, և եկեղեցական դահլիճում ազատ տեղ չկար: Եկել էր ավելի քան հինգ հազար մարդ՝ ոչ միայն եկեղեցու անդամները, այլև բազմաթիվ աշխատողներ այդ քաղաքից, որոնք նրա եկեղեցուց չէին: Շատերն այդ բնակավայրում հարգանք ունեին նրա հանդեպ:

Ջեքի եկեղեցու անդամները պատվում էին նրան: Նրանք ցանկանում էին լավագույնս վճարել նրան, բայց, խելամիտ ներդրումների շնորհիվ, նա կարիք չուներ աշխատավարձ ստանալ իր եկեղեցուց: Նա որոշել էր ներդնել իր աշխատավարձն իր ծառայության մեջ: Ես չեմ տեսել շատ մարդկանց, որոնք Աստծո այնպիսի օրհնության մեջ են ապրում, ինչպես նա: Նրա կինը և դուստրերը անչափ սիրում էին նրան: Նա գեղեցիկ տան մեջ էր

բնակվում և շատ ընկերներ ուներ: Ջեքը ֆինանսապես պատվում էր իր հոգևոր հորը, ինչի շնորհիվ մեծ վարձատրություն էր ստանում կյանքի բազմաթիվ բնագավառներում:

Մեր հավաքույթներին

«Դու հավատարմություն ես ցուցաբերում Աստծուն, երբ հոգ ես տանում ճանապարհորդող ուսուցիչների մասին, որոնք անցնում են այն վայրով, որտեղ դու ես բնակվում, նույնիսկ եթե նրանք անծանոթ են քեզ: Նրանք պատմել են այստեղի եկեղեցուն քո սիրառատ վերաբերմունքի մասին: Խնդրում եմ, շարունակի՛ր մատակարարել այսպիսի ուսուցիչներին Աստծուն հաճելի կերպով: Որովհետև նրանք ճանապարհորդում են Տիրոջ համար, և նրանք ոչինչ չեն ընդունում ոչ հավատացյալ մարդկանցից: Այնպես որ, ինքներս պետք է աջակցենք նրանց, որպեսզի կարողանանք դառնալ նրանց գործընկերները, քանի որ նրանք սովորեցնում են ճշմարտությունը»:

– Գ Հովի. 5-8 խոսքեր, NLT

Աշխարհով մեկ ճանապարհորդելով և ծառայելով եկեղեցիներում՝ նկատել եմ, որ այն եկեղեցիները, որոնք բացառիկ հյուրասիրությամբ հոգում են մեր թիմի մասին, և այն եկեղեցիները, որոնք սովորական այցելուների պես են վերաբերվում մեզ, շատ տարբեր արդյունքներ ունեն ծառայության մեջ:

Ես եղել եմ այնպիսի եկեղեցիներում, որ նույնիսկ չէի հասկանում, թե ինչու էին ինձ հրավիրել: Այդ մարդիկ տեղավորում էին մեզ ցածրորակ հյուրանոցներում կամ իջևանատներում, որոնց համարներում չկար շշալցված ջուր, չկային թեթև խորտիկներ, և համարները չէին սպասարկվում: Հովվի աշխատասենյակում ինձ ողջունում էին ոչ թե ջերմությամբ և շնորհակալությամբ՝ իրենց այցելելու համար, այլ՝ կարծես ասելով. *«Ես այսինչ սպասումներն ունեմ ձեզնից»:* Մի քանիսը նույնիսկ վերաբերվել են հետևյալ կերպով. *«Այստեղ մենք կարևոր աշխատանք ենք կատարում, և ձեզ համար արտոնություն է մեզ մոտ քարոզելը»:*

Երբ ինձ ներկայացնում են, մարդիկ նստած են մնում՝ հառելով

անտարբեր հայացքներն ինձ վրա: Նրանց մտքերը գրեթե լսելի են. *«Մենք լսել ենք բոլորին. ինչ նոր ասելիք ունես»:* Քարոզելիս ինձ թվում է, թե ես դատարանի առջև եմ կանգնած:

Երբ ավարտում եմ այդ հավաքույթները, ես սպառված եմ զգում: Նման հավաքույթի ամբողջ ընթացքում ես հոգևորապես հերկում եմ՝ ճեղքելով հակառակությունը, փոխարենը խմեցնեմ ծարավ սրտերին: Եվ վերջում հովիվը զոհաբերության չեկ է տալիս ինձ, որն այնքան չնչին է, որ եթե այդ եկեղեցին ամեն շաբաթ այդքան գումար ստանար, նույնիսկ գոյատևել չէր կարողանա: Ուրախ եմ ասել, որ այսպես հաճախ չի լինում:

Ես մի դեպք եմ հիշում, երբ ինձ և մեկ այլ քարոզչի հրավիրել էին մեկ շաբաթ տևող համաժողովի: Այդ եկեղեցու հովիվն ասաց, որ նրանք ավելի քան 250 հազար դոլարի զոհաբերություն էին հավաքել այդ համաժողովի ընթացքում: Ես շատ ուրախ էի նրանց համար: Այնուամենայնիվ, երբ մեկնում էի, նրանք 600 դոլարի չեկ տվեցին ինձ: Դա հազիվ կարելի էր թեյավճար համարել, այն էլ՝ ոչ լավ: Այդ զոհաբերության միայն տասը տոկոսը 25 հազար դոլար էր: Այնպես որ, նրանց տված չեկը մի փոքր ավելի էր այդ գումարի մեկ տոկոսի երկու տասնորդականից (այսինքն՝ 0.2 տոկոսից):

Ես սովորել եմ, որ դա չի ազդում մեր ծառայության վրա, քանի որ Աստված տարբեր ճանապարհներով մշտապես մատակարարում է մեզ այն, ինչի կարիքը ունենք: Ամեն անգամ անցյալում, երբ եկեղեցիները նման կերպով թեյավճար են տվել մեզ (կարծում եմ՝ ես չեմ էլ կարող թեյավճար անվանել դա, քանի որ դա շատ ավելի ցածր է թեյավճարի չափանիշից), մենք նույն շաբաթվա ընթացքում փոստով խոշոր նվիրատվություն ենք ստացել որևէ անհատից, կամ հերթական եկեղեցին ենք այցելել, և նրանք շատ մեծ զոհաբերություն են տվել մեզ: Ինձ դա դուր է գալիս, քանի որ Աստված կարծես ասում է մեզ. «Ես ամեն ինչ գիտեմ»:

Ես տեսել եմ Աստծո հավատարմությունը մեզ մատակարարելու հարցում, և երբեք քունս չեմ կորցրել այդ պատճառով: Ես տրտմում եմ ինձ փշրանքներ տվող մարդկանց համար. նրանք մեծ վարձատրություն ստանալու հնարավորություն են բաց թողել՝ Հիսուսից իրենց մոտ ուղարկված մարդուն չպատվելու պատճառով:

Մյուս կողմից, ես այնպիսի եկեղեցիներում եմ եղել, որոնցում, օդանավակայանում դիմավորելու պահից մինչև կրկին օդանավակայան ճանապարհելը, ինձ ընդունել են մեծ ոգևորությամբ, վերաբերվել են բացառիկ բարությամբ և սիրառատ հյուրասիրությամբ:

Ես հյուրանոցային համար եմ հասնում, որտեղ ինձ համար մրգերով, ըմպելիքներով և թեթև խորտիկներով լի մեծ զամբյուղ է պատրաստված լինում, որը բավականացնում է մեկ շաբաթ: Այդ եկեղեցին նախապես ճշտում է մեր գրասենյակից, թե ինչ թեթև խորտիկներ եմ սիրում: Նույնիսկ պատահել է, որ հյուրանոցային համար հասնելով՝ տեսել եմ ինձ սպասվող նվերները, օրինակ՝ գեղեցիկ գրիչ, գոլֆի գնդակներ կամ բուրումնաջուր: Ինձ տեղավորում են այդ բնակավայրի լավագույն հյուրանոցում, ապահովում են համարների սպասարկում և այնպիսի հարմարություն, որոնք ճանապարհորդական կյանքն ավելի շուտ դարձնում են տան նման: Եվ այդպիսի վերաբերմունք ստանում եմ ոչ միայն ես, այլև ինձ հետ ճանապարհորդող մարդիկ:

Երբ բարձրանում եմ ամբիոնի մոտ, մարդիկ ողջունում են ինձ՝ կանգնելով և բարձր ծափահարելով: Նրանք շնորհակալ են Աստծուց՝ Իր ավետաբերներից մեկին իրենց մոտ ուղարկելու համար, և ոգեշնչված սպասում են Աստծո Խոսքը լսելուն: Նրանք ուշադրությամբ են լսում Աստծո Խոսքը. ոչ ոք չի շարժվում և չի խոսում ծառայության ընթացքում, քանի որ չեն ցանկանում ինչ-որ բան բաց թողնել: Նրանք բաց սրտով ընդունում են Աստծո ներկայությունն աղոթքի ժամանակ, և վերջում շտապում են մեր գրքերի սեղանի մոտ, որպեսզի ստանան ավելին մեր գրքերից և դասընթացներից:

Այսպիսի եկեղեցիները ամիսներ և նույնիսկ տարիներ անց կապ են հաստատում մեր գրասենյակի կամ ինձ հետ և ասում են. «Մեր ծառայությունը մեծապես խթանվեց ձեր այցելության շնորհիվ», կամ՝ «Մեր աշխատակազմը և եկեղեցին նույնը չմնացին. թվում է՝ մենք այլ մակարդակի ենք բարձրացել»: Երբեմն ներքուստ ծիծաղում եմ, քանի որ միգուցե դրանից մեկ շաբաթ առաջ ես մի եկեղեցում եմ եղել, որտեղ ինձ վերաբերվել են սովորական այցելուի պես: Ես ծառայել եմ նույն ուղերձով և այցելել եմ նույն նպատակով, բայց արդյունքներն աննշան են եղել, և իմ հեռանալուց հետո

ոչ ոք ոչ մի վկայություն չի տվել: Սա կրկին ցույց է տալիս, որ այս ամենը որևէ առնչություն չունի ինձ հետ, այլ պայմանավորված էր այն բանով, թե ինչպիսի ընդունելություն եմ ստանում:

Հիսուսն ասում է. «Ով որ ձեզ ընդունում է, Ինձ է ընդունում, և ով որ Ինձ ընդունում է, Ինձ Ուղարկողին է ընդունում»: Ինչպիսի՞ հոգատարություն կցանկանայիք ցուցաբերել Հիսուսի հանդեպ, եթե Նա ձեր եկեղեցու հովիվը լիներ, կամ եթե Նա ձեր եկեղեցի այցելեր՝ շաբաթավերջին քարոզելու համար: Իրականում, մեր վերաբերմունքն այն մարդկանց հանդեպ, որոնց Նա ուղարկում է մեզ մոտ, միանգամայն ցույց է տալիս, թե ինչպես ենք վերաբերվում Նրան, և թե ինչպես ենք վերաբերվում Հորը:

Պատվե՛ք Տիրոջը

Կրկին դիտարկենք պատվի սկզբունքը: Աստված ասում է.

> «Ովքեր պատվում են Ինձ, Ես կպատվեմ, և ովքեր արհամարհում են Ինձ, ցածր կգնահատվեն»:
>
> – Ա Թագ. 2.30, NKJV

Այս աստվածաշնչյան խոսքը պետք է փորագրվի մեր սրտերում: Աստված պատվով է պատասխանում նրանց, ովքեր պատվում են Իրեն: Բարձրաձայն ասե՛ք. «Եթե ես պատվեմ Աստծուն, Նա կպատվի ինձ»: Շարունակ կրկնեք այս պնդումը, մտածե՛ք այս մասին և թո՛ւյլ տվեք, որ այս խոսքերն իջնեն ձեր սրտի խորքը: Պատվելով Աստծուն՝ դուք գրավում եք Նրա պատիվը ձեր հանդեպ: Սա զարմանալի իրողություն է: Եկեք ավելի խորը ուսումնասիրենք այս ճշմարտությունը: Գրված է.

> «Պատվի՛ր Տիրոջը քո ունեցվածքով և քո ամբողջ առատության առաջին արդյունքներով»:
>
> – Առակաց 3.9, NKJV

Մեզ պատվիրված է պատվել Տիրոջը մեր ունեցվածքով: «Ընդլայնված թարգմանության» մեջ գրված է. «Պատվի՛ր Տիրոջը քո դրամական միջոցներով և [արդար գործերից ստացված] բավա-

կանությամբ և քո ամբողջ եկամտի առաջին արդյունքներով»: «Ժամանակակից Անգլերեն թարգմանության» մեջ գրված է. «Պատվի՛ր Տիրոջը՝ տալով Նրան քո փողը»: Աստծուն պատվելու ձևերից մեկը Նրան մեր ֆինանսները տալն է: Իմ հարցն է՝ ինչպե՞ս կարող ենք ֆինանսներ տալ Նրան: Չէ՞ որ Նա չի օգտվում մեր տարադրամից: Պատասխանը պարզ է՝ տալով դրանք այն մարդուն, ում Նա ուղարկում է ձեզ մոտ:

Եթե մանրակրկիտորեն ուսումնասիրեք տասանորդը և զոհաբերությունը ամբողջ Աստվածաշնչում, կպարզեք, որ դրանք տրվում են երեք հիմնական նպատակներով: Առաջինն է՝ տրամադրել դրանք այն կարգված ծառայողներին, որոնք ծառայում են մեզ, քանի որ, ինչպես ավելի վաղ հստակ տեսանք այս գլխում, նրանք արժանի են «կրկնակի վճարվելու»: Երկրորդը՝ լրացնել այն կարիքները, որոնք ծառայողն ունի՝ ծառայության գործը կատարելու համար: Եվ երրորդը՝ որպեսզի ծառայողները կարողանան օգնել աղքատներին, այրիներին, որբերին և Աստծո ժողովրդին չպատկանող մարդկանց:

Ցանկանում եմ մեջբերել այս նպատակներից յուրաքանչյուրին վերաբերող բազմաթիվ աստվածաշնչյան հատվածներից միայն մեկական հատված: Առաջինը Պողոսի խոսքերում է՝ ուղղված կորնթացիներին. «Եթե մենք ձեզանում հոգևորները սերմեցինք, մե՞ծ բան է, որ ձեզնից մարմնավորները հնձենք... Այնպես էլ, Տերը հրաման տվեց Ավետարանը քարոզողներին Ավետարանից ապրել» (Ա Կորնթ. 9.11,14):

«Նոր Կենդանի թարգմանության» մեջ գրված է հետևյալը. «Տերը պատվիրեց, որ Բարի լուրը քարոզողներն աջակցություն ստանան դրանից օգուտ ստացող մարդկանցից»: Այս սկզբունքը նույնպես կա Հին կտակարանում: Քահանաների և ղևտացիների ժառանգությունը պետք է ստացվեր ժողովրդի տասանորդներից: Նրանց չէին տրվել հողատարածքներ՝ աշխատելու համար, ինչպես այլ ցեղերին:

Երկրորդ նպատակը կարելի է տեսնել Փիլիպպեի եկեղեցուն ուղղված Պողոսի խոսքերում.

«Եվ դուք, փիլիպեցիներ, ինքներդ լավ գիտեք, որ Ավետարանի ծառայության վաղ օրերին, երբ ես Մակեդոնիայում էի, ոչ մի եկեղեցի (ժողով) համագործակցության մեջ չմտավ ինձ հետ և չբացեց տալու և ստանալու [դեբիտային կամ կրեդիտային] հաշիվ՝ բացի ձեզնից: Որովհետև նույնիսկ Թեսաղոնիկեում դուք ուղարկեցիք [ինձ հանգանակություններ] իմ կարիքների համար, ոչ միայն մեկ անգամ, այլև երկրորդ անգամ էլ... Բայց ես ստացել եմ [ձեր ամբողջական վճարումը] և ավելին. ես ունեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ է ինձ, և առատորեն մատակարարված եմ՝ այժմ, որ ստացա Եպափրոդիտոսից այն նվերները, որոնք ուղարկեցիք ինձ: [Դրանք] նվիրատվության և զոհաբերության անուշահոտ բուրմունք են, որը հաճելի է Աստծուն, և որը բերկրանք է պատճառում Նրան»:

– Փիլիպ. 4.15,16,18, AMPC

Կարող եք տեսնել, որ նրանց ֆինանսական նվիրատվությունները թույլ տվեցին Պողոսին կատարել այն աշխատանքը, որի համար նա կանչված էր: Հասկանալի է, որ հասարակական ծառայություն իրականացնելու համար միջոցներ են հարկավոր: Իր իսկ խոսքով, Պողոսն «առատորեն մատակարարված» էր: Նվիրատվություն կատարելու միջոցով նրանք դարձան Պողոսի գործընկերները՝ մարդկանց Ավետարանը հասցնելու գործում:

Ինչ վերաբերում է երրորդ կետին, Հին կտակարանում Աստված պատվիրում էր տալ տասանորդը ղևտացուն (ծառայողին), օտարականին, որբին և այրուն (տե՛ս Երկր. Օր. 26.12): Նոր կտակարանում բոլոր առաջնորդները համաձայնեցին հետևյալ հարցում. «Նրանք միայն ցանկացան, որ մենք հիշեինք աղքատներին՝ հենց այն, ինչը ես նույնպես հոժարաբար ցանկանում էի անել» (Գաղատ. 2.10, NKJV):

Աղքատներ են համարվում օտարականները, որբերը և այրիները: Նվիրատվություններ տալով ծառայողներին, մենք կարող ենք օգնել կարիքավոր մարդկանց, որոնց միգուցե երբեք անձամբ չհանդիպենք:

Ինչպես արդեն նշեցի, մենք պատվում ենք Աստծուն մեր ֆինանս-

ներով՝ տալով այն մարդկանց, որոնց Նա ընտրել է ծառայության համար: Այնպես որ, մենք պետք է հարց տանք. քանիսն են այսօր անարգում Աստծուն՝ չտրամադրելով ծառայության գործին այնքան, որքան պետք է տրամադրեին: Շատերը տասանորդ չեն տալիս, նաև զոհաբերություններ չեն տալիս այն մշակներին, որոնք հոգևոր ճշմարտություններ են ցանել իրենց կյանքում: Նրանք տրտնջում են, որ ծառայողները ֆինանսներ են խնդրում, և ասում են. «Ինչո՞ւ նրանք չեն կարող պարզապես քարոզել ինձ՝ առանց զոհաբերությունների մասին խոսելու: Վերջին շրջանում իմ գործերն այնքան էլ լավ չեն»: Միգուցե հենց սա՞ է պատճառը, որ նրանք դժվարություններ ունեն. այն, որ Աստծո գործն առաջին տեղում չէ նրանց համար: Ըստ էության, նրանք պատվում են իրենց ավելի, քան Աստծուն:

> «Ահա թե ինչ է ասում Ամենակարող Տերը. «Մտածե՛ք, թե ինչպես են ընթանում ձեր գործերը: Դուք շատ ցանեցիք, բայց քիչ հնձեցիք: Դուք ուտելու կերակուր ունեք, բայց այն բավական չէ, որ կշտանաք: Դուք խմելու գինի ունեք, բայց այն բավական չէ, որ տաքանաք: Ձեր աշխատավարձն անհայտանում է, ասես դուք ծակ գրպաններում եք դրել այն»: Ահա թե ինչ է ասում Ամենակարող Տերը. «Մտածե՛ք, թե ինչպես են ընթանում ձեր գործերը: Այժմ վե՛ր գնացեք սարերը, գերաննե՛ր բերեք և կրկի՛ն կառուցեք Իմ տունը: Այդ ժամանակ այն հաճելի կլինի Ինձ, և Ես պատիվ կստանամ, - ասում է Տերը: - Դուք հարուստ հունձքերի հույս ունեիք, բայց դրանք աղքատիկ էին: Եվ երբ տուն էիք բերում հունձքը, Ես փչումցրում էի այն: Ինչո՞ւ: Որովհետև Իմ տունն ավերակների մեջ է, - ասում է Ամենակարող Տերը, - մինչդեռ դուք միայն զբաղված եք ձեր գեղեցիկ տները կառուցելով»»:
>
> – Անգե 1.5-9, NLT

Մի՞թե կարելի է սրանից էլ պարզ ասել: Պատկերացրեք, որ որոշ մարդիկ Սուրբ գրքում, որոնցով մենք հիանում ենք, ունենային նույն վերաբերմունքը, որը շատերն այսօր ունեն այն ծառայողների նկատմամբ, որոնք դժվարին ժամանակներում փողի մասին են խոսում: Կային շատ այրիներ, որոնք մահացան Եղիայի օրերի մեծ սովի ժամանակ: Այնուամենայնիվ, նրանցից մեկն ապ-

րեց՝ պատվի սկզբունքի շնորհիվ: Այդ կնոջ և նրա որդու ալյուրը և ձեթը բավական էին միայն վերջին անգամ կերակուր պատրաստելու համար. դրանից հետո երկուսն էլ մահանալու էին: Այնուամենայնիվ, մարգարեն պատվիրեց նրան սկզբում իր համար մի շոթ պատրաստել: Ինչպե՞ս նա կհալածվեր այսօր՝ թե՛ եկեղեցիներում, թե՛ սոցիալական ցանցերի և ԶԼՄ-ների միջոցով: Շատերը կքննադատեին նրան. «Ինչպե՞ս կարողացար ինչ-որ բան վերցնել այդ խեղճ կնոջից, որը շուտով սովամահ կլինի: Դու, նախ, պետք է ինչ-որ բան տայիր նրան»: Այնուամենայնիվ, Աստծո Խոսքը խրատեց մարգարեին, որ պատվիրեր այդ կնոջը՝ առաջին տեղը տալ Աստծուն՝ կերակրելով Նրա ծառային: Եթե այդ կինն այդ կերպով պատվեր Եղիային, Աստված էլ նրան կպատվեր: Այդ կինն այդպես էլ վարվեց, և Աստված կատարեց Իր խոստումը. նրա ալյուրը և ձեթը չվերջացան այդ երկրում տիրող երաշտի ամբողջ ընթացքում (տե՛ս Ա Թագ. 17-րդ գլուխ):

Երբ մենք պահում ենք տասանորդը կամ զոհաբերությունը այն մարդկանցից, որոնց Աստված ուղարկում է մեզ մոտ, մենք միայն մեզ ենք վնասում, քանի որ անարգում ենք Տիրոջը: Աստված Ինքն է խոսում մարգարեի միջոցով.

> ««Մի՞թե մարդը կթալանի Աստծուն: Սակայն դուք թալանե՛լ եք Ինձ»: Բայց դուք կասեք. «Ինչպե՞ս ենք մենք թալանել Քեզ»: - «Տասանորդներում և ընծաներում»»:
>
> – Մաղաքիա 3.8, NKJV

Եթե ընտրության առջև կանգնեի, ես ավելի շուտ բանկ կթալանեի, քան Աստծուն: Ինչո՞ւ: Քանի որ վախենում եմ Աստծուց ավելի, քան մարդուց: Ես այնքա՜ն ուրախ եմ, որ նման ընտրություն կատարելու կարիք չունեմ, և ոչ մի դեպքում չեմ ցանկանում թալանել երկուսին էլ: Այնուամենայնիվ, Աստված ասում է. «Դուք թալանե՛լ եք Ինձ»: Ուշադրություն դարձրեք, որ Նա չի ասում. «Դուք թալանե՛լ եք Իմ ծառայողներին»: Ո՛չ, մենք թալանում ենք Աստծուն, երբ տասանորդ չենք տալիս, նաև՝ երբ նվիրատվություն չենք տալիս Նրա առաջնորդներին, քանի որ, պահելով այդ միջոցները Նրա կողմից ուղարկված ծառայողներից, մենք անարգում ենք Նրան: Նա շարունակում է. «Բոլոր տասանորդները գանձարանը բերեք, որպես-

զի Իմ տանը կերակուր լինի, և փորձե՛ք Ինձ սրանում, - ասում է զորքերի Տերը, - թե արդյո՞ք չեմ բացի ձեզ համար Երկնքի պատուհանները և թափի ձեզ համար այնպիսի օրհնություն, որ բավականաչափ տեղ չլինի՝ այն ընդունելու համար» (խոսք 10, NKJV):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված է պնդում, որ տասանորդի օրհնությունն այնքան մեծ կլինի, որ «բավականաչափ տեղ չի լինի՝ այն ընդունելու համար»: Այնպես որ, ըստ էության, այդ օրհնությունն *անպարունակելի* ունեցվածք է: Ես լսել եմ ծառայողներից, որ Աստված այնքան կօրհնի մեր ֆինանսները և ունեցվածքը, որ բավականաչափ տեղ չենք ունենա՝ այն ընդունելու համար: Ես ցանկանում եմ վիճարկել այս կարծիքը: Փողը պարունակելի ունեցվածք է: Եթե ես ունենայի այս աշխարհի բոլոր ֆինանսները, կկարողանայի ինչ-որ տեղ պահել դրանք: Այդ դեպքում, ի՞նչ նկատի ունի Աստված՝ ասելով, որ մենք չենք կարողանա տեղավորել նվիրատվությունների պատճառով ստացված վարձատրությունը: Պատասխանն Առակաց գրքում է.

> «Պատվի՛ր Տիրոջը քո ունեցվածքով (սրանք ձեր նվերներն են ծառայողներին, կամ զոհաբերությունները՝ ծառայություններին), և քո բոլոր հասույթների առաջին արդյունքներով (սա ձեր տասանորդն է), որպեսզի քո ամբարները լցված լինեն առատությամբ, և նոր գինին դուրս հոսի քո տակառներից»:
>
> – 3.9,10, NKJV

Ձեր ամբարները խորհրդանշում են ձեր պահեստները: Դա ձեր չեկային գրքույկն է, ձեր պահարանները, վառելիքի պահուստները, ավտոտնակը և այլն: Սա այն է, ինչի մեջ մենք պահում ենք մեր պարունակելի ունեցվածքը: Այնպես որ, ճշմարիտ է, որ Նա օրհնում է մեր ֆինանսները: Այնուամենայնիվ, ո՞րն է այն օրհնությունը, որն ընդունելու համար մենք տեղ չենք ունենա: Մենք տեսնում ենք պատասխանը շարունակության մեջ. «Նոր գինին դուրս հոսի քո տակառներից»: Տակառը մեծ անոթ է, որն օգտագործվում է գինի պահելու համար: Ուշադրություն դարձրեք, որ այս խոսքում հենց սա է, որ չի կարողանում պարունակել Աստծո օրհնությունը, քանի որ, Նրա պնդմամբ, գինին դուրս է հոսելու տակառներից: Ի՞նչ է

խորհրդանշում նոր գինին: Աստվածաշնչում նոր գինին մշտապես խորհրդանշում է Սուրբ Հոգու թարմ ներկայությունը: Աստված ասում է, որ երբ դուք պատվեք Իրեն՝ նվիրատվություններ տալով ձեր եկեղեցական առաջնորդներին կամ ծառայություններին, դուք կստանաք ամբողջական վարձատրությունը՝ Նրանից հոսող ներկայությունը: Սա բոլոր խոստումներից ամենաոգևորիչն է:

Ես կրկին ու կրկին ականատես եմ եղել, որ մարդիկ, որոնք առատաձեռն են իրենց հոգևոր առաջնորդներին ֆինանսապես պատվելու մեջ, նյութապես օրհնված են և բավականաչափ միջոցներ ունեն՝ ամեն բարի գործի համար, որին հանդիպում են կյանքում: Բայց սա դեռ ամենը չէ: Ես նույնպես նկատել եմ, որ նրանք առատորեն վայելում են Աստծո ներկայությունը: Ինչո՞ւ սա պետք է զարմացնի մեզ: Սա Աստծո խոստումն է: Հասկանալով այս ճշմարտությունը՝ ես ստացա իմ հարցի պատասխանը, թե ինչու չէի զգում Աստծո ուժգին ներկայությունը այն եկեղեցական հավաքույթներին, որտեղ պատիվ չէր ցուցաբերվում՝ որտեղ հովիվները ֆինանսական դժվարություններ էին կրում, կամ ինձ սովորական այցելուի պես էին վերաբերվում: Այդ մարդիկ առատաձեռն չէին: Այնուամենայնիվ, հենց որ նրանք առատաձեռն էին դառնում և հարատևում էին դրանում, Աստծո ներկայությունը շատ ավելի ուժգին էր դառնում նրանց եկեղեցում:

Եթե կարդաք Աստվածաշունչն ամբողջությամբ՝ մտապահելով այս գլխում գրված ճշմարտությունները, կնկատեք, որ այնտեղ, որտեղ մարդիկ առատորեն նվիրատվություններ էին կատարում, հրաշքները, ազատությունը, մարդկանց փրկությունը, Աստծո ներկայությունը և բարգավաճումն ավելանում էին: Մենք չենք կարող գնել Աստծո օրհնությունները. այնուամենայնիվ, սա հոգևոր սկզբունք է, որն Աստված ներհյուսել է Իր շնորհքի մեջ: Լսեք, թե ինչ ասաց Պողոսը մակեդոնացի հավատացյալների մասին. «Եվ այժմ, եղբայրնե՛ր, ուզում ենք, որ իմանաք այն շնորհքի մասին, որն Աստված տվել է Մակեդոնիայի եկեղեցիներին: Ամենասաստիկ փորձության մեջ լինելով՝ նրանց հորդացող ուրախությունը և ծայրահեղ աղքատությունը մեծ առատաձեռնություն բխեցրին: Որովհետև ես վկայում եմ, որ նրանք տվեցին այնքան, որքան կարող էին, և նույնիսկ իրենց կարողությունից ավելին» (Բ Կորնթ. 8.1-3, NIV):

Պողոսը վերագրեց նրանց առատաձեռնությունը Աստծո շնորհքի անմիջական արդյունքին: Աստծո շնորհքը «իրենց կարողությունը գերազանցելու» ընդունակություն տվեց նրանց: Մենք չենք կարող գնել թե՛ Աստծո շնորհքը, թե՛ Նրա բարեհաճությունը, բայց, անկասկած, կարող ենք ճիշտ դիրքում լինել՝ դրանք ստանալու համար: Երբ կրկնակի ֆինանսական պատիվ ենք տալիս Աստծո Խոսքը մեզ հասցնող մարդկանց, մենք կարողանում ենք պատիվ ընդունել Աստծուց, և այդ պատվի հետ նաև շնորհք և բարեհաճություն ենք ստանում: Սա հոգևոր օրենք է:

12

Պատվել մեզ հավասար մարդկանց

«Ով որ ձեզ պատվում է, Ինձ է պատվում, և ով որ Ինձ պատվում է, Ինձ Ուղարկողին է պատվում: Ով որ մարգարեի է պատվում՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի: Եվ ով որ արդարի է պատվում՝ արդարի անունով, արդարի վարձք կառնի: Եվ ով որ, պատվելով այս փոքրերից մեկին, միայն մի աման սառը ջուր խմեցնի՝ աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնի իր վարձքը»:

– Մատթ. 10.40-42, (հեղինակի շրջասությունը)

Այժմ անցում կատարենք մեզ վրա իշխանություն ունեցող մարդկանցից դեպի մեզ հավասար մարդկանց: Մենք իշխանություն չունենք այդ մարդկանց վրա, և ո՛չ էլ նրանք իշխանություն ունեն մեզ վրա: Սա երկրորդ խումբն է, որի մասին Հիսուսը խոսում է. «Եվ ով որ արդարի է *պատվում*՝ արդարի անունով, արդարի վարձք կառնի»:

Կրկնակի վարձատրություն

Թույլ տվեք սկսել մի վկայությունից, որը պատկերում է այս մակարդակի վրա ցուցաբերած պատիվը: Արդեն մի քանի տարի է՝ որդիներիս նավով տանում եմ ամենամյա ճանապարհորդութ-

յան: Մեր չորս որդիները երբեք չեն տրտնջացել, որ Լիզան և ես հաճախակի ճանապարհորդում ենք՝ աշխարհով մեկ մարդկանց Աստծո Խոսքը հասցնելու համար: Նրանք ոչ միայն աջակցել են մեզ, այլև ոգեշնչված են եղել մեր կոչման համար: Մենք անչափ շնորհակալ էինք Աստծո մատակարարման համար, որ հնարավորություն ունեինք ամեն տարվա ավարտին պարգևատրել նրանց հատուկ արձակուրդով: Մեր տղաները վայելում էին նավով ճանապարհորդությունները, քանի որ մեր բջջային հեռախոսներն անհասանելի էին, և մենք չէինք կարող էլեկտրոնային փոստով նամակներ ուղարկել և ստանալ: Մենք համաձայնել էինք, որ մեր համակարգիչները ամբողջ շաբաթ անջատված էին մնալու, և մենք չէինք աշխատելու. մենք լիովին նրանցն էինք այդ շաբաթ:

Մի տարի, երբ նոր էինք ավարտել մեր նավով ճանապարհորդությունը, ես որոշեցի զանգել մեր աշխատակազմի տնօրենին: Նա ողջունեց ինձ շատ վիատեցնող լուրով: Մինչ մենք արձակուրդի էինք, մեր քաղաքում ապրող մի հովիվ, ում ես ճանաչում եմ, աշխատանքի էր վերցրել մեր գլխավոր աշխատակցուհիներից մեկին՝ հեռացնելով նրան մեր թիմից: Այդ կինը պատասխանատու էր մեր գրքերի բոլոր թարգմանությունների միջազգային իրավունքների համար: Նրա պաշտոնը զգալի պատրաստվածություն և գիտելիք էր պահանջում, քանի որ նա աշխատում էր աշխարհով մեկ գտնվող հրատարակիչների հետ: Նրանց հետ կապ հաստատելը և դրական հարաբերություններ կառուցելն անչափ կարևոր էր և ժամանակ էր պահանջում:

Ասելը, որ ես բարկացած էի, նշանակում էր ոչինչ չասել: Ես պայքարում էի իմ վրդովմունքի հետ՝ այդ հովվի արարքի պատճառով: Մենք ինը ամիս էինք տրամադրել՝ այդ կնոջը վերապատրաստելու համար, իսկ այդ ծառայողը նույնիսկ այնքան բարեկիրթ չէր գտնվել, որ զանգեր ինձ և հարցներ, թե ինչպե՞ս նրան մեր թիմից հեռացնելը կազդեր մեր աշխատանքի վրա: Ես կհասկանայի նրա արարքը, եթե նա փրկված չլիներ և աշխատեր աշխարհիկ միջավայրում, բայց ծառայողի կողմից այլ ծառայության աշխատողի տանելը՝ առանց ծառայության ղեկավարի հետ քննարկելու, ողջամիտ չէր՝ Աստծո թագավորության տեսանկյունից: Բացի այդ, մենք ընկերական հարաբերություն ունեինք:

Ես երկու օր աղոթում էի՝ իմ բարկությունը հաղթահարելու համար: Հնարավո՞ր էր կարճ ժամանակում նրան փոխարինող գտնել: Ես սարսափով էի մտածում, թե որքան ժամանակ էինք կորցնելու նոր աշխատողի պատրաստելու համար: Ես պայքարում էի քննադատող մտքերի հետ: Փորձում էի ինչ-որ իմաստ գտնել այդ հովվի արարքի մեջ, բայց դրանում տրամաբանական ոչինչ չկար: Ինչպե՞ս նա կարող էր այդքան անզգա լինել: Երկու կամ երեք օրից Տերը խոսեց ինձ հետ աղոթքի ընթացքում. «Որդի՛ս, ուզում եմ, որ նվիրես նրան քո նոր ժամացույցը»:

Նավով ճանապարհորդության ընթացքում, երբ Յամայկայում էինք, ես նրբաճաշակ մի ժամացույց գտա խանութներից մեկում: Դա «Սիթիզեն» ընկերության նոր «Էկո դրայվ» շարքի ժամացույց էր և հիանալի տեսք ուներ: Մի քանի տարի շարունակ ժամացույց չէի գնել ինձ համար, և դրա նոր ոճային տեսքն ինձ դուր եկավ:

Հենց որ Աստված խոսեց ինձ հետ, երկար ժամանակ չպահանջվեց, որ հասկանայի Նրա իմաստությունը: Նա հնարավորություն էր տալիս ինձ ազատվելու բոլոր սխալ մտքերից, որոնք ավելանում էին իմ ներսում այդ հովվի հանդեպ, և օգնում էր փոխարինել դրանք պատվով: Նա պաշտպանում էր ինձ վիրավորանք պահելուց և հսկում էր իմ հարաբերությունը թե՛ Իր, թե՛ այդ հովվի հետ: Աղոթքի մեջ սկսեցի ժպտալ, ապա ծիծաղել: Ես զարմացած էի իմ Հոր իմաստության և սիրո պատճառով: Նա գործում էր հօգուտ Իր երկու որդիների: Ես խանդավառությամբ համաձայնեցի Նրա խնդրանքին, և այդ հովվի արարքի շնորհիվ բարկությունն ու վրդովմունքն անմիջապես հեռացան: Դա արագ ազատագրում էր: Այժմ ես ոգեշնչված էի, որ Քրիստոսի մեջ իմ եղբորը նվիրելու էի արժեքավոր մի բան:

Հաջորդ երեկոյան մենք հեռախոսով խոսեցինք: Ես արդեն պատրաստ էի խոսել նրա հետ, քանի որ վրդովմունքս անցել էր: Պարզվեց, որ նա անփույթ սխալ էր թույլ տվել: Նա խոստովանեց, որ հանգամանորեն չէր մտածել այդ մասին, և ներողություն խնդրեց: Երբ ես ընդդիմացա նրա արարքին, նա հասկացավ, որ սխալ էր գործել: Այնուամենայնիվ, եթե Աստված նախապես աշխատած չլիներ սրտիս հետ, այդ հեռախոսազանգը կարող էր շատ տգեղ և վնասակար լինել: Ձայնիս հնչողությունը և իմ վերա-

բերմունքը միգուցե խիստ լիներին՝ մեծ վնաս հասցնելով մեր հարաբերությանը:

Թույլ տվեք ասել հետևյալը. ընդդիմանալը ճիշտ է: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է անել դա սրտի ճիշտ վերաբերմունքով: Դա պետք է արվի հանուն դիմացինի, ոչ թե հանուն մեզ: Ես բացատրեցի, թե ինչու էր նրա արարքը սխալ, բայց իմ խոսքերը համակված էին նրա հանդեպ ճշմարիտ սիրով, և դրա շնորհիվ նա հեշտորեն ընդունեց ասածս: Մեր զրույցից հետո ես հարցրի՝ կարո՞ղ էի գնալ նրա գրասենյակ: Նա համաձայնեց, և մենք որոշեցինք իմ այցելության ժամը:

Երբ մտա նրա գրասենյակ, նա փորձում էր հասկանալ իմ մտադրությունը: Մենք արդեն վերջ էինք տվել այդ հարցին. նա մտածում էր, թե որն էր իմ այցի պատճառը: Ես ասացի, որ ուզում էի ժամացույց նվիրել նրան: Նա հուզմունքով ասաց.

- Ջո՛ն, ես ժամացույց չունեմ, և ինձ անհրաժեշտ է:

Ես անչափ օրհնված էի, երբ իմացա այդ մասին: Հանեցի այդ ժամացույցը տուփից, և նա փորձեց: Այն հարմար չէր նրա ձեռքին, քանի որ իմ դաստակն ավելի նեղ էր, քան նրանը: Խնդիրն այն էր, որ մենք թողել էինք շղթայի ավելացած մասերը Յամայկայում գտնվող խանութում: Ես ասացի նրան, որ այլ շղթաներ կպատվիրեմ այդ ընկերությունից, բայց նա փորձում էր համոզել ինձ, որ թույլ տայի՝ նա իրականացներ դա, բայց ես չէի ուզում ոչ լիարժեք նվեր տալ նրան:

Այդ դեպքից հետո մենք ավելի մտերմացանք, քան նախկինում էինք: Երկուսս էլ մեծ հարգանք ունենք միմյանց հանդեպ: Իմ սիրտը թրթռում է, երբ մտածում եմ, որ նա կրում է այդ ժամացույցը: Ինձ ավելի շատ դուր է գալիս տեսնել այդ ժամացույցը նրա ձեռքին, քան իմ ձեռքին: Դրանից հետո ես նաև մի քանի անգամ հանդիպել եմ մեր նախկին աշխատակցուհուն, և ոգեշնչվում եմ՝ տեսնելով նրա առաջընթացն իր աշխատանքի մեջ:

Այնուամենայնիվ, ես դեռ պետք է գործ ունենայի այն փաստի հետ, որ մեր աշխատակազմում թափուր հաստիք կար, բայց գիտեի, որ Աստված հոգ կտաներ դրա մասին: Ես այնպես էի վարվել, որ Աստծո մատակարարման դուռը բաց էր ինձ համար:

Այժմ թույլ տվեք պատմել պատվի վարձատրության մասին: Մի քանի շաբաթ անց մեր կադրերի բաժնի ղեկավարն աշխատանքի ընդունեց Դարսի անունով մի կնոջ՝ միջազգային հեղինակային իրավունքներով զբաղվող մեր նախկին աշխատակցուհուն փոխարինելու համար: Դարսին աննահանջ կին էր: Անցյալում ես շատ քիչ մարդկանց էի հանդիպել, որոնք աշխարհով մեկ մարդկանց Աստծո Խոսքը հասցնելու նման եռանդ ունենային: Աշխատանքի ընդունվելով՝ նա արագորեն և մեծ խանդավառությամբ սկսեց գործել: Մեր մյուս աշխատողներն այս պաշտոնում սպասում էին, որ ինչ-որ բան տեղի ունենար, բայց ոչ՝ Դարսին: Նա աղոթում էր, իսկ հետո կապ էր հաստատում միջազգային հրատարակիչների հետ՝ մեր գրքերը տպագրելու համար:

Մեր նախորդ աշխատակցուհին լավ արդյունքներ ուներ: Ինը ամսում հասցրել էր մեր թարգմանությունները 18-23 լեզվի, իսկ Դարսին առաջին ինը ամսում հասցրեց մեր թարգմանությունները 23-40-ի: Այո՛, դուք ճիշտ կարդացիք: Առաջին աշխատակցուհին ավելացրեց մեր թարգմանությունները հինգ լեզվով: Դարսին ավելի քան երեք անգամ գերազանցեց նրան միևնույն ժամանակահատվածում՝ ավելացնելով 17 լեզու: Այս գիրքը գրելու պահին մեր նյութերը թարգմանվում են ավելի քան 100 լեզվով՝ Աստծո շնորհքով: Բացի այդ, մինչև այժմ մենք կարողացել ենք ավելի քան 20 միլիոն նյութ տրամադրել ավելի քան 200 երկրներում ապրող հովիվների և առաջնորդների:

Ես չեմ հավատում, որ այս ամենը տեղի կունենար, եթե չպատվեի այն հովվին, ով վարձել էր մեր աշխատակցուհուն՝ առանց մեզ տեղյակ պահելու: Մենք վարձատրություն ստացանք. Աստծուց տրված ուղերձները, որոնք տնտեսում ենք, հպվում են միլիոնավոր նոր մարդկանց կյանքերի: Այդ կնոջ ձեռքբերումներից է այն, որ նա տասնյակ հազարավոր գրքեր հասցրեց Ավետարանի հանդեպ թշնամաբար տրամադրված երկրներում ապրող հովիվներին և առաջնորդներին: Իրականում, կան վայրեր, որտեղ ուղարկել ենք այդ գրքերը, որոնց մասին ես չեմ կարող պատմել նույնիսկ մեր ծառայության գործընկերներին՝ այդ հալածված երկրների առաջնորդների անվտանգության համար:

Ես չեմ կարող պատկերացնել ավելի մեծ վարձատրություն, քան Աստծո Խոսքի միջոցով շատ մարդկանց կյանքերին հպվելու

կարողությունն է: Այնուամենայնիվ, Աստված դրանով չէր ավարտել: Կար ևս մեկ վարձատրություն, որը լիովին անակնկալ էր ինձ համար: Մի քանի ամիս անց ես այլ քաղաքում էի, որտեղ քարոզում էի մի եկեղեցու կիրակնօրյա առավոտյան հավաքույթին: Ծառայությունից հետո այդ եկեղեցու հովիվը ճաշի հրավիրեց ինձ: Նա հրավիրեց նաև իր եկեղեցու գործարարներից մեկին: Մինչ մենք ռեստորանի տղամարդկանց հանդերձասենյակում էինք, այդ գործարարը հարցրեց.

- Ջո՛ն, ի՞նչ տեսակի ժամացույց կցանկանայիք:

Կարիք չկա ասել, որ մի փոքր հանկարծակիի եկա նրա հարցից: Ես փոքր ինչ կարկամեցի և ի վերջո ասացի.

- Հազիվ թե ցանկանայիք իմանալ:

- Ո՛չ, Ջո՛ն, - պնդեց նա: - Ես իսկապես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի՞ ժամացույց կնախընտրեիք:

Տեսնելով նրա հաստատակամությունը՝ ասացի.

- Վերջին մի քանի տարում իմ երազանքի ժամացույցը «Բրեյտլինգն» է:

«Բրեյտլինգ» ժամացույցները պատրաստվում են «Բենթլի մոթոր» ընկերության բաժիններից մեկի կողմից: Դրանք շատ թանկ արժեն և դժվար է գտնելը. ամեն քաղաքում չէ, որ կարելի է գտնել այդ ժամացույցները: Ինձ դուր եկավ այդպիսի մի ժամացույց, որը տարիներ առաջ տեսա մի մարդու ձեռքին: Դրա ձևը գրավեց ինձ, և ես մտածեցի, թե որքան հաճելի կլիներ նման ժամացույց ունենալ: Ինձ դուր է գալիս ինքնաթիռով թռչելը (թեև ես օդաչու չեմ), և այդ ժամացույցները սկզբնապես նախատեսված են եղել օդաչուների համար: Լիզան և ես ի վերջո մի խանութ գտանք մի խոշոր քաղաքում, որտեղ այդ ժամացույցները վաճառվում էին: Մենք մի փոքր հանկարծակիի եկանք գներից, և ես որոշեցի այդքան գումար չծախսել ժամացույցի համար, բայց, միևնույն է, դրանք ինձ դուր էին գալիս:

Լսելով իմ պատասխանը՝ այդ գործարարը ետ քաշեց իր բաճկոնի թևքը և արձակեց նոր գնված բարձրագույն կարգի «Բրեյտլինգ Նեվիթայմեր» ժամացույցն իր դաստակից: Նա կապեց այն իմ դաստակին և ժպտալով ասաց.

- Ջո՛ն, մինչ դուք քարոզում էիք առավոտյան ծառայությանը, Աստված պատվիրեց ինձ, որ ձեզ նվիրեմ այս ժամացույցը:

Դա մեծ անակնկալ էր ինձ համար. ես չկարողացա ոչինչ ասել և հուզվեցի: Եթե Աստված չխոսեր նրա հետ, նա ոչ մի դեպքում չէր իմանա, որ «Բրեյտլինգն» իմ ամենասիրելի ժամացույցն է: Այդ անակնկալն առավել հաճելի էր, քանի որ նրա նվերն առաջնակարգ օդաչուական ոճի մոդել էր: Որքանո՞վ էր հավանական, որ նրա դաստակին հենց այդ ժամացույցն էր լինելու:

Այդ ժամացույցը ստանալու սկզբնական ցնցումից մոտավորապես երկու ժամ անց ես մտածեցի, որ մի քանի ամիս առաջ ինքս էի նվիրել իմ նոր ժամացույցը՝ այն հովվին պատիվ ցուցաբերելու համար: Այժմ հասկացա, որ Աստված անում էր այն, ինչ ասել է Իր Խոսքում՝ փոխադարձաբար պատվում էր ինձ: Հիշեք, որ Նա հայտարարում է. «Ովքեր պատվում են Ինձ, Ես կպատվեմ» (Ա Թագ. 2.30, NKJV): Միգուցե ասեք. «Բայց Ջո՛ն, դու չպատվեցիր Աստծուն. դու պատվեցիր այդ հովվին»: Հիշեք, որ Հիսուսն ասաց. «Ով որ Իմ ծառային պատվում է, Ինձ է պատվում, և ով որ Ինձ պատվում է, Ինձ Ուղարկողին է պատվում» (Մատթ. 10.40, հեղինակի շրջասությունը):

Ամեն անգամ, երբ նայում եմ այս ժամացույցին (և հենց հիմա, երբ գրում եմ այս տողերը, այն իմ դաստակին է), համարում եմ այն գեղեցիկ նվեր իմ Հորից: Այն շատ ավելին է ինձ համար, քան եթե ինքս գնեի: Նույնպես, այն շատ ավելին է ինձ համար, քան եթե այդ մարդը պարզապես թանկարժեք ժամացույց նվիրեր ինձ: Նշանակալի է ոչ թե ժամացույցը, այլ Աստծո վերաբերմունքը դրա միջոցով. Աստված կանի նույնը, բայց՝ տարբեր ձևերով, նրանց համար, ովքեր պատվում են Իրեն՝ պատվելով Իր ծառայողներին:

Սեր՝ սուրբ երկյուղի հետ

Հուսով եմ՝ արդեն պարզ է դառնում, որ պատվելը նշանակում է ճշմարտապես սիրել:

Անհրաժեշտ է և՛ սուրբ երկյուղ, և՛ անպայմանական սեր՝ ճշմարիտ պատվով վարվելու համար: Գրված է.

> «Սերը՝ առանց կեղծավորության, չարն ատե՛ք, բարո՛ւն հետևեք: Եղբայրասիրության մեջ իրար հանդեպ

գթած եղեք, պատիվ տալու մեջ իրարից առաջ անցեք»:

– Հռոմ. 12.9,10

Այս երկու խոսքերում այնքան ասելիք կա: Առաջինը՝ Պողոսը պնդում է, որ ճշմարիտ սիրո մեջ կեղծավորություն չկա: *«Կեղծավորություն»* բառի սահմանումն է «իրական բնավորությունը կամ դրդապատճառները թաքցնելը» («Վեբսթեր», 1828): Այս սահմանումը բնութագրում է նրան, ով այնպես է վարվում, ասես պատվում է ձեզ՝ խոսքով և գործով, բայց ներքուստ քննադատում է, նախանձում է կամ, նույնիսկ, արհամարհում է: Կամ ձեր բացակայությամբ ձեզ հակառակ է խոսում, զրպարտում է և չարախոսում: Միացյալ Նահանգների Հարավում այնպիսի մշակույթ է ձևավորվել, որը հեշտորեն կարող է նման վերաբերմունք առաջացնել: Բոլորս ենք լսել Հարավի հյուրասիրության, Հարավի ջենթլմենների և Հարավի գեղեցկուհիների մասին: Բոլոր այդ հասկացությունները ենթադրում են, որ երկրի այդ մասում մարդիկ շնորհալի և պատվավոր են: Սակայն այդ կերպով դաստիարակված մարդկանց մի մասը սովորել է համապատասխանել այդ սպասումներին ձևականորեն, ոչ թե ճշմարտությամբ:

Անցյալում տեսել եմ որոշ մարդկանց Հարավում, որոնք վիրավորական խոսքերով էին խոսում այլ մարդկանց մասին նրանց բացակայության ժամանակ, իսկ հետո թվացյալ պատվով, սիրով և հարգանքով էին վարվում նրանց հետ: Մյուս կողմից, մեր երկրի մյուս տարածքներն այլ են. մարդիկ ստիպված չեն համապատասխանել նման սպասումների, և նրանք ավելի անմիջական են: Օրինակ, ես հաճույքով եմ շփվում Հյուսիս-Արևելքում բնակվող մարդկանց հետ: Նրանց մոտ ընդունված է, որ եթե դուք նրանց դուր չեք գալիս, նրանք ուղիղ ասում են ձեզ այդ մասին: Նրանք սովոր չեն ձևականությամբ վարվելուն, սովորաբար անմիջական են, կամ՝ շիտակ խոսող:

Ճշմարիտ պատիվ կարելի է ցուցաբերել միայն առանց կեղծավորության: Անկարելի է ձևականորեն պատիվ ցուցաբերել. դա միայն խաբեության կտանի: Եվ, անկասկած, կեղծիքը չի վարձատրվելու: Պողոսը գրում է. «Սերը՝ առանց կեղծավորության, չարն ատե՛ք, բարո՛ւն հետևեք»: Չարն ատելը և բարուն հետևելը

Տիրոջ երկյուղն է: Առակաց 8.13-ում գրված է. «Տիրոջ երկյուղը չարն ատելն է»: Տիրոջ երկյուղը հեռու է պահում մեզ խաբեությունից: Այն թույլ չի տալիս վարվել կեղծավորությամբ: Կրկին կարդանք Աստծո հանդիմանությունն այս մասին. «Որովհետև այս ժողովուրդը մոտենում է իրենց խոսքերով և պատվում է Ինձ իրենց շուրթերի ծառայությամբ, բայց նրանք հեռացնում են իրենց սրտերն Ինձնից, և նրանց երկյուղածությունն Իմ հանդեպ բաղկացած է սերտած ավանդությունից» (Եսայի 29.13, NASB):

«Սերտել» բառի սահմանումն է՝ «բառերի կամ հնչյունների հաճախակի կրկնություն՝ առանց ուշադրություն դարձնելու իմաստին կամ սկզբունքներին»: Աստված պնդում է, որ մարդիկ պատիվ են ցուցաբերում իրենց բերանով, և Եսայու գրքի այլ հատվածներում՝ նաև իրենց գործերով, սակայն սրտանց չեն անում: Դա կեղծավորությամբ ցուցաբերած պատիվ է, որը բոլորովին պատիվ չէ: Ինչն է պատճառը, որ նրանք այդպես են վարվում: Քանի որ նրանցում չկա Տիրոջ երկյուղը, «նրանց երկյուղածությունն Իմ հանդեպ» բաղկացած է ընդունված սովորույթներից՝ այնպիսի գործողություններից, որոնք պարզապես սովորություն են դարձել:

Սա հաճախակի երևույթ է եկեղեցական շրջանակներում: Մենք այնքան ենք կենտրոնացած քաղաքավարի լինելու վրա, որ այլևս մեր սրտից չենք խոսում: Թույլ տվեք մի օրինակ բերել: Սթիվը շտապում է հավաքույթի: Նա հինգ րոպեով ուշանում է, և ժամանակին տեղ հասնելը կարևոր է նրա համար: Անցնելով մարդաշատ փողոցով՝ հանկարծ փողոցի մյուս կողմում նկատում է Ջիմին՝ եկեղեցու եղբայրներից մեկին, որին մի քանի շաբաթ չի տեսել, և մտածում է. *«Հուսով եմ՝ Ջիմը չնկատեց ինձ: Ես զրուցելու ժամանակ չունեմ, նա նույնիսկ դուր չի գալիս ինձ»:*

Հանկարծ Ջիմի և Սթիվի հայացքները հանդիպում են, և Ջիմը փողոցի մյուս կողմից անմիջապես ողջունում է իր եղբորը Քրիստոսում: Սթիվը հասկանում է, որ պետք է պատասխանի Ջիմին, որպեսզի կոպիտ չհամարվի: Եվ Սթիվը մոտենում է իր քրիստոնյա եղբորը, ով անցնում է փողոցը՝ իրեն հանդիպելու համար: Սթիվն առաջինն է խոսում, քանի որ շտապում է և ցանկանում է արագորեն ավարտել զրույցը.

- Ջի՛մ, փա՛ռք Աստծուն, հրաշալի է քեզ հանդիպելը:

Ջիմն, ի պատասխան, ողջունում է նրան և հարցնում որպիսությունը:

- Շա՛տ լավ, - ասում է Սթիվը, - բայց գիտես, ես ուշանում եմ հավաքույթից: Ես կզանգեմ քեզ, և մի օր միասին կճաշենք, - և նրանք հրաժեշտ են տալիս:

Վերլուծենք Սթիվի կարճ զրույցը Ջիմի հետ: Առաջինը՝ նա ասաց. «Փա՛ռք Աստծուն, հրաշալի է քեզ հանդիպելը»: Այդ պահին Սթիվը նույնիսկ չէր մտածում Աստծո մասին. դա պարզապես սովորական արտահայտություն է, որն ավելացրել է իր բառապաշարին, որպեսզի *ցույց տա* իր հավատացյալ լինելը, ինչպես նաև ոգևորությունը՝ այլ քրիստոնյայի հանդիպելիս: Երկրորդը՝ Ջիմին հանդիպելը հրաշալի չէր. նա հուսով էր, որ Ջիմը չէր նկատի իրեն: Այնպես որ, ինչպես և առաջին պնդման դեպքում, նա խաբեության և ստի դիմեց՝ առանց որևէ հանդիմանություն զգալու:

Եվ Սթիվի եզրափակիչ խոսքն էր. «Ես կզանգեմ քեզ, և մի օր մենք միասին կճաշենք»: Նա Ջիմին զանգելու և նրա հետ ճաշելու մտադրություն չուներ: Պարզապես ասաց դա, որպեսզի ազատվեր անհարմարավետ իրավիճակից, որ հայտնվել էր: Եվս մեկ սուտ:

Մի՞թե Սթիվը դիտավորյալ է ստում: Ամենայն հավանականությամբ, ո՛չ: Ինչո՞ւ նա հանդիմանություն չի զգում: Նա սովորել է ձևականորեն սիրել, քանի որ նրա կյանքում չկա Տիրոջ երկյուղը: Նա ապրում է սովորույթի համաձայն. նրա ցուցաբերած սերը և պատիվն ընդամենը կեղծիք են:

Տիրոջ երկյուղն օգնում է մշտապես հիշել, որ Աստված մանրամասնորեն գիտի յուրաքանչյուր միտք և շարժառիթ, ինչպես նաև յուրաքանչյուր բառ, որ ասում ենք: Դատաստանի օրը մենք հաշիվ ենք տալու նույնիսկ ամեն դատարկ բառի համար (տես Մատթ. 12.36): Գրված է. «Եկե՛ք, որդինե՛ր, լսե՛ք Ինձ. Ես Տիրոջ երկյուղը սովորեցնեմ ձեզ... Պահի՛ր քո լեզուն չարությունից, և քո շրթունքները, որ նենգություն չխոսեն: Հեռացի՛ր չարից և գործի՛ր բարին. խնդրի՛ր խաղաղություն և նրա ետևի՛ց գնա» (Սաղմ. 34.11,13,14):

Այնքա՛ն կարևոր է, որ մենք ճշմարտությամբ սիրենք, և սա հնարավոր է, միայն երբ մենք ջերմեռանդորեն փափագենք Տի-

ոոջ երկյուղը և վարվենք դրանում: Որքա՜ն սարսափելի է խաբված լինելը և կեղծավորությամբ ապրելը: Միայն աստվածային երկյուղը կարող է հեռու պահել մեզ այս ծուղակից:

Դիմացինին համարել ավելի լավը

Հռոմեացիների թղթում Պողոսը շարունակում է. «Բարի և սիրալիր կերպով վարվեք մեկդ մյուսի հանդեպ՝ եղբայրական սիրով, պատվեք և նախապատվություն տվեք մեկդ մյուսին» (12.10, NKJV): Պատիվը նախապատվություն է տալիս մյուսներին, քանի որ գնահատում և արժևորում է նրանց: Պողոսը կրկին խոսում է այս մասին այլ նամակում.

> «Եթե մխիթարություն կա Քրիստոսով, եթե սիրո սփոփություն, եթե Հոգու հաղորդություն, եթե գթածություն և ողորմություն, ապա լցրե՛ք իմ ուրախությունը, որ նույն միտքն ունենաք՝ նույն սերն ունենալով, միաշունչ, միևնույնը խորհեք: Ոչ մի բան չլինի գրգռումով, և ո՛չ էլ սնապարծությամբ, այլ՝ խոնարհությամբ թող մեկը մյուսին իր անձից ավելի լավը համարի: Մենակ ձեր անձերի բաներին մտիկ չտաք, այլ ամեն մեկն իր ընկերոջ բաներին էլ: Ձեզնից ամեն մեկը թող այն մտածի, որ Քրիստոս Հիսուսում էր»:
>
> – Փիլիպ. 2.1-5

Դիմացինին մեզնից ավելի լավը համարելը նշանակում է պատվել նրան: Մենք պետք է մտորենք և խորհենք այս խոսքերի շուրջ, նաև աղոթքով նկատի առնենք դրանք մեր բոլոր գործերի և հարաբերությունների մեջ: Եթե մենք սովորենք այս սկզբունքը և թույլ տանք, որ այն խորը արմատ գցի մեզանում, մեծ օրհնության մեջ կվարվենք, քանի որ սա է ճշմարիտ պատիվը:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը գրում է. «Ձեզնից ամեն մեկը թող այն մտածի, որ Քրիստոս Հիսուսում էր»: Ես երբեք չեմ մոռանա այն, ինչ Տերն ասաց ինձ, երբ շատ երիտասարդ քրիստոնյա էի: Ես վարում էի իմ մեքենան, երբ լսեցի Նրան. «Ջո՛ն, գիտե՞ս, որ քեզ Ինձնից ավելի լավ՞ն եմ համարում»:

Հանկարծակիի գալով իմ լսածից՝ ես ցնցվեցի՝ մտածելով,

որ, հավանաբար, թշնամին ցանկանում է ինչ-որ հայհոյիչ կամ հպարտ միտք ցանել իմ սրտում: Ինչպե՞ս Նա, Ով ստեղծել է տիեզերքը, և այն, ինչ դրանում է, կարող է ասել մի աննշան մարդու, որ ավելի արժեքավոր է համարում ինձ, քան Իրեն: Ես գրեթե ասացի. «Ետև՛ս անցիր, սատանա՛, դու գայթակղությո՛ւն ես ինձ»: Բայց հոգուս խորքում գիտեի, որ դա Հիսուսի ձայնն էր: Միևնույն է՝ ես պետք է համոզվեի դրանում, քանի որ դեռևս վաղ քրիստոնեական հասակում ես գիտեի, որ Աստծո Խոսքը պատվիրում է մեզ «փորձել հոգիները» (Ա Հովհ. 4.1):

Ես ի մի բերեցի մտքերս և պատասխանեցի. «Տե՛ր, չեմ կարող հավատալ սրան, քանի դեռ երեք վկայություն չես տվել ինձ Նոր կտակարանից»: Ես դողում էի՝ ասելով այդ բառերը, բայց գիտեի, որ այդպես վարվելը ճիշտ էր:

Ես զգացի իմ սրտում, որ Տերը չընդդիմացավ խնդրանքիս. հասկացա, որ խնդրանքս հաճելի էր Նրան: Ես գրեթե անմիջապես լսեցի Նրա ձայնը. «Ի՞նչ է գրված Փիլիպեցիների 2.3-ում»:

Ես անգիր գիտեի այն. այնպես որ, կրկնեցի այդ խոսքը Նրա համար. «Ոչ մի բան չլինի գրգռումով, և ո՛չ էլ սնապարծությամբ, այլ խոնարհությամբ թող մեկը մյուսին իր անձից ավելի լավը համարի»:

Տերը պատասխանեց. «Ահա և քո առաջին վկայությունը»:

Ես արագորեն ընդդիմացա. «Ո՛չ, Տե՛ր, Պողոսն այլ բան նկատի ուներ: Նա պատվիրում էր փիլիպեցի հավատացյալներին միմյանց ավելի լավը համարել. նա չէր գրում դա՝ նկատի ունենալով, թե ինչպես ես Դու վերաբերվում կամ արժևորում ինձ»:

Տերն անմիջապես ասաց. «Ես չեմ պատվիրում Իմ զավակներին անել այն, ինչ Ինքս չեմ անում»:

Ես հանկարծակիի եկա:

Նա շարունակեց. «Սա շատ ընտանիքների խնդիրն է: Ծնողները պատվիրում են իրենց երեխաներին անել այն, ինչ չեն անում, կամ չանել այն, ինչ անում են: Շատ ծնողներ պատվիրում են երեխաներին չվիճել, սակայն իրենք մշտապես վիճում են երեխաների ներկայությամբ: Եվ ծնողները զարմանում են, թե ինչո՞ւ են իրենց երեխաները վիճում: Ես այդպես չեմ վարվում»:

Ես դեռ մի փոքր զգուշավոր էի. այնպես որ, ասացի. «Սա միայն մեկ խոսք է: Ինձ ևս երկու խոսք է պետք»:

Ես լսեցի. «Ո՞վ մահացավ խաչի վրա, դո՛ւ, թե՞ Ես»:

Ես ապշած էի:

Եվ լսեցի. «Ես գամվեցի խաչին՝ կրելով քո մեղքերը, տկարությունը, հիվանդությունները, աղքատությունը և դատաստանը, քանի որ Ինձնից ավելի լավը համարեցի քեզ» (այս պնդման սուրբգրային հղումը, որը Նա տվեց, Ա Պետր. 2.24-ն է):

Ես հասկացա, որ իսկապես Տիրոջ ձայնն էի լսել: Նա իսկապես պատվեց (արժևորեց) ինձ ավելի, քան Իրեն. հակառակ դեպքում, Նա չէր վերցնի իմ դատաստանը և չէր մահանա իմ փոխարեն: Ես գիտեի, որ ստանալու էի նաև երրորդ աստվածաշնչյան խոսքը, և նույնիսկ առանց այն խնդրելու, ես լսեցի իմ սրտում. «Երրորդ վկայությունն է. «Բարի և սիրալիր կերպով վարվե՛ք մեկդ մյուսի հանդեպ՝ եղբայրական սիրով, պատվե՛ք և նախապատվությո՛ւն տվեք մեկդ մյուսին» (Հռոմ. 12.10, NKJV)»: Նա շարունակեց խոսել սրտիս. «Ես Առաջնեկն եմ բազում եղբայրների մեջ (տե՛ս Հռոմ. 8.29) և, պատվելով Իմ եղբայրներին և քույրերին, Ես արժևորում եմ նրանց ավելի, քան Ինձ»:

Իհարկե, սա վերաբերում է Աստծո յուրաքանչյուր զավակի, ոչ միայն ինձ: Նա բառացիորեն արժևորում և պատվում է մեզ ավելի, քան Իրեն: Սա գրեթե չափազանց հիասքանչ է՝ ճշմարիտ լինելու համար:

Միգուցե ասեք. «Բայց Ջո՛ն, Հիսուս Քրիստոսն է այդպիսին: Մենք երբեք չենք կարող այդպես սիրել: Զարմանալին այն է, որ, իրականում, մենք կարող ենք: Գրված է, որ Սուրբ Հոգին սփռեց Աստծո սերը մեր սրտերում (տե՛ս Հռոմ. 5.5): Վկայությունն այս մասին հենց Պողոսի խոսքերում է: Ահա թե ինչ նա ասաց իր հայրենակիցների մասին.

> «Քրիստոսի ներկայության մեջ ես բացարձակ ճշմարտացիությամբ ասում եմ՝ ես չեմ ստում, և իմ խիղճն ու Սուրբ Հոգին հաստատում են, որ այն, ինչ ասում եմ, ճշմարիտ է: Իմ սիրտը լցված է դառը ափսոսանքով և անվերջ տրտմությամբ իմ ժողովրդի՝ իմ հրեա եղբայր-

ների և քույրերի համար: Ես կկամենայի հավիտյան անիծված՝ Քրիստոսից կտրված լինել, եթե դա կփրկեր նրանց»:

– Հռոմ. 9.1-3, NLT

Ես դեռ սարսռում եմ՝ կարդալով Պողոսի այս խոսքերը: Նա ասում է (և, անկասկած, սա ձևականորեն գրված չէ), որ կկամենար կտրված լինել Քրիստոսից, այսինքն՝ փրկությունից, ամբողջ հավիտենության ընթացքում, որպեսզի տեսներ իր ազգակից տղամարդկանց և կանանց փրկությունը: Ինչպե՞ս կարող է հասարակ մարդը վարվել այդպիսի սիրով և պատվով: Դա անկարելի է անել մարդկային սիրով. նման պատիվ հնարավոր է ցուցաբերել միայն Աստծո սիրով, որը Հիսուսի շարժառիթն էր: Պողոսն այնքան ուժգնորեն զարգացրեց այս սերն ու պատիվն իր սրտում, որ արդյունքը դարձավ այս աղաղակը: Եվ թույլ տվեք ևս մեկ բան ավելացնել. Սուրբ Հոգին երբեք թույլ չէր տա նրան գրել այս խոսքերը, եթե նա իսկապես նկատի չունենար դա: Անկարելի է ստել, այսինքն՝ խաբեություն գրել Սուրբ գիրքը գրի առնելիս:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչպիսի ներուժ ունի յուրաքանչյուրը, ով վերստին ծնված է: Հռոմեացիների 5.5-ը վճռականորեն հայտարարում է. «Որովհետև Աստծո սերը սփռվեց մեր սրտերում՝ Սուրբ Հոգու միջոցով, որը տրվել է մեզ» (AMPC): Սա է պատճառը, որ Հիսուսն ասաց. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք՝ ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհ. 13.34): Դա նոր պատվիրան էր, քանի որ Հին կտակարանի ժամանակաշրջանում մարդիկ չէին կարող նման սիրով վարվել: Աստծո սերը դեռևս սփռված չէր նրանց սրտերում: Ուշադրություն դարձրեք «ինչպես որ Ես ձեզ սիրեցի» բառերին: Նա անմնացորդ զոհեց Իր Անձը մեզ համար: Նա բաժանվեց Հորից և աղաղակեց. «Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» (Մատթ. 27.46): Նա հոժարաբար որոշեց աղքատանալ, բաժանվել Աստծուց, որպեսզի մենք կարողանայինք հավիտենական կյանք ստանալ: Նա պատվեց մեզ բարձրագույն մակարդակով, և Պողոսը կարող էր ազնվորեն ասել նույն բառերն իր հայրենակիցների վերաբերյալ: Հա՛յր, օգնի՛ր մեզ վարվել այսպիսի սիրով: Դու ներուժ տվեցիր մեզ. այժմ մենք պետք է զարգացնենք այն՝ Սուրբ Հոգու հետ համագործակցելով:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, սա է ճշմարիտ պատիվը՝ այն, որ մենք արժեքավոր, կարևոր և թանկ ենք համարում մեր հավատակիցներին և Հիսուսի կարիքն ունեցող մարդկանց: Այս պատիվը կդրդի մեզ նվիրվել Թագավորության աշխատանքին ամեն առումով՝ ծառայությամբ, աղոթքով և ֆինանսներով: Այն կդրդի մեզ մակեդոնացիների պես վարվել: Նրանց պատիվը քրիստոսանման էր, և Պողոսն օգտագործեց նրանց օրինակը՝ կորնթացի հավատացյալներին խրախուսելու համար:

«Իմ ընկերնե՛ր, ուզում ենք, որ իմանաք, որ եկեղեցիները Մակեդոնիայում ցույց են տվել մյուսներին, թե որքան բարի է Աստված: Թեև նրանք դժվարին ժամանակներով էին անցնում և շատ աղքատ էին, նրանք ուրախությամբ առատաձեռնորեն ընծա տվեցին: Նրանք ընծայեցին այնքան, որքան կարող էին թույլ տալ իրենց, նույնիսկ ավելին, պարզապես՝ որովհետև ցանկացան դա: Նրանք նույնիսկ խնդրեցին և աղաչեցին, որ թույլ տային իրենց, որ զգային Աստծո ժողովրդին իրենց միջոցներն ընծայելու ուրախությունը: Եվ նրանք արեցին ավելին, քան մենք հույս ունեինք: Նրանք ընծայեցին իրենց, առաջին հերթին՝ Տիրոջը, իսկ հետո՝ մեզ, ինչպես որ Աստված էր ցանկանում, որ վարվեին:

Տիտոսն էր, որ օգնեց ձեզ սկսել այս բարի գործը. այնպես որ, մենք աղաչեցինք նրան, որ օգնի ձեզ ավարտել այն, ինչ սկսել եք: Դուք ամեն ինչ անում եք մյուսներից ավելի լավ: Դուք ավելի ուժեղ հավատք ունեք: Դուք ավելի լավ եք քարոզում և ավելի շատ գիտելիք ունեք: Դուք պատրաստ եք հոժարաբար ընծայել, և դուք ավելի շատ եք սիրում մեզ: Այժմ պետք է մյուսներից ավելի առատաձեռն լինեք ընծայման հարցում:

Ես չեմ պատվիրում ձեզ, որ անեք սա: Ես պարզապես ստուգում եմ, թե որքան իրական է ձեր սերը այն հոգատարության համեմատ, որը մյուսներն են ցուցաբերել: Դուք գիտեք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսն այնքան բարի էր, որ թողեց Իր ամբողջ հարստությունը և աղքատացավ, որպեսզի դուք հարստանաք:

Մեկ տարի առաջ դուք առաջինն էիք, որ ընծայեցիք,

և դուք ընծայեցիք, քանի որ ցանկանում էիք: Կարծում եմ՝ դուք պետք է ավարտին հասցնեք այն, ինչ սկսել եք: Այնպես որ, լսե՛ք իմ խորհուրդը: Եթե դուք ընծայեք՝ ըստ ձեր ունեցածի, կապացուցեք, որ նույնքան հոժար եք ընծայելու, որքան համարում էիք: Կարևոր չէ, թե որքան ունեք: Կարևորն այն է, թե որքան եք կամենում ընծայել ձեր ունեցածից:

Ես չեմ փորձում հեշտացնել այլ մարդկանց կյանքը՝ բարդացնելով ձեր կյանքը: Բայց արդար կլինի, եթե կիսվեք նրանց հետ, երբ ձեր ունեցածն անչափ շատ է, իսկ նրանցը՝ խիստ սակավ»:

– Բ Կորնթ. 8.1-14, CEV

Պողոսն օգտագործում էր այն պատիվը, որը մակեդոնացիները ցուցաբերեցին կարիքավորներին, որպեսզի հորդորեր Կորնթոսի հավատացյալներին ապրել ըստ այն սիրո, որն Աստված շնորհել է բոլոր հավատացյալներին: Այն մեզանում է. Աստծո սերը մեր սրտերում է: Մենք պետք է համագործակցենք Սուրբ Հոգու հետ՝ այն զարգացնելու համար: Մի՛ ասեք. «Գիտեք, ես այդպիսի անձնավորություն չեմ»: Դա միայն կխանգարի ձեզ այնպես ապրել, որ ճշմարիտ բավականություն ստանաք ձեր սրտում, ուրախություն զգաք այն մարդկանց համար, որոնց կյանքում ազդեցություն եք թողնում, և մեծ վարձատրություն ստանաք՝ ոչ միայն այս կյանքում, հատկապես՝ գալիքում: Ետ մի՛ պահեք պատիվը. պատվե՛ք ձեր հավատակիցներին: Դուք ուրախ կլինեք, որ արեցիք դա՝ ամբողջ հավիտենության ընթացքում:

13

Պատվել մեզ վստահված մարդկանց

«Ով որ ձեզ պատվում է, Ինձ է պատվում, և ով որ Ինձ պատվում է, Ինձ Ուղարկողին է պատվում: Ով որ մարգարեի է պատվում՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի: Եվ ով որ արդարի է պատվում՝ արդարի անունով, արդարի վարձք կառնի: Եվ ով որ, պատվելով այս փոքրերից մեկին, միայն մի աման սառը ջուր խմեցնի՝ աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնի իր վարձքը»:

– Մատթ. 10.40-42, (հեղինակի շրջասությունը)

Այժմ կխոսենք մեզ վստահված մարդկանց մասին, ովքեր մեր իշխանության ներքո են: Մենք տեսնում ենք այս խմբի մարդկանց Հիսուսի հետևյալ խոսքերում. «Եվ ով որ, *պատվելով* այս փոքրերից մեկին, միայն մի աման սառը ջուր խմեցնի՝ աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնի իր վարձքը»:

Փոքրերը

«Փոքրեր» ասելով՝ Աստվածաշունչը նկատի ունի և՛ փոքր երեխաների, և՛ մարդկանց, որոնք վստահված են մեզ լիազորած իշխանությանը: Մենք խոսելու ենք մեզ վստահված մարդկանց

մասին, ինչն ընտանեկան միջավայրում վերաբերում է մեր երեխաներին: Շատ փոքրեր ենթարկվել են խիստ և նույնիսկ դաժան վերաբերմունքի՝ իշխանությամբ օժտված մարդկանց կողմից: Սա բարկացնում է Աստծո սիրտը, և Հիսուսը խստորեն զգուշացնում է.

> «Այն մարդկանց համար, որոնք մեղքի են դրդում Իմ փոքր հետևորդներից նույնիսկ մեկին, զարհուրելի կլինի: Այդ մարդկանց համար ավելի լավ կլիներ, եթե նրանց նետեին օվկիանոսի ամենախորը մասը՝ իրենց վզից ծանր քար կապած: Այս աշխարհին մեծ փորձանք է սպառնում, քանի որ այն մեղքի է դրդում մարդկանց: Մշտապես ինչ-որ բան է լինելու, ինչը մեղքի է դրդելու մարդկանց, բայց յուրաքանչյուրին, ով անի դա, մեծ փորձանք է սպառնում: Դաժանորեն մի՛ վարվեք այս փոքրերից որևէ մեկի հանդեպ: Ես խոստանում եմ ձեզ, որ նրանց հրեշտակները մշտապես իմ Հոր հետ են Երկնքում»:
>
> – Մատթ. 18.6,7,10, CEV

Այս զգուշացումը սթափեցնող է: Երբ Հիսուսն օգտագործում է *«զարհուրելի»* բառը, ավելի լավ է՝ հավատաք, որ իսկապես *զարհուրելի* է լինելու: Ինչո՞ւ է Նա այդքան խիստ խոսում: Պատճառն այն է, որ Աստված է լիազորում իշխանությունը: Նա սեր է, և Նա է լիազորում Իր իշխանությունը սիրո և պաշտպանության համար: Եթե այն փոխարենը օգտագործվում է փոքրերի հանդեպ դաժանորեն վարվելու, նրանց շահագործելու կամ վնասելու համար, դա անարգանք է անմիջապես Աստծո հանդեպ: Միգուցե մտածեք. *«Դա անարգանք չէ անմիջապես Նրա հանդեպ, այլ՝ Նրա ժողովրդի»:* Այդպես չէ, քանի որ Հիսուսն ասում է. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ, որովհետև այս Իմ *փոքր եղբայրներից մեկին* արիք, Ինձ արիք» (Մատթ. 25.40, շեղագիրը հեղինակինն է): Մեր վերաբերմունքը մեր ենթակայության ներքո գտնվող մարդկանց հանդեպ՝ ցույց է տալիս մեր վերաբերմունքը Հիսուսի հանդեպ: Նկատի՛ առեք սա, երբ շփվում եք ձեր երեխաների, կնոջ, աշխատողների, աշակերտների և այլոց հետ:

Մարդիկ, որոնց իշխանություն է վստահվել, պարտավոր են խրատել և աշակերտել: Որոշ առաջնորդներ սայթաքել են տա-

լիս փոքրերին, քանի որ ըստ անհրաժեշտության չեն խրատում նրանց: Սեփական հայեցողությանը թողնված երեխան, ողջամիտ անձնավորություն դառնալու փոխարեն, վատ բնավորություն է ձեռք բերում: Պողոսը ցույց է տալիս աստվածապաշտ դաստիարակության կարևորությունը կորնթացիներին ուղղված իր նամակում. «Միգուցե մտածեք, որ ես չափից ավելի եմ կիրառում այն իշխանությունը, որը Նա տվել է ինձ, բայց ետ չեմ ընկրկի: Ի վերջո, իմ նվիրման միակ նպատակն է ձեզ կառուցելը, ոչ թե կործանելը» (Բ Կորնթ. 10.8, MSG): Կարդալով կորնթացիներին ուղղված երկու թղթերը՝ դժվար չէ տեսնել, թե որքան հաստատուն է Պողոսը խրատում նրանց: Նա արժևորում է այդ փոքրերին՝ նրանց խրատ և ուսուցում տալով: Այնուամենայնիվ, նա պարզորեն պնդում է, որ այդ իշխանությունը տրված է կառուցելու համար, ինչը ներառում է նաև ծառայելը և պաշտպանելը: Որպես առաջնորդ, դուք պետք է հարց տաք ձեզ. *«Ո՞րն է իմ շարժառիթը»:* Եթե դուք պատվեք փոքրերին, ձեր դրդապատճառն այսպիսին կլինի, և, անհրաժեշտության դեպքում, նաև կխրատեք նրանց:

Կան առաջնորդներ, որոնք հակառակ ծայրահեղության մեջ են: Նրանք սայթաքել են տալիս փոքրերին՝ օգտագործելով իրենց իշխանությունը եսասիրական նպատակների համար: Նրանց խրատը կործանարար է: Նրանք սեր չեն ձևավորել իրենց խնամքին վստահված մարդկանց հանդեպ՝ աղոթքի և մտորման միջոցով: Մեր սրտերը պետք է վառվեն մեզ վստահված մարդկանց հաջողության հասցնելու ցանկությամբ: Նրանք սխալներ կգործե՛ն: Իհա՛րկե: Հիշեք, երբ դուք էիք երիտասարդ և ոչ հասուն. մի՞թե այդքան արագ մոռացել եք ամեն ինչ: Ես խնդիրներ էի ստեղծում այն մարդկանց համար, որոնք աշակերտում էին ինձ: Ես անմիտ սխալներ էի գործում և մեղանչում էի: Դյուրագրգիռ էի, չմտածված քայլեր էի անում և անմիտ ու անհեթեթ բաներ էի ասում, այն էլ՝ ոչ ճիշտ պահերին: Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ իմ առաջնորդները չհանձնվեցին ինձ հետ աշխատելիս:

Ես հիշում եմ, երբ կինս և ես տարիներ առաջ կառուցում էինք մեր ծառայության աշխատակազմը: Մենք մի քանի աշխատող ունեինք (այս գիրքը գրելու պահին ավելի քան հիսուն աշխատող ունենք) և մտահոգված էինք նրանց սխալների պատճառով: Հի-

շում եմ, որ այնպիսի բան ասացի Լիզային, ինչը, իմ համոզմամբ, մարգարեական խոսք էր, որը խրատ և հասկացողություն տվեց երկուսիս էլ: Ես ասացի. «Լիզա, եթե այն մարդիկ, որոնց Աստված վստահել է մեր իշխանությանը, ոչնչի կարիք չունենային, ինչո՞ւ Աստված պետք է վստահեր մեզ»: Երկուսս էլ գլխով արեցինք՝ ի նշան հաստատման:

Եկեղեցական առաջնորդներ

Տարիներ շարունակ, այցելելով հազարավոր եկեղեցիներ, հանդիպել եմ տարբեր առաջնորդների: Ես հատկապես ոգեշնչվում եմ, երբ հանդիպում եմ ստեղծարար մտածելակերպ ունեցող առաջնորդների: Նրանք կառուցում են Աստծո տունը ոչ ավանդական ձևերով: Նրանց շնորհիվ մեր մեթոդներն ավելի հասկանալի են դառնում չփրկված մարդկանց համար: Եկեղեցում այնպիսի մթնոլորտ է ձևավորվում, որտեղ անհավատներն ընդունված են զգում իրենց՝ հին ավանդական սովորույթների փոխարեն, որոնք օտար են եկեղեցական կյանքին անհաղորդ մարդկանց համար: Մենք ազատվում ենք ձևական հագուկապից, քսան տարվա հնություն ունեցող երգերից և եկեղեցական բառապաշարից, մուլտիմեդիոն միջոցներ ենք օգտագործում մեր հայտարարությունների և միջոցառումների համար՝ անցյալի սահմանափակ միջոցների փոխարեն, և սրանք փոփոխություններից ընդամենը մի քանիսն են: Անձամբ ես հավատում եմ, որ սա Աստծո իմաստությունն է:

Որպես կողմնակի նշում, միշտ հիշեք, որ Աստված կողմ է այնպիսի մեթոդների, որոնց նպատակը ճշմարտությունը փնտրող մարդկանց հասնելն է: Պողոս առաքյալը հայտարարում է Ա Կորնթացիների թղթում. «Ես նույնպես փորձում եմ հաճեցնել յուրաքանչյուրին այն ամենով, ինչ անում եմ: Ես միայն չեմ անում այն, ինչ ձեռնտու է ինձ. ես անում եմ այն, ինչ ձեռնտու է ուրիշներին, որպեսզի շատերը փրկվեն: Եվ դուք պետք է նմանակեք ինձ, ինչպես որ ես նմանակում եմ Քրիստոսին» (10.33-11.1, NLT): Գրելով «այն ամենով, ինչ անում եմ» բառերը, Պողոսը նկատի ուներ մեթոդները: Նա նմանակում էր այն ամենին, ինչ Հիսուսն էր անում՝ կորսվածներին հասնելու համար: Այնուամենայնիվ, Աստված

դեմ է այնպիսի ուղերձներին, որոնց նպատակը ճշմարտությունը փնտրող մարդկանց գրավելն է: Ինչ վերաբերում է այսպիսի ուղերձներին, նույն Պողոսը հստակ հայտարարում է. «Ուզում եմ մարդկանց հաճո լինել: Եթե տակավին մարդկանց հաճո լինեի, Քրիստոսի ծառա չէի» (Գաղատ. 1.10): Մենք երբեք չպետք է փոխզիջման գնանք, երբ հռչակում ենք Ավետարանը՝ ձգտելով գրավել ավելի շատ մարդկանց: Եթե այդպես վարվենք, մենք կեղծ աշակերտներից բաղկացած համայնք կունենանք, որոնց կյանքը վտանգված կլինի, քանի որ նրանք կարող են լսել Հիսուսից այն մեծ օրը. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.20-23): Նրանց արյունը մեր ձեռքերին կլինի: Պողոսը տեղեկացրեց մի խումբ առաջնորդների. «Ես ամենիդ արյունից անմեղ եմ, որովհետև ետ չքաշվեցի Աստծո ամբողջ կամքը ձեզ պատմելուց» (Գործք 20.26,27): Մենք չենք կարող պարզապես առանձին դրական հատվածներ ազդարարել Սուրբ գրքից. մենք պետք է նաև զգուշացնենք և խրատենք (տե՛ս Կողոս. 1.28):

Հիսուսը հստակ ասում է, որ Սուրբ Հոգին «աշխարհին կհանդիմանի մեղքի համար» (Հովհ. 16.8): Այն եկեղեցական համայնքը, որը չի հանդիմանում մեղքի մեջ ապրողներին, քանի որ այնպիսի ուղերձներ է քարոզում, որոնք գրավիչ են ճշմարտությունը փնտրող մարդկանց համար, ոչնչով չի տարբերվում Հայտնություն գրքում նշված Լավոդիկեի եկեղեցուց: Այդ եկեղեցին Հիսուսի բերանից փսխվելու եզրին էր, քանի որ այնտեղ գտնվող մարդիկ թույլ չէին տալիս Հիսուսին սրբացնել իրենց՝ Իր Սուրբ Հոգու ներկայության միջոցով: Այնպես որ, Նա աղաչում էր Իր եկեղեցուն. «Ահա Ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ» (Հայտն. 3.20): Այս օրինակը ցույց է տալիս, թե որքան վտանգավոր են այն ուղերձները, որոնց նպատակը ճշմարտությունը փնտրող մարդկանց գրավելն է:

Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է այն մեթոդներին, որոնց նպատակը ճշմարտությունը փնտրող մարդկանց հասնելն է, դիտարկենք Պողոս առաքյալի կողմից արված ևս մեկ պնդում.

> «Թեև ես ազատ եմ յուրաքանչյուրի պահանջներից և սպասումներից, սակայն հոժարաբար ծառա եմ դարձել յուրաքանչյուրին, որպեսզի հասնեմ մարդկանց լայն

> շրջանակի՝ կրոնականներին, ոչ կրոնականներին, բծախնդիր բարոյագետներին, անբարոյականներին, պարտվածներին, բարոյալքվածներին... Ես չընդունեցի նրանց կենսաոճը: Ես հարեցի Քրիստոսին, բայց մուտք գործեցի նրանց աշխարհ և փորձեցի ընկալել կյանքը նրանց տեսանկյունից: Ես ծառայեցի գրեթե ամեն տեսակի մարդու այդ կերպով՝ փորձելով Աստծո փրկությանը առաջնորդել նրանց, ում հանդիպում էի»:
>
> – Ա Կորնթ. 9.19-22, MSG

Լսե՛ք այս խոսքերը. «Ես մուտք գործեցի նրանց աշխարհ և փորձեցի ընկալել կյանքը նրանց տեսանկյունից»: Վերջերս, քարոզելով հարյուրավոր հովիվների, խնդրեցի նրանց գալ իրենց եկեղեցական ծառայությանը՝ որպես այցելու, և դիտարկել այն եկեղեցուն չպատկանող մարդու տեսանկյունից: Ես ավելացրի. «Եթե անկեղծ և բաց լինեք, շատերդ բազում փոփոխություններ կանեք»:

Քրիստոսի մարմնում մենք պետք է օգտվենք հաղորդակցական և տեխնոլոգիական վերջին նորարարություններից: Այս աշխարհը պետք է ոգեշնչվի մեր ստեղծարարությունից և նորարարությունից: Ինչո՞ւ աշխարհային ոլորտները պետք է գերազանց լինեն, իսկ Աստծո թագավորությունը միջակությամբ ներկայանա: Ո՛չ, ինչպես որ Դանիելը և մյուս հրեա երիտասարդներն ավելի իմաստուն էին, քան Բաբելոնի զավակները, որն աշխարհի ամենամեծ թագավորությունն էր, մենք նույնպես պետք է պահանջված լինենք՝ մեր նորարարական գաղափարների շնորհիվ:

Եկեք ազդարարենք և սովորեցնենք Աստծո Խոսքը Սուրբ Հոգու զորությամբ՝ առանց որևէ փոխզիջման, բայց այնպես ներկայացնենք, որ այն հասկանալի լինի եկեղեցուն չպատկանող մարդկանց: Մեր ուղերձը պետք է ուժգին հանդիմանություն բերի անհնազանդ և չփրկված մարդկանց սրտերում: Մենք պետք է Քրիստոս Հիսուսին կատարելապես հնազանդվելու կոչ անենք, ինչը նշանակում է ապաշխարություն մեղքից, անաստված վարքից և աշխարհիկ ցանկություններից՝ մեր կյանքը 100 տոկոսով Նրան ընծայելու և Նրան հետևելու հետ մեկտեղ: Մենք կարող ենք անել սա՝ ունենալով ուրախություն մեր կյանքում և ուղերձնե-

րում՝ նորարարական գաղափարների հետ մեկտեղ: Քրիստոնյա լինելը չի նշանակում կորցնել մեր խանդավառությունը և ստեղծարարությունը: Ո՛չ, ընդհակառակը՝ Քրիստոսում մենք առատորեն գտնում ենք այս հատկանիշները: Եթե պատվենք փոքրերին, մենք ժամանակ կտրամադրենք՝ մտածելով, թե ինչպես ստեղծարար կերպով ծառայենք նրանց: Սա հաճելի է Աստծո սրտին:

Կառուցողական կամ կործանարար

Այժմ լսեք, թե ինչ է ասում Պետրոսը եկեղեցու առաջնորդներին.

> «Ես զգուշացնում և խորհուրդ եմ տալիս ձեր միջի երեցներին (եկեղեցու հովիվներին և հոգևոր առաջնորդներին)՝ որպես ձեզ նման երեց... Խնամե՛ք (սնուցե՛ք, պահպանե՛ք, առաջնորդե՛ք և փարախում պահե՛ք) Աստծո հոտը, ինչը [ձեր պատասխանատվությունն] է՝ ոչ թե հարկադրանքով կամ ճնշումով, ոչ թե [ձեր պաշտոնի հետ կապված] շահի և եկամտի անպատիվ շարժառիթ ունենալով, այլ հոժարաբար և ուրախությամբ, ոչ թե իշխող [որպես ամբարտավան, բռնակալական և հրամայական անձիք] նրանց վրա, ովքեր ձեր ենթակայության ներքո են, այլ լինելով օրինակներ [քրիստոնեական կյանքի չափանիշներ և նմուշներ] հոտին (եկեղեցական համայնքին)»:
>
> – Ա Պետր. 5.1-3, AMPC

Կարելի է օգտագործել բազմաթիվ հասկացություններ՝ նկարագրելու համար այն տարբեր առաջնորդական ոճերը, որոնք գոյություն ունեն քսանմեկերորդ դարի եկեղեցում. ավանդական, առաջադիմական, օրինապաշտական, թիմային, բռնակալական, աջակցող, մանրակառավարող և այլն: Այնուամենայնիվ, այս մեծ ցուցակը կարելի է բաժանել երկու խոշոր կարգի. կառուցողական և կործանարար: Տարբերությունն այս երկուսի միջև առաջնորդի սրտում է:

Որոշ առաջնորդներ արտաքնապես կարող են մեծ ձեռքբերումներ ունենալ, բայց իրենց ետևից թողնել խոցված, վիրավորված և նույնիսկ մահացած հետևորդների: Այլ ծառայողներ նույնպես մեծ ձեռքբերումներ են ունենում, բայց ամբողջ ընթացքում կառու-

ցում են այն մարդկանց, որոնց առաջնորդում են: Այս ամենը մեծ մասամբ բխում է առաջնորդի սրտում եղած պատվից կամ անարգանքից:

Նպատակասլաց առաջնորդները՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, կարող են մոտենալ ծառայության կառուցմանը երկու տարբերակներից մեկով: Անարգանքով վարվող առաջնորդը, որը սայթաքել է տալիս փոքրերին, դիտարկում է մարդկանց որպես իր տեսիլքին ծառայող միջոցներ: Ճշմարիտ առաջնորդը, որը կյանքեր է կառուցում, դիտարկում է իր տեսիլքը որպես մարդկանց ծառայելու միջոց: Այսպիսի առաջնորդը պատվում է իր խնամքին վստահված մարդկանց: Սրտի այս շարժառիթը զարմանալիորեն տարբերվող արդյունքներ է առաջացնում մարդկանց մեջ: Հիսուսն ասում է. «Իմաստությունն արդարացի է համարվում իր արդյունքներով» (Մատթ. 11.19, NLT): Ես տեսել եմ զգացմունքորեն կոտրված մարդկանց որոշ եկեղեցական համայնքներում (ուրախ եմ ասել, որ դա հազվագյուտ երևույթ է), այնինչ, այլ եկեղեցական համայնքներում տեսել եմ առողջ անհատների և ընտանիքների: Ամեն ինչ բխում է պատվից:

Պատվով վարվող առաջնորդը խրախուսում է մարդկանց աճը: Նա անսահման ուրախություն է զգում, երբ իր խնամքին վստահված մարդիկ մտերիմ են Աստծո հետ և առաջընթաց ունեն իրենց կոչման մեջ: Քրիստոնեական կյանքի այս երկու խոշոր ոլորտների համադրությունը կոչվում է «ճշմարտության մեջ գնալ»: Կարդացեք Հովհաննեսի խոսքերն իր հոգատարության ներքո գտնվող մարդկանց մասին. «Որովհետև շատ ուրախացա, երբ որ եղբայրները եկան և քո ճշմարտությունը վկայեցին, ինչպես որ դու ճշմարտության մեջ ես գնում: Սրանից ավելի մեծ ուրախություն չունեմ, որ լսում եմ, թե իմ որդիները ճշմարտության մեջ են գնում» (Գ Հովհ. 3,4 խոսքեր):

Ճշմարտության մեջ գնալը նշանակում է և՛ ճանաչել, և՛ ծառայել Աստծուն: Հիսուսն ասում է, որ Դատաստանի օրը կլինեն մարդիկ, ովքեր մեծ գործեր են արել Իր անունով, բայց Ինքը կհայտարարի. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»: Նրանք անտեսել են փրկության ամենակարևոր կողմը՝ Աստծուն մտերմորեն ճանաչելը: Լավ առաջնորդները շեշտադրում են

շփումն Աստծո հետ:

Կան նաև այլ մարդիկ, որոնք, ճանաչելով Աստծուն, մեծապես բարկացրել են Նրան: Այդ մարդկանց պարգևներ են վստահվել, որպեսզի կատարեին իրենց մասը՝ Նրա տունը կառուցելու մեջ, բայց նրանք անտեսել են իրենց պարտականությունը: Այդ օրը Տերը կասի նրանց, ովքեր թաղել են իրենց տաղանդները. «Չա՛ր և ծո՛յլ ծառա» (Մատթ. 25.26):

Յուրաքանչյուր հավատացյալ Աստծո տունը կառուցելու կոչում ունի: Եփեսացիների 2.10-ում հստակ գրված է. «Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք»: Մենք ստեղծվել ենք ոչ միայն ինչ-որ մեկը լինելու, այլև ինչ-որ բան անելու համար: Ողբերգական է, երբ մարդկանց ուսմունքները դառնում են ոչ հավասարակշռված: Ես լսել եմ քարոզիչների, ովքեր ասում են. «Կարևորն այն չէ, թե ինչ ենք մենք անում, այլ՝ թե ով ենք մենք. առաջին հերթին, մենք պետք է լինենք, ոչ թե գործենք»: Այս պնդումը գեղեցիկ է որպես բառախաղ, բայց այն ոչ հավասարակշռված կերպով է պատկերում քրիստոնեական կյանքը: Ճիշտ է, որ մենք դադարում ենք մեր գործերից, երբ հավատացյալ ենք դառնում: Այնուամենայնիվ, Սուրբ գիրքը ցույց է տալիս, որ փրկվելուց հետո անմիջապես մտնում ենք Նրա գործերի մեջ: Մենք պետք է պտուղ բերենք՝ որպես մեր հավատքի իսկության ապացույց (տե՛ս Հակոբ. 2-րդ գլուխ):

Այն ուսմունքները, ըստ որոնց մենք պետք է անտեսենք այն գործը, որի համար կանչված ենք, խրախուսում են մարդկանց պարզապես եկեղեցի հաճախել, բայց չտնկվել և գործուն չլինել Աստծո տանը: Երբ մարդիկ տնկվեն եկեղեցում, նրանք կծաղկեն իրենց կոչման մեջ և արդյունքում ավելի մեծ վարձատրություն կստանան Քրիստոսի ատյանի առջև: Մենք ստեղծված ենք Քրիստոս Հիսուսում հատուկ գործեր կատարելու համար, որոնք ծրագրված էին, մինչև որ մենք կազմվեցինք մեր մոր որովայնում: Եվ հաշիվ ենք տալու այն գործերի համար, որոնք նախապես պատրաստված էին մեզ համար (տե՛ս Սաղմ. 139.16):

Պատվով վարվող առաջնորդի նպատակն է, որ փոքրերը

ճշմարտությամբ գնան և առաջադիմություն ունենան: Ճշմարիտ հայրերը և մայրերը ցանկանում են, որ իրենց երեխաները գերազանցեն իրենց հաջողությունը: Հիսուսն ասաց, թե ինչ է ցանկանում մեզ համար. որ ավելի մեծ գործեր անենք, քան Ինքն արեց: Մենք պետք է ի սրտե նույնը ցանկանանք մեզ հետևող մարդկանց: Առաջնորդների սրտերը պետք է վառվեն իրենց հետևող մարդկանց այնպիսին դարձնելու ցանկությամբ, ինչպես որ Հովհաննեսն էր գրում իր թղթում: Դա պետք է լինի մեր մեծագույն ուրախությունը:

«Մտածե՛ք այս բաների մասին»

Իմաստուն և երկարակյաց առաջնորդները նրանք են, ովքեր շարունակ վերագրում են իրենց հաջողություններն այն մարդկանց, որոնք ծառայում են իրենց (իհարկե, ամբողջ երախտիքը, պատիվը, գոհությունը և փառքն Աստծունն են, բայց մենք պետք է հիշենք, որ Աստված գործածում է մարդկանց): Առաջնորդը պատիվ է ցուցաբերում իր թիմի անդամների հանդեպ, երբ գովում է իրենց ջանքերի համար, և անում է դա ոչ թե իմիջիայլոց, այլ ի սրտե: Որպես առաջնորդ, ես փորձում եմ միշտ բարձր մտածել այն մարդկանց մասին, որոնք օգնում են իրականացնել մեր առաքելությունը. նրանք Երկնքից տրված պարգևներ են: Ես հսկում եմ ինձ՝ թույլ չտալով բացասական մտքեր իմ աշխատողների մասին՝ այդկերպ պահպանելով իմ սրտում պատիվը նրանց հանդեպ: Պողոսը պատվիրում է մեզ.

> «Եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ արժանի է ակնածանքի, պատվավոր և վայելուչ է, ինչ որ արդար է, ինչ որ սուրբ է, ինչ որ հաճելի և սիրելի է, ինչ որ բարի, համակրելի և շնորհալի է, եթե կա որևէ առաքինություն և գերազանցություն, եթե կա որևէ բան՝ արժանի գովեստի, մտածե՛ք այս բաների մասին, կշռադատե՛ք այս բաները և ուշադրությո՛ւն դարձրեք այս բաներին [ուղղե՛ք ձեր միտքը դրանց]...»:
>
> – Փիլիպ. 4.5, AMPC

Ես մի ժամանակահատված եմ հիշում մեր ամուսնության մեջ,

երբ հիասթափված էի Լիզայից: Անկեղծ ասած, ընդհանրապես գոհ չէի նրանից: Իմ սխալ վերաբերմունքը ձևավորվում էր արդեն ամիսներ շարունակ: Ամեն ինչ ընթանում էր ոչ թե դեպի լավը, այլ դեպի վատը: Մի անգամ՝ վեճի ժամանակ, ես պարզապես տնից դուրս եկա և ոտքով գնացի դեպի մեր տնից հեռու գտնվող մի դաշտ: Ես չէի ուզում նրա կողքին լինել, և մինչև այդ դաշտ հասնելը մտքումս տրտնջում էի Լիզայի դեմ և Տիրոջ առջև: Տեղ հասնելուն պես պարզորեն լսեցի. «Որդի՛ս, ուզում եմ, որ մտածես Լիզայի դրական կողմերի մասին և գոհանաս Ինձնից դրանց համար»:

Իհարկե, այդ պահին ես ընդհանրապես դրականորեն տրամադրված չէի: Այնուամենայնիվ, հիշեցի նրա դրական կողմերից մեկը՝ այն, որ նա լավ մայր էր: Սակայն, քանի որ բարկացած էի, չմտաբերեցի այլ հատկանիշներ: Հենց որ գոհացա Աստծուց այն բանի համար, որ նա հրաշալի մայր է, ևս մեկ կողմ մտաբերեցի: Եվ երբ գոհացա Աստծուց նրա կյանքի այդ բնագավառի համար, մտաբերեցի ևս մեկը: Դա բավականին երկար տևեց և, ի վերջո, ես խորապես զգացված էի այն պատճառով, թե որքան հրաշալի կին ունեմ: Հետաքրքիր մի բան տեղի ունեցավ: Ես սկսեցի դիտարկել մեր իրավիճակը լիովին այլ տեսանկյունից ու հասկացա, որ ամբողջ հիասթափության ընթացքում, ես ինքս էի վատ ամուսին նրա համար: Ես իսկապես ուշքի եկա և այժմ ճիշտ տեսանկյունից էի ընկալում մեր իրավիճակը՝ Աստծո՛ տեսանկյունից:

Վերադարձա տուն և սկսեցի թվարկել Լիզայի բոլոր հատկանիշները, որոնք գնահատում էի: Ես շարունակում էի թվարկել. դրանք հորդում էին իմ սրտից: Երբ դաշտ գնացի, այդ ժամանակ Լիզան այնքա՜ն բարկացած էր, որ, թվում էր՝ շատ ժամանակ էր պահանջվելու, որպեսզի մեր հարաբերությունը վերականգնվեր: Այնուամենայնիվ, քանի որ ես ի սրտե պատվեցի նրան, և դա պարզապես շարունակում էր բխել ինձնից, մենք անմիջապես հաշտվեցինք: Այդ օրվանից մեր ընտանիքում բժշկություն և վերականգնում սկսվեց, և մենք այլևս չենք հետադիմել այն վիճակին, որտեղ գտնվում էինք:

Նույնը տեղի կունենա մեր և մեր երեխաների, աշխատողների, աշակերտների և եկեղեցու անդամների միջև, եթե պարզապես կատարենք այն, ինչ պատվիրում է Փիլիպեցիների 4.8-ը:

Մտածե՛ք վայելուչ, բարի և հաճելի կերպով ձեր խնամքի ներքո գտնվող մարդկանց մասին: Մտածե՛ք այն մասին, թե որքան թանկ են նրանք մեր Հոր համար. այդ մարդիկ Նրա որդիներն ու դուստրերն են: Եթե նրանք փրկված չեն, կենտրոնացե՛ք այն փաստի վրա, որ նրանք արժանի էին, որ Հիսուսը մահանար իրենց համար: Եթե այսպես վարվենք, մենք կպաշտպանենք մեր սիրտն անարգանքից և օրհնված կլինենք:

Կրկին, նա նկատի չունի, որ մենք չպետք է խրատենք, երբ անհրաժեշտ է: Այնուամենայնիվ, մեր խրատը պետք է սեղմ և արդյունավետ լինի: Մեր երեխաները և աշխատողները գիտեն, որ մենք ոխ չենք պահում: Նրանց խոսքերով, մենք կարող ենք խիստ լինել, բայց խրատից կարճ ժամանակ անց կատակում և ծիծաղում ենք նրանց հետ: Ես սովորել եմ այս դասն անձամբ Աստծուց: Հենց որ Նա խրատում է մեզ, և մենք արձագանքում ենք Նրա խրատին, մեր Հայրն արագորեն ներում և մոռանում է: Նա ոխ չի պահում: Նա թույլ չի տալիս մեզ ամոթով մնալ. միայն թշնամին է, որ այդպես է վարվում: Փոխարենը, Նա մոռացության ծովն է նետում մեր սխալմունքները: Նա միայն խնդրում է մեզ, որ դասեր քաղենք Իր խրատից, որպեսզի չկրկնենք նույն սխալը: Մեր Հոր սիրով, պատվով և հույսով լի մտքերը մեր մասին այնքան շատ են, որ գերազանցում են ամբողջ աշխարհում գտնվող ավազահատիկների թիվը (տե՛ս Սաղմ. 139):

Երբ առաջնորդը պատվում է փոքրերին, Աստծո պարգևները սկսում են գործել նրանց կյանքում: Նրանց պարգևների զարգանալու հետ մեկտեղ առաջնորդն օգուտ է ստանում, քանի որ նրա տեսիլքն իրականանում է՝ իր ծառայողական թիմում գտնվող մարդկանց բոլոր պարգևների միջոցով: Ես զարմանում եմ, երբ հանդիպում եմ հովիվների, որոնք հրամայելով են խոսում իրենց աշխատողների հետ: Նրանք խոսում են խիստ, պահանջկոտ հնչողությամբ և այնպես են շփվում աշխատողների հետ, ասես նրանք հիմար լինեն: Եվ այդպիսի մարդիկ ասում են. «Ես չեմ կարողանում ձեռնահաս աշխատողների գտնել: Ինձ ավելի լավ աշխատողներ են պետք»: Զարմանալի չէ, որ այդպես է: Նրանք չեն արժևորում իրենց աշխատողներին, և նրանց անարգելով՝ ոչ

մի վարձատրություն չեն ստանում:

Ֆինանսական պատիվ

Մենք կարող ենք պատվել փոքրերին մեր ֆինանսներով՝ ճիշտ այնպես, ինչպես որ պատվում ենք առաջնորդներին: Մի քանի տարի առաջ ես օգնում էի Լիզայի օգնականին կարգավորել իր ֆինանսները: Մենք կազմում էինք նրա ամսական բյուջեն: Այդ ժամանակ ստանդարտ դրույքաչափեր էինք վճարում մեր աշխատողներին՝ այնպիսիք, որոնք ընդունված էին Կոլորադո Սփրինգսում գտնվող ծառայությունների կողմից: Ես ավելացրի նրա ծախսերը և նկատեցի, որ նրա միջոցները շատ սուղ էին: Եվ անմիջապես ասացի.

- Դուք այս աշխատավարձով չեք կարող ապրել արժանավայել:

Կինս, ով մեզ մոտ էր, ի սրտե համաձայնեց:

Ես անմիջապես զանգեցի մեր գլխավոր ֆինանսական տնօրենին և ասացի.

- Ես կազմեցի Լիզայի օգնականի բյուջեն և հենց նոր ավարտեցի: Մենք բավականաչափ չենք վճարում նրան: Ոչ ոք մեր աշխատողներից չպետք է այդքան ցածր եկամուտ ունենա: Ուզում եմ, որ մեր բոլոր աշխատողների տարեկան աշխատավարձը բարձրացվի այսինչ չափի (ես սահմանեցի այդ թիվը), նույնիսկ այն աշխատողների, որոնք փոստով փաթեթներ են ուղարկում կամ հեռախոսազանգերի են պատասխանում:

Մյուս կողմում մի պահ լռություն տիրեց, իսկ հետո մեր գլխավոր ֆինանսական տնօրենն ասաց.

- Եթե անեք դա, մեր ծառայությունն այս քաղաքում կդառնա ամենից պահանջվածը՝ աշխատանքի հարցում:

Ես պատասխանեցի.

- Դա չէ իմ որոշման նպատակը: Մեր թիմի անդամներն իրենց կյանքն են ներդնում՝ մեզ հետ Աստծուն ծառայելու համար: Նրանք պետք է պատշաճ փոխհատուցում ստանան:

Մեր աշխատակազմից շատերը աշխատավարձի զգալի բարձրացում ունեցան այդ օրը: Դա լիովին անակնկալ էր նրանց

համար, և նրանք շնորհակալ էին, երբ իմացան այդ մասին: Մի երիտասարդ կին պատրաստվում էր աշխատանքից ազատվելու դիմում ներկայացնել հենց այդ շաբաթ: Նա ծրագրում էր տեղափոխվել այլ նահանգ՝ իր ընտանիքի մոտ, քանի որ նրա ֆինանսական վիճակը չափազանց ծանր էր: Այդ օրը նրա աշխատավարձն ավելացավ տարեկան հինգ հազար դոլարով: Եվ նա չհեռացավ աշխատանքից:

Այդ դեպքից հետո նա աշխատեց մեզ հետ ևս չորս տարի, ինչից հետո առաջխաղացում ունեցավ՝ դառնալով մեր բաժիններից մեկի ղեկավարը: Նա մեր ամենից արժեքավոր և գնահատված աշխատողներից է: Մեզ հետ աշխատելու տարիներին նա մեծ մասնագիտական աճ ունեցավ: Ես սարսուռով եմ մտածում, թե որքան առավելություններից կզրկվեր թե՛ այդ կինը, թե՛ «Մեսինջերը», եթե նա հեռանար մեզնից՝ միջոցների սղության պատճառով:

Մեր վարձատրությունը չսահմանափակվեց միայն այդ կնոջով, այլ արտահայտվեց մեր ամբողջ ծառայության մեջ: Կարելի է ասել, որ այդ պահից աճեց մեր աշխատակազմի ընդհանուր արդյունավետությունը: Մենք անցում կատարեցինք նոր մակարդակի: Մենք պատիվ ցուցաբերեցինք մեր աշխատողների հանդեպ, որի արդյունքն ավելի մեծ արդյունավետությունն էր:

Թույլ տվեք մի զգուշացում անել: Պատիվ պահանջելը հակառակ է Աստծո սրտին: Մենք պետք է պատվի ձգտենք երկու պատճառով: Առաջինը՝ որպեսզի մեր սրտերում տանք այն Աստծուն, և երկրորդը՝ հանուն այն մարդու, ով պատվում է մեզ, քանի որ մենք գիտենք, որ նա վարձատրություն կստանա դրա համար: Իմ ծառայության սկզբնական փուլում ես աշխատում էի որպես հովվի օգնական մի մեծ եկեղեցում: Մենք նվազագույն աշխատավարձ էինք ստանում: Մեր ընդհանուր ամսական եկամուտը բավական էր միայն մեր ապրուստի ծախսերը հոգալու համար. մեզ մոտ բոլորովին գումար չէր ավելանում՝ հագուստ կամ կահույք գնելու համար: Մենք համաձայնել էինք այդ աշխատավարձին. դա այն էր, ինչ առաջարկել էին մեզ: Մենք չէինք ցանկանում պահանջկոտ վարձկաններ լինել:

Առաջին տարվանից հետո մեզ աշխատավարձի բարձրացում

չառաջարկեցին: Երկու տարի անց կրկին աշխատավարձի բարձրացում չառաջարկեցին: Իսկ մեր ընտանիքում արդեն երկրորդ երեխան էր ծնվել: Մեր ծախսերն ավելանում էին, իսկ մենք դեռ նույն մակարդակի վրա էինք, ինչ այն օրը, երբ սկսեցինք աշխատել այդտեղ:

Հովվի օգնականներից մեկը, ով իմ ընկերն էր, մի քանի անգամ իմ գրասենյակ եկավ այդ երկու տարում՝ խնդրելով միանալ հովվի ևս մի քանի օգնականների և դիմել եկեղեցու ադմինիստրատորին ու գլխավոր հովվին՝ աշխատավարձի բարձրացման համար:

Ես պատասխանեցի, որ չեմ ուզում կապ ունենալ դրա հետ, և խորհուրդ տվեցի նրանց չանել դա.

- Իմ գործը չէ ասել նրանց, թե ինչպես պետք է պատվեն ինձ, - ասացի նրան:

Իմ ընկերն ընդդիմացավ.

- Ջո՛ն, կինս և ես ստիպված ենք օգնություն ընդունել իմ ընտանիքից՝ ապրելու համար: Իմ ծնողները փող են ուղարկում մեզ, որպեսզի կարողանանք ծայրը ծայրին հասցնել:

Ես ասացի նրան, որ ցավում եմ դրա համար, բայց կշարունակեմ վստահել Աստծուն: Ես փորձեցի խոսել նրա հետ հավատքից և բացատրել, որ Աստված է մեր աղբյուրը, ոչ թե աշխատավարձը: Թվում էր՝ իմ խոսքերը չհպվեցին նրան:

Չեմ կարող ասել, որ իմ ընտանիքը ճնշման ներքո չէր: Դա վերաբերում էր նաև մեզ, բայց մենք խաղաղություն ունեինք և երբեք պակասություն չկրեցինք այդ տարիներին: Մենք շատ քիչ կահույք ունեինք մեր տանը. մահճակալ՝ առանց գլխափայտի, երկու փոքր երկտեղանի բազկաթոռ, մի քանի սեղանիկ և լամպեր, նաև խոհանոցի սեղան՝ աթոռներով. ահա և մեր ամբողջ կահույքը: Այնուամենայնիվ, միայն մեկ տարում Աստված հրաշքով կահավորեց մեր տունը, որի մեծ մասը գեղեցիկ դիզայներական ոճով և պատվերով պատրաստված իրեր էին: Մենք երկյուղած էինք Աստծո մատակարարման պատճառով:

Անցավ երկու տարուց մի փոքր ավելի, և մեր հովիվն ուղարկեց մեզ շրջիկ ծառայության: Մենք այլևս աշխատավարձ չէինք ստա-

նալու: Մեր խնայողությունները կազմում էին երեք հարյուր դոլար, և մենք դեռ ամսական հազար դոլարի մարում էինք կատարում մեր տան և մեքենայի համար: Ավելի հետաքրքրական է այն, որ աղոթքի մեջ Տերը հանձնարարեց ինձ չզանգել և չգրել ոչ մի հովվի՝ ծառայության հրավեր խնդրելու համար: Նա պատվիրեց ինձ վստահել Իրեն:

1989 թվականի նոյեմբերի վերջին ես միայն երկու ծառայության հրավեր ունեի: Առաջինը հարյուր անդամ ունեցող մի փոքր եկեղեցում էր, որը հավաքույթներ էր անցկացնում Հարավային Կարոլինայում գտնվող մի սգո սրահում: Այդ հրավերը հունվարի առաջին շաբաթվա մեջ էր: Երկրորդը փետրվարի վերջին էր՝ Թենեսիում գտնվող երկու հարյուր անդամ ունեցող մի փոքր եկեղեցում, իսկ դեկտեմբերի վերջին շաբաթվանից այլևս աշխատավարձ չէինք ստանալու մեր եկեղեցուց. մենք պետք է հավատայինք Աստծուն:

Եթե ես չսովորեի վստահել Աստծուն մեր ֆինանսների համար, երբ դեռ հովվի օգնական էի, չէի կարողանա դիմանալ այդ ճնշմանը, երբ ուղարկվեցինք՝ մեր ծառայությունը սկսելու համար: Դա չափազանց մեծ խոչընդոտ կլիներ: Ես կսպասեի իմ մատակարարումը մարդկանցից, ոչ թե Աստծուց: Ամենայն հավանականությամբ, ես կսկսեի գումար խնդրել կամ մեքենայություններ անել՝ մեզ անհրաժեշտ միջոցները ստանալու համար, և կծախսեի իմ ուժերը դրա վրա, փոխարենը փնտրեի Աստծուն և ստանայի այն ուղերձները, որոնք Նա ցանկանում էր, որ փոխանցեի Իր ժողովրդին:

Այն ցածր աշխատավարձը, որը ստանում էի իմ եկեղեցում, անասելի օրհնություն դարձավ ապագայիս համար: Եթե ես լսեի իմ ընկերոջը, ով ցանկանում էր տեղեկացնել մեր ավագ հովվին, թե ինչպես վճարի (պատվի) մեզ, չգիտեմ՝ արդյո՞ք մենք կլինեինք այնտեղ, որտեղ այսօր ենք: Մեր ծառայության առաջին տարում մենք պետք է հավատայինք Աստծուն շաբաթական հազար դոլարի համար: Սակայն այս գիրքը գրելու պահին մենք պետք է հավատանք Աստծուն շաբաթական ավելի քան հարյուր քսանհինգ հազար դոլարի համար, որպեսզի ղեկավարենք մեր ծառայությունը: Եվ զարմանալին այն է, որ այս ծառայությունը ղեկավարելու

երեսուն տարվա ընթացքում ես նույնիսկ երեսուն վայրկյանով չեմ կորցրել իմ քունը՝ ֆինանսների պատճառով:

Եթե աշխատում եք ինչ-որ մեկի մոտ, սրտանց աշխատեք՝ համաձայնեցված աշխատավարձով: Եթե պատվեք ձեր գործատուին՝ փայլուն աշխատանք կատարելով, և հարյուր տոկոսով ջանք գործադրեք, Աստված, ի պատասխան, կվարձատրի ձեզ: Այդ վարձատրությունը կգա կա՛մ ձեր գործատուի միջոցով, կա՛մ այլ ճանապարհներով, որոնք Աստված կընտրի, բայց դուք անպայման կվարձատրվեք: Երբ մեր եկեղեցին ցածր աշխատավարձ էր վճարում, Աստված մեծապես պատվում էր մեզ. մեր տունը կահավորվեց, մենք մեքենա ունեցանք, և մեր սեղանին կերակուր կար: Մենք շատ ավելի ապահովված կյանք ունեինք, քան մեր եկամուտը կարող էր թույլ տալ: «Արդարի քիչ բանը լավ է, քան թե շատ ամբարիշտների ճոխությունը» (Սաղմ. 37.16): Այս աստվածաշնչյան խոսքն անչափ իրական դարձավ մեզ համար. Աստված պատվում էր մեզ:

Ո՞րն է հետևությունը: Եթե դուք աշխատող եք, համոզված եղեք ձեր սրտում, որ եթե պատվեք Աստծուն՝ հարյուր տոկոսով աշխատելով ձեր գործատուի համար, դուք վարձատրություն կստանաք: Եվ եթե դուք գործատու եք, իմացե՛ք, որ օգուտ կստանաք ձեր աշխատողների կյանքում գործող պարգևներից, եթե պատվեք նրանց: Գործատուներ և հովիվներ, դուք մեծ վարձատրություն ունեք Աստծուց, որը թաքնված է ձեր աշխատողների մեջ: Վերցրե՛ք այն: Ամեն առումով պատվե՛ք նրանց:

14

Պատիվ ընտանիքում. երեխաներ

Մի քանի տարի տեղական եկեղեցում ծառայելուց և գրեթե երեսուն տարի շրջիկ ծառայության մեջ լինելուց հետո նկատել եմ, որ այն տեղը, որտեղ պատիվն ամենից անհրաժեշտն է, եկեղեցին կամ աշխատավայրը չէ, այլ՝ մեր ընտանիքները: Ճշմարտությունն այն է, որ հասարակական, քաղաքացիական և եկեղեցական ոլորտները մեծապես օգուտ են ստանում, եթե հայրերը և մայրերը պատվավոր վարքի օրինակ են լինում իրենց տանը, քանի որ նման վերաբերմունքն անպայման տարածվելու է՝ հասնելով մեզ շրջապատող մարդկանց:

Ծնողի խոսքի զորությունը

Նախորդ գլուխներից մեկում քննարկեցինք, թե որքան կարևոր է, որ երեխաները պատվեն իրենց ծնողներին: Հակառակը նույնպես ճշմարիտ է: Պատվել՝ նշանակում է արժևորել: Եթե պատվենք մեր երեխաներին, մենք այնպես կվերաբերվենք նրանց և այնպես կխոսենք նրանց հետ, որ նրանք կբարգավաճեն կյանքում:

Ես պարբերաբար ականատես եմ լինում, որ ծնողներն այնպիսի նսեմացնող կերպով են խոսում իրենց երեխաների հետ, որ գրեթե կուչ եմ գալիս: Հայրը կարող է խստորեն խոսել իր դյու-

ռազգաց դստեր հետ կամ քննադատել իր որդու հմտությունները խաղադաշտում: Մայրը կարող է այնպես վարվել, ասես իր երեխաներն ամաչեցնում են իրեն, և նսեմացնել նրանց մարդկանց առջև:

Կնոջս դեռահասության տարիներին նրա մեջ այնպիսի մտածելակերպ է ձևավորվել, որից կարելի էր հեշտորեն խուսափել: Լիզան աշխույժ դեռահաս է եղել, ով երբեք չափազանց տարված չի եղել իր քաշով: Նա կշռվում էր ամառային ճամբարների և սպորտային դասերի ժամանակ: Նրա քաշի ավելացումը բնական աճի արդյունք էր:

Լիզան գրեթե երկու տարի զբաղվել է մարզական լողով՝ երկու տարբեր թիմերում: Դրա շնորհիվ նա ուտում էր գրեթե՝ ինչ ցանկանար, և երբ ցանկանար: Նա վնասվածք ստացավ, ինչի պատճառով դադարեց լողի մարզումների գնալ ավագ դպրոցի առաջին տարում: Նրա ակտիվությունը նվազեց, բայց նա շարունակում էր սնվել նույն չափով, ինչպես որ մարզումների ժամանակ:

Մի անգամ, երբ Լիզան դպրոցից տուն է վերադառնում, հայրը կանչում է նրան: Նա անհավանությամբ վերևից ներքև հայացքով չափում է Լիզային և պատվիրում շրջվել: Գնահատումն ավարտվելուն պես, նա հայտարարում է.

- Քո տաբատը նեղացել է: Որքա՞ն է քաշդ: Ամենաքիչը 60 կիլոգրա՛մ: Գնա՛ և կշռվի՛ր:

Անհաղթահարելի ամոթ և շփոթություն զգալով՝ նա գնաց դեպի ծնողների լոգասենյակում դրված կշեռքը: Լիզան զարմացավ, որ կշռում էր մոտավորապես 63 կիլոգրամ:

Լիզան ասաց հորը, թե որքան էր քաշը: Բայց նրա հայրը կարծում էր, որ այդ քաշը չափազանց շատ էր նրա համար: Նա ասաց, որ այդ քաշով Լիզան գրավիչ չէր, և տղաները ժամադրությունների չէին հրավիրի նրան: Երբ այդ դասախոսությունն ավարտվեց, Լիզան իր լոգասենյակ մտավ, հանեց հագուստը և ուշադրությամբ զննեց մարմինը. առաջին անգամ նա ատեց իր մարմինը:

Այդ պահից Լիզայի քաշը դարձավ նրա կյանքի խթաններից

մեկը: Նա սկսեց չափազանց շատ մտահոգվել իր մարմնի չափսերով և տարվել իր քաշի մասին մտքերով: Նա սկսեց վազել, կրճատեց սննդի չափաբաժինը, և նրա ջանքերն արդյունք տվեցին: Տղաները սկսեցին ուշադրություն դարձնել նրան, և դա դուր էր գալիս Լիզային: Նրա մտքում մի զուգահեռ ձևավորվեց. *«Եթե ես նիհար եմ, ուրեմն ազդեցիկ եմ և արժանի եմ սիրո և ուշադրության. եթե ես գեր եմ, ուրեմն արժանի և ազդեցիկ չեմ»:*

Այդ մտածելակերպը բացասաբար ազդեց նրա առողջական վիճակի վրա՝ աստիճանաբար հասցնելով անորեքսիայի և բուլիմիայի: Լիզան և՛ սիրում էր, և՛ ատում էր կերակուրը: Նա սիրում էր ուտել, բայց ատում էր գիրությունը: Նա սկսեց լուծողական և միզամուղ դեղամիջոցներ ընդունել՝ մարմինը մաքրելու համար: Արդյունքում, մինչև համալսարանի առաջին կուրսում սովորելը, նա կախվածություն ձեռք բերեց դրանցից: Վերջապես նրան հիվանդանոց տեղափոխեցին՝ աղիները մեկ ամսից ավելի չգործելու պատճառով: Քսաներկու տարեկան հասակում Աստված լիարժեքորեն բժշկեց Լիզային: Նրա տպավորիչ վկայությունն այս մասին գրված է նրա գրքում, որը կոչվում է *«Դու քո քաշը չես»:*

Այնուամենայնիվ, կարելի է տալ հետևյալ հարցը. հնարավո՞ր էր արդյոք խուսափել այդ ամենից, եթե Լիզայի հայրն այլ կերպ վարվեր այդ իրավիճակում: Ի՞նչ կլիներ, եթե նրա խոսքերը հավանություն արտահայտեին, ոչ թե արժեզրկեին Լիզայի արտաքին տեսքը: Ի՞նչ կլիներ, եթե նա որոշեր կառուցողականորեն մոտենալ առողջ քաշ ունենալուն և սնունդը սահմանափակելուն: Հնարավո՞ր էր Լիզայի պատկերացումն իր մասին այլ լինել:

Ես տեսել եմ այս խոսքերի ապացույցը մեր ընտանիքում: Երբ ամուսնացա Լիզայի հետ, նրա քաշը 52 կիլոգրամ էր: Ես որոշեցի շարունակ ասել նրան, որ նա գեղեցիկ է և հրաշալի տեսք ունի իր հագուստներով: Ես չդադարեցի գովել և հավանության արժանացնել իմ կնոջը, երբ անցավ մեր ամուսնության առաջին տարին, երբ նա հղիացավ, և երբ նա կերակրող մայր դարձավ:

Ես շարունակ ասում էի. «Դու շքեղ տեսք ունես», կամ՝ «Եթե քսան տարեկանում ինձ ասեին, որ իմ կինն այսքան գեղեցիկ տեսք էր ունենալու ամուսնությունից այսքան տարի անց, ես խնջույք կկազմակերպեի», կամ՝ «Այսօր դու ավելի լավ տեսք

ունես, քան այն օրը, երբ ամուսնացա քեզ հետ»: Ե/ս իսկապես նկատի ունեի այդ ամենը, քանի որ ես այդպես եմ տեսնում նրան: Համոզված եմ՝ իմ տեսանկյունն այդպիսին է, քանի որ ես մշտապես ձգտում եմ կառուցողական ազդեցություն ունենալ Լիզայի կյանքում: Որպես նրա ամուսին, դա Աստծուց ինձ տրված պարտականություններից մեկն է:

Պողոսը խոսում է այս մասին. «Այսպես պետք է մարդիկ սիրեն իրենց կանանց, ինչպես իրենց մարմինները: Ով որ իր կնոջը սիրում է, իրեն է սիրում: Որովհետև ոչ ոք իր անձը չի ատում, այլ *կերակրում է* և պահպանում է նրան, ինչպես Տերն էլ՝ եկեղեցին» (Եփես. 5.28,29, շեղագիրը հեղինակինն է): Ուշադրություն դարձրեք *«կերակրում է»* բառին: Այն նշանակում է տրամադրել աճի համար անհրաժեշտ ամեն ինչ: Ես մշտապես ձգտում եմ սնուցել իմ կնոջը իմ խոսքերով: Ես ավելի շատ կխոսեմ այս մասին հաջորդ գլխում, քանի որ այս ամենը պատվի կողմերից մեկն է:

Մինչ ես սնուցում էի իմ կնոջը, նա շարունակում էր հավատալ այն իմաստությանը և խոստումներին, որոնք Աստված տվել էր նրան, երբ նա բժշկվել էր: Աստված շարունակում էր Իր աշխատանքը նրա կյանքում: Աջակցելով նրան՝ ես այնպիսի մթնոլորտ ստեղծեցի, որտեղ իմ կինը կարող էր անխոչընդոտ հավատալ Աստծուն: Երեսունյոթ տարվա ամուսնությունից և չորս երեխայից հետո նա ունի նույն քաշը, որն ուներ, երբ ամուսնացանք: Նա մշտապես մարզասրահ չի հաճախում. այնպես որ, ոմանք կասեն, որ նա պարզապես գենետիկորեն օժտված է: Բայց ես ավելի լավ գիտեմ դրա պատճառը, քանի որ հիշում եմ այն քսաներկու տարեկան վախեցած, անապահով աղջկան, ով պայքարում էր քաշի հետ:

Երեխաները վարձատրություն են

Ծնողներն անարգում են իրենց երեխաներին ոչ միայն՝ երբ խիստ կամ բացասական խոսքեր են ասում, այլև՝ երբ պատշաճ ժամանակին չեն գովում և հավանության չեն արժանացնում: Երեխաները հաճախակի խրախուսանքի, ուղղորդման և հավանության կարիք ունեն: Նրանք կարիք ունեն լսելու, ինչպես նաև տեսնելու, որ իրենք սիրված և գնահատված են: Հակառակ դեպքում

նրանք, հավանաբար, փնտրելու են դա այլ վայրերում: Որդիները և դուստրերը հավանություն են փնտրում, բայց եթե ծնողները կենտրոնանան իրենց երեխաների ոչ հասուն հատկանիշների կամ թերացումների վրա, նրանք սխալ ուղերձ կփոխանցեն և կինձեն այն ամենի ճիշտ հակառակը, ինչ անհրաժեշտ է իրենց երեխաների աճի և հասունության համար:

Երեխաները կարող են մեծ վնաս կրել, այնինչ, ընդամենը հավանություն արտահայտող մի քանի խոսքեր կարող էին շտկել իրավիճակը, և հնարավոր կլիներ խուսափել բացասական հետևանքներից: Զավեշտական է, որ նման իրավիճակներում ծնողները չեն տեսնում իրենց սխալը: Նրանք վիատվում և բողոքում են իրենց ընկերներին, թե որքան բարդ երեխաներ ունեն. այնուամենայնիվ, շատ հաճախ այն հատկանիշները, որոնք նրանք քննադատում են, հեշտորեն կարելի էր շտկել՝ պատվելով նրանց:

Հոր և մոր խոսքերը մեծ կշիռ ունեն որդու և դստեր կյանքում: Երբ նրանք խոսում են պարտության, ձախողման կամ տկարության մասին, երեխայի կյանքում կարող են հետևանքներ լինել՝ խոչընդոտներից մինչև լուրջ խնդիրներ: Հաճախ ծնողներն ավելի են հուսահատվում իրենց երեխայի վարքի պատճառով, քանի որ, թվում է՝ այն շարունակ վատթարանում է, և արատավոր շրջան է սկսվում: Եթե ծնողները կանգ չառնեն, նրանց հակազդիչ վերաբերմունքը կհեռացնի նրանց այն վարձատրությունից, որն Աստված շնորհում է երեխաների միջոցով: Գրված է.

> «Ահա որդիները Տիրոջ ժառանգությունն են, և որովայնի պտուղը՝ Նրա վարձքը»:
>
> – Սաղմ. 127.3

Այս հատվածում հստակ գրված է, որ մեզ վարձատրություն է խոստացված մեր երեխաների միջոցով: Ինչո՞ւ ավելի շատ ծնողներ ուրախությամբ չեն ընդունում այս խոստումը ծնողների և երեխաների հարաբերության մասին: Փոխարենը, թվում է, թե տեղի է ունենում ճիշտ հակառակը: Հաճախ ես լսում եմ ծնողների տրտունջն իրենց դեռահաս և պատանի երեխաների մասին. «Ես միայն կարող էի տանը կողպած պահել նրան այդ տարիներին,

մինչև որ նա քսանն անց դարձավ», կամ՝ «Ինչո՞ւ չի կարելի պարզապես շրջանցել այդ տարիները»: Հիշում եմ, որ նման արտահայտություններ էի լսում, երբ իմ չորս որդիները դեռ փոքր էին: Դա սկսեց մտահոգել ինձ: Ես մտածում էի. *«Իմ որդիները հրեշնե՞ր են դառնալու դեռահասության և պատանեկության տարիներին»:*

Այնուամենայնիվ, ես ստացա այնպիսի իմաստություն, որի մասին չգիտեն շատ ծնողներ: Թույլ տվեք պատմել ձեզ այդ մասին ձեր օգտի համար: Ես երիտասարդական հովվի ծառայության մեջ էի, երբ մեր երկու ավագ որդիները փոքր էին: Հովվական խորհրդատվությունների միջոցով հնարավորություն ունեցա տեսնելու բազմաթիվ ընտանիքների կյանքեր և շատ ժամանակ չանցած մի օրինաչափություն նկատեցի: Ես բացահայտեցի, որ երբ ծնողները կենտրոնանում են իրենց երեխաների բացասական վարքի վրա, նրանց երեխաների վիճակն ավելի է վատթարանում: Այնուամենայնիվ, երբ ծնողները հռչակում են Աստծո խոստումներն իրենց երեխաների կյանքում, այդ երեխաների կյանքը հետագայում համապատասխանում է այդ հռչակված խոսքերին: Համաձայն Պողոսի խոսքերի՝ Երկրորդ Կորնթացիների թղթում, այս օրինաչափությունը լիովին տրամաբանական է. «Որ այս երևացող բաներին չենք մտիկ անում, այլ՝ աներևույթներին, որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ չերևացողները՝ հավիտենական» (4.18):

Աստծո խոստումները գտնվում են անտեսանելի ճշմարտությունների տիրույթում, որոնք մենք տեսնում ենք Նրա անփոփոխ Խոսքում, և հենց Նրա Խոսքը պետք է լինի մեր ուշադրության կենտրոնում: Լիզան և ես մշտապես հռչակում ենք Աստծո խոստումները մեր երեխաների կյանքում: Մինչև նրանք խոսել սովորեցին, մենք անվանում էինք նրանց «աշակերտներ [ուսված Տիրոջից և հնազանդ Նրա կամքին]», որոնց «խաղաղությունը և անխռով ինքնատիրապետումը» մեծ կլինի (Եսայի 54.13, AMPC): Մենք դավանում էինք, որ նրանք մեր նետերն են (տե՛ս Սաղմ. 127.4), և որ նրանք ծնված են հրաշքներ և սքանչելիքներ լինելու համար (տե՛ս Եսայի 8.18), ինչպես նաև նմանատիպ հրաշալի խոստումներ Աստծո Խոսքից:

Մենք հատուկ ընտրել ենք նրանց անունները, նախ՝ պարզելով դրանց բառարմատների նշանակությունը, իսկ հետո աղոթելով Աստծո առաջնորդության համար: Մենք ցանկանում էինք խոսել նրանց կյանքում այն, ինչ պետք է դառնային: Մեր առաջնեկ Էդիսոն Դեյվիդի անունը նշանակում է «Սիրելի անձ, որն արժանի է վստահության»: Մեր երկրորդ որդի Օսթին Մայքլի անունը նշանակում է «Իշխանազուն, որը նման է Աստծուն»: Մեր երրորդ որդի Ջոշուա Ալեքսանդրի անունը նշանակում է «Աստված փրկում և պաշտպանում է մարդկությունը»: Մեր չորրորդ որդու անունն է Ա՛րդեն Քրիստոֆեր, որը նշանակում է «Բոցաշունչ և կրակոտ անձ, որը քրիստոսանման է»:

Ամեն անգամ, երբ բարձրաձայն ասում ենք նրանց անունները, մենք գիտակցում ենք, թե ինչ է հռչակվում նրանց կյանքում: Մենք նրանց ծնողներն ենք և Աստծուց տրված արտոնություն և իշխանություն ունենք՝ նրանց կյանքում օրհնություն հռչակելու համար: Մեր որդիներից յուրաքանչյուրը մեծանում է՝ համապատասխանելով իր անվան հատկանիշներին, ոչ թե այն պատճառով, որ մենք պարզապես դավանում ենք դրանք, այլ որովհետև մենք հավատում ենք մեր խոսքերին:

Եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ թվացել է, թե նրանք մեր դավանության ճիշտ հակառակն են: Դուք միամտաբար կվարվեք, եթե մտածեք, որ նման դեպքեր չեն եղել: Երբեմն նրանց վարքը լիովին հակասում էր իրենց անուններին: Մենք պետք է շտկեինք և խրատեինք նրանց, սակայն շտկում էինք նրանց վարքը՝ միևնույն ժամանակ պաշտպանելով այն, ինչ դավանում էինք նրանց բնավորության վերաբերյալ (որպես կողմնակի նշում, առաքինի խրատը լավ է, բայց երբ սխալ խոսքեր ենք ասում մարդու բնավորության մասին, փոխարենը աշխատենք նրա վարքի հետ, մենք վնաս ենք հասցնում նրան):

Ընտանեկան ողբերգություն

Երիտասարդական հովիվ լինելու տարիներին կյանքի ևս մեկ դաս քաղեցի՝ որ անհրաժեշտ խրատը ժամանակին չտալը կարող է ողբերգության հանգեցնել: Մինչև խոսելը այն մասին, ինչ անձամբ տեսա, թույլ տվեք մի օրինակ բերել Աստվածաշնչից:

Դավիթ թագավորը շատ որդիներ ուներ՝ տարբեր կանանցից: Մենք կխոսենք նրա երկու որդիների՝ առաջնեկ Ամնոնի և երրորդ որդի Աբիսողոմի մասին: Ամնոնը խիստ մեծ չարիք գործեց իր խորթ քույր Թամարի հանդեպ, ով Աբիսողոմի հարազատ քույրն էր: Նա հիվանդ ձևացավ և խնդրեց հորը, որ Թամարի միջոցով իրեն կերակուր ուղարկի: Երբ Թամարը եկավ, նա հրամայեց իր ծառաներին դուրս գնալ և բռնաբարեց նրան: Դրանից հետո նա այնպիսի ատելությամբ լցվեց Թամարի հանդեպ, որ նույնիսկ չէր ցանկանում տեսնել, և վռնդեց նրան իր ննջարանից: Ամնոնը խայտառակեց կույս արքայադստերը և խորտակեց նրա կյանքը՝ պատելով այն ամոթով:

Նրա եղբայր Աբիսողոմը սաստիկ վրդովվեց Ամնոնի գործած չարիքի պատճառով: Նա ատելությամբ լցվեց իր խորթ եղբոր հանդեպ՝ քրոջը պղծելու համար: Նա լուռ սպասում էր. անկասկած, Դավիթ թագավորն արդարությամբ պատժելու էր Ամնոնին:

Ժամանակն անցնում էր, և թագավորը ոչինչ չէր անում: Թեև նա դժգոհ էր, բայց ոչինչ չէր ձեռնարկում: Աբիսողոմը ցնցված էր. նա իր տուն բերեց քույր Թամարին և հոգ տարավ նրա մասին:

Մի ժամանակ Թամարը կրում էր թագավորի կույս դուստրերի համար նախատեսված հանդերձներ. այժմ նա ամոթ էր հագել: Գեղեցիկ դեռատի աղջիկը, որը մի ժամանակ բարձր գնահատված էր իր ժողովրդի կողմից, այժմ մեկուսի կյանք էր վարում: Ո՞վ կցանկանար ամուսնանալ նրա հետ, երբ նա այլևս կույս չէր: Ամեն ինչ այնքա՜ն անարդար էր: Նրա կյանքն ավարտված էր, մինչ այդ ոճրագործն այնպես էր ապրում, ասես ոչինչ տեղի չէր ունեցել: Թամարն էր, որ կրում էր ամբողջ այդ ծանրությունը՝ դեգերելով իր ավերակների վերածված կյանքի մեջ:

Օր օրի Աբիսողոմը տեսնում էր իր տրտմած քրոջը: Արքայադստեր երազանքները մղձավանջի էին վերածվել: Աբիսողոմը մեկ տարի սպասեց, սակայն նրա հայրը ոչինչ չձեռնարկեց: Ամնոնի հանդեպ ատելության հետ մեկտեղ Աբիսողոմի սրտում արմատ էր գցում վրդովմունքն իր հոր հանդեպ:

Անցավ երկու տարի, և նրա ատելությունն Ամնոնի հանդեպ վերածվեց սպանության մասին մտքերի: Աբիսողոմը մանրակրկիտ դավադրություն կազմեց՝ իր քրոջ վրեժը լուծելու համար: Ինչո՞ւ նա

չպետք է այդպես վարվեր, եթե իշխանություն ունեցող մարդիկ որոշեցին ոչինչ չձեռնարկել: Աբիսողոմը ճաշկերույթ կազմակերպեց Դավթի բոլոր որդիների համար և Ամնոնի համար անսպասելի պահին սպանեց նրան և փախավ Գեսուր: Նա վրեժ լուծեց Ամնոնից. այնուամենայնիվ, այն ծանր վիրավորանքը, որը նա զգում էր հոր հանդեպ՝ նրա անգործության պատճառով, աքսորի ընթացքում սկսեց առավել ուժգին վառվել: Կրակին փայտ ավելացնելով՝ նա շարունակ մտածում էր. *«Ինչո՞ւ հայրս ոչ ոքի չուղարկեց՝ ինձ վերադարձնելու համար»:* Նրա վիրավորանքն ի վերջո վերածվեց ատելության:

Որքան ավելի էին Աբիսողոմի մտքերը դառնությամբ թունավորվում, այնքան ավելի էր նա տեսնում Դավթի թերությունները: Նա քննադատությամբ էր լցվում հոր հանդեպ: Այնուամենայնիվ, դեռ հույս ուներ, որ հայրը ետ կկանչեր իրեն, բայց Դավիթը չէր կանչում: Եվ դա բորբոքեց նրա ատելությունը:

Պատկերացրեք, թե ինչ էր նա մտածում. *«Ժողովուրդն այնպես է մեծարում իմ հորը, բայց նրանք չգիտեն, թե իրականում ինչպիսին է նա: Նա եսակենտրոն մարդ է, ով օգտագործում է Աստծուն՝ միայն որպես ծածկոց: Նա նույնիսկ ավելի վատն է, քան իր նախորդը՝ Սավուղը: Սավուղը կորցրեց իր գահը, քանի որ հրաժարվեց սպանել ամաղեկացիների թագավորին և խնայեց նրանց լավագույն ոչխարներից և ցլերից մի քանիսը: Իմ հայրը շնություն գործեց իր ամենահավատարիմ ծառաներից մեկի կնոջ հետ, իսկ հետո կոծկեց հանցանքը՝ սպանելով այդ մարդուն, որը նվիրված էր իրեն: Նա մարդասպան է և շնացող, և հենց այդ պատճառով նա չպատժեց Ամնոնին»:*

Աբիսողոմը երեք տարի ապրեց Գեսուրում: Դավիթն այլևս չէր սգում իր որդի Ամնոնի պատճառով, և Հովաբը համոզեց թագավորին Երուսաղեմ վերադարձնել Աբիսողոմին:

Ժամանակն անցնում էր: Աբիսողոմի ատելությունն ավելանում էր, և նա դեպի իրեն մոտեցրեց նրանց, ովքեր նույնպես դժգոհ էին իր հորից: Նա արեց դա՝ հասանելի դարձնելով իրեն ամբողջ Իսրայելին: Նա լսում էր մարդկանց դժգոհությունները և շարունակ գանգատվում էր, որ կօգներ նրանց, եթե թագավոր լիներ, բայց ավա՜ղ, թագավոր չէր: Նա դատում էր այն գործերը,

որոնց համար թագավորը ժամանակ չուներ: Միգուցե Աբիսողոմը դատում էր այդ գործերը, քանի որ ինքն էլ արդարադատություն չէր ստացել իր կյանքում: Նա ձևացնում էր, թե անկեղծորեն մտահոգված էր մարդկանցով: Աստվածաշունչն ասում է, որ Աբիսողոմը գողացավ Իսրայելի սրտերն իր հայր Դավթից: Բայց արդյո՞ք նա իսկապես հոգում էր մարդկանց մասին, թե՞ միջոց էր փնտրում, որ գահընկեց աներ հորը, որին արդեն ատում էր:

Աբիսողոմը դեպի իրեն գրավեց Իսրայելի ժողովրդին և ապստամբեց հոր դեմ: Հակամարտությունն այնքան սաստկացավ, որ Դավիթ թագավորը հարկադրված էր փախչել՝ կյանքը փրկելու համար: Որոշ ժամանակ թվում էր, թե Աբիսողոմը կարող էր հաստատվել՝ որպես նոր թագավոր, սակայն ամեն ինչ փոխվեց, երբ նա սպանվեց՝ Դավթին հետապնդելու ընթացքում: Այդ դատաստանը տեղի ունեցավ, թեև Դավիթը պատվիրեց խնայել իր որդուն:

Աբիսողոմը համակված էր ատելությամբ և դառնությամբ: Նա մեծ ներուժ ունեցող մարդ էր. նա գահաժառանգ էր, ով մահացավ իր ուժերի ծաղկման շրջանում: Հնարավո՞ր էր արդյոք խուսափել դրանից, եթե նրա հայրը պատժեր Ամնոնին: Հավանաբար՝ այո: Իսկ Թամա՞րը: Ամենայն հավանականությամբ, նրա կյանքն ավարտվեց դառնությամբ և միայնությամբ: Արդյո՞ք նրա կյանքն այլ կերպ կընթանար, եթե նրա հայրը պատժեր Ամնոնին: Իհա՛րկե: Համոզված եմ, որ բոլոր այս ողբերգությունները կարելի էր կանխել, եթե Դավիթը պատիվ ցուցաբերեր իր երեխաների հանդեպ՝ նրանց աստվածային խրատ տալով: Դավիթն անարգեց իր բոլոր երեխաներին՝ հրաժարվելով խրատել մեկին:

Անարգանք՝ խրատ չտալու միջոցով

Վերադառնանք այն դիտարկումներին, որոնք արել եմ, երբ երիտասարդական ծառայության հովիվ էի: Շատ ծնողներ, ովքեր իմ գրասենյակ էին գալիս, քանի որ խնդիրներ ունեին իրենց երեխաների հետ, չէին հավատում դաստիարակության մեջ խրատ կիրառելուն: Նման Դավիթ թագավորին, նրանք պարզապես հրաժարվում էին պատժել իրենց երեխաներին: Նրանք հավատում էին, որ «սիրելով» կազատեին իրենց որդիներին ու դուստ-

ներին անհնազանդ վարքից, սակայն նրանց մոտեցումը չէր գործում: Նրանց երեխաներն անվերահսկելի էին. նրանք ապստամբ և անհարգալից էին, և այդ վերաբերմունքը դրսևորվում էր բոլոր ոլորտներում, որոնցում իշխանություն ունեցող մարդիկ կային՝ ուսման մեջ, աշխատավայրում, եկեղեցու երիտասարդական ծառայության մեջ և այլ տեղեր:

Հետաքրքիր է, որ այն երիտասարդները, որոնց «սիրում» էին՝ խրատելու փոխարեն, անարգանքով էին վերաբերվում իրենց ծնողներին: Դա և՛ զավեշտական էր, և՛ ողբերգական: Դա զավեշտական էր, քանի որ ծնողները կորցրել էին հենց այն, ինչը փորձում էին շահել՝ իրենց երեխաների սերը. նրանց երեխաների արձագանքը ճիշտ հակառակն էր: Եվ դա ողբերգական էր, քանի որ այդ երեխաները կործանարար որոշումներ էին կայացնում, որոնք հետագա տարիներին ծանր էին անդրադառնալու այդ ընտանիքների վրա:

Հիշում եմ, որ խստորեն կշտամբեցի մի երիտասարդ աղջկա այն պատճառով, թե ինչպես էր նա խոսում իր ծնողների հետ իմ գրասենյակում: Ես մտածում էի. *«Ինչո՞ւ պետք է անեմ սա: Ինչո՞ւ նրա մայրը և հայրը չկշտամբեցին նրան»:* Նրանք նվիրված էին իրենց երեխաներին և «սիրով» ազատում էին նրանց վատ վարքից, այնինչ, իրականում Աստծո Խոսքն այլ բան է ասում: Այն պնդում է, որ ծնողները, որոնք չեն խրատում իրենց երեխաներին, իրականում ատում են նրանց.

> «Գավազանը խնայողը ատում է իր որդուն, բայց նրան սիրողը կանուխ (կամ՝ անմիջապես) կխրատի նրան»:
>
> – Առակ. 13.24

Ես տեսնում էի, որ նրանց պատանեկության տարիները խառնաշփոթի էին նման: Նրանք բախվում էին բազմաթիվ դժվարությունների և փորձանքների, որոնցից հնարավոր կլիներ խուսափել, եթե նրանք պատշաճ դաստիարակություն ստանային կյանքի վաղ փուլում: Ինչո՞ւ: Որովհետև «Գավազանը և հանդիմանությունը իմաստություն կտան, բայց բաց ընկած տղան անարգանք կբերի իր մորը» (Առակ. 29.15): Ինչո՞ւ այդ ծնողները չէին լսում Աստծո Խոսքի խորհուրդը: Նրանք կարծում էին, որ ավելի իմաս-

տուն էին, և, ըստ էության, անարգում էին թե՛ Աստծուն, թե՛ իրենց երեխաներին:

Այս օրինաչափությունն անփոփոխ էր. եթե ծնողները չէին խրատում իրենց երեխաներին, երեխաներն անարգում էին նրանց: Մյուս կողմից, եթե ծնողները չափազանց խիստ էին վարվում նրանց հանդեպ, նրանք երեխաների վրդովմունքն էին առաջացնում: Երեխաները հաճախ վիրավորված էին իրենց սրտում, ինչի արդյունքում անձի խանգարումներ ունեին: Շատերը պայքարում էին վախերի դեմ:

Մենք բացահայտեցինք, որ երբ մեր երեխաները սխալ էին վարվում, խրատն արդյունավետ էր լինում, երբ այն անմիջապես տրվում էր: Դրանից հետո ամեն ինչ ավարտվում էր: Ոխ և վրդովմունք պահելն անառողջ մոտեցում է: Կարճ ժամանակ անց բոլորս ծիծաղում և գրկախառնվում էինք: Երբ նրանք ներված են, այնպես է, ասես դա երբեք տեղի չի ունեցել: Երբ Աստված ներում է մեզ, Նա այլևս չի հիշում մեր մեղքը: Խրատը հավաստիացում է, որ նրանք կսովորեն իրենց սխալներից, սակայն մեղքի զգացում չեն ունենա:

Լիզան հատկապես պատվում էր մեր երեխաներին հոգատարությամբ, սիրով և քնքշությամբ: Ես հետևողական և աստվածահաճո խրատի ավելի վառ կողմնակից էի: Մենք սովորեցինք ընդօրինակել յուրաքանչյուրիս ուժեղ կողմերը: Լիզայի օրինակով՝ ես սովորեցի խոսքով և ֆիզիկապես ավելի շատ սեր փոխանցել, և իմ օրինակով՝ Լիզան յուրացրեց խրատի արժեքը: Միաբանելով այն ուժեղ կողմերը, որոնք Աստված տվել էր յուրաքանչյուրիս, մենք տեսանք Նրա օրհնությունը մեր երեխաների կյանքում:

Սպասվածից ավելի վաղ վարձատրություն

Մեր ավագ որդի Էդիսոնը գերազանց ավարտեց դպրոցը և ընդունվեց մեր երկրի առաջին տասնյակում գտնվող բիզնես համալսարաններից մեկը: Նա պետք է սկսեր իր ուսումը 2005 թվականի սեպտեմբերից:

Նախորդ տարիներին նա ամեն ամառ աշխատել է մեր ծառայությունում, դա արել է նաև մինչև համալսարան գնալը: Հուլիսի

սկզբին նա զանգեց ինձ և մի փոքր լարված ձայնով հարցրեց.

- Հայրիկ, կարո՞ղ եմ խոսել քեզ հետ:

Ես անմիջապես հասկացա, որ լուրջ խոսակցություն է լինելու, և մտովի պատրաստվեցի: Ես պատասխանեցի.

- Իհա՛րկե, ինչի՞ մասին ես ուզում խոսել:

- Հայրիկ, - ասաց նա, - ես չեմ ուզում համալսարան գնալ սեպտեմբերին: Ես ուզում եմ շարունակել աշխատել մեր ծառայությունում: Ուզում եմ օգնել քեզ և մայրիկին տարածել ձեր ուղերձները:

Կարիք չկար, որ երկար մտածեի՝ նրան պատասխանելու համար: Ես գիտեի, որ նա մտերիմ էր Աստծո հետ, և չէր դիմի ինձ այդ հարցով՝ առանց դրա համար նախապես աղոթելու: Ես զգում էի իմ սրտում, որ դա ճիշտ էր: Ես ոգեշնչվեցի. դա պատիվ էր ինձ համար: Եվ պատասխանեցի.

- Դա հրաշալի կլինի: մենք սիրով կընդունենք քեզ՝ որպես լրիվ դրույքով աշխատող մեր թիմում:

Իսկ այժմ թույլ տվեք պատմել, թե ինչ տեղի ունեցավ հաջորդ մեկուկես տարում: Էդիսոնն ընդամենը մի քանի ամիս էր աշխատում մեզ մոտ, երբ մեր աշխատակազմի ղեկավարն առաջարկեց ինձ, որ նրան նշանակենք եկեղեցական հարաբերությունների բաժնի ղեկավար: Այդ բաժինն արդեն մի քանի տարի գործում էր. այն աշխատում է եկեղեցիների և հովիվների հետ՝ տրամադրելով նրանց մեր գրքերին կից թողարկվող դասընթացները և աշխատանքային գրքերը: Այս գիրքը գրելու պահին ավելի քան քսանհինգ հազար եկեղեցի ԱՄՆ-ում և ավելի քան հազար եկեղեցի Ավստրալիայում օգտագործում են այդ նյութերը:

Այդ առաջխաղացման առաջարկի պատճառն այն չէր, որ Էդիսոնը մեր որդին էր: Ես հատուկ խնդրել էի, որ մեր որդիները ոչ մի հատուկ վերաբերմունք չստանային ծառայության մեջ: Իրականում, կարծում եմ՝ երբեմն նրանց համար շատ ավելի դժվար է, քանի որ նրանք հանդես են գալիս և՛ ընտանիքի անդամի, և՛ աշխատողի դերում: Երբ իմ աշխատակազմի ղեկավարը ներկայացրեց այդ խնդրանքը, ես հասկացա, որ դա միայն հիմնված էր իմ որդու աշխատանքի որակի և առաջնորդական կարողությունների վրա:

Ես ընդունեցի նրա առաջարկը և մինչև օրս ապշած եմ դրա արդյունքներից: Հաջորդ տարում մեր եկեղեցական հարաբերությունների բաժինը եռապատկվեց: Ամենուր, որ ես ճանապարհորդում էի, ինձ ողջունում էին պատմություններով այն մասին, թե ինչպես էին հովիվները հարաբերություններ կառուցել Էդիսոնի բաժնի աշխատակիցների հրաշալի թիմի հետ: Էդիսոնը մարդկանց խթանելու և թիմ կառուցելու պարգև ունի, և նրա խանդավառությունը վարակիչ է: Այդ թիմն աղոթում էր հովիվների համար, պատասխանում էր նրանց հարցերին և ժամանակին կատարում էր նրանց խնդրանքները՝ Էդիսոնի ղեկավարության ներքո:

Ես բացահայտեցի, որ իմ որդուն պատվելու շնորհիվ Աստված վարձատրեց ոչ միայն ինձ, այլև մեր ամբողջ ծառայությանը: Հիսուսն ասաց, որ եթե պատվենք մեր փոքրերին, ոչ մի դեպքում չենք կորցնի մեր վարձատրությունը: Իմ ավագ որդին մեծ բեռ վերցրեց մեր ծառայության ուսերից և ընդլայնեց ծառայության կապերն այնպիսի միջոցներով, որ նույնիսկ իմ մտքով չէր անցնի: Իրականում, նրա միջոցով մեր ծառայությունը զարմանալի կապեր հաստատեց Աստծո թագավորության մի շարք ծառայողների հետ: Ո՞վ կմտածեր, որ քսանամյա երիտասարդի մեջ այդքան մեծ ներուժ կար: Բացի այդ, բազմաթիվ եկեղեցիներ, որոնց ես երբեք չէի կարողանա այցելել, ստացան Աստծո Խոսքը՝ մեր դասընթացների միջոցով: Սա, վերջին հաշվով, նշանակում է, որ ավելի շատ մարդիկ հավիտենական ազդեցություն կրեցին:

Եկավ այն օրը, երբ մեր աշխատակազմի ղեկավարը թոշակի անցավ: Մեր ծառայության բոլոր բաժինների ղեկավարները համոզված էին, որ Էդիսոնը ճիշտ թեկնածու էր աշխատակազմի ղեկավարի պաշտոնի համար: Նա ստանձնեց այդ պաշտոնը, և մի քանի տարում այնպիսի միաբանություն և արդյունավետություն տեսա մեր ամբողջ թիմում, որը պարզապես աներևակայելի էր: Մենք կատարեցինք ավելին՝ որպես ծառայություն, քան ես երբևէ հնարավոր կհամարեի: Մենք շատ ավելի պտղաբեր դարձանք, և մեր աշխատավայրում զվարճանքի, ուրախության և աներևակայելի արդյունավետության մթնոլորտ է:

Մեր երկրորդ որդին՝ Օսթինը, համալսարանն ավարտելուց և

մեր թիմին միանալուց մեկ տարի անց դարձավ մեր մարքեթինգային մենեջերը: Հենց սկզբից նա թարմ, նորարարական միջոցներ առաջարկեց՝ մեր ուղերձները հայտնի դարձնելու համար: Նա մի թիմ ձևավորեց, որի շնորհիվ իմ կնոջ «Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը հայտնվեց «Նյու Յորք Թայմս»-ի հանրաճանաչ գրքերի ցուցակում, իսկ իմ գրքերից մեկը՝ «Կործանել կրիպտոնաքարը», հայտնվեց բազմաթիվ ամերիկյան և միջազգային հանրաճանաչ գրքերի ցուցակներում, որոնց թվում է «ՅուԷսԷյ Թըդեյ»-ը: Երբ Լիզան հրատարակեց իր հաջորդ գիրքը, հրատարակիչը նույնիսկ առաջարկեց վարձել Օսթինի թիմը՝ մարքեթինգի համար:

Մեր երրորդ որդին՝ Ալեքը, միացավ մեր թիմին մի փոքր ճարտարագիտությամբ զբաղվելուց հետո: Նա կարողանում է ամեն ինչ այլ կերպ տեսնել, ինչը թույլ տվեց նրան կարճամետրաժ ֆիլմեր պատրաստել, որոնք բացում են մարդկանց միտքը՝ նրանց բարդ ճշմարտություններ փոխանցելով: Այդ տեսանյութերն ազդեցիկ են և միլիոնավոր դիտումներ ունեն «YouTube»-ում և «Facebook»-ում: Դրանք խորը ազդեցություն են թողնում մարդկանց վրա: Եվ այս գիրքը գրելու պահին նա ղեկավարում է մեր «Մեսինջեր ստուդիոս» մեդիա ընկերությունը:

Մեր չորրորդ որդին՝ Ա՛րդենը, նույնպես միացավ մեր թիմին՝ ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգում և Ավստրալիայում գտնվող տեղական եկեղեցիներում ծառայելուց հետո: Մեզ միանալուց հետո նա «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ի նոր ճյուղ հիմնադրեց, որը կոչվում է «Որդիներ և դուստրեր»: Այն թողարկում է մեր ուղերձները «հազարամյակայինների» և «զեդ սերնդի» ներկայացուցիչների (1980-ական թվականներից հետո ծնվածների) համար հասկանալի լեզվով: Ես լսում եմ «Մեսինջերի» այս ճյուղի մասին ամենուր և մեծ ուրախությամբ տեսնում եմ եռանդուն երիտասարդ տղաների և աղջիկների, որոնք պատրաստ են գրավել այս աշխարհը Հիսուսի համար՝ շեշտադրելով սրբությունը և միաբանությունը:

Ես երկյուղածություն եմ զգում՝ մտածելով իմ որդիների մասին: Տարիներ շարունակ աղոթել եմ. «Հա՛յր, այս որդիներն իմը չեն. նրանք Քո որդիներն են. ես միայն տնտեսում եմ այն, ինչը Քեզ է պատկանում: Այնպես որ, Տե՛ր, նրանց կյանքում կարող ես անել

այն, ինչ կամենում ես: Եթե կամենաս, որ նրանք մոլորակի մյուս մասում լինեն, թող Քո կա՛մքը լինի: Ես միայն խնդրում եմ, որ նրանք կատարեն Քո կամքն իրենց կյանքում»:

Ես իսկապես նկատի ունեմ այն, ինչ աղոթում էի: Ես գիտեմ՝ հնարավոր է, որ մեկ օր նրանք հեռանան մեզնից՝ այլ նախաձեռնությունների պատճառով: Այնուամենայնիվ, մինչև օրս Աստված մեր որդիների հետ աշխատելու արտոնություն է տվել: Եվ մեզ համար անչափ հաճելի է, որ միասին կարող ենք ազդեցություն թողնել մարդկանց կյանքերում՝ այն բազմաթիվ պարգևներով, որոնք Աստված շնորհել է:

Գրեթե մոտենալով մեր վեցերորդ տասնամյակին՝ Լիզան և ես սկսել ենք ձգտել ժառանգություն կառուցելուն, և ներկայումս հաճույքով հետևում ենք, թե ինչպես է հաջորդ սերունդն առաջ շարժվում՝ այնպես, որ չէինք էլ կարող երազել: Մեր որդիներից երկուսը խոշոր պայմանագրեր են ստորագրել հրատարակչական ընկերությունների հետ, և մենք երկյուղած ենք այն ուղերձների շնորհիվ, որոնք Աստված տալիս է նրանց՝ Իր ժողովրդի համար:

Ես տեսնում եմ նույն օրինաչափությունն այն ծնողների կյանքում, ովքեր պատվում են իրենց որդիներին և դուստրերին: Եթե երեխաները գնահատանք ստանան, նրանք առաջ կշարժվեն, և այդ առաջընթացի մեջ Աստված անպայման վարձատրություն կտա այն մարդկանց, ովքեր պատիվ ցուցաբերեցին նրանց հանդեպ: Այդ վարձատրություններն ավելի արդյունավետ են դարձնում մեզ՝ մարդկանց կյանքերում հավիտենական ազդեցություն թողնելու համար: Սա Աստծո ծրագիրն է, որի մասին գրված է Նրա Խոսքում. սա հոգևոր օրենք է, որը դուրս եկավ անձամբ Հիսուսի շուրթերից: Երբ մենք՝ ծնողներս, լավ ենք դաստիարակում և սիրում ենք մեր երեխաներին՝ այդկերպ պատվելով նրանց և հնազանդվելով Աստծուն, մենք աստվածային հատուցման խոստում ունենք. մեր վերջին օրերում ուրախություն կլինի, ոչ թե տրտմություն: Մեր ոսկե տարիները շրջապատված կլինեն ուժով և աջակցությամբ՝ Աստծո խոստման շնորհիվ:

15

Պատիվ ընտանիքում. կին

Ընտանիքում իշխանության ներքո են գտնվում ոչ միայն երեխաները, այլև կինը: Նախորդ գլուխներից մեկում խոսեցինք այն մասին, թե որքան կարևոր է, որ կինը պատիվ ցուցաբերի իր ամուսնու հանդեպ: Կրկին, ինչպես երեխաների դեպքում, հակառակը նույնպես ճշմարիտ է:

Պատվե՛ք ձեր կնոջը

Պետրոսը գրում է.

> «Նմանապես, մարդի՛կ, իմաստությա՛մբ բնակվեք նրանց հետ՝ ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ տալով՝ իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցներ, որ ձեր աղոթքը չխափանվի»:
>
> – Ա Պետր. 3.7

Պետրոսը հատուկ շեշտում է, որ կանայք պետք է պատիվ ստանան: Որոշ տղամարդիկ այնպես են մեկնում այս խոսքը, իբրև կինն իր ամուսնուց հոգևորապես ցածր դիրք ունի: Ո՛չ, «տկար անոթ»-ը չի նշանակում, որ ձեր կինը ձեզնից ցածր արժեք ունի. դա միայն նշանակում է, որ նա չի կարող պառկած դիրքից ծանրաձողի հրում կատարել այնքան մեծ քաշով, որքանով դուք եք կարող: Սովորական կնոջ ուժը պակաս է սովորական

տղամարդու ուժից: «Ընդլայնված թարգմանությունն» այսպես է վերծանում այս խոսքը. «Պատվելով կնոջը՝ որպես [ֆիզիկապես] ավելի թույլի»: Լսե՛ք Պետրոսի խոսքերը «Նոր Կենդանի թարգմանությամբ». «Նույն կերպով, դուք՝ ամուսիններդ, պետք է պատիվ տաք ձեր կանանց: Վերաբերվե՛ք նրան ըմբռնումով ձեր համատեղ կյանքի ընթացքում: Միգուցե նա ավելի թույլ է ձեզնից, բայց նա ձեր հավասար գործակիցն է Աստծո պարգևի մեջ, որը նոր կյանքն է: Եթե դուք պատշաճ կերպով չվարվեք նրա հետ, *ձեր աղոթքները չեն լսվի»* (շեղագիրը հեղինակինն է):

Մենք հավասար գործակիցներ և ժառանգակիցներ ենք շնորհքի ժառանգության մեջ: Այնուամենայնիվ, այս խոսքի վերջին մասում տեսնում ենք պատասխանվող աղոթքին վերաբերող մի անսպասելի և ուշագրավ պնդում. եթե ամուսինն անարգում է կնոջը, նրա աղոթքները չեն լսվի: Սա սթափեցնող ճշմարտություն է: Այսպես վարվողին թշվառություն է սպասվում:

Միայն մտածեք այս մասին. Աստծո գահի սրահում ձեր աղոթքները չեն լսվի. ձեր բառերը նույնիսկ Աստծո ականջներին չեն հասնի, եթե անարգեք ձեր կնոջը: Սա բավական է՝ իմ ուշադրությունը լիովին գրավելու համար: Այս խոսքերը լուրջ մտորումների են դրդում մեզ՝ ամուսիններիս: Բարի լուրն այն է, որ հակառակը նույնպես ճշմարիտ է. եթե պատվեք ձեր կնոջը, դուք վստահություն կունենաք Աստծո առջև աղոթքներ բարձրացնելիս:

Այս պահին թույլ տվեք դիմել անմիջապես ամուսիններին: Դուք արժեքավո՞ր եք համարում ձեր կնոջը: Դուք ուշադրություն դարձնո՞ւմ եք նրա խոսքերին, թե՞ անտեսում եք նրան՝ մտածելով. *«Նա պարզապես զգացմունքային է, ինչպես և բոլոր կանայք»:* Ես դառը կերպով եմ սովորել այս դասը: Ես անտեսում էի իմ կնոջ խորհուրդը, երբ նոր էինք ամուսնացել: Այնուամենայնիվ, ժամանակը կրկին ու կրկին ապացուցում էր, որ նրա խոսքերն Աստծուց ստացած իմաստություն էին: Ես կարծում էի, որ նրանից ավելի հոգևոր էի. որքա՜ն էի սխալվում:

Այն բանից հետո, երբ Լիզան մի քանի անգամ ճիշտ գտնվեց տարբեր հարցերում, ես աղոթեցի դրա վերաբերյալ: Ես ընդդիմացա. «Աստվա՜ծ, երբեմն օրական երկու ժամ աղոթում եմ, իսկ նա աղոթում է օրական տասը կամ քսան րոպե, հիմնականում՝

ցնցուղ ընդունելիս» (այդ հարցում ես նույնպես սխալվում էի. իմ կինն աղոթքի կյանք ունի, և նա ամեն օր հետևողականորեն հաղորդակցվում է Աստծո հետ: Ես ինքս ավելի ուշ սովորեցի այդպես հաղորդակցվել Աստծո հետ):

Ես շարունակեցի. «Ինչո՞ւ է նա այդքան հաճախ ճիշտ գտնվում կարևոր հարցերում, իսկ ես՝ սխալ»:

Տերն անմիջապես պատասխանեց. «Որդի՛ս, մի շրջան նկարիր թղթի վրա»:

Ես արեցի դա:

«Իսկ այժմ «X»-եր նկարիր այդ շրջանի մեջ»:

Ես դա նույնպես արեցի:

Նա շարունակեց. «Այժմ շրջանի մեջտեղից մի գիծ քաշիր՝ բաժանելով երկու կեսի: Դու կնկատես, որ «X»-երի գրեթե հիսուն տոկոսը շրջանի մի կողմում է, իսկ մնացածը՝ մյուս կողմում»:

Ես համաձայնեցի:

Տերն ասաց. «Այս «X»-երը խորհրդանշում են Իմ իմաստությունը և խորհուրդը՝ այն տեղեկությունը, որն անհրաժեշտ է քեզ, որպեսզի իմաստուն որոշումներ կայացնես: Այս շրջանը մեկ է, բայց այն երկու կեսի է բաժանված: Դու մի կեսն ես, իսկ Լիզան՝ մյուսը: Դուք մեկ մարմին եք և ամբողջական շրջան եք խորհրդանշում, թեև առանձին անհատներ եք, և այս շրջանի կեսերը խորհրդանշում են յուրաքանչյուրիդ: Բայց այս շրջանը լիարժեք չի լինի, եթե դու միայն նայես քո կեսին»:

Նա շարունակեց. «Դու կնկատես, որ ձեզ տրված իմաստության և խորհրդի մի կեսը գտնվում է Լիզայի կողմում, իսկ մյուսը՝ քո կողմում: Դու կայացրել ես բոլոր ընտանեկան որոշումներն Ինձնից եկող անհրաժեշտ տեղեկության միայն կեսի, այսինքն՝ քո կողմի հիման վրա: Դու չես օգտվել Ինձնից եկող տեղեկությունից, որը գտնվում է նրա կողմում: Ես կտամ այն տեղեկությունը, որն անհրաժեշտ է ձեզ, թե՛ քո, թե՛ նրա միջոցով: Դու պետք է իմաստուն առաջնորդ լինես և սովորես վերցնել Լիզայից այն, ինչ ցույց եմ տալիս նրան, և նրա հետ միասին քննարկել ձեր ընտանեկան հարցերը, մինչև վերջնական որոշում կայացնելը՝ որպես ընտանիքի գլուխ»:

Այդ հանդիպումն Աստծո հետ լիովին փոխեց իմ ամուսնական կյանքը: Ես հասկացա, որ երբ ամուրի էի, ամբողջական շրջան էի, իսկ այժմ՝ երբ ամուսնացած եմ և մեկ մարմին եմ կնոջս հետ, այլևս չեմ կարող այնպես ապրել, ինչպես ամուրի ժամանակ:

Տկար անոթը

Կրկի՛ն կարդացեք Պետրոսի խոսքերը. «Նմանապես, մարդի՛կ, իմաստությա՛մբ բնակվեք նրանց հետ՝ ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ տալով՝ իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցներ, որ ձեր աղոթքը չխափանվի»: Մենք պետք է իմաստությամբ բնակվենք մեր կանանց հետ: Աղոթքի մեջ Աստծուց ստացած խոսքը, որը պատմեցի ձեզ, իմաստություն տվեց ինձ՝ իմ կնոջ հետ բարեհաջող կերպով բնակվելու համար:

Աստծո Խոսքում կա շատ ավելին այն մասին, թե ինչպես բարեհաջող ամուսնական կյանք կառուցեք ձեր կնոջ հետ: Բազմաթիվ ամուսնալուծություններից կարելի էր խուսափել, եթե միայն տղամարդիկ ժամանակ տրամադրեին, որպեսզի իմաստություն ստանային կանանց և տղամարդկանց տարբերությունների վերաբերյալ: Միավորելով արական և իգական սեռերը՝ մենք ստանում ենք Աստծո պատկերի կատարյալ արտացոլքը: Այո՛, անկարելի է տեսնել Աստծո բնությունը միայն արական կամ միայն իգական սեռի մեջ: Որտեղի՞ց գիտենք այս մասին: Աստծո Խոսքն ասում է մեզ. «Եվ Աստված ստեղծեց մարդուն *(մարդկությունը կամ մարդ արարածներին)* Իր պատկերով. Աստծո պատկերով ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. 1.27, փակագծերի բառերը հեղինակինն են):

Աստված ստեղծեց «նրան» Իր պատկերով, բայց «նրանք» «արու և էգ» կոչվեցին: Սուրբ գիրքը հատուկ նշում է, որ անհրաժեշտ է և՛ արական, և՛ իգական սեռը՝ մարդկությունը ներկայացնելու համար, իսկ մարդկությունը ստեղծված է Աստծո պատկերով: Այս պատճառով է, որ Պողոսը պնդում է. «Բայցևայնպես, ո՛չ տղամարդն է անկախ կնոջից, ո՛չ էլ կինն է անկախ տղամարդուց՝ Տիրոջ մեջ» (Ա Կորնթ. 11.11, NKJV):

Վերադառնալով Պետրոսի խոսքերին՝ տղամարդը պետք է պատվի իր կնոջը երկու ձևով. առաջինը՝ որպես ավելի տկար անո-

թի, և երկրորդը՝ որպես կյանքի շնորհքի ժառանգակցի: Եկեք սեղմ խոսենք առաջինի մասին: Մենք պետք է պատվենք մեր կանանց՝ որպես ավելի տկար անոթների: Սա նշանակում է, որ մենք պետք է տիկնանց պես վերաբերվենք նրանց: Տղամարդիկ ուժեղ են, և մենք պետք է օգտագործենք մեր ուժը՝ մեր կանանց պաշտպանելու համար: Այս ցուցումը վերաբերում է նաև այնպիսի հասարակ բաների, ինչպիսիք են՝ պատվել նրան՝ բացելով դռները նրա առջև, ռեստորանում աթոռը սեղանից ետ քաշելով, որ նստի, նրան կոպիտ մարդկանցից պաշտպանելով և այլ տարբերակներով:

Քանի որ ամուսինն ընտանիքի գլուխն է, մենք պետք է նախապատվություն տանք մեր կանանց: Սա նշանակում է, որ եթե դուք որևէ հատուկ միջոցառման եք մասնակցելու, և ձեր գումարը բավականացնում է, որպեսզի նոր հագուստ գնեք միայն մեկ անձի համար, ցույց տվեք, որ արժևորում եք նրան՝ գնելով նոր հագուստ նրա համար, ոչ թե ձեր: Երբ արձակուրդի վայր եք ընտրում, եթե նա ցանկանում է ինչ-որ տեղ գնալ, իսկ դուք այլ վայր եք նախընտրում, հետևեք նրա՛ ընտրությանը: Աստծո թագավորության մեջ առաջնորդելը նշանակում է ծառայել, ոչ թե տիրապետել: Որպես ամուսին՝ ձեր որոշումները կարող են չեղարկել ձեր կնոջ ցանկությունները, միայն եթե դուք վստահ եք, որ դա լավագույն տարբերակն է նրա համար, ձեր ընտանիքի համար և Աստծո թագավորության համար: Մնացած դեպքերում մշտապես նախապատվություն տվեք նրա ցանկություններին՝ ձեր ցանկությունների փոխարեն: Սա այն պատճառներից մեկն է, թե ինչու եք դուք նրա առաջնորդը դարձել՝ որպեսզի նվիրեք նրան ձեր կյանքը: Սա ձեր կնոջը պատիվ ցուցաբերելու ձևերից մեկն է: Դուք օրհնված կլինեք և վարձատրություն կստանաք, և ձեր աղոթքները չեն խոչընդոտվի:

Ժառանգակից

Համաձայն Պետրոսի, մեր կանանց պատվելու մյուս կարևոր պատճառն այն է, որ մենք կյանքի շնորհքի ժառանգակիցներ ենք: Սա նշանակում է, որ կանայք հավասար են մեզ՝ Աստծո առջև ունեցած իրենց դիրքով: Տղամարդ լինելու պատճառով չէ, որ դուք չունեք առավելություն Աստծո առջև: Ոմանք իրենց սրտի խորքում համոզված են այն ստի մեջ, որ տղամարդիկ գերազանց

են կանանցից, և դա անհեթեթություն է: Այս կեղծիքը հորինել են կանանց ստորադասությանը հավատացող տղամարդիկ, որոնք մեկ օր կանգնելու են Աստծո գահի առջև՝ հաշիվ տալու համար: Ավելի քան երեսուն տարի շրջիկ ծառայության մեջ լինելուց և Սուրբ գիրքն ուսումնասիրելուց հետո ինձ համար պարզ է դարձել, որ Աստծո բարեհաճությունը ետ է պահվում այն ընտանիքներից և եկեղեցիներից, որոնք համարում են, որ կանայք հոգևորապես ստորադաս են տղամարդկանցից: Նման վայրերում հոգևոր ճնշում, ծանրություն և գերություն կա:

Պետք է ինքներս մի քանի հարց տանք: Ինչո՞ւ որոշ եկեղեցիների առաջնորդական թիմերում կանայք չկան: Ինչո՞ւ կանանց թույլ չեն տալիս ծառայել կիրակի առավոտյան հավաքույթներին: Ինչո՞ւ կանայք ընդգրկված չեն որոշ եկեղեցիների հովվական թիմերում: Ինչո՞ւ է մեր առաջնորդական թիմերում հնչում միայն հայրերի ձայնը, և ոչ՝ մայրերի: Եկեղեցին՝ առանց մայրական ձայնի, ոչնչով չի տարբերվում այնպիսի ընտանիքից, որտեղ մայր չկա, և երեխաները դաստիարակվում են հոր կողմից: Այդպես կարող է լինել, բայց երեխաների կյանքում շատ նշանակալի ազդեցության պակաս կա, և նրանք վնաս են կրում դրա պատճառով: Այն ընտանիքներում, որոնցում մայրերը ողբերգական մահ են ունեցել կամ, միգուցե, լքել են ընտանիքը, Աստված շնորհք է տալիս ամուսնուն՝ առողջ երեխաներ դաստիարակելու համար: Այնուամենայնիվ, երբ եկեղեցիները մերժում են մայրերի ձայնը, այդ շնորհքը բացակայում է, քանի որ եկեղեցին մերժել է Աստծո իմաստությունը:

Միգուցե դուք ընդդիմանաք. «Բայց Աստվածաշնչում գրված է, որ առաջնորդը պետք է մեկ կնոջ ամուսին լինի»: Տեսնենք, թե ինչ է գրում Պողոսը. «Եկեղեցու առաջնորդը պետք է անարատ լինի. նա պետք է միայն մեկ կին ունենա» (Ա Տիմոթ. 3.2, GNT):

Այս պնդումն իսկապես որ սեռային չեզոք չէ, այլ հստակ սեռ նկատի ունի. առաջնորդը պետք է միայն մեկ կին ունենա: Այնուամենայնիվ, մենք պետք է դիտարկենք այս խոսքը ամբողջ Աստվածաշնչի լույսի ներքո: Պողոսը գրում էր Հին կտակարանի Սուրբ գրքերը կարդացող մարդկանց: Հին կտակարանում կային շատ դեպքեր, երբ տղամարդիկ մեկից ավելի կանայք ունեին: Աբրահամը, Դավիթ թագավորը, Հակոբը, Եղկանան (Աննայի և

Փենանայի ամուսինը) ընդամենը մի քանի օրինակներ են:

Այնուամենայնիվ, դուք չեք գտնի նույնիսկ մեկ դեպք Հին կտակարանում, որ կինը մեկից ավելի ամուսին ունենար: Դա ընդունված չէր, և նույնիսկ թույլատրված չէր, քանի որ դա հակառակ էր օրենքին: Այնպես որ, ինչո՞ւ Պողոսը պետք է գրեր, որ կինը պետք է միայն մեկ ամուսին ունենա՝ եկեղեցու առաջնորդ լինելու համար: Դրա կարիքը չկար: Միգուցե մտածեք, որ ես սահմանն անցնում եմ նման մեկնաբանությամբ. այնուամենայնիվ, եթե անհրաժեշտ էր, որ այդ աստիճան խստորեն (տառ առ տառ) հետևեինք Պողոսի խոսքերին, մենք պետք է ամուրի տղամարդկանց հեռացնեինք եկեղեցու առաջնորդական պաշտոններից, քանի որ նրանք նույնպես մեկ կնոջ ամուսին չեն: Եթե այդպես է, Պողոսն ինքը պետք է հեռանար եկեղեցու առաջնորդի պաշտոնից, ինչն անհեթեթ հետևություն է: Ոմանք չափազանց նեղմիտ են եղել այս ոլորտում:

Կարևորը սեռը չէ, այլ՝ Աստծո կանչը և պարգևը մարդու կյանքում: Այն տղամարդիկ, որոնք թույլ չեն տվել իրենց կանանց կամ եկեղեցում գտնվող այլ կանանց ծառայել իրենց կոչումներով, զգալիորեն փակել են Երկնքի պատուհաններն իրենց ընտանիքներում և ծառայություններում: Այո՛, նրանք կարող են օրհնված ոլորտներ ունենալ, բայց լիարժեքորեն չեն ստանա երկնային օրհնությունը:

Քրիստոսի մարմինը խեղվել է՝ կանանց հանդեպ ցուցաբերված անարգանքի պատճառով: Այնուամենայնիվ, բարի լուրն այն է, որ միշտ այսպես չի լինելու: Որովհետև և՛ Հովել մարգարեն, և՛ Պետրոս առաքյալը մարգարեացան Աստծո Հոգով, որ կանայք լիովին վերականգնվելու են ծառայության մեջ եկեղեցու վերջին օրերում:

> «Ահա թե ինչ կանեմ վերջին օրերում, - ասում է Աստված. - Ես կթափեմ Իմ Հոգին յուրաքանչյուրի վրա: Ձեր որդիները և դուստրերը կազդարարեն Իմ ուղերձը. ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն, և ձեր ծերերը երազներ կտեսնեն: Այո՛, նույնիսկ Իմ ծառաների վրա՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց, Ես կթափեմ Իմ Հոգին այդ օրերին, և նրանք կազդարարեն Իմ ուղերձը»:
>
> – Գործք 2.17,18, GNT

Ուշադրություն դարձրեք, որ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք ազդարարելու են Աստծո Խոսքը:

Սաղմոսերգուն նույնպես կանխասում է սա. «Տերը տալիս է խոսքը. ավետարանողները մեծ բազմություն են» (Սաղմ. 68.11): Իսկ ովքե՞ր են Աստծո Խոսքն ավետարանողները: Անհրաժեշտ է կարդալ այլ թարգմանություններ՝ պատասխանը գտնելու համար. «Տերը տալիս է [զորության] խոսքը. այն կանայք, ովքեր տանում են և հրատարակում են [այդ լուրը], մեծ բազմություն են» (Սաղմ. 68.11, AMPC):

Սաղմոսերգուն խոսում է ոչ թե տղամարդկանց և կանանց մասին, այլ հատկապես՝ կանանց: Թույլ տվեք ցույց տալ այս խոսքն այլ թարգմանություններից. «Տերը տվեց հրամանը, և շատ կանայք տարան այդ լուրը» (GNT), և կրկին. «Տերը հաղթանակ է ազդարարում, և կանանց բազմությունները բացականչում են այդ Բարի լուրը» (NLT): Կանայք պետք է ազդարարեն Բարի լուրը ոչ միայն այլ կանանց, այլև տղամարդկանց: Մենք տեսնում ենք, որ այս ճշմարտությունը հաստատվում է Հիսուսի ծառայության մեջ: Մի՞թե հետաքրքիր չէ, որ առաջին ավետարանիչը Մարիամ Մագդաղենացին էր: Հիսուսը հանձնարարական տվեց նրան: Գրված է. «Հիսուսը նրան ասաց. ««Մի՛ դիպչիր Ինձ, որովհետև դեռ չեմ վեր ելել Իմ Հոր մոտ, բայց դու գնա՛ իմ եղբայրների մոտ և ասա. «Ես վեր եմ ելնում Իմ Հոր մոտ և ձեր Հոր մոտ, Իմ Աստծո մոտ և ձեր Աստծո մոտ»»: Մարիամ Մագդաղենացին գալիս է աշակերտներին պատմում, որ նա տեսավ Տիրոջը, և որ Նա այս բաներն ասաց իրեն» (Հովհ. 20.17,18):

Շարունակենք այս թեման: Եթե կարդաք Ղուկասի Ավետարանը, կպարզեք, որ Մարիամը գլխավոր քարոզիչն էր: Հիսուսն ուղարկեց ոչ միայն նրան, այլև մի խումբ կանանց՝ ազդարարելու Տիրոջ հարությունն առաքյալներին: Գրված է. «Եվ Մարիամ Մագդաղենացին էր և Հովհաննան և Հակոբոսի մայր Մարիամը, և նրանց հետ ուրիշներն էլ, որ այս բաներն ասում էին առաքյալներին» (24.10): Այսպիսով, կանայք ազդարարեցին Աստծո Խոսքը տղամարդկանց, և Հիսուսն էր, որ ուղարկել էր նրանց:

Մի՞թե հետաքրքիր չէ, որ առաջին անձնավորությունը, ով Մեսիայի հայտնվելու ժամանակ խոսեց Տաճարում գտնվող մարդ-

կանց հետ՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, Աննա մարգարեուհին էր: Սիմեոնը երկրորդն էր, ով խոսեց Հովսեփի և Մարիամի հետ, սակայն առաջին անձնավորությունը, ով խոսեց բազմության հետ տաճարում, Աննան էր: Գրված է. «Սա էլ նույն ժամին վեր կացավ, Տիրոջից գոհանում էր և խոսում էր Նրա մասին այն ամենին, որ Երուսաղեմի մեջ փրկությանն էին սպասում» (Ղուկ. 2.38):

Մի՞թե հետաքրքիր չէ, որ Փիլիպպոսը չորս դուստր ուներ, որոնք քարոզում էին Տիրոջ Խոսքը: Գրված է. «Նա չորս չամուսնացած դուստր ուներ, որոնք ազդարարում էին Աստծո ուղերձը» (Գործք 21.9, GNT): Նրանք ազդարարում էին Տիրոջ Խոսքն աստվածային ոգեշնչման ներքո: Ինչպե՞ս մենք կարող ենք կատարել Մեծ Հանձնարարականը, եթե Քրիստոսի մարմնի կեսից ավելին պատիվ չի ստանում՝ իր կոչումը կատարելու համար: Երբ տղամարդիկ սնուցեն Աստծո կանչն իրենց կանանց կյանքում, նրանք մեծ վարձատրություն կստանան: Ես վերապրել եմ սա անձամբ իմ կյանքում:

(Որպես նշում, Նոր կտակարանում կան մի քանի խոսքեր, որոնք, ինչպես թվում է առաջին հայացքից, հակասում են իմ գրածին: Կրկին, այդ խոսքերն անհրաժեշտ է ուսումնասիրել՝ դրանց նպատակը հասկանալու համար, և այս գրքի նպատակն այս թեման խորապես ուսումնասիրելը չէ: Այնուամենայնիվ, գոյություն ունեն գերազանց նյութեր պատվավոր առաջնորդների կողմից, որոնք սպառիչ կերպով ուսումնասիրել են այս խոսքերը: Դրանցից մեկն է *«Ինչո՞ւ ոչ՝ կանայք»* գիրքը, հեղինակներ՝ Լորեն Կանինգհեմ և Դեյվիդ Ջոել Համիլտոն):

Իմ կինը

Լիզայի աչքերից մեկը հեռացրել էին, երբ նա հինգ տարեկան էր: Նա մի հիվանդություն ուներ, որը կոչվում է «աչքի ցանցաթաղանթի ծլուռուցք», կամ, պարզ ասած, աչքի ցանցաթաղանթի քաղցկեղ: Դպրոցական տարիներից մինչև օրս նա պրոթեզ է կրում իր աջ աչքի խոռոչում: Դպրոցում նա ծաղրանքի էր ենթարկվում: Նրա ոչ հասուն համադասարանցիները վիրավորական անուններ էին տալիս նրան, օրինակ՝ «Կիկլոպ» կամ «Միաչքանի»: Երբեմն նա օրվա կեսից տուն էր վազում՝ լաց լի-

նելով: Նրա մայրն իմաստուն կերպով խորհուրդ էր տալիս ուժեղ մնալ և անտեսել վիրավորանք պատճառող երեխաներին, բայց դա, միևնույն է, ցավ էր պատճառում նրան:

Ավագ դպրոցում Լիզան իմացավ, որ երկու առարկա ունեին այնպիսի ավարտական պահանջներ, որոնք ամենից շատ էին վախեցնում և մարտահրավեր նետում նրան: Դրանցից մեկը բանավոր խոսքն էր, իսկ մյուսը՝ մեքենագրումը: Փորձելով երկուսն էլ՝ առանց հաջողության, նա հանդիպեց իր ուղղորդող խորհրդատուին և խնդրեց, որ իրեն ազատեին այդ պարտադիր դասերից: Ինչպե՞ս էր նա կանգնելու մարդկանց առջև և արդյունավետ կերպով հաղորդակցվելու նրանց հետ: Մեքենագրումը գրեթե անհնար էր, քանի որ նա գրեթե լիովին կորցրել էր իր տարածական կողմնորոշումը: Նրա խորհրդատուն ողորմածաբար համաձայնեց և ազատեց Լիզային այդ երկու դասընթացներից՝ դրանց փոխարեն այլ դասեր ավելացնելով:

Ինչպես ավելի վաղ նշեցի այս գլխում, Լիզան ճանաչեց Հիսուս Քրիստոսին իր համալսարանական տարիների ավարտին: Կարճ ժամանակ անց մենք ամուսնացանք, տեղափոխվեցինք Տեխաս նահանգի Դալլաս քաղաք և հաճախեցինք մի մեծ եկեղեցի: Այդ ժամանակ նա ավելի զուսպ էր և ընդհանրապես շփվող չէր: Եկեղեցու կանայք մեծամիտ և ամբարտավան էին համարում նրա վարքը: Այնուամենայնիվ, իրականությունը շատ էր տարբերվում այն ազդակներից, որոնք նա հաղորդում էր. նա դեռ ներսում կրում էր բազմաթիվ վախեր, որոնք ձևավորվել էին աչքը հեռացնելուց հետո, ինչպես նաև այն ծաղրանքը, որը հետևել էր իրեն դպրոցական տարիներին:

Մեր ամուսնության վաղ շրջանում մենք երկկողմանի եկամտի կարիք ունեինք. այնպես որ, Լիզան գործակալի աշխատանք գտավ շպարի և մաշկի խնամքի պարագաների ուղիղ վաճառքով զբաղվող մի ընկերությունում: Ես հաճախեցի նրա դասերից մի քանիսին և բացահայտեցի, որ իմ կինն օժտված է այդ բնագավառում և մասնագիտական գիտելիքներ ունի այդ ապրանքների մասին: Բայց Լիզան երկչոտ էր: Նա վախենում էր ներկայացնել այդ ապրանքները. այնպես որ, ստիպված էի ինքս հաճախորդներ գտնել և շնորհանդեսներ կազմակերպել նրա համար:

Մեկ տարի անց, երբ մենք Դալլասի խոշոր բարձրակարգ հանրախանութներից մեկում էինք, ես ասացի.

- Լի՛զա, դու պետք է դիմես կոսմետիկա վաճառող ընկերության ներկայացուցչի աշխատանքի համար: Դու շատ ավելի լավ ես կատարում այս աշխատանքը, քան այստեղ գտնվող կանայք, որոնք կոսմետիկա են վաճառում և դիմահարդարում են անում:

Նա ասաց, որ ես սխալվում եմ, բայց այդ շաբաթվա ընթացքում նա պետք է աշխատեր այդ հանրախանութում գտնվող մեկ այլ խանութում՝ ըստ իր հերթափոխի: Ամեն անգամ, երբ նա մտնում էր այդ հանրախանութի դռներով, իմ բառերն արձագանքում էին նրա ականջներում: Այնպես որ, նա գաղտնի դիմում ուղարկեց և, ի զարման նրա, ընդունվեց այդ աշխատանքին:

Նա աշխատելու էր որպես «Էլիզաբեթ Ա՛րդեն» ընկերության ներկայացուցիչ: Այդ ընկերության տեսականին վաճառող նախորդ աշխատակցուհին մեծ հաջողություն չուներ: Աշխատանքի անցնելով՝ Լիզան վաճառեց գրեթե ամբողջ տեսականին ընդամենը մի քանի շաբաթում: Մի օր նրան է այցելում այդ ընկերության գործադիր կազմից մի տղամարդ և ասում.

- Մենք միասին ճաշելու ենք, Լի՛զա: Դուք այլևս չեք աշխատելու այստեղ:

Նրա խնդրանքով Լիզան հարցազրույցի մասնակցեց և առաջխաղացում ստացավ՝ նշանակվելով վաճառքի կոորդինատոր: Նա համակարգելու էր Դալլասի և Ֆորտ Վորտի շրջանում գտնվող տասնվեց խանութների աշխատանքը, ինչպես նաև մեկական խանութների աշխատանքը Նյու Մեքսիկոյում և Օկլահոմայում: Երկու տարի չանցած, նա կրկին առաջխաղացում ստացավ՝ ընկերության գովազդային ներկայացուցիչ նշանակվելով, և արդեն համակարգում էր ութ նահանգներում գտնվող խանութների աշխատանքը: Նա աշխատավարձի զգալի բարձրացում ստացավ, ինչպես նաև մի շարք արտոնություններ, որոնց թվում էր ընկերության կողմից տրամադրվող լիովին նոր «Ֆորդ Թանդերբըրդ» մեքենան: Կռահեք, թե ո՞վ էր նստում վարորդի կողքին, իսկ երբեմն նաև վարում այդ մեքենան: Եվ ո՞վ նույնպես օգուտ ստացավ նրա աշխատավարձի ավելացումից: Ե՛ս: Եվ սա կոչվում է պատվի վարձատրություն:

Երկու տարի անց Ֆլորիդա տեղափոխվեցինք, որտեղ ես երի-

տասարդական ծառայության հովիվ էի մի մեծ եկեղեցում: Մի քանի ամիս անց ասացի մեր երիտասարդներին, որ հաջորդ շաբաթ իմ փոխարեն Լիզան է ծառայելու: Ես տեսնում էի, որ Տերը բազմաթիվ հայտնություններ էր տվել Լիզային, և որ տանը նա արդյունավետ կերպով հաղորդակցվում էր մեր երեխաների հետ և սովորեցնում էր նրանց: Եվ գիտեի, որ նա կարող էր անել նույնը մարդկանց խմբի առջև:

Ավելորդ է ասելը, որ այդ հայտարարությունը մեծ հակառակություն առաջացրեց ոչ թե երիտասարդների կողմից, այլ՝ Լիզայի. ամբողջ շաբաթվա ընթացքում նա բողոքում էր.

- Դու չե՞ս ստիպի ինձ, որ անեմ դա: Ես չե՞մ կարող քարոզել երիտասարդներին: Ես ասելու ոչինչ չունե՞մ:

Ես հավաստիացնում էի նրան, որ նա ասելիք ուներ, և որ Աստված օգնելու էր: Ես տեսնում էի այդ պարգևը նրա մեջ և չէի ցանկանում, որ այն անգործության մատնվեր:

Հաջորդ շաբաթ նա քարոզեց, և հավաքույթը հրաշալի անցավ: Երիտասարդներն անչափ ոգևորված էին Լիզային լսելուց: Ես արեցի դա ևս մի քանի անգամ հետագա ամիսներին, և ամեն անգամ բախվեցի նույն հակառակությանը: Ամեն անգամ նա ասում էր.

- Ես արդեն քարոզել եմ նրանց այն ամենը, ինչ գիտեմ:

Ես ծիծաղում էի և պատասխանում.

- Ես ամեն շաբաթ եմ այդպես վարվում և ամեն անգամ վստահում եմ Աստծուն:

Թվում էր՝ դա այնքան էլ չէր մխիթարում նրան: Այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ նա քարոզում էր, նրա ուղերձներն ավելի արդյունավետ էին դառնում: Երիտասարդները սիրում էին Լիզային:

Երբ մեր հովիվն ազատեց մեզ աշխատանքից և ուղարկեց այն ծառայության մեջ, որում ներկայումս գործում ենք, ես սկսեցի անել նույնը: Երբ քարոզում էի տարբեր բնակավայրերում անցկացվող փոքր համաժողովներում, ես պարբերաբար հայտարարում էի՝ առանց խորհրդակցելու Լիզայի հետ, որ նա անցկաց-

նելու էր հաջորդ հավաքույթը: Առաջին անգամ, երբ արեցի դա, Լիզան այնքան բարկացած էր, որ մինչև ուշ գիշեր թույլ չտվեց ինձ քնել:

- Անհավատալի է, որ կամավորագրեցիր ինձ՝ քո հաջորդ ծառայությունն անցկացնելու համար: Սա քո երիտասարդական ծառայությունը չէ, այլ՝ հատուկ համաժողով է: Ես չէ, որ պետք է քարոզեմ այդտեղ, այլ՝ դու:

Դրանից հետո նա հարցրեց, թե ինչի մասին եմ քարոզել, քանի որ այդ ծառայության ընթացքում նա տանն էր մնացել՝ մեր երեխաներին քնեցնելու համար: Երբ պատմեցի նրան, նա սարսափեց.

- Դու քարոզել ես իմ միակ ուղերձը քո երեկոյան հավաքույթին. ինչի՞ մասին եմ ես քարոզելու վաղն առավոտյան:

Ես պարզապես ասացի.

- Սիրելի՛ս, Աստված այնքա՜ն բան է սովորեցրել քեզ, և այս մարդիկ դա լսելու կարիք ունեն:

Նա շարունակեց վիճել մինչև գիշերվա ժամը երեքը: Ի վերջո, ես պարզապես սկսեցի ծիծաղել և ասացի.

- Սիրելի՛ս, դու քարոզելու ես առավոտյան ժամը իններին: Միայն վեց ժամ է մնացել, ավելի լավ է մի քիչ քնես:

Իհարկե, հաջորդ առավոտյան Լիզան յուրահատուկ ուղերձ քարոզեց: Նրա ուղերձը զարմանալի էր, և այն ջերմորեն ընդունվեց մարդկանց կողմից: Ես շարունակում էի անել նույնը տարբեր քաղաքներում, և նա ավելի ազդեցիկ կերպով էր ծառայում:

Թույլ տվեք ասել հետևյալը. սա չի նշանակում, որ այդ ծառայությունը հեշտությամբ էր տրվում նրան: Առաջին անգամ, երբ նա քարոզեց, լսարանը բաղկացած էր ուսանողներից և աշխատանքային տարիքի երիտասարդներից, և ներկա տղամարդկանցից մի քանիսն աղմուկով ոտքի ելան և դուրս գնացին՝ հրաժարվելով ուսմունք լսել կնոջից: Իրականում, այդ պահին Լիզան ուզում էր հետևել նրանց: Նա երբեք չէր ձգտում մարդկանց ուշադրության կենտրոնում լինել: Նա անում էր դա՝ հնազանդվելով Աստծուն:

Նույնը՝ գրքեր գրելու վերաբերյալ

Ես նույն կերպով վարվեցի գրքեր գրելու հարցում: Երեք գիրք էի գրել, և Լիզան օգնել էր ինձ խմբագրման գործում: Ես հասկացա, որ նա օժտված գրող էր, և իմ երրորդ գիրքը՝ *«Սատանայի խայծը»,* համազգային հանրաճանաչ գիրք դարձավ: Ես ասացի իմ հրատարակչին.

- Իմ կինն ուղերձ ունի այն մասին, թե ինչպես է Աստված ազատել նրան վախից և սահմանափակումներից իր կյանքի որոշ ոլորտներում: Դուք պետք է խոսեք Լիզայի հետ այդ թեմայով գիրք գրելու մասին, բայց մի՛ արեք դա իմ միջոցով. կա՛պ հաստատեք անմիջապես նրա հետ:

Մի քանի շաբաթ անց այդ հրատարակիչը եկավ մեր տուն: Լիզան չգիտեր, որ նա այցելում էր ոչ թե ինձ, այլ իրեն, և այնպես նայեց ինձ, կարծես հարցնում էր. «Ինչ է տեղի ունենում»:

Այդ հրատարակիչը մի հանդիպում կազմակերպեց, որի ընթացքում Լիզան պատմեց իր փորձառության մասին այդ հրատարակչության աշխատակազմին: Որոշ ժամանակ լսելուց հետո նա ասաց.

- Ձեր ամուսինը համոզված է, որ դուք շատ կարևոր ուղերձ ունեք, որն անհրաժեշտ է հրատարակել գրքի տեսքով: Այժմ, ձեզ լսելով, ես զգում եմ նույնը:

Լիզան արդեն մի շարք գրքեր է գրել, որոնց թվում են մի քանի հանրաճանաչ գրքեր, և մեկն էլ դարձել է լավագույն վաճառվող գիրքը՝ ըստ *«Նյու Յորք Թայմս»*-ի: Իր գրքերի միջոցով նա ազդեցություն է թողել աշխարհով մեկ գտնվող բազմաթիվ մարդկանց կյանքերում: Այժմ նա ամեն տարի քարոզում է տասնյակ հազարավոր մարդկանց:

Մտածե՛ք այս մասին. ահա մի կին, ով խուսափում էր իր դասարանի առջև ելույթ ունենալուց և մեքենագրելուց: Ո՞րն է նրա հիմնական զբաղմունքն այսօր: Նա քարոզում է հազարավոր մարդկանց հեռուստատեսությամբ և բազմաթիվ այլ հարթակներով, ինչպես նաև գրքեր է գրում: Ինչպե՞ս դա հաջողվեց նրան: Նա հակառակվեց իր վախին Աստծո շնորհքի զորությամբ: Իր ամուսնու մղումների շնորհիվ, ով ճանաչեց և պատվեց Աստծո պարգևը Նրա դստեր կյանքում, շատերն օրհնություն են ստացել:

Այսպիսով, ինչ տեղի կունենար, եթե բոլոր ամուսինները եկեղեցում սկսեին պատվել իրենց կանանց:

Ո՞րն է եղել իմ վարձատրությունը՝ իմ կնոջը պատիվ ցուցաբերելու համար: Ես այնքա՜ն շատ բան եմ ստացել, որ բոլորը թվարկելն անհնարին կլիներ: Լիզայի կյանքը բարգավաճել է յուրաքանչյուր մակարդակի վրա, ոչ միայն ծառայողական: Երբ ինչ-որ մեկն ազատություն է ստանում, նա ճշմարտապես ազատ է դառնում: Ինչպես որ Աստծո շնորհքն իմ կյանքում դռներ բացեց Լիզայի համար, նրա պարգևներն արեցին նույնը ինձ համար: Ինձ համար բազմաթիվ կարևոր դռներ են բացվել Լիզայի շնորհիվ: Ես հրավերներ եմ ստացել մի շարք եկեղեցիներից, որոնց առաջնորդներն ասել են ինձ. «Ձեր կինն այնքան խորն է հպվել մեր կանանց սրտերին, որ մենք չէինք կարող չհրավիրել նաև ձեզ»:

Եվս մեկ վարձատրությունն այն փաստն է, որ ես ապրում եմ կայացած կնոջ հետ: Երբ մարդը չի կատարում Աստծո կոչումը, նա ծանրություն և ճնշվածություն է զգում իր սրտում, քանի որ չի արտահայտում այն, ինչի համար Աստված ստեղծել է իրեն: Այնուամենայնիվ, երբ ինչ-որ մեկն Աստծո կամքի մեջ է, Հիսուսն ասում է, որ Իր բեռը թեթև է (տե՛ս Մատթ. 11.28-30): Երբ գործում ենք Աստծո համար, մեր կյանքում ուրախություն կա: Թեև հարձակումներն ավելի ծանր և հաճախակի են, կյանքն Աստծո ծրագրի մեջ ավելի հեշտ է: Իմ կինը շատ ավելի ուրախ և խանդավառված է՝ որպես Աստծո դուստր, կին, մայր և Ավետարանի ծառայող: Եթե այս ոլորտներից որևէ մեկը բացակայեր, մյուս ոլորտները նույնպես վնաս կկրեին: Նա ուշադիր է ճիշտ առաջնահերթություններ պահպանելու հարցում. մեր ընտանիքն ավելի կարևոր է, քան ծառայության գործը, և մեր ընտանիքում զարմանալի շնորհք կա, ըստ որի մենք կարող ենք ուղարկել նրան ճանապարհորդելու և իր կոչումը կատարելու: Մեր ամուսնությունը երբեք այնքան լիարժեք չի եղել, և մեր սերը երբեք այնքան ուժգին չի եղել, որքան այն ընթացքում, երբ երկուսս էլ հնազանդվում ենք մեր կյանքում եղած Աստծո կոչմանը:

Եվս մեկ վարձատրություն, որը, իմ համոզմամբ, մեծագույնն է. այն հարյուր հազարավոր մարդիկ են, որոնք կրել են հավիտենության ազդեցությունը՝ Լիզայի կողմից Աստծո Խոսքը քարոզելու արդյունքում: Մի օր, Աստծո գահի առջև, մենք արտոնություն

կունենանք տեսնելու նրա աշխատանքի ավելի լայն ազդեցությունը: Մեկ անգամ հարցրի մեր որդիներին.

- Տղաներ, դուք բացասաբար եք վերաբերվում ձեր մոր և հոր հաճախակի ճանապարհորդություններին: Ձեր կարծիքով՝ մեզ խլո՞ւմ են ձեզնից, թե՞ ձեր վերաբերմունքը դրական է, և դուք կարծում եք, որ ցանում եք ձեր մորը և հորը աշխարհով մեկ գտնվող կարիքավոր մարդկանց համար, և սա ձեր բաժինն է մեր ծառայության մեջ:

Իմ ավագ որդին առաջինը պատասխանեց.

- Հայրի՛կ, մենք համարում ենք դա մեր բաժինը ձեր ծառայության մեջ: Այս կերպով մենք նույնպես ազդեցություն ենք թողնում մարդկանց կյանքերում՝ Աստծո թագավորության համար:

Մյուս երեք որդիներս վճռականորեն համաձայնեցին:

Այդ պահին Լիզան և ես մեծ ուրախությամբ միմյանց նայեցինք: Մենք հասկացանք, թե որքան մեծ է Աստծո շնորհքն Իր ծառաների վրա, երբ նրանք պարզապես հնազանդվում են Նրան: Մեր որդիները մեծ վարձատրություն կստանան՝ ոչ միայն այս կյանքում, այլև Քրիստոսի ատյանի առջև: Որքա՜ն զարմանալի է պատվի վարձատրությունը տեսնելը: Սկզբում մենք չէինք տեսնում այդ օրհնությունները, բայց դրանք հասան մեզ, ինչպես որ խոստանում է Աստծո Խոսքը. «Եվ եթե քո Տեր Աստծո ձայնին ուշադրությամբ լսես, որ զգուշությամբ կատարես Նրա բոլոր պատվիրանները, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ... այս բոլոր օրհնությունները քեզ վրա կգան, քեզ կհասնեն, եթե քո Տեր Աստծո ձայնին լսես» (Երկր. Օր. 28.1,2):

Մենք պատիվ չենք ցուցաբերում՝ պարզապես վարձատրություն ստանալու համար. մենք պատիվ ենք ցուցաբերում, քանի որ դա Աստծո սրտի ցանկությունն է և մեր բերկրանքն է: Այնուամենայնիվ, պատվի վարձատրությունը շատ ավելի հաստատ է, քան այն, որ սերմը պտուղ է տալիս՝ իր տեսակի պես: Վարձատրությունները հետևում են ճշմարտապես պատիվ ցուցաբերելու բոլոր դեպքերին: Այնպես որ, ամուսիննե՛ր, մի՛ ուշացրեք պատիվ ցուցաբերելը: Պատվե՛ք ձեր կանանց՝ դարձնելով դա ձեր կյանքի ոճը, և այն վարձատրությունը, որն Աստված կտա ձեզ՝ ձեր կնոջ միջոցով, կլինի ավելին, քան կարող եք պատկերացնել:

16

Պատվել բոլորին

Սեղմ քննարկենք պատիվ ցուցաբերելը այն մարդկանց հանդեպ, ովքեր մեր ընտանիքից, եկեղեցուց կամ գրասենյակից չեն: Կարճ ասած, խոսքն այն մարդկանց մասին է, որոնց հետ հաղորդակցվում ենք առօրյայում: Պետրոսը պարզապես գրում է.

«Ամենին պատվե՛ք»:
– Ա Պետր. 2.17

Անկարելի է ավելի պարզ ասել: Կարդանք այս խոսքն այլ թարգմանություններով. «Հարգանք ցուցաբերե՛ք բոլոր մարդկանց հանդեպ [պատվով վերաբերվեք նրանց]» (AMPC), «Վերաբերվե՛ք յուրաքանչյուրին, ում հանդիպում եք, արժանապատվությամբ» (MSG), և «Հարգանք ցուցաբերեք յուրաքանչյուրի հանդեպ» (NLT): Խոսքն այն մարդկանց մասին է, որոնց Հիսուսը ջերմորեն անվանեց մեր «ընկերը»: Հավանաբար, դուք լսել եք այս հայտնի պատմությունը: Կարդանք այն «Ուղերձ» թարգմանությունից:

«Մի անգամ մի մարդ Երուսաղեմից Երիքով էր գնում: Ճանապարհին հարձակման ենթարկվեց ավազակների կողմից: Նրանք հանեցին նրա հագուստները, ծեծեցին և հեռացան՝ թողնելով կիսամեռ: Բարեբախտաբար,

մի քահանա էր անցնում նույն ճանապարհով, բայց երբ տեսավ նրան, անցավ ճանապարհի մյուս կողմը: Այնուհետև մի ղևտացի կրոնավոր մարդ երևաց. նա նույնպես խուսափեց այդ վիրավոր տղամարդուց:

Մի սամարացի, որն անցնում էր այդ ճանապարհով, տեսնելով այդ մարդու վիճակը՝ սրտանց կարեկցանք զգաց նրա հանդեպ: Նա ցուցաբերեց առաջին օգնություն՝ ախտահանելով և վիրակապելով վերքերը: Ապա դրեց այդ մարդուն իր ավանակի վրա, տարավ մի իջևանատուն և խնամքի հանձնեց նրան: Առավոտյան նա երկու արծաթե մետաղադրամ տվեց իջևանատիրոջը՝ ասելով. «Լա՛վ խնամք կտանես նրա հանդեպ: Եթե դա արժենա ավելին, ավելացրո՛ւ իմ հաշվին. ես կվճարեմ քեզ իմ վերադարձի ճանապարհին»»:

Ի՞նչ եք կարծում, երեքից ո՞րն ընկեր դարձավ այն մարդուն, ով հարձակման էր ենթարկվել ավազակների կողմից:

«Նա, ով բարությամբ վարվեց նրա հանդեպ», - պատասխանեց ուսյալ կրոնական գործիչը:

«Հիսուսն ասաց. «Գնա՛ և արա՛ նույնը»»:

– Ղուկ. 10.30-38, MSG

Քահանան և ղևտացին արժեքավոր չհամարեցին այդ մահամերձ մարդուն: Սամարացին, որն օտարական էր, արժեքավոր համարեց նրան: Սուրբ գիրքը հատկապես նշում է, որ «նա սրտանց կարեկցանք զգաց նրա հանդեպ»: Կրկին, ճշմարիտ պատիվն ամբողջությամբ բխում է սրտից: Նա ժամանակ հատկացրեց՝ տալով այդ վիրավոր մարդուն կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ, նույնիսկ արեց ավելին, քան անհրաժեշտ էր՝ նրան իջևանատուն տանելով: Նա երկու օրվա աշխատավարձ տվեց, որպեսզի իջևանատերը հոգ տաներ լիովին անծանոթ մի մարդու մասին: Նա կարիք չուներ լսելու Աստծուց կամ աղոթելու դրա համար: Իր սրտից, որը լցված էր մարդկանց հանդեպ սիրով, գթասրտությամբ և հարգանքով, նա արեց այն, ինչ անհրաժեշտ էր: Սա բոլոր մարդկանց պատվելու դասական օրինակ է:

Ժամանակակից օրինակներ

Մեծագույն ժամանակակից օրինակներից մեկը, որը պատկերում է այս սկզբունքը, տեղի է ունեցել իմ ընկեր Բիլ Վիլսոնի կյանքում: Բիլի մայրը լքեց նրան՝ թողնելով ջրանցման խողովակին նստած, երբ տասնմեկ տարեկան երեխա էր: Նա պատվիրեց նրան մնալ այնտեղ, մինչև որ վերադառնար, սակայն այդպես էլ չվերադարձավ: Մի քրիստոնյա մարդ գտավ Բիլին և վճարեց նրա համար՝ ամառային ճամբար ուղարկելով: Այդ մարդու անձնազոհ քայլն ինչ-որ բան գործի դրեց նրանում:

Տարիներ անց Բիլ Վիլսոնը հիմնադրեց «Մեթրո մինիսթրիս» ծառայությունը, որը մինչև օրս առաջնորդում է: Այդ ծառայությունն ամեն շաբաթ հասնում է ավելի քան քսան հազար երեխաների Նյու Յորք Սիթիում: Նա դեռ ավտոբուս է վարում և իր աշխատակազմի ու կամավորների հետ այցելում է թաղամասեր, որոնցում խիստ կարիքավոր մարդիկ են ապրում, որպեսզի սովորեցնի Ավետարանը՝ գործով և խոսքով: Այդ ծառայությունը զարմանալի է. այն հազարավոր կյանքեր է փրկել ոչ միայն Նյու Յորք Սիթիում, այլև բազմաթիվ բնակավայրերում: Բիլը ոգեշնչել է ամբողջ ԱՄՆ-ում, ինչպես նաև այլ երկրներում ապրող մարդկանց արժևորել անօգնական երեխաներին, նաև աշխարհով մեկ հիմնադրել է բազմաթիվ «Մեթրո մինիսթրիս» ծառայություններ:

Կան շատերը Բիլի նման, որոնք հասնում են անապահով և անօգնական մարդկանց: Մենք կարող ենք օգնել նրանց: Ինչպե՞ս: Լավագույն միջոցներից մեկը նրանց նախագծերին աղոթքով և ֆինանսներով աջակցելն է: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ կկատարվեր, եթե նա, ով դավանում է Քրիստոսին, ամեն ամիս ինչ-որ գումար փոխանցեր այդպիսի ծառայության: Կարո՞ղ եք պատկերացնել, թե քանի՞սը մուտք կգործեին Աստծո թագավորության մեջ: Եթե Հիսուսի առակի վնասվածքներ ստացած մարդը մեղավոր լիներ, իսկ սամարացին՝ ճշմարիտ հավատացյալ, խնամք ստանալուց հետո այդ մարդն ուրախությամբ կլսեր այն Ավետարանը, որը սամարացին կքարոզեր նրան: Այնուամենայնիվ, եթե ղևտացին և քահանան քրիստոնյա լինեին, այդ մարդը չէր ցանկանա որևէ առնչություն ունենալ նրանց Ավետարանի հետ: Երբ Աստծո սերը վառվում է մեր սրտերում, մենք կարժևո-

րենք բոլոր մարդկանց և ֆինանսապես կմիաբանվենք նման ծառայություններին, որոնք օգնում են հուսահատ վիճակում գտնվող կարիքավոր մարդկանց, ինչպես նաև ազդարարում են նրանց Ավետարանի Բարի լուրը:

Օգնելու ևս մեկ միջոց է՝ նրանց թիմերին միանալը: Կարիք չկա տեղափոխվել Նյու Յորքի Բրուքլինի շրջան կամ որևէ հեռավոր քաղաք, որտեղ Բիլի ծառայությունների նման այլ ծառայություններ են գործում: Միացեք ձեր տեղական եկեղեցու ծրագրերից մեկին: Նույնիսկ եթե ամսվա մեջ մեկ օր տրամադրեք, դուք կանոնավոր կերպով կհպվեք մարդկանց կյանքերին և կհասնեք կարիքավորներին: Միասին մենք կարող ենք անել ավելին, քան երբ մենակ ենք, թեև սա չի նշանակում, որ պետք է հրաժարվենք անհատական ջանքերից, որի օրինակը բարի սամարացին է: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը շեշտադրում է, թե որքան բանի կարող ենք հասնել՝ համագործակցելով այլ մարդկանց հետ. «Ձեզնից հինգը պետք է հալածի հարյուրի, և հարյուրը պետք է փախուստի մատնի տասը հազարի» (Ղևտ. 26.8, AMPC):

Մեր արդյունավետությունն ավելանում է, երբ միաբանվում ենք: Մենք պետք է հիշենք, որ Աստված այնպես է ստեղծել եկեղեցին, որ մեկս մյուսի կարիքն ունենանք՝ արդյունավետ լինելու համար: Պողոսը պնդում է, որ Քրիստոսի մարմինը կաճի, երբ բոլոր անդամները միասին գործեն (տես Եփես. 4.16): Սա ևս մեկ կարևոր պատճառ է, թե ինչու պետք է տնկված լինենք տեղական կազմակերպված եկեղեցում: Այսպիսով, եթե յուրաքանչյուր հավատացյալ կատարեր իր բաժինը՝ թե՛ անհատապես, թե՛ կազմակերպված ծառայությունների միջոցով, որքա՜ն շատ պատմություններ կունենայինք Բիլ Վիլսոնի պես մարդկանց մասին:

Որքան էլ կարևոր լինի Բիլ Վիլսոնի ծառայությունը, մենք չենք կարող կանգ առնել դրա վրա: Կան նաև անթիվ բազմություններ, որոնք աղքատացած չեն, որոնք ապահովված են ամեն ինչով կամ, նույնիսկ, ճոխ կյանք են վարում, սակայն խոցված են և զրկված են իրենց անձերում: Նման մարդիկ ապրում են ոչ միայն կիսախարխլված ետնախորշերում, այլև հարուստ թաղամասերում: Կարճ ասած, նրանք ամենուր են: Մենք հանդիպում ենք նրանց մթերային խանութներում, խոշոր հանրախանութներում, մեր աշխատա-

վայրերում: Նրանք միայնակ և խոցված են և իրենց արժեքավոր զգալու կարիք ունեն: Նրանք նույնպես մեր ընկերներն են:

Մենք ամեն օր շփվում ենք այս մարդկանց հետ: Երբեմն, մեր գործերի վրա կենտրոնացած լինելու պատճառով, չենք նկատում նրանց կարիքները: Որքան ավելի տարեց եմ դառնում, այնքան ավելի եմ հասկանում, թե որքան հեշտ է հասնել այդպիսի մարդկանց: Ամեն ինչ սկսվում է այն բանից, որ մենք պարզապես ի սրտե ընդունում ենք բոլոր մարդկանց պատվելու հանձնարարականը: Այսպես վարվելով՝ մենք զգայուն ենք դառնում և առաջնորդվում ենք Աստծո Հոգով, շատ դեպքերում՝ անգիտակցաբար, և մեր ամենօրյա կյանքը շարունակական ծառայության է վերածվում:

Երբ պատվեք մարդկանց, դուք չեք անտեսի նրանց, ում Աստված հանդիպեցնում է ձեզ, և ո՛չ էլ կոպտորեն կխոսեք նրանց հետ. փոխարենը, կլինեք աստվածային հոսքի մեջ, որը տալիս է Երկնքի կենդանի ջրերը սրտով ծարավածներին: Այն խոսքը, որը ես սիրում եմ, և որին տարիներ շարունակ ապավինել եմ այսպիսի մարդկանց հետ հաղորդակցվելիս, հետևյալն է. «Տերն ինձ ուսումնավարժ լեզու է տվել, որ գիտենամ վաստակածին օգնել խոսքով. Նա զարթնեցնում է ամեն առավոտ. զարթնեցնում է իմ ականջը, որ լսեմ աշակերտների պես» (Եսայի 50.4):

Դուք կարող եք հավատալ Աստծուն այս խոստման համար: Շատերը չեն խոսում մարդկանց հետ՝ վախենալով, որ կարող են ինչ-որ անմիտ բան ասել: Եթե դուք պարզապես հավատաք Աստծո խոստմանը այս խոսքում, կարող եք վստահ լինել, որ ձեր խոսքերը կյանք, բժշկություն և ուժ կհաղորդեն նրանց, ովքեր հոգնած և զրկված են իրենց անձերում:

Բայց սա դեռ վերջը չէ, քանի որ այս պատվերն ավելի հեռուն է գնում: «Բոլոր մարդիկ» արտահայտությունը չի վերաբերում միայն զրկանքներ կրող մարդկանց: Յուրաքանչյուրը, ում հետ հաղորդակցվում ենք, ծաղկունք կապրի, եթե պատվենք նրան: Յուրաքանչյուր բարի խոսք՝ ասված մեր սրտից, կյանք կհաղորդի լսողներին: Ըստ էության, սա վերաբերում է այն բազմաթիվ մարդկանց, որոնց հետ ամեն օր հաղորդակցվում ենք, որոնցից շատերին միայն մեկ անգամ ենք հանդիպելու: Դա կարող է լինել այն մարդը, ում մենք հանդիպում ենք վերելակի մեջ, կամ ուղեկ-

ցորդուհին ինքնաթիռում, կամ հեռախոսավարուհին, ում հետ խոսում ենք: Մենք կարող ենք պատվել նրանց ջերմ ողջույնով կամ, պարզապես, անկեղծ ժպիտով:

Մի դեպք եմ հիշում. ես զբոսնում էի Լոնդոնի այգիներից մեկում, և մի կին՝ Մերձավոր Արևելքից, գլուխը խոնարհած քայլում էր հանդիպակաց արահետով: Ես գթասրտություն զգացի նրա հանդեպ: Մտածեցի, որ նա սովոր չէ գնահատանք ստանալուն, հատկապես՝ տղամարդուց: Ես ի սրտե կարեկցանք զգացի այդ կնոջ հանդեպ և դիմեցի նրան՝ ի սրտե և ուրախությամբ բարի առավոտ մաղթելով: Նա բարձրացրեց հայացքը՝ գրեթե չհավատալով լսածին: Ես գրեթե լսում էի նրա մտքերը: *«Ինչո՞ւ է այս տղամարդն Արևմուտքից այսպիսի բարությամբ խոսում անծանոթի հետ, այն էլ՝ կնոջ»:*

Բայց մինչ կասկածամտությանը տեղի տալը, գնահատանք ստանալու ցանկությունը գերակշռեց. նրա դեմքը լիովին փոխվեց, և նա երկչոտությամբ ողջունեց ինձ՝ ի պատասխան: Ամենայն հավանականությամբ, ես այլևս չեմ հանդիպի նրան այս կյանքում, բայց հավատում եմ, որ Աստծո սերը, որն իմ սրտից հպվեց նրան, հավիտենական սերմ ցանեց նրանում, որը մեկ օր պտուղ կտա: Մենք կարող ենք հավատալ դրան. եկեք Հոգո՛վ ապրենք և հավատանք, որ մենք պարզապես գոյություն չենք պահպանում, այլ՝ դեսպաններ ենք, որոնք ապրում են Աստծո գերբնական զորությամբ՝ մարդկանց կյանք հաղորդելու համար:

Մի՞թե դժվար է ժպտալ մարդկանց: Մի՞թե դժվար է բարի խոսքեր ասել անծանոթներին: Մի՞թե այդքան դժվար է հավատալ, որ մեր յուրաքանչյուր խոսքը կարող է կյանք հաղորդել: Այս ամենը դժվար է, եթե չեք հավատում Աստծո զորությանը, և եթե ձեր սրտում չկա պատիվ մարդկանց հանդեպ: Բայց եթե աղոթեք և խնդրեք Աստծուց ճշմարիտ պատիվ ձեր սրտում՝ այն մարդկանց հանդեպ, որոնց համար Նա մահացել է, Աստված կշնորհի այն ձեզ, քանի որ հենց Նա է ցանկանում դա:

Պատիվը՝ որպես կենսաոճ

Հենց որ ձեր սրտում խնդրեք Աստծուց ճշմարիտ պատիվ մարդկանց հանդեպ, ձեր կյանքը լիովին կփոխվի: Դուք լիովին

այլ կերպ կվերաբերվեք մատուցողներին և մատուցողուհիներին: Դուք պարզապես չեք հառի ձեր հայացքը ճաշացանկին՝ ձեր կերակուրը պատվիրելու համար. դուք կնայեք նրանց աչքերին և կողջունեք, երբ նրանք մոտենան ձեր սեղանին: Դուք կհարցնեք ձեզ սպասարկող մարդու անունը, մինչև որևէ բան պատվիրելը: Դուք ամեն անգամ կդիմեք այդ անձնավորությանը իր անունով և, ինչն ամենակարևորն է, ձեր խոսքով և ֆինանսներով շնորհակալ կլինեք նրանից՝ այդ կերակուրը ձեզ մատուցելու համար: Երբեք տասնհինգ տոկոսի չափ թեյավճար մի՛ թողեք. եթե դուք արժևորում եք այդ անձնավորությանը, քսան տոկոսից ավելի թեյավճար կթողնեք:

Մշտապես արեք ընդունված չափանիշներից ավելին: Մի՛ բավարարվեք միջին մակարդակով: Հարցրեք ձեզ, թե որքանո՞վ է արժեքավոր այդ մատուցողը: Դուք պետք է որ լավ իմանաք այդ հարցի պատասխանը. նրա արժեքը բավական է, որ Հիսուսը մահանար նրա համար:

Ցավում եմ ասել, որ եղել է մի քանի դեպք, երբ ծառայողները հրավիրել են ինձ ճաշի, և ես ստիպված եմ եղել տեսնել այն խղճուկ թեյավճարը, որը նրանք թողել են մեզ սպասարկող մարդկանց: Նման դեպքերից մեկում թեյավճարն այնքան անհեթեթ էր, որ ես պետք է ինչ-որ բան անեի: Այդ հովիվը և ես քայլում էինք դեպի ավտոկայանատեղին, և ես պարզապես ասացի. «Դուրս բերեք ձեր մեքենան, ես պետք է արագ ռեստորան վերադառնամ»: Մինչ նա դուրս էր բերում իր մեքենան, ես վերադարձա՝ սեղանին ավելի շատ թեյավճար թողնելու համար: Ինչպե՞ս կարելի էր այդքան վատ վերաբերվել մեզ սպասարկող անձնավորությանը, հատկապես եթե այդ մատուցողը գիտեր, որ մենք անմիջապես հավաքույթից հետո էինք եկել:

Ես մի դեպք եմ հիշում, երբ Լիզան և ես հիսուն տոկոսանոց թեյավճար թողեցինք մեզ սպասարկող անձնավորությանը: Այդ կինը մեր զրույցից հասկացավ, որ մենք ծառայողներ ենք: Մենք Աստծո և նրա միջև կապն էինք, և նա պետք է իմանար, որ Աստված արժևորում է իրեն: Մենք հեռացանք, մինչև որ նա իմացավ, թե որքան գումար էինք թողել, բայց վստահ եմ, որ դա հպվեց նրան, և Փրկչի անուշ բուրմունքը մնաց նրանում: Պողոսը գրում

է. «Որովհետև մենք Քրիստոսի անուշ հոտն ենք Աստծո առջև՝ փրկվածների մեջ և կորածների մեջ» (Բ Կորնթ. 2.15): Այժմ նրա կարծիքը ծառայության մասին, ամենայն հավանականությամբ, դրական է, և դա կօգնի, որ նա բաց լինի՝ ապագայում այլ մարդուց Բարի լուրն ընդունելու համար:

Երբ պատվեք ձեզ սպասարկող մարդկանց, շատ հաճախ դուք բարեհաճ վերաբերմունք կստանաք՝ ավելի մեծ չափաբաժիններ, հավելյալ կերակուր, ավելի լավ սպասարկում և այլ անակնկալներ: Հավատացյալները չպետք է պատիվ ցուցաբերեն այդ պատճառով, բայց, այնուամենայնիվ, դա օրհնություն է: Լիզան և ես հաճախ ենք օգտվում օդանավակայանի կայանատեղիից: Քանի որ մենք շատ ենք ճանապարհորդում, բոլոր աշխատողները ճանաչում են մեր մեքենան: Եթե այդ կայանատեղիում մի քանի աշխատող է լինում, յուրաքանչյուրը գրեթե վազում է մեր մեքենայի մոտ, որպեսզի առաջինը մոտենա և սպասարկի մեզ: Ինչո՞ւ: Քանի որ մենք լավ թեյավճարներ ենք տալիս: Մենք նույնպես զրուցում ենք նրանց հետ և հետաքրքրվում ենք, թե ինչպես են նրանք և նրանց սիրելիները: Մեր օդանավակայանի կայանատեղիի մի հատվածը ծածկ ունի, և այն պաշտպանված է տարբեր եղանակային պայմաններից, իսկ մյուս հատվածները բացօթյա են և խոցելի են տարբեր եղանակային պայմանների համար: Իմ մեքենան մշտապես ծածկի տակ է: Եվ դա կոչվում է պատվի վարձատրություն:

Մեր տեղական մթերային խանութում կատարվում է նույնը: Մենք հյուրեր ենք ունեցել այլ վայրերից, որոնք այդ խանութ են մտել Լիզայի և ինձ հետ և ասել են. «Բոլորը այս խանութում ճանաչում են ձեզ»: Պատճառն այն չէ, որ մենք ճանաչված ենք որպես հեղինակներ և ծառայողներ: Իրականում, այդ մարդկանցից շատերը չգիտեն մեր գործունեության մասին: Պատճառն այն է, որ մենք զրուցում ենք աշխատողների հետ և հետաքրքրվում նրանցով: Աշխատողներից մի քանիսը, որոնք գիտեն մեր մասին, դժվար պահերին խնդրել են աղոթել իրենց համար: Նրանք պայծառանում են, երբ մենք ներս ենք մտնում, և շատ անգամներ հավելյալ բաժիններ և զեղչեր ենք ստանում, որոնք չեն տրվում մյուսներին: Կրկին, մի՞թե մենք պատիվ ենք ցուցաբերում նրանց

հավելյալ չափաբաժինների համար: Ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Մենք այդպես ենք վարվում, քանի որ Աստված պատվիրել է մեզ պատվել բոլորին:

Գործնական օրինակներ

Թույլ տվեք մարդկանց պատվելու գործնական օրինակներ բերել: Երբ հանդիպում եք ինչ-որ մեկին, նայեք այդ անձնավորության աչքերին, սիրով դիմեք նրան և ցույց տվեք, որ նա կարևոր է ձեզ համար: Պարզապես մի՛ փորձեք կատարել այն, ինչ ծրագրել էիք, օրինակ՝ պատվեր տալ, խնդրանք ներկայացնել, գնում կատարել և այլն: Փոխարենը, մի պահ պարզապես հարցրեք այդ անձնավորությանը, թե ինչպես է նա: Եթե ժամանակը թույլ է տալիս, միայն հարցեր մի տվեք, այլ փորձեք հասկանալ, թե ինչ է նա կարևորում: Հենց որ հասկանա, որ դուք հոգ եք տանում իր մասին, դուռը բաց կլինի, որ առաջարկեք մեծագույն նվերը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Սակայն եթե ցույց չտաք մարդկանց, որ արժևորում եք նրանց, և փորձեք Ավետարանով կիսվել նրանց հետ, հաճախ նրանց կթվա, թե դուք օգտագործում եք իրենց՝ ձեր հավաքածուին ևս մեկ նորադարձի ավելացնելու համար:

Մտածեք, թե ինչ կարող եք անել մարդկանց համար՝ «սպասվածից» ավելի. մի փոքր նվեր տալ, թեյավճար թողնել, երբ կարելի էր չանել դա, կամ օգնել ինչ-որ հարցում: Զովացուցիչ ըմպելիք առաջարկեք աղբահավաքման աշխատակցին, կերակուր հյուրասիրեք այն մարդկանց, ովքեր աշխատանքներ են կատարում ձեր տանը: Մաքրեք ձեր հարևանի տան ճանապարհի ձյունը, կտրեք նրա սիզամարգը՝ նրան անսպասելի անակնկալ մատուցելով: Մարդկանց պատիվ ցուցաբերելը հաճելի է դառնում, հատկապես երբ նրանք բոլորովին չեն սպասում դա: Այս փոքր բաներն են, որ առանձնահատուկ են դարձնում ձեզ, և դրանց շնորհիվ է, որ մարդկանց մեջ Հիսուս Քրիստոսի մասին լսելու ցանկություն է առաջանում:

Կրկին, ամենակարևորն այն է, որ խնդրեք Աստծուց ճշմարիտ պատիվ ձեր սրտում՝ բոլորի հանդեպ: Եթե փորձեք պատիվ ցուցաբերել՝ չունենալով պատիվ ձեր սրտում, դուք կեղծավորի կամ, լավագույն դեպքում, մակերեսային անձնավորության տպավո-

րություն կթողնեք: Իրականում, ձեր արդյունքը ձեր սպասվածի հակառակը կլինի: Դժվար չէ նկատել, երբ մարդն անկեղծ չէ. գրեթե բոլորն են զգում դա: Վերջին գլխի ավարտին մենք միասին կաղոթենք և կխնդրենք Աստծուց ճշմարիտ պատիվ՝ մեր սրտերում: Այս գիրքն ընթերցելիս՝ Աստծո Խոսքը ձեր մեջ կառուցել է հավատք՝ ճշմարիտ ձևով պատիվ տալու համար, և ձգտում դրա հանդեպ. այժմ մենք միայն պետք է խնդրենք այն: Բայց մինչև դա անելը, կա ևս մեկ կարևոր թեմա, որի մասին պետք է խոսել:

17

Պատվել Աստծուն

Վերջինը, բայց ոչ պակաս կարևորը, իրականում առաջինը՝ իր կարևորությամբ, հետևյալն է. միակ միջոցը, որով կարող ենք ճշմարտապես պատվով վարվել, նախևառաջ, Աստծուն մշտապես պատիվ ցուցաբերելն է: Մնայուն պատիվը հնարավոր է, միայն երբ պատվում ենք Նրան՝ ցանկացած առարկայից, երևույթից և անձից առավել: Առակաց 3.9-ը պատվիրում է. «Պատվի՛ր Տիրոջը»:

Մենք պետք է արժևորենք և գնահատենք Նրան, նաև հարգանքով և երկյուղածությամբ վերաբերվենք Նրան՝ ցանկացած անձից, առարկայից կամ երևույթից առավել: Մենք անարգում ենք Նրան, եթե արժևորում ենք ցանկացած անձի, նաև ցանկացած առարկա կամ երևույթ՝ Նրանից առավել: Նա Մեծ Թագավոր է. Նա արժանի է ստանալու մեր հարգանքն ամբողջությամբ, ոչ թե դրա մի մասը: Միայն մեր պատիվն Աստծուն ուղղելու դեպքում է, որ այն երկրպագության է վերածվում:

Հիշեք՝ մեր վերջնական նպատակն Աստծուն պատվելն է: Մեր պատիվն իշխանությունների, մեզ հավասար մարդկանց և «փոքրերի» հանդեպ փոխանցվում է Հիսուսին և, ի վերջո, Հորը: Ուստի, երբ մարդկանց հանդեպ պատիվը դուրս է մղում Աստծո հանդեպ պատիվն ու հնազանդությունը, այն կարելի է անվանել մարող պատիվ կամ կռապաշտություն, ոչ թե մնայուն պատիվ:

Մարող պատիվ

Հեղին քահանայապետ էր: Նա խորանի վերակացուն էր Սամուելի մանկության տարիներին: Նրա որդիներն անպիտան մարդիկ էին և չունեին հարգանք Տիրոջ, Նրա ժողովրդի և իրենց քահանայական պարտականությունների հանդեպ: Նրանք յուրացնում էին ժողովրդի զոհերի լավագույնը, և եթե պաշտամունքի եկող մարդիկ բողոքում էին, նրանք ուժով խլում էին դրանք:

Հեղին տեղյակ էր, որ իր որդիներն անարգում էին Տիրոջը մատուցվող զոհերը, ինչպես նաև գայթակղեցնում էին խորանի մուտքի մոտ ծառայող երիտասարդ կանանց: Վերջապես նա խրատեց նրանց՝ ասելով. «Ես լսում եմ լուրեր մարդկանցից այն չար բաների մասին, որոնք դուք անում եք: Ինչո՞ւ չեք դադարում մեղանչելուց: Դուք պետք է դադարե՞ք, որդիներս: Տիրոջ ժողովրդի միջև եղած լուրերը, որոնք ես լսում եմ, լավ չեն» (Ա Թագ. 2.23,24, NLT):

Թեև նա հանդիմանեց նրանց, բայց և շարունակեց թույլ տալ իր որդիներին ծառայել՝ որպես քահանաներ: Հեղին իր շահն էր հետապնդում. նա հագեցնում էր իր որկրամոլությունը՝ որդիների արարքների միջոցով: Եթե նա իսկապես պատվեր Աստծուն, ապա կհեռացներ նրանց պաշտոնից: Նա կփոխարիներ նրանց արդար մարդկանցով, որոնք ճշմարիտ սրտով կծառայեին Աստծուն և ժողովրդին: Այժմ լսեք Տիրոջ Խոսքը, որը Հեղին ստացավ մի մարգարեից.

> «Մի անգամ մի մարգարե եկավ Հեղիի մոտ և փոխանցեց նրան այս ուղերձը Տիրոջից. «Մի՞թե Ես չհայտնեցի Ինձ քո նախահայրերին, երբ Իսրայելի ժողովուրդը ստրուկ էր Եգիպտոսում: Ես ընտրեցի քո նախահայր Ահարոնին՝ նրա բոլոր ազգականներից, որպեսզի նա Իմ քահանան լիներ, Իմ զոհասեղանին զոհեր մատուցեր, խունկ վառեր և քահանայական հանդերձներ կրեր՝ Ինձ ծառայելիս: Եվ Ես հատկացրի մատուցված զոհերը ձեզ՝ քահանաներիդ: Ուրեմն, ինչո՞ւ եք արհամարհում Իմ զոհերը և ընծաները: Ինչո՞ւ ես *պատվում* քո որդիներին ավելի, քան Ինձ, քանի որ դուք գիրացել եք Իմ ժողովրդի լավագույն զոհերից»»:
>
> – Ա Թագ. 2.27-29, NLT, (շեղագիրը հեղինակինն է)

Այդ մարգարեն ջրի երես դուրս բերեց Հեղիի դրդապատճառները: Նա նախընտրում էր իր շահը, այսինքն՝ նենգաբար և ուժով խլած լավագույն զոհերը՝ ազնվությունից առավել: Աստված հայտարարեց այդ մարգարեի միջոցով, որ Հեղին *պատվում* էր իր որդիներին ավելի, քան Աստծուն: Այդպես վարվելով՝ նա ոչ միայն վարձատրություն չէր ստանալու, այլև մեծ կորուստ էր կրելու: Աստված շարունակեց՝ ասելով հետևյալը այդ մարգարեի միջոցով.

> «Այդ պատճառով Տերը՝ Իսրայելի Աստված, ասում է. «Այն զարհուրելի բաները, որոնք դուք անում եք, այլևս չեն կարող շարունակվել: Ես խոստացել էի, որ Ղևիի ցեղի ձեր ճյուղը մշտապես Իմ քահանաների պաշտոնում է լինելու: Բայց Ես կպատվեմ միայն նրանց, ովքեր պատվում են Ինձ, և Ես կանարգեմ նրանց, ովքեր անարգում են Ինձ: Ես վերջ կդնեմ քո ընտանիքին, և այն այլևս չի ծառայի Ինձ՝ Իմ քահանաների պաշտոնում: Քո ընտանիքի բոլոր անդամներն իրենց ժամանակից շուտ կմահանան: Նրանցից ոչ ոք մինչև խորը ծերություն չի ապրի: Դու նախանձով կհետևես, թե ինչպես եմ Ես օրհնելու Իսրայելի ժողովրդին, որ բարգավաճի: Բայց քո ընտանիքի անդամներից ոչ մեկը չի լրացնի իր օրերը: Նրանք, ովքեր ողջ կմնան, կապրեն տխրության և տրտմության մեջ, և նրանց երեխաները դաժան մահով կմահանան: Եվ որպես ապացույց Իմ ասածների՝ Ես այնպես կանեմ, որ քո երկու որդիները՝ Ոփնին և Փենեհեսը, նույն օրը կմահանան: Այնուհետև Ես հավատարիմ քահանա կբարձրացնեմ, ով կծառայի Ինձ և կանի այն, ինչ կպատվիրեմ: Ես կօրհնեմ նրա սերունդները, և նրա ընտանիքը հավիտյան քահանաների պաշտոնում կլինի Իմ օծված թագավորների համար: Այդ ժամանակ քո բոլոր ժառանգները կխոնարհվեն նրա ժառանգների առջև՝ փող և կերակուր մուրալով»: «Խնդրում եմ, - կասեն նրանք, - աշխատանքներ տվեք մեզ քահանաների շրջանակում, որպեսզի բավականաչափ կերակուր ունենանք»»:
>
> – Ա Թագ. 2.30-36, NLT

Աստված ասաց, որ Ինքը հավատարիմ քահանա էր բարձ-

րացնելու, ով հնազանդվելու էր Իրեն՝ անտեսելով իր անձը կամ մարդկանց հաճեցնելը: Սա է ճշմարիտ պատիվը: Հեղիին փոխարինող քահանայի վարձատրությունն այն էր լինելու, որ նրա ժառանգները երբեք չէին կորցնելու իրենց դիրքը և մշտապես առատ օրհնություն էին ունենալու:

Աբրահամի պատիվը

Աբրահամը պատվեց Աստծուն այս կերպով: Նրա կյանքում չկար Իսահակից ավելի կարևոր անձնավորություն: Նա քսանհինգ տարի սպասել էր իր խոստման որդուն: Նա սիրում էր նրան ավելի, քան որևէ բան կամ որևէ մարդու: Այնուամենայնիվ, մի գիշեր Աստված այցելեց Աբրահամին և պահանջեց պատվել Իրեն՝ նրա որդուց առավել: Աստված պատվիրեց նրան սպանել Իսահակին: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսի խառնաշփոթ էր Աբրահամի ներսում: Չկար այնպիսի բան, ինչից նա ավելի մեծ դժվարությամբ կհրաժարվեր: Նա հեշտորեն կհրաժարվեր իր ամբողջ ունեցվածքից, քան նրանից, ում միջոցով պետք է սերունդներ ունենար: Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք, որ Աբրահամի արձագանքը Հեղիի արձագանքի ճիշտ հակառակն էր: Գրված է. «Հաջորդ առավոտյան Աբրահամը վաղ արթնացավ» (Ծննդ. 22.3, NLT): Նա չվարանեց. ճանապարհ ընկավ հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, որպեսզի կատարեր այն, ինչ Աստված պատվիրել էր:

Աբրահամը պատվեց Աստծուն ամեն ինչից առավել: Այդ պատճառով, Իսահակին մահվան մատնելուց անմիջապես առաջ հրեշտակը ձայն տվեց նրան. «Մի՛ վնասիր տղային, որովհետև այժմ Ես գիտեմ, որ դու ճշմարտապես վախենում ես Աստծուց: Դու ետ չպահեցիր Ինձնից նույնիսկ քո սիրելի որդուն» (խոսք 12, NLT): Որպես կրկնողություն, ճշմարիտ պատիվը լիովին բխում է սուրբ երկյուղից: Այժմ կարդացե՛ք այն մասին, թե ինչ վարձատրություն ստացավ Աբրահամն իր արարքի շնորհիվ, որով նա մեծագույն պատիվը ցուցաբերեց Աստծուն.

> «Եվ Տիրոջ հրեշտակը կրկին ձայն տվեց Աբրահամին Երկնքից: Ահա թե ինչ է ասում Տերը. «Քանի որ դու

հնազանդվեցիր Ինձ և ետ չպահեցիր նույնիսկ քո սիրելի որդուն, Ես երդվում եմ Ինձանով, որ առատորեն կօրհնեմ քեզ. Ես կբազմապատկեմ քո ժառանգները՝ հասցնելով անհաշիվ միլիոնների՝ ինչպես երկնքի աստղերը և ծովեզերքի ավազը: Նրանք կնվաճեն իրենց թշնամիներին, և քո ժառանգների միջոցով երկրի բոլոր ազգերը կօրհնվեն. այդ ամենը այն բանի պատճառով, որ դու հնազանդվեցիր Ինձ»»:

– Ծննդ. 22.15-18, NLT

Հիշեք՝ պատիվը մշտապես վարձատրություն ունի, թե՛ երբ ուղղակիորեն եք պատվում Աստծուն, թե՛ երբ անուղղակիորեն եք պատվում Նրան՝ պատվելով Նրա ծառաներին:

Մովսեսի սխալ որոշումը

Մովսեսը նույնպես ամեն ինչ կորցնելու շեմին էր՝ Աստծուց առավել մեկ այլ անձնավորության պատվելու պատճառով: Նա խիստ սխալ էր թույլ տվել, և Աստված սաստիկ բարկացած էր՝ այն աստիճան, որ Մովսեսի կյանքին վտանգ էր սպառնում: Գրված է. «Ճանապարհին, երբ Մովսեսը և նրա ընտանիքը կանգ էին առել՝ գիշերելու, Տերը հակառակվեց Մովսեսին և պատրաստվում էր սպանել» (Ելից 4.24, NLT):

Մինչև շարունակելը, թույլ տվեք պատմել, թե ինչ էր տեղի ունեցել: Կարճ ժամանակ առաջ Տերը հայտնվել էր Մովսեսին վառվող մորենու մոտ: Աստված ազդարարել էր, որ ընտրել էր Մովսեսին՝ ամբողջ Իսրայելը Եգիպտոսից ազատելու համար: Իջնելով սարից՝ Մովսեսը վերցրեց կնոջն ու երեխաներին և ճանապարհվեց Եգիպտոս, որպեսզի կատարեր իր ստացած պատվերը: Եվ առաջին իսկ գիշերակացին Աստված եկավ, որ սպանի Մովսեսին: Ինչ: Ինչպե՞ս թե սպանելու այն մարդուն, ում Ինքը կարճ ժամանակ առաջ պատվիրել էր ազատել Իր ժողովրդին: Մի՞թե Աստված մտագարությամբ է տառապում: Իհարկե՝ ո՛չ: Այդ դեպքում, ի՞նչ էր կատարվում:

Երբ Մովսեսն իջավ սարից՝ վառվող մորենու մոտ Աստծուն հանդիպելուց հետո, նրա կինը առաջինն էր, որ տեսավ նրան:

Նա հասկացավ, որ Մովսեսը խորը վերապրում էր ունեցել, և հարցրեց այդ մասին: Ես պատկերացնում եմ, որ նրանց զրույցը մոտավորապես այսպիսին էր.

- Սիրելի՛ս, - բացականչեց Մովսեսը, - Աստված հայտնվեց ինձ և ասաց, որ ես պետք է Եգիպտոս վերադառնամ ու ազատեմ իմ ժողովրդին փարավոնի ստրկությունից: Այնպես որ, ըստ էության, ես այն փրկիչն եմ, որի մասին մենք երկար ժամանակ խոսում ենք:

Նրա կին Սեպփորան պատասխանեց.

- Հրաշալի՜ է: Ես քեզ հետ եմ, սիրելի՛ս: Ե՞րբ ենք ճանապարհ ընկնելու:

Մովսեսը պատասխանեց.

- Անմիջապես, բայց կա մի բան, որը, նախ, պետք է անենք: Սարի վրա Աստված հիշեցրեց ինձ այն ուխտը, որը կնքել էր Աբրահամի հետ: Նա պատվիրեց ինձ թլփատել մեր երկու որդիներին:

Նա պատասխանեց.

- Լա՛վ, այդ դեպքում, սկսենք Գերսամից՝ մեր ավագ որդուց:

Եվ Սեպփորան հետևեց, թե ինչպես էր Մովսեսը կատարում թլփատումը:

Այժմ թույլ տվեք մի պահ ընդմիջել և ասել հետևյալը. ես ներկա եմ եղել մեր երրորդ որդու թլփատմանը: Բժիշկը զգուշացրեց մեզ, որ սրտապնդվենք մինչև այդ բուժական գործողությունը: Նա ասաց, որ մենք այլևս չենք տեսնի Ալեքին այդքան ուժգին ցավերի մեջ: Երբ բժիշկը սեղմեց նրա թլիփը և կտրեց այն, ես նկատեցի, որ Ալեքի էության յուրաքանչյուր մասնիկ բղավում էր: Ինձ համար շատ ծանր էր տեսնել որդուս նման ցավի մեջ:

Վերադառնանք սա Սեպփորային: Նա տեսավ, որ իր ավագ որդին բղավում, լաց է լինում և կծկվում է ցավից: Ամենայն հավանականությամբ, դա սարսափեցրեց նրան: Ինչպե՞ս իր ամուսինը կարող էր նման կերպով վարվել իրենց սիրելի որդու հետ: Նա մտածում էր՝ մի՞թե սա այն տղամարդն էր, որի հետ ինքն ամուսնացել էր: Ի՞նչ կատարվեց նրա հետ այդ սարի վրա: Մի՞թե այն Աստված, Ում նա հանդիպել էր, այդքան արյունարբու և դաժան

էր:

Եվ մայրը միջամտեց: Նա կանգնեց Մովսեսի և իրենց կրտսեր որդու՝ Եղիազարի միջև: Ձեռքերն ազդրերին դնելով և հաստատակամ կեցվածք ընդունելով՝ համարձակ հակառակվեց ամուսնուն: Նա երկիմաստ կերպով նկատի չուներ. *«Նույնիսկ մեկ քայլ չմոտենաս նրան»:* Նա ընդդիմացավ.

- Դու կրկին չե՛ս անի դա: Սա ի՛մ երեխան է. բավական է, որ տեսա, թե ինչպես դաժանաբար տանջեցիր Գերսամին: Ինչպիսի՜ ամուսին ես դու:

Ես միայն կարող եմ պատկերացնել այն սաստիկ ամուսնական վեճը, որը բռնկվեց այդ պահին: Սեպփորան վիճում և բղավում էր, հնարավոր է՝ նաև սպառնում էր Մովսեսին: Այդ վեճը տևեց մի ամբողջ օր, նաև ամբողջ գիշեր և մինչև հաջորդ օրը: Սեպփորան կերակուր չէր պատրաստում, և նրա սպառնալիքները ժամ առ ժամ ավելի էին խստանում: Այդ ամենը ասես անվերջ լիներ, և դա հոգնեցրեց Մովսեսին:

Վերջապես Մովսեսն այլևս չկարողացավ դիմանալ իր կնոջ հակառակությանը և մտածեց. *«Ես հոգնել եմ այս վեճից: Ես կարևոր գործ ունեմ. իմ կյանքում մի ամբողջ ազգի փրկելու կոչում կա, և ես պետք է գործի անցնեմ»:* Նա տեղի տվեց և ասաց.

- Լա՛վ, պարզապես գնանք:

Եգիպտոսի ճանապարհին Տերը եկավ նրանց կայանատեղին՝ Մովսեսին սպանելու, քանի որ նա պատվել էր իր կնոջը՝ Աստծուց առավել: Աստված չէր հանդուրժի դա Իր ընտրյալ առաջնորդի կյանքում: Նա կսպաներ Մովսեսին և կգտներ այլ մարդու: Այնուամենայնիվ, հենց որ Մովսեսի կինը հասկացավ, թե ինչ էր պատահելու ամուսնուն, զգաստացավ և թլփատեց իր որդուն: Գրված է. «[Ակնհայտ է, որ նա չէր թլփատել իր որդիներից մեկին, քանի որ նրա կինն ընդդիմացել էր. սակայն, նման վտանգ տեսնելով], Սեպփորան կրաքարե դանակ վերցրեց և կտրեց իր որդու թլիփը ու գցեց [Մովսեսի] ոտքերի մոտ և ասաց. «Իհա՛րկե, արյան ամուսին ես դու ինձ համար»» (Ելից 4.25, AMPC):

Հենց որ նա արեց դա, «Տերը հանգիստ թողեց նրան [Մովսեսին]» (խոսք 26, NLT):

Մի օր, աղոթքի մեջ Աստված հարցրեց ինձ. «Ես եկա սպանելու Մովսեսի՞ն, թե՞ նրա կնոջը»:

«Մովսեսին», - զգաստորեն պատասխանեցի ես:

Աստված ասաց. «Այո՛, որովհետև Ես պատվիրեցի Մովսեսին թլփատել իր որդիներին: Նա էր այդ ընտանիքի գլուխը, և նա որոշեց պատվել իր կնոջ պահանջները՝ Իմ պահանջներից առավել: Պատասխանատվությունը նրանն էր»: Դա ցույց տվեց, թե որքան կարևոր է փոխզիջման չենթարկել ճշմարտությունը՝ մեր իշխանության ներքո գտնվող մարդկանց հաճեցնելու համար:

Մովսեսը վարվեց *խաղաղապահի*, ոչ թե *խաղաղարարի* պես: Հիսուսը ոչ մի անգամ չասաց. «Երանի՜ *խաղաղություն պահողներին»* (Մատթ. 5.9). Նա ասաց. «Երանի՜ *խաղաղություն անողներին»:* Խաղաղապահը նա է, ով փոխզիջման է ենթարկում ճշմարտությունը՝ խաղաղության կեղծ զգացում պահպանելու նպատակով: Առաջնորդները կարող են հեշտորեն ընկնել այս ծուղակը: Սա, ըստ էության, նշանակում է պատվել նրան, ում տեսնում ենք առավել, քան Նրան, Ում չենք տեսնում: Աստված խորշում է այսպիսի վարքից:

Մյուս կողմից, խաղաղարարը նա է, ով անհրաժեշտության դեպքում ընդդիմանում է՝ ճշմարիտ խաղաղության հասնելու համար: Այս պատճառով, Հիսուսն ասում է. «Եվ Հովհաննես Մկրտչի օրերից մինչև ներկա ժամանակը Երկնքի թագավորությունը կատաղի հարձակման է ենթարկվել, և զորավոր մարդիկ ուժով խլում են այն [որպես թանկարժեք մրցանակ, մարդիկ ձգտում են բաժին ստանալ Երկնքի թագավորության մեջ՝ կրակոտ նախանձավորությամբ և լարված ջանքերով]» (Մատթ. 11.12, AMPC): Աստծո թագավորությունը *խաղաղություն* է (տե՛ս Հռոմ. 14.7), իսկ ճշմարիտ խաղաղություն ունենալու համար մենք երբեմն պետք է ընդդիմանանք:

Որպես կանոն, *խաղաղապահներն* առաջնորդվում են եսասիրական շահերով: Նրանք չեն ցանկանում անհարմարավետություն իրենց կյանքում, կամ որևէ օգուտ են ստանում այն մարդկանցից, որոնց պետք է ընդդիմանան, և դա նրանց դուր է գալիս, ինչպես Հեղիի և նրա որդիների դեպքում:

Մովսեսը, ամենայն հավանականությամբ, դաս քաղեց այս

միջադեպից, և երբեք փոխզիջման չենթարկեց ճշմարտությունը՝ ինչ-որ մեկի խնդրանքը պատվելու համար: Ըստ էության, այս ձախողումը նրա ծառայության սկզբում դարձավ ուղենիշ, սովորելու սկզբնակետ, այնպիսի պահ, որից հետո նրա սրտում ամուր համոզմունք հաստատվեց, որը մեծ առաջնորդ դարձրեց նրան մինչև կյանքի ավարտը:

Հեղին այլ էր: Նա Մովսեսի պես նոր և թարմ առաջնորդ չէր. նա փորձառու առաջնորդ էր և քաջ գիտակցում էր, թե ինչ էր անում: Ինչ վերաբերում է Մովսեսին, հավանական է, որ նա ընդամենը փորձում էր լավ ամուսին լինել: Նա անկեղծ էր, բայց անկեղծորեն սխալ էր:

Ընտանեկան մարտահրավեր

Եթե ուսումնասիրեք բոլոր օրինակները, որոնք ներկայացրի այս գլխում, կնկատեք, որ յուրաքանչյուրը տեղի էր ունեցել ընտանիքում: Հեղիի և Աբրահամի պատմությունները կապված էին նրանց երեխաների հետ, իսկ Մովսեսի պատմությունը՝ նրա կնոջ հետ: Այժմ կարող ենք հասկանալ Հիսուսի խոսքերն ընտանիքի մասին.

> «Մի՛ կարծեք, թե Ես եկա երկրի վրա խաղաղություն գցելու: Չեկա խաղաղություն գցելու, այլ՝ սուր: Որովհետև եկա բաժանելու մարդուն՝ հորից, և աղջկան՝ մորից, և հարսին՝ սկեսրոջից: Եվ մարդու թշնամիներն իր ընտանիքը կլինեն: Ով որ հորը կամ մորը Ինձնից ավելի է սիրում (պատվում), նա Ինձ արժանի չէ: Եվ ով որ որդուն կամ դստերը Ինձնից ավելի է սիրում (պատվում), նա Ինձ արժանի չէ»:
>
> – Մատթ. 10.34-37, (փակագծերի բառերը հեղինակինն են):

Երբ մենք փոխզիջման ենք ենթարկում Աստծո կամքը՝ այն կերպով, որով այն հայտնվում է Նրա Խոսքում, որպեսզի պատվենք որևէ մարդու, նույնիսկ մեր ընտանիքի անդամներից մեկին, մենք, ըստ էության, մեղանչում ենք Աստծո դեմ: Հուսով եմ՝ դուք հասկանում եք այս արարքի ծանրությունը. Հիսուսի խոսքերը շիտակ են և խիստ: Վերոբերյալ օրինակներից հասկանում ենք, թե ինչու է այսպես: Հեղիի դեպքում, նրա ընտանիքի վրա ազդա-

րարված դատաստանից անկարելի էր խուսափել: Իր որդիներին Աստծուց առավել պատվելը շատ թանկ նստեց նրա վրա:

Սրանում է պատվի պատշաճ հավասարակշռությունը: Ամբողջ այս գրքում խոսում էինք պատվի կարևորության մասին. այնուամենայնիվ, պատիվը, որն ուղղված է ցանկացած բանի՝ Աստծուց առավել, համարվում է անպատվություն կամ կռապաշտություն Նրա դեմ, և շատ հաճախ ծանր հետևանքներ ունի: Ոչինչ և ոչ ոք չպետք է պատիվ ստանա՝ Նրանից առավել: Նա՛ է Աստվածը, Թագավորը և մեր Փրկիչը: Մենք պետք է մշտապես հիշենք այս ճշմարտությունը մեր բոլոր գործերում:

Պատիվը դրսևորվում է հնազանդությամբ

Աստվածաշնչում կան շատ այլ պատմություններ, որոնցում թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք պատվում էին մարդկանց՝ Աստծուց առավել: Այդ պատմություններից ոչ մեկը դրական ավարտ չունեցավ: Մենք արդեն տեսանք, թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ այն, որ Աստծուց առավել պատվենք մեր իշխանության ներքո գտնվող մարդկանց: Նույնը վերաբերում է մեզ հետ միևնույն մակարդակի վրա գտնվող և մեզ վրա կարգված մարդկանց Աստծուց առավել պատվելուն:

Ինձ խորապես սթափեցնում է Գ Թագավորաց գրքի մի պատմություն երկու մարգարեների մասին՝ երիտասարդ և ծեր: Մի երիտասարդ մարգարե՝ Հուդայի ցեղից, հանձնարարություն ստացավ Աստծուց՝ գնալ Բեթել և ձայն բարձրացնել ընդդեմ այն կուռքի զոհասեղանի, որի վրա Հերոբովամ թագավորը զոհեր էր մատուցում: Նա այդպես էլ վարվեց, և Աստված ճեղքեց այդ զոհասեղանը, և դրա վրայի մոխիրը թափվեց ճիշտ այնպես, ինչպես որ այդ երիտասարդ մարգարեն խոսեց:

Հերոբովամ թագավորը տպավորվեց այն բանով, թե որքան արագ Աստծո մարդու խոսքերը կատարվեցին, նաև Աստծո զորությամբ, որը բժշկեց իր ձեռքը: Այնպես որ, թագավորը պալատ հրավիրեց մարգարեին՝ հանգստանալու և վարձատրություն ստանալու, ինչին այդ մարգարեն պատասխանեց. «Եթե ինձ քո տան կեսն էլ տալու լինես, քեզ հետ չեմ ուտի և ջուր չեմ խմի այս տեղում: Որովհետև ինձ այսպես հրամայվեց Տիրոջ Խոսքով, թե՝

հաց չուտես և ջուր չխմես, և այն ճանապարհով ետ չդառնաս, որով գնացիր» (Գ Թագ. 13.8,9):

Նա այլ ճանապարհով գնաց՝ Հուդա վերադառնալու համար: Այնուամենայնիվ, մի ծեր մարգարե հանդիպեց նրան և իր տուն հրավիրեց՝ ճաշելու: Երիտասարդ մարգարեն կրկնեց ծեր մարգարեին այն, ինչ Աստված ասել էր իրեն. ինքը չպետք է ոչինչ ուտեր և խմեր, ոչ էլ վերադառնար նույն ճանապարհով, և ինքը չէր կարող նրա տուն գնալ: Այնուամենայնիվ, ծեր մարգարեն ասաց. «Ես նույնպես մարգարե եմ, ինչպես և դու: Եվ մի հրեշտակ տվեց ինձ այս ուղերձը Տիրոջից. «Տուն տար նրան քեզ հետ և ուտելու կերակուր և խմելու ջուր տուր նրան»: Բայց այդ տարեց մարդը ստում էր նրան» (խոսք 18, NLT):

Երիտասարդ մարգարեն պատվեց ծեր մարգարեի խոսքերը և տուն գնաց նրա հետ: Երբ նրանք ծեր մարգարեի տանն էին, ճաշելու ընթացքում նա Տիրոջից խոսք ասաց երիտասարդ մարգարեին, որ անհնազանդության պատճառով նա չէր մտնելու իր նախնիների գերեզմանը:

Դրանից հետո նա Հուդա ճանապարհվեց, բայց մի առյուծ դուրս եկավ նրա ճանապարհին և սպանեց նրան: Այնուամենայնիվ, առյուծը չկերավ այդ մարգարեի դին, ոչ էլ հոշոտեց և կերավ այն ավանակին, որի վրա նա գնում էր: Երբ ծեր մարգարեն իմացավ երիտասարդ մարգարեի դառը ճակատագրի մասին, նա վստահաբար ասաց. «Տերը նրան մատնել է առյուծին, որ նրան պատառել է և մեռցրել, Տիրոջ՝ նրան ասած խոսքի պես» (խոսք 26):

Երիտասարդ մարգարեն հարգանքով վերաբերվեց ծեր մարգարեին: Ամենայն հավանականությամբ, հարգանքը տարեցների հանդեպ նրա մեջ ձևավորվել էր երիտասարդ տարիքից: Նրանում ուժգին համոզմունք կար՝ պատվել այն մարդկանց, որոնք ավելի երկար էին ծառայել Աստծուն, քան ինքը, և դա լավ առաքինություն է: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է պատշաճ հավասարակշռություն պահպանել: Երիտասարդ մարգարեի ծանրագույն սխալը՝ ծեր մարգարեի խոսքերը Տիրոջ խոսքից առավել պատվելն էր: Դա թանկ նստեց նրա վրա:

Մենք տեսնում ենք նման մի օրինակ Նոր կտակարանում՝ Պետրոսի կյանքում: Պողոս առաքյալը գրում է.

«Երբ Պետրոսն Անտիոք եկավ, ես դեմառդեմ հակառակվեցի նրան, քանի որ նրա վարքն ակնհայտորեն անընդունելի էր: Ահա թե ինչ տեղի ունեցավ: Ավելի վաղ՝ մինչև Հակոբոսի մոտից որոշ մարդկանց գալը, Պետրոսը մշտապես ուտում էր ոչ հրեաների հետ: Բայց երբ այդ պահպանողական խումբը եկավ Երուսաղեմից, նա զգուշավորությամբ ետ քաշվեց և սկսեց հնարավորինս հեռու մնալ իր ոչ հրեա ընկերներից: Ահա թե որքան էր նա վախենում այդ պահպանողական հրեա խառնակչախմբից, որը պարտադրում էր թլփատման հին համակարգը: Դժբախտաբար, Անտիոքի եկեղեցու մյուս հրեաները միացան այդ կեղծավորությանը, և նույնիսկ Բառնաբասը տարվեց նրանց անհեթեթ ձևականությամբ»:

– Գաղատ. 2.11-13, MSG

Ինչո՞ւ Պետրոսը, Բառնաբասը և մյուս հրեա հավատացյալները ետ քաշվեցին ոչ հրեա հավատացյալներից, եթե ավելի վաղ նրանք ազատորեն ուտում էին նրանց հետ: Պատասխանը պարզ է. նրանք պատվեցին իրենց ընկերներին ճշմարտությունից առավել, և արդյունքը՝ երկչոտ և կեղծավոր վարքն էր: Պետրոսը գիտեր ճշմարտությունը. այն հայտնվել էր նրան մտքի հափշտակությամբ, երբ նա Հոպպեում էր: Ահա ճիշտ այն խոսքը, որը նա ստացավ Տիրոջից. «Այն, որ Աստված սրբեց, դու պիղծ մի՛ համարիր» (Գործք 10.15):

Կրկին, ես գիտեմ, որ երբեմն ավելի հեշտ է պատվել նրան, ում տեսնում ենք, քան Նրան, Ում չենք տեսնում: Այնուամենայնիվ, այսպես չպետք է լինի: Մենք պետք է համոզմունքներից բաղկացած սահմաններ կանգնեցնենք մեր կյանքում, որպեսզի ճիշտ արձագանքենք իրավիճակներին: Եթե ինչ-որ մեկը, ում մենք հարգում և սիրում ենք, խնդրում է, հրապուրում է կամ փորձում է համոզել մեզ հակառակվել Աստծո Խոսքին, մենք չենք կարող պատվել նրա ցանկությունները՝ Աստծո ցանկություններից առավել:

Պատիվ չցուցաբերելը

Կան դեպքեր, երբ չպետք է պատիվ ցուցաբերել: Թեև այդ դեպքերը հազվագյուտ են, մենք պետք է խոսենք այս մասին, որպեսզի մեղքի մեջ չհայտնվենք: Գրված է.

> «Ինչպես ձյունը ամռանը, և ինչպես անձրևը հունձքին, այնպես էլ պատիվը սազական չէ [ինքնավստահ] հիմարին»:
>
> – Առակ. 26.1, AMPC

> «Հիմարին պատվելը նույնպիսի անմտություն է, որքան քարը պարսատիկին կապելը»:
>
> – Առակ. 26.8, NLT

Քարը պարսատիկին կապելու դեպքում ոչ ոք չի վնասվի՝ բացի ձեզնից: Ինչպե՞ս է սա վերաբերում մեր առօրյա կյանքին: Առաջինը՝ ո՞վ է հիմարը: Նա, ով ասում է իր սրտում, թե Աստված չկա (տես Սաղմ. 53.1), բամբասանք է հնարում (տես Առակ. 10.18), չարություն է անում՝ զբոսանքի պես (տես Առակ. 10.23), ում կարծիքով՝ իր ճանապարհները միշտ ուղիղ են, և ով աստվածային խորհուրդ չի փնտրում (տես Առակ. 12.15), ամբարտավան և հպարտ կերպով է խոսում (տես Առակ. 14.3), ինքնավստահ է և ատում է իմաստությունը, գիտելիքը և հանդիմանությունը (տես Առակ. 15.5, 18.2): Ահա ընդամենը մի քանի հատկանիշ, որոնք Սուրբ գիրքը վերագրում է հիմարին: Կարճ ասած, նման մարդը հաճախ հակաքրիստոս է կոչվում Նոր կտակարանում, քանի որ նրա ապրած կյանքը լիովին հակառակ է Հիսուս Քրիստոսի ճանապարհներին և ուսմունքներին:

Երբ մենք պատիվ ենք ցուցաբերում հիմարին՝ նրա հիմարության համար, մենք վնասում ենք ինքներս մեզ. մեր պարսատիկի քարը, ետ գալով, հարվածում է մեզ: Հովհաննես առաքյալը պարզորեն խոսում է այս մասին իր Երկրորդ թղթում.

> «Եթե ինչ-որ մեկը ձեզ մոտ գա և չբերի այս վարդապետությունը [անհավատարիմ լինի այն բանին, ինչ

Հիսուս Քրիստոսը սովորեցնում էր], մի՛ ընդունեք նրան [մի՛ հյուրընկալեք նրան, մի՛ ողջունեք և մի՛ հրավիրեք նրան] [ձեր] տանը, ո՛չ էլ Աստծուց հաջողություն մաղթեք կամ որևէ կերպով խրախուսեք նրան: Որովհետև նա, ով հաջողություն է մաղթում նրան [ով խրախուսում է նրան՝ Աստծո օգնությունը մաղթելով], նրա չար գործերի մասնակիցն է»:

– Բ Հովհ. 10,11, AMPC

Անպատիվ վարքի կամ Քրիստոսի վարդապետությանը հակառակ համոզմունքների հանդեպ պատիվ ցուցաբերելն անմտություն է: Եթե անենք դա, մենք այդ մարդկանց մեղքի մասնակիցը կդառնանք:

Պատիվ ստանալը

Ի վերջո, ինչպես արդեն նշել եմ, պատիվ պահանջելը հակառակ է Աստծո սրտին: Եթե ամուսինը ուղերձ է լսում պատվի մասին, սակայն տուն է վերադառնում և պահանջում այն իր կնոջից և երեխաներից, նա չի հասկացել այդ ուղերձի իմաստը: Նույնը վերաբերում է ցանկացած իշխանական դիրք ունեցող մարդու: Մյուս կողմից, Սուրբ գիրքը սովորեցնում է, թե ինչ կարող ենք անել, որպեսզի պատիվ գրավենք մեր կյանքում.

«Իմաստությո՛ւն ստացիր, հանճա՛ր ստացիր: Մի՛ մոռացիր և մի՛ խոտորվիր Իմ բերանի խոսքերից: Մի՛ թող նրան, և նա քեզ կպահի, նրան սիրի՛ր, և նա քեզ կպաշտպանի: Իմաստության սկիզբն է. «իմաստությո՛ւն ստացիր», և քո ամեն ստացվածքի հետ հանճա՛ր ստացիր: Դու նրան մեծարի՛ր, և նա քեզ կբարձրացնի: Նա քեզ *կպատվի*, երբ որ նրան գրկես»:

– Առակ. 4.5-8, (շեղագիրը հեղինակինն է)

Իմաստությանը գրկելը կամ իմաստությանը հարելը պատիվ կբերի ձեզ: Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է: Երբ մենք Տիրոջ երկյուղն ունենք, կհավատանք և կհնազանդվենք Աստծո Խոսքին մեր կյանքի բոլոր բնագավառներում: Մեզանում Նրա

բոլոր պատվիրաններին և կարգադրություններին մշտապես հնազանդվելու ցանկություն կլինի: Ես տեսել եմ մարդկանց, որոնք փորձում են համապատասխանեցնել Սուրբ գիրքն իրենց կենսաոճին կամ համոզմունքներին: Այս պատճառով, երբ նրանք Աստվածաշունչ են կարդում, *կարդում են այն, ինչին հավատում են*, փոխարենը *հավատան այն ամենին, ինչ կարդում են:* Առաջինը խաբեություն է, երկրորդը՝ Տիրոջ երկյուղը, որն իմաստության է առաջնորդում:

Մարդիկ, որոնք ձգտում են արդարությամբ ապրել, ողորմություն սիրել և խոնարհաբար վարվել իրենց Աստծո առջև, պատրաստակամորեն ապաշխարում և հավատում են: Նրանք հանդիմանություն կընդունեն, երբ դրա կարիքը լինի: Գրված է. «Աղքատություն և նախատինք կա խրատը մերժողի համար, իսկ հանդիմանությունը պահողը կպատվվի» (Առակ. 13.18): Նախատինքի կամ ամոթի հականիշը պատիվն է: Եթե հակառակվեք հանդիմանությանը, դուք անարգանք կգրավեք ձեր կյանքում: Այնուամենայնիվ, եթե սիրեք ճշմարտությունը՝ անձնական հարմարավետությունից և հաճույքից ավելի, դուք պատիվ կգրավեք:

Ահա այս սկզբունքի պարզ ամփոփումը. «Խոնարհության և Տիրոջ երկյուղի վարձքն է հարստություն և պատիվ ու կյանք» (Առակ. 22.4): Աստված պատիվ է խոստանում, երբ դուք աստվածահաճո կյանքի եք ձգտում: Միգուցե այն անմիջապես չգա, բայց այն մշտապես գալու է: Մի քանի տասնամյակ ծառայության մեջ լինելով՝ հետևել եմ այն մարդկանց, ովքեր Աստծո մնայուն օրհնություններն են վայելում: Նրանցից մի քանիսի կյանքում կար այնպիսի ժամանակահատված, երբ թվում էր, թե նրանց հավատարմությունը չէր վարձատրվելու: Այնուամենայնիվ, շնորհիվ հարատև համբերության, նրանք, ի վերջո, մեծ պատիվ և օրհնություն ստացան:

Պատիվը պահպանելը

Պատիվը պահպանելու համար պետք է հոգով խոնարհ մնանք: Անկախ այն բանից, թե որքան առատորեն է Աստված օրհնում, մենք պետք է մշտապես հիշենք, որ չկա մի բան, ինչը չի տրվել մեզ: Երբ Լիզան և ես սկսեցինք մեր շրջիկ ծառայությունը,

շատ բան չունեինք, և ոչ էլ պահանջված էինք: Մենք որոշեցինք, որ լիարժեք նվիրումով էինք ծառայելու, ինչպիսի դռներ էլ որ Աստված բացեր մեզ համար:

Տարիներ անց, որոնց ընթացքում մեր կարիքները լրացվում էին, թեկուզև՝ վերջին պահին, Աստված ասաց ինձ աղոթքի մեջ. «Որդի՛ս, Ես սկսելու եմ օրհնել քեզ, քո ընտանիքը և քո ծառայությունը՝ այնպես, որը վեր է քո երազանքներից: Դու առատ մատակարարում կունենաս, և քո ծառայության ազդեցությունը մեծապես կընդլայնվի: Այնուամենայնիվ, դա նույնպես ստուգում կլինի քեզ համար: Չորության ժամանակներին դու վստահում էիր Ինձ ամեն ինչի համար՝ թե ինչ պետք է քարոզեիր, ինչպես պետք է փող ծախսեիր, ուր պետք է գնայիր և այլն: Երբ Ես առատորեն օրհնեմ քեզ, արդյո՞ք դու կսկսես քարոզել քո մտքերը, թե՞ կշարունակես փնտրել Ինձ, որպեսզի իմանաս, թե ինչ քարոզես: Արդյո՞ք դու կծախսես քո միջոցներն՝ ինչպես կամենաս, թե՞ կշարունակես խորհուրդ հարցնել Ինձնից: Կամ՝ միգուցե դու այլևս չե՞ս փնտրի Ինձ՝ իմանալու համար, թե ուր գնաս և ինչ անես, և կմոռանա՞ս, թե որտեղից եկավ այդ ամենը»:

Նա շարունակեց. «Որդի՛ս, նրանք, ովքեր անկում են ունեցել, ընկել են առատության ժամանակ, ոչ թե չորության»:

Ես հիշում եմ, որ տուն եկա (դա տեղի ունեցավ մեր տան մոտակայքում գտնվող մի մեկուսի վայրում) և պատմեցի կնոջս այն, ինչ Աստված ասել էր աղոթքի մեջ: Նա զգաստորեն նայեց ինձ և ասաց.

- Ջո՛ն, եթե դու պատմեիր ինձ միայն առաջին մասը՝ այն, որ Աստված առատապես օրհնելու է մեզ, ես հենց հիմա կսկսեի պարել: Բայց այդ զգուշացումը լսելուց հետո համակվեցի սուրբ երկյուղով:

Ես գլխով արեցի՝ ի նշան համաձայնության:

Իր կյանքի ընթացքում Պողոսն անվանեց իրեն «առաքյալների ետինը», «սրբերի ետինը» և «մեղավորների առաջինը»: Նա երբեք չմոռացավ, թե որտեղից էր, ինչպես նաև հետևյալ հավիտենական ճշմարտությունը. այն ամենը, ինչ ինքն ուներ, Աստված էր տվել իրեն: Սա է պատճառը, որ նա գրում է. «Որովհետև ո՞վ է տարբերում քեզ ուրիշից: Եվ ի՞նչ ունես, որ չես ստացել» (Ա

Կորնթ. 4.7, NKJV): Երբ մենք այսպիսի խոնարհությամբ վարվենք Աստծո առջև, չենք կորցնի այն, ինչի համար աշխատել ենք: Հիշեք այն աստվածաշնչյան խոսքը, որով սկսեցինք այս գիրքը. «Զգո՛ւյշ կացեք ձեր անձերին, որ չկորցնենք այն, որ վաստակեցինք, այլ՝ որ ամբողջ վարձքն առնենք» (Բ Հովի. 8): Որպեսզի չկորցնենք մեր աշխատանքի պտուղը, Խոսքը հորդորում է մեզ.

> «Մարդու հպարտությունը կցածրացնի նրան, բայց հոգով խոնարհը կպահպանի *պատիվը»:*
>
> – Առակ. 29.23, NKJV, շեղագիրը հեղինակինն է

Ուշադրություն դարձրեք *«պահպանել»* բառին: Մենք կպահպանենք պատիվը, ինչպես նաև կավելանանք դրանում, եթե Տիրոջ երկյուղով ապրենք և ճշմարիտ խոնարհությամբ վարվենք: Երբեք մի՛ մոռացեք, թե որքան մեծ մահից Հիսուսը փրկեց ձեզ: Նույնպես հիշեք Նրա սիրո մասին, նաև այն մասին, որ յուրաքանչյուր անձնավորության արժեքը, որի հետ դուք հաղորդակցվում եք, նույնքան բարձր է: Այնպես որ, պատվեք նրանց, ինչպես որ Նա պատվեց նրանց՝ տալով Իր կյանքը, և դուք պատվի կարժանանաք, վարձատրություններ կստանաք և կպահպանեք ձեր ստացածը:

Ամփոփում

Մենք շարունակ շեշտադրում էինք, որ ամբողջ ճշմարիտ պատիվը բխում է սրտից: Մեր սիրտը փոխելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն անկեղծ աղոթքն է: Խրախուսում եմ ձեզ ամեն օր աղոթել, որ Աստծո սերը, սուրբ երկյուղը և պատիվն ավելանան ձեր սրտում: Եվ, ավարտելով այս գիրքը, բայց ոչ՝ այս ուղերձը, քանի որ այն կմնա ձեր սրտում և կշարունակի պտուղ բերել ձեր կյանքում, ես ցանկանում եմ աղոթել ձեզ հետ, որպեսզի Աստված ճշմարիտ պատիվ շնորհի ձեզ այն մարդկանց հանդեպ, որոնց Նա բերում է ձեր կյանքի մեջ: Եթե կան մարդիկ, որոնց դուք չեք պատվել, ես կսկսեմ այս աղոթքն ապաշխարությամբ: Եկեք միասին աղոթենք.

«Երկնայի՛ն Հայր, շնորհակա՛լ եմ, որ խոսեցիր ինձ հետ այս գրքի միջոցով: Ես գալիս եմ Քո առջև՝ առաջին հերթին խնդրելով Քո ներումը: Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ, որ չեմ պատվել այն մարդկանց, որոնց Դու բերել ես իմ կյանքի մեջ: Ների՛ր ինձ, որ հարգանքով չեմ վերաբերվել և չեմ հպատակվել նրանց, ովքեր իշխանություն ունեն իմ հանդեպ, որ չեմ պատվել ինձ հավասար մարդկանց, որ չեմ արժևորել նրանց, ովքեր ինձ վստահված իշխանության ներքո են, և, վերջապես, որ չեմ պատվել այն տղամարդկանց և կանանց, որոնց հետ հաղորդակցվել եմ: Խնդրո՛ւմ եմ, որ մաքրես ինձ Հիսուսի արյամբ, որովհետև ես ապաշխարում եմ այն անտարբերության համար, որը ցուցաբերել եմ որոշ մարդկանց հանդեպ:

Խնդրո՛ւմ եմ Քեզ, համակի՛ր իմ սիրտը և անձը ճշմարիտ պատվով:

Ես ցանկանում եմ, որ Տիրոջ երկյուղը և աստվածային սերը սփռվեն իմ սրտում: Ես խնդրո՛ւմ եմ, որ իմ սիրտը վառվի այն փափագով, որը կա Քո սրտում, որ բոլոր տղամարդիկ և կանայք գնահատանք, սեր, հարգանք և պատիվ ստանան: Ես խնդրում եմ սա հավատքով և ընդունում եմ այս պահին: Աղոթում եմ Հիսուսի՛ անունով, ամե՛ն»:

Կրկին, ամեն օր աղոթեք՝ համաձայն այս խոսքերի, հնազանդությամբ վարվեք Աստծո Խոսքի հանդեպ և կտեսնեք, որ ձեր կյանքը կփոխվի, և դուք կդառնաք Աստծո թագավորության ավելի ազդեցիկ դեսպանը: Ձեր վարձատրությունը մեծ կլինի, և դուք ի սրտե ուրախություն և բավականություն կվերապրեք: Շնորհակալություն մեր Թագավորին սիրելու և ծառայելու համար:

«Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել Իր փառքի առջև՝ անբիծ ցնծությամբ, այն մեկ իմաստուն Աստծուն և մեր Փրկչին փա՛ռք և մեծութ–յո՛ւն, զորությո՛ւն և իշխանությո՛ւն, և՛ հիմա, և՛ հավիտյան: Ամե՛ն»:

– Հուդա 24,25

Հավելված

Փրկություն բոլորի համար

«Եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Որովհետև սրտով հավատում ենք արդարանալու համար, և բերանով դավանում ենք փրկվելու համար»:

– Հռոմեացիների 10.9,10

Աստված ցանկանում է, որ դուք լիարժեք կյանք ունենաք: Նա ի սրտե մտահոգված է ձեզնով և ցանկանում է, որ կատարեք Իր ծրագիրը ձեր կյանքի համար: Այնուամենայնիվ, կա միայն մեկ ճանապարհ դեպի ձեր նախասահմանությունը. դուք պետք է ընդունեք փրկությունն Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հիսուսի մահվան և հարության շնորհիվ Աստված ճանապարհ պատրաստեց, որ մուտք գործեք Իր թագավորությունը՝ որպես Իր սիրելի որդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա ծրիաբար հավիտենական և առատ կյանք է պարգևել ձեզ: Փրկությունը Աստծո պարգևն է ձեզ. դուք ոչինչ չեք կարող անել, որ վաստակեք փրկությունը կամ արժանանաք դրան:

Այս թանկ պարգևը ստանալու համար առաջին հերթին պետք է խոստովանեք ձեր Արարչից անկախ ապրելու մեղքը, քանի որ սա ձեր գործած բոլոր մեղքերի արմատն է: Ապաշխարությունը՝ փրկություն ստանալու անչափ կարևոր պայման է: Պետրոսը պարզորեն նշեց սա Գործք առաքելոց գրքում այն օրը, երբ հինգ

հազար մարդ փրկություն ստացավ. «Ուրեմն, ապաշխարե՛ք և դարձի՛ եկեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19, NKJV): Աստվածաշունչը հայտնում է, որ յուրաքանչյուրը ծնվել է որպես մեղքի ստրուկ: Այս ստրկությունը սկիզբ է առել Ադամի մեղքից, ով առաջի՛նը գիտակցաբար անհնազանդ եղավ Աստծուն: Ապաշխարելով՝ դուք որոշում եք կայացնում այլևս չհնազանդվել ձեր անձին և սատանային, որը ստի հայրն է, այլ հնազանդվել ձեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ով տվեց Իր կյանքը ձեզ համար:

Դուք պետք է հանձնեք ձեր կյանքը Հիսուսի իշխանությանը: Հիսուսին որպես Տեր ընդունելը նշանակում է, որ դուք թույլ եք տալիս Նրան ղեկավարել ձեր ամբողջ կյանքը (հոգին, անձը և մարմինը) և այն ամենը, ինչը պատկանում է ձեզ. Նա բացարձակ իշխանություն է ստանում ձեր կյանքում: Այն պահին, երբ անեք սա, Աստված կազատի ձեզ խավարից և կտեղափոխի Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցում կկատարեք խավարից դեպի լույսը և կդառնաք Նրա զավակը:

Եթե ցանկանում եք փրկություն ստանալ Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

«Երկնային Աստվա՛ծ, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքերի համար: Շնորհակալությո՛ւն, որ չթողեցիր ինձ այս վիճակում, քանի որ ես հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատավճիռը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը և այժմ նստած է Քո աջ կողմը՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ես ապաշխարում եմ Քեզնից անկախ լինելուց և լիովին հանձնում եմ իմ կյանքը Հիսուսի իշխանությանը:

Հիսո՛ւս, ես դավանում եմ, որ Դու ես իմ Տերն ու Փրկիչը: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգով և դարձրո՛ւ ինձ Աստծո զավակ: Ես ուրանում եմ խավարի գործերը, որոնց մի ժամանակ հարում էի, և այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար: Քո շնորհքով կապրեմ Քեզ համար, քանի

որ Դու փվել ես Քո կյանքն ինձ համար, որ հավիտյան ապրեմ:

Շնորհակալություն, Տեր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերում է, և համաձայն Քո Խոսքի՝ ես երբեք չեմ ամաչի: Հիսուսի՛ անունով, ամե՛ն»:

Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ պատմել այս հրաշալի լուրը որևէ հավատացյալի: Նույնպես կարևոր է, որ դուք միանաք որևէ տեղական եկեղեցու, որը հավատում է Աստվածաշնչին, և հաղորդակցվեք այլ մարդկանց հետ, որոնք կխրախուսեն ձեզ հավատքի մեջ:

Դուք հենց նոր սկսեցիք ամենաուշագրավ ճանապարհորդությունը: Մաղթում եմ ձեզ առատ հայտնություններ, շնորհք և ընկերություն Աստծո հետ ձեր կյանքում:

ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Կործանի՛ր այն, ինչ խլում է քո ուժը

Ինչպես Սուպերհերոսը, որը կարող է ցատկել ամեն արգելքի վրայով և հաղթել բոլոր թշնամիներին, Քրիստոսի հետևորդները նույնպես կյանքի դժվարությունները հաղթահարելու գերբնական կարողություն ունեն: Այնուամենայնիվ, և՛ Սուպերհերոսը, և՛ մենք մի խնդիր ունենք. գոյություն ունի կրիպտոնաքար, որը խլում է մեր ուժերը:

Իհարկե, Սուպերհերոսը և կրիպտոնաքարը հորինված են: Բայց հոգևոր կրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը պատասխանում է այն հարցին, թե ինչու են մեզնից շատերն անկարող վերապրել այն աստվածային զորությունը, որն ակնհայտորեն դրսևորվում էր առաջին դարի քրիստոնյաների կյանքում:

«Կործանել կրիպտոնաքարը» գրքում Ջոն Բիվերը ցույց է տալիս, թե ինչ է կրիպտոնաքարը, ինչու է այն խլում մարդկանց ուժերը մեր եկեղեցիներում, և ինչպես ազատվել դրա կապանքներից:

«Կործանել կրիպտոնաքարը» գիրքը հոգևոր թմրեցուցիչ չէ և նախատեսված չէ թուլասիրտների համար: Այս լուրջ ճշմարտությունը նախատեսված է Քրիստոսի այն հետևորդների համար, որոնք ցանկանում են անցնել անձի վերափոխման դժվարին, բայց պտղաբեր ընթացքը:

Հասանելի է MessengerX.com կայքում

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Դուք գիտեք Նրա մասին.
բայց դուք ճանաչո՞ւմ եք Նրան

Աշակերտները անցկացրին երեք տարի Հիսուսի հետ՝ քայլելով Նրա հետ և լսելով այն ամենը, ինչ Նա ցանկանում էր ասել: Սակայն Հիսուսն ասաց Իր ամենամոտ ընկերներին, որ պետք է թողներ նրանց, որպեսզի Սուրբ Հոգին գար, և որ դա ավելի լավ կլիներ նրանց համար (տես Հովհաննես 16.7,13,14): Եթե սա ճշմարիտ էր աշակերտների համար, որոնք ամեն օր Հիսուսի հետ էին, ապա որքա՜ն ավելի մենք կարիք ունենք, որ այսօր Սուրբ Հոգին գործուն մասնակցություն ունենա մեր կյանքերում:

Ցավոք, հաճախ Հոգին սխալ հասկացված է: Շատերը նույնիսկ գաղափար չունեն, թե ով է Նա և ինչպես է հայտնվում մեզ: Սուրբ Հոգուն հաճախ պատկերում են շատ տարօրինակ կերպով: Բայց Աստվածաշունչը պարզ ասում է, որ Հոգին ինչ-որ երևույթ չէ: Նա Անձ է, Ով խոստացել է երբեք չլքել ձեզ: Այս ինտերակտիվ գրքում Ջոն Բիվերը հրավիրում է անձամբ բացահայտել ամենից անտեսված և սխալ հասկացված Անձնավորությանը Եկեղեցում՝ Սուրբ Հոգուն:

Բաց մի՛ թողեք այս զարմանալի հնարավորությունը:

Հասանելի է MessengerX.com կայքում

ԱՖԱԲԵԼ

Պատուհան դեպի հավիտենություն.
աուդիո թատրոն



Դուք հաճախ եք մտածում հավիտենության մասին: Միգուցե դուք գիտեք, թե որտեղ եք անցկացնելու այն, բայց արդյո՞ք գիտեք, թե ինչպես:

Անչափ կարևոր է, որ հավատացյալներն ապրեն՝ մշտապես հիշելով հավիտենության մասին, սակայն հավիտենությունը դժվար է ընկալել: Այս առասպելական աուդիո թատրոնը՝ ըստ Ջոն Բիվերի «Հավիտենությամբ շարժվողները» գրքի, լույս է սփռում այն ամենի վրա, ինչ կատարվում է մեր երկրային իրականությունից այն կողմ:

Միացե՛ք փառահեղ Թագավոր Ջեյլոնին, խավարի տիրակալ Դագոնին, Բարեգործին, Անկախին և այլ հերոսներին՝ հետազոտելով զարմանալի Աֆաբել երկիրը և սարսափելի Լոն երկրի արտաքին սահմանները: Ձեր կյանքը կվերափոխվի, երբ այս հերոսները բացահայտեն, թե ինչ կա ձեր սրտում:

Հասանելի է MessengerX.com կայքում

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

Կյանք, որը նշանակություն ունի այսօր և հավիտյան

Կյանքն այս երկրի վրա ընդամենը գոլորշի է, սակայն շատերն այնպես են ապրում, ասես դրանից հետո ոչինչ չի լինելու: Բայց այն, թե ինչպես ենք ապրում այս կյանքը, կորոշի, թե ինչպես ենք անցկացնելու հավիտենությունը: Սուրբ գիրքը հայտնում է մեզ, որ կան վարձատրության տարբեր աստիճաններ հավատացյալների համար. ոմանց ձեռքբերումներն ամբողջովին կայրվեն դատաստանի ժամանակ, իսկ մյուսներին կշնորհվի Քրիստոսի հետ թագավորելու արտոնությունը:

Ջոն Բիվերը, համաձայն Բ Կորնթացիների 5.9-ի սկզբունքների, հիշեցնում է, որ բոլոր հավատացյալները կկանգնեն Քրիստոսի առջև, որ ընդունեն այն, ինչին արժանացել են իրենց կյանքի ընթացքում: Մեզնից շատերը ցնցված կլինեն՝ իմանալով, որ մեր ժամանակի մեծ մասը ծախսվել է այնպիսի բաների վրա, որոնք չեն արժանանալու հավիտենական վարձատրության:

Այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք արդյունավետ կյանք ունենալ: «Հավիտենությամբ շարժվողները» գիրքը կսովորեցնի բացահայտել ձեր կոչումը և բազմապատկել այն, ինչ Աստված տվել է ձեզ: Նայելով կյանքին հավիտենության տեսանկյունից՝ դուք զորություն կստանաք, որպեսզի գործեք մնայուն նպատակների համար:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Ապրել վիրավորանքի մահացու թակարդից ազատ

«Սատանայի խայծը» գիրքը բացահայտում է ամենախորամանկ ծուղակներից մեկը՝ վիրավորանքը, որը թշնամին օգտագործում է՝ հավատացյալներին Աստծո կամքից հեռացնելու համար: Շատերը գտնվում են այս ծուղակի մեջ և նույնիսկ չեն գիտակցում դա:

Մի՛ խաբվեք: Քրիստոսն ասաց. «Անկարելի է, որ գայթակղություններ չգան» (Ղուկաս 17.1): Դո՛ւք չեք որոշում՝ ձեզ վիրավորելո՞ւ են, թե՞ ոչ, բայց դուք որոշում եք, թե ինչպես եք արձագանքելու: Եթե ճիշտ վարվեք վիրավորանքի դեպքում, ավելի ուժեղ կդառնաք՝ դառնանալու փոխարեն: Միայն ճիշտ արձագանքելու դեպքում դուք անխոչընդոտ շփում կունենաք Աստծո հետ:

Այս ուղերձի միջոցով Ջոն Բիվերը կզորացնի ձեզ, որ մնաք Աստծո կամքի մեջ և ազատվեք կասկածամտությունից և թերահավատությունից: Դուք կարող եք ազատվել զոհի մտածելակերպից և ապրել առանց դառնության և առանց հիասթափության բեռի: Հայտնաբերելով Աստծուն հնազանդվելու ավելի բարձր մակարդակ՝ ձեր կյանքն առատորեն կլցվի ներմամբ, հաշտությամբ և հարաճուն ուրախությամբ:

Հասանելի է MessengerX.com կայքում

X. ԲԱԶՄԱՊԱՏԿԻՐ ԱՍՏԾՈՒՑ ՔԵԶ ՏՐՎԱԾ ՆԵՐՈՒԺԸ

Երբևէ զգացել եք ձեզ որպես դիտորդ Աստծո Թագավորության մեջ: Միգուցե դուք գիտեք, որ կա ինչ-որ բան, ինչը պետք է անեք, բայց չեք կարողանում վերջնականորեն որոշել, թե ինչ է դա: Մեզնից շատերը ցանկանում են մեծ ազդեցություն թողնել, բայց միգուցե ձեր ներսում կան չպատասխանված հարցեր, օրինակ.

- Ինչպե՞ս համոզված լինեմ, որ բաց չեմ թողնում Աստծո կամքն իմ կյանքում:
- Ինչ դեր են կատարում իմ եզակի պարգևները Աստծո թագավորությունը կառուցելու մեջ:
- Ինչպե՞ս վստահ լինեմ, որ օգտագործում եմ Աստծուց ինձ տրված ներուժը:
- Իմ կոչումը պակա՞ս կարևոր է, եթե ես «ծառայության» մեջ չեմ:
- Ինչպե՞ս հավասարակշռություն պահպանել Աստծո շնորհքի մեջ հանգստանալու և Նրա Թագավորության համար գործելու միջև:
- Ինչպե՞ս վանել վախը և առաջ գնալ, նույնիսկ անորոշության և վտանգի դեպքում:

Այս խորիմաստ գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը հիմնվում է Սուրբ գրքի մանրակրկիտ ուսումնասիրության վրա և օգտագործում է ազդեցիկ պատմություններ, որպեսզի օգնի ձեզ այլ կերպ մտածել ձեր կոչման մասին և հասկանալ, թե ինչու է այն կարևոր Աստծո համար: Ընթերցելով այս գրքի էջերը՝ դուք կսովորեք, թե ինչպես բազմապատկեք Աստծուց ձեզ տրված պարգևները և ինչպես օգտագործեք ձեր ներուժը:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

MessengerX

Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր

- **Անվճար ավելի քան 115 լեզուներով**
- Հասանելի որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն

Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:



MessengerX.com

GET IT ON Google Play

Download on the App Store

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ
ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Գիրքը, որը ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի «*Պատվի վարձքը*» ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով գիրքը և օգտագործելով օժանդակ ուսումնական նյութերը, որոնք կարող եք գտնել գրքին կից DVD սկավառակում կամ ներբեռնել **MessengerX.com** կայքից, դուք ամբողջովին կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Շնորհիվ դասընթացի՝ ձեր քրիստոնեական ընթացքը կզորանա, և դուք կկարողանաք ավելին անել Աստծո համար:

«*Պատվի վարձքը*» Ուսումնական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից, որոնք կարող եք բեռնել ձեր անձնական սարքերի վրա.

- «*Պատվի վարձքը*» գիրք
  Այս դասընթացի միակ տպագրված մասը: Գիրքը նույնպես առկա է DVD սկավառակում՝ էլեկտրոնային ձևաչափով:

- «*Պատվի վարձքը*» DVD սկավառակ
  Կից սկավառակը պարունակում է այս դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակը սովորական DVD նվագարկիչով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետի, համակարգչի և սմարթֆոնների մեջ:

- «*Պատվի վարձքը*» աուդիո գիրք
  «*Պատվի վարձքը*» գրքի բոլոր բաժինները՝ ընթերցված հայերենով, MP3 ձևաչափով:

- «*Պատվի վարձքը*» վիդեո դասեր
  Բոլոր 12 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:

- Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է այլ գրքեր և նյութեր, ներառյալ՝ *«X. Բազմապատկի՛ր Աստծուց քեզ տրված ներուժը»* և «*Աստվա՛ծ, որտե՞ղ ես*» էլեկտրոնային գրքերը:

Դուք կարող եք անվճար ներբեռնել տարատեսակ ուսումնական նյութեր, էլեկտրոնային գրքեր և Աստվածաշնչեր

MessengerX.com կայքում:

ԱՅՍ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈԼՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ ՆՎԵՐ ԵՆ ՁԵՔ ՀԱՄԱՐ

Ազատորեն կրկնօրինակե՛ք այս DVD սկավառակը, պատճենե՛ք դրանում առկա նյութերը, ուղարկե՛ք ձեր ընկերներին էլեկտրոնային փոստով, պատճենե՛ք տեքստը և տեղադրե՛ք «Word» ֆայլերի մեջ, տրամադրե՛ք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնե՛ք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել: Տարածե՛ք նյութերն ամենուր, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

Հավելյալ տեղեկություն «*Պատվի վարձքը*» հավաքածուի նյութերի վերաբերյալ.

Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի նյութերը սովորական վիդեո նվագարկիչով: Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:

Դուք կարող եք բեռնել և նվագարկել MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ:

Դուք կարող եք բեռնել MP3 ձևաչափի ֆայլերը ձեր աուդիո նվագարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:

Դուք կարող եք բեռնել էլեկտրոնային գրքերը ձեր սմարթֆոնի, պլանշետի կամ համակարգչի մեջ՝ հեշտորեն կարդալու, տպելու կամ կրկնօրինակելու համար: Կարող եք նաև պատճենել հատվածներ տեքստից և տեղադրել ձեր անձնական ֆայլերի մեջ:

Հավելյալ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով հասանելի են

MessengerX.com կայքում և **MessengerX** հավելվածում

ՊԱՏԿԻ ՎԱՐՁՔԸ

Միայն համակարգչի համար

Դիտե՛ք տեսանյութեր և ներբեռնե՛ք ավելին հետևյալ կայքից.

MessengerX.com

ՀԱՎԱՔԱԾՈՒ ՍԿԱՎԱՌԱԿ

Բացահայտե՛ք այս մոռացված առաքինության զորությունը

ՋՈՆ ԲԻՎԵՐ

DVD ROM

Դուք կարող եք դիտել և ներբեռնել այս դասընթացը, ինչպես նաև Ջոն և Լիզա Բիվերների բազմաթիվ այլ ուսմունքներ, «Մեսինջեր»-ի ծառայության անվճար շարժական հավելվածի և ինտերնետային կայքի միջոցով:

MessengerX.com

Download on the App Store

GET IT ON Google Play

Ամենօրյա աշակերտություն յուրաքանչյուրի համար, ամենուր:
Լիովին անվճար ավելի քան 115 լեզուներով:
Դարձրե՛ք հոգևոր աճը ձեր առօրյայի մասը:

«Զոն Բիվերն աստվածաշնչյան տեքստը մանրակրկիտորեն վերլուծելու հազվագյուտ տաղանդ ունի: Նրա թարմ, խորաթափանց դիտարկումները կապշեցնեն ընթերցողներին»:

— «USA ՓԱԲԼԻՇԵՐՍ ՎԻՔԼԻ»

Ոչ մի քրիստոնյա չի ցանկանում սահմանափակել Աստծուն, սակայն շատերս անգիտակցաբար սահմանափակում ենք Նրա գործունեությունը մեր կյանքում, քանի որ անտեսում ենք մի վճռական հոգևոր սկզբունք՝ Պատիվը:

Պատիվն այնպիսի հասկացություն է, որը մեծ մասամբ կորսվել է մեր մշակույթում, բայց, ինչպես կտեսնենք գրքի էջերում, այն առանցքային դեր ունի մեր կյանքի բոլոր ոլորտներն Աստծո թագավորության ազդեցությանը ենթարկելու համար:

«Պատվի վարձքը» գրքում հանրաճանաչ հեղինակ Զոն Բիվերը ցույց է տալիս, որ, պատասխանելով պատվելու կանչին, դուք ընդունում եք Աստծո արժեհամակարգը և հայտնվում եք այնպիսի դիրքում, որ կարող եք ստանալ այն, ինչ Աստված որոշել է ձեզ համար:

Այս խորաթափանց աստվածաշնչյան սկզբունքները միավորելով դրանք գործնականորեն պատկերող ազդեցիկ պատմությունների հետ՝ այս գիրքը նորովի կներկայացնի ձեզ այս մոռացված առաքինությունը և, ամենակարևորը, ձգտում կառաջացնի, որ ընդգրկեք այն ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

Ընդգրկում է *«Պատվի վարձքը»* DVD հավաքածուն

ԶՈՆ ԲԻՎԵՐԸ միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ է և հանրաճանաչ հեղինակ, ով համարձակ և առանց փոխզիջման քարոզում է Աստծո Խոսքը: Զոնը և կինը՝ Լիզան, հիմնադրել են «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է՝ պատրաստել Քրիստոսի հետևորդների, որոնք փոխզիջման չեն գնում և վերափոխում են այս աշխարհը: Երբ Զոնը տանն է՝ Կոլորադոյում, նա սեղանի քարտային խաղեր է խաղում իր չորս որդիների հետ կամ փորձում է համոզել Լիզային գոլֆ խաղալ իր հետ:

MessengerX

Անվճար ներբեռնումների և հոսքային հեռարձակման համար այցելեք **MessengerX.com**

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է Հեղինակից և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Տպագրվում է հրատարակչության կողմից: